



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**B** 1,211,586







Հ. ՅՈՎ. Վ. ԹՈՐՈՍ.



Ը Ն Տ Ի Ր

**ՀԱՅԿԱԶՈՒՆՔ**

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1903



**ԸՆՏԻՐ**

**Հ Ա Յ Կ Ա Չ Ո Ւ Ն Ք**



1921


# ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ



ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ՓՈՓՈԽԵԱԼ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ

1902



## ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՆ

Այս գրքուկիս անունը անտարակոյս նոր պիտի չհնչէ՝ ականջիդ, Հայկակ, այլ վաղուց արդէն ծանօթ եւ ընտանի սրտիդ. եւ զուտ ազգային ըլլալով, անշուշտ աւելի եւս իրաւունք ունի ընդունելութիւն գտնելու քեզմէ՝ քան ուրիշ գրքեր: Սակայն որչափ որ անունը հին է եւ քեզի ալ ծանօթ, բայց երկրորդ տպագրութեանս մէջ՝ ներսը եւ դուրսը, մէջը եւ վրան ոչ սակաւ նորութիւններ պիտի գտնես. - դիրքն եւ պատկերները կիսով չափ նոր են, ինչպէս նաեւ նիւթերը եւ բովանդակութիւնը եւ՛է ոչ բոլորովին նոր, գոնեա նոր ո՛ճով գետեղուած եւ ընդարձակուած են: Ահա քեզի սոյլորական պատենի տակ, այսպէս բացատրելու համար, ուրիշ համով ու հոտով նոր պտուղներ կամ, ուրիշ խօսքերով, սոյլորական թերթերու կամ տերեւներու ներքեւ պիտի գտնես ծածկուած նոր բուրումն եւ գեղեցկութիւն ծաղկանց: Տփիկ մ'է սա, որուն մէջ պիտի տեսնես ազգային գանձարանէն հանած եւ ազուցած այլեւայլ գոհարներ, եւ ինչո՞ւ չքսեմ ադամանդներ. եւ եւ՛է ըստ ախորժակաց սրտիդ՝ լաւ ու ղորկուած եւ յետեղուած չի գտնես զանոնք, անով չեն կորանցըներ անոնք իրենց յարգը, որովհետեւ կը մնան միշտ գոհար, միշտ ադամանդ:

Հարկ կա՞յ բացատրելու քեզի, Հայկակ, թէ ի՞նչ է գրքուկիս նպատակը, որուն պէտքը թերեւս դու ինձմէ սուաջ զգացած եւ փսփաքած ես. այսինքն է, նմանի՛լ՝ որչափ կը ներէ հասակդ եւ վիճակդ՝ այն նշանաւոր ան-  
ձանց, որոնք թէ՛ հոգեւոր առաքինութեամբք եւ թէ՛ մար-  
մնաւոր արուժեամբ եւ գիտութեամբ՝ փառք եւ պարծանք  
եղած են ազգերնուս, եւ իրենց չքնադագիւտ օրինակ-  
ներով, արութեամբք եւ առաքինութեամբք մեր պատ-  
մութեան էջերը զարդարած, եւ մատենագրութիւննիս  
պայծառացուցած են:

Ընդունէ՛ ուրեմն, Հայկակ, առատալիք սրտէ նուիրած  
ընծայիկս, կարդա՛ զայն եւ քանդակէ սրտիդ մէջ անոնց  
սիրուն յիշատակը. եւ մեղուի նման հաւաքելով բուրաս-  
տանիս մէջ գտնուած ծաղկանց անոյշ հիւթերը, ազ-  
գային գործնական եւ գիտնական ասպարիզին մէջ ջանա  
դու ալ ժիր եւ արդիւնաւոր գործիչ մ'ըլլալ:

Հ. ՅՈՂ. Վ. ԹՈՐՈՍԵԱՆ



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

### ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

---

Մեր տղոց համար պատրաստուած գրքոյկս ընդունելու թիւն գտնելով հայրենասէր ազգայիններէն, ձեռք կը զարնենք երրորդ տպագրութեան, ընելով ինչ ինչ փոփոխութիւններ եւ կարելոր սրբագրութիւններ մէկ քանի անուններու եւ թուականներու, որոնք անուշադրութեամբ սպրդած էին նախորդ տպագրութեան մէջ։ Մեր նպատակը նոյն մնալով միշտ, այն է՝ պարզ ու ճով եւ համառօտիւ աւանդել մեր տղոց՝ ազգային հին նշանաւոր գործիչներուն վարքը եւ գործերը։ չենք ուզեր հեռանալ կերպով մը սրբազան դարձած աւանդութեան հետքերէն, որով գրքէս դուրս կը մնան այն բոլոր քննական խնդիրները, որոնք վերջին տասնեակ տարիներուն յուզուեցան բանասէրներուն մէջ։

Գարձեալ, ներկայ հրատարակութեանս մէջ կ'ուզէինք աւելցնել ուրիշ մի քանի մեծ դէմքեր ալ, որոնք իրենց վարքով եւ գործերով նոյնչափ իրաւունք ունին ճանչցուելու եւ սիրուելու մեր փոքրիկներէն, որչափ հատորիս մէջ գտնուածները. սակայն ուրիշ աւելի յարմար առիթ կը թողունք անոնց վարքերն ալ հրատարակել երկրորդ հատորի մը մէջ։



Հ Ա Յ Կ

# ՄԵՐ ԱԶԳԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Ե Ի

Հ Ա Յ Կ



Ինքնուրույն միւս բոլոր ազգերուն ծագումը  
և խանձարուրք մթին հորիզոններու մէջ  
ծածկուած, ճշգրտագիր պատմիչներու տե-  
ղաութենէն կը վրիպին, և հարկ կ'ըլլայ յաճախ  
այլ և այլ առասպելայօղ կեղծիքներու և գիցա-  
բանական բանդապուշանքներու գիմել, պատմու-  
թեան սկզբնածայր մը գտնելու համար. մենք ընդ  
հակառակն հաճութեամբ և պարծանքով կարող  
ենք ըսել, Հայկակ, որ այս մասամբ մեր ազգն շա-  
տերէն աւելի բախտաւոր և երջանիկ է: Ոչ մէկ  
մթութիւն, ոչ մէկ անթափանց ամպ չեն ծածկեր  
անաչառ քննադատի մ'իսկ աչքերէն՝ անոր նախ-  
կին որորոցը, որ իրեն ծագումը կ'առնու ուղիղ  
գծով բոլոր ազգերու յստակ աղբերակէն, այն ինքն  
է՛ Ս. Գիրքը՝ Հոն մեր ազգին և աշխարհին սկզբնա-  
ւորութիւնը կը նոյնանայ համարէն մարդկային ազգի  
ծագման հետ, մէկ քանի նուիրական և սրբազան  
անուններու ձեռքով, որոնք եթէ ամէն մարդու  
գգուելի և սիրելի են, ևս աւելի մեր ազգայիննե-  
րուն պաշտելի պիտի ըլլան: — Տիգրիս և Եփրատ,  
իրենց մերթ վսեմ և մերթ անուշ խոխոջներով, կը  
հնչեցնեն Աստուծոյ և նախամարդոյն մէջ տեղի ու-



նեցած մրմունջներու և օրհնութեանց արձագանգը, մատնանիչ ընելու մեզ նախաստեղծին և միանգամայն Եհովային սրբազան հետքերը: Իսկ այլեզարդ Մասիսը, իրեն պաղպաղուն. ձիւնազարդ գապաթէն, կը լսեցնէ մեզի տակաւին նոյն Եհովային օրհնութեանց աւետարեր ձայնը առ երկրորդ նախահայր մարդկութեանս:— Բայց մենք դառնանք պատմելու կեանքը և գործերը ուրիշ երրորդ նախահօր մը, որ աւելի յատկապէս կ'ըստուի և է մեր ազգին նահապետը և առաջնորդ, զոր յանուանէ իսկ կը ճանչնաս, Հայկակ:

Հայկ, դեղապատշաճ և անձնեայ, քաջագունդ ուր, խայտակն և հաստաբազուկ, որ քաջերու մէջ քաջագոյն հանդիսացաւ և քան բոլոր դիւցազունները դիւցազնադոյն, Նոյի Յարեթ որդիէն սերեալ իրեն նախահաւուն ամէն օրհնութեանց և ձիրքերուն արժանաւոր ժառանգ գտնուեցաւ: Մարդկութեան հոտանքէն մղուած՝ ինքն ալ Բարեւոն գնաց, ուր շատ որդիներ ունեցաւ:

Երրորդ աշտարակաշինութեան պատճառով լեզուները խառնակեցան, և Բէլ գուռզայած՝ կ'ուզէր ինք զինքը իբր աստուած պաշտել տալ ամենուն, մեր վեհանձն և քաջ նահապետը Հայկ՝ արհամարհեց զանիկայ, գլուխ վերուց և ապստամբեցաւ, և բոլոր տնով տեղով Այրարատ աշխարհը գնաց: Հոն իրեն առաջին բնակութեան տեղը իր կադմոս թռուան ժառանգութիւն տալով, ինքը հիւսիս — արևմտեան կողմը գնաց. ուր լեբան մը մօտ գեղեցիկ բարձրաւանդակ դաշտ մը գտնելով, Հայաստանի կեդրոնին մօտ և ոչ հեռու Արածանիէն (այսինքն՝ այժմեան Մոնրաւտ — չայի աղբիւրներէն, որ է՝ արևելեան Եփրատ), հոն հաստատեց իրեն բնակավայրը և Հսրք անուանեց: Այն տեղ աւան մ'ալ շինեց Հայկաչէն անունով, ամրացուց, զարդարեց, և մէջը բնակիչներ դրաւ, որոնք ինք-

նակում հնազանդեցան Հայկայ իմանալով այս բանը  
Բէլ, պատգամաւորներ յղեց մեր նահապետին,  
սաստիկ սպառնալիքով և հրապուրիչ խոստում-  
ներով, որ ետ դառնայ փութով և հնազանդի ի-  
րեն. բայց Հայկ դիւցազնարար մերժեց և արհա-  
մարհեց անոր և սպառնալիքը և խոստումները. Երբ  
Բէլ լսեց զայս, զայրացաւ. սրտաց սև փոթորկի  
նման, իբր թէ Ոլիմպոսի աստուածներէն մին ըլ-  
լար, կարծեց փայլակներով և կայծակներով հիւ-  
նայատակ ընել աշխարհնիս: Սակայն, զոր Զանք,  
ունայն բարձրամտութիւն. Շուտով իմացաւ իրեն  
թշուառ մահկանացութիւնը, երբ իր երկայնագէզ  
յողթանդամ հսկաններուն դիմաց տեսաւ փոքրիկ  
խումբ մը աղեղնաւորներու, որոնք իր անպարսելի  
կարծուած բանակին և ուժին դէմ ճակատեր կը  
սպասէին յանձնապատան առիժի նմոն: Վրան  
զի Հայկ լսելով կադմոսէն՝ Բելայ և անոր բա-  
նակին գալուստը, որ փրփրած ծովու մը պէս  
մտեր ողողեր էր բիւրաւոր զօրքով մեր աշխարհը,  
փութաց ժողովեց իր որդիքը և թոռները, ծա-  
ռաները և քաջ աղեղնաւոր հաւատարիմ պաշտօ-  
նեաները, և բանակեցաւ վանայ ծովակին մօտ. Բա-  
ցաւ Հայկ իր հրեղէն բերանը, և խրախուսիչ խօս-  
քերով նոր ուժ և կորով շնչեց ամենուն սր-  
տին և հոգւոյն մէջ, պատուիրելով՝ որ ամէն բանէ  
աւելի արթուն և մտադիր ըլլան Բելայ շարժումնե-  
րուն: Յետոյ բանակեցուց զանոնք բարձր բլուրի  
մը վրայ, ուսկից կրնային դիւրաւ դիտել թշնամ-  
ւոյն բոլոր պատրաստութիւնները և շարժումները:  
Երկու կողմէն ալ ահաւոր պատրաստութիւններ  
կը տեսնուին: Բէլ ոտքէն մինչև գլուխ բոլոր զրա-  
հաւորուած, գլուխը՝ երկաթէ սաղաւարտ դրած,  
կուրծքը՝ պղնձէ տախտակներով պատսպարած,  
բազուկները և սրունքները՝ երկաթէ պահպանակ-  
ներով պաշտպանած, ձեռքին մէջ սուր, նիզակ,

տէգ և վահան բռնած, և չորս բոլորտիքը ընտիր ընտիր սպառազէն խումբերով պատած, խրոխտ և սպառնալից շարժումներով և նայուածքով յառաջ կու գար: Կարծես թէ մայրիներու անտառի մը մէջ ելած բարձրացած սէգ կաղնի մ'էր, որ ինքզինքը անմահ կարծած ատեն՝ յանկարծ կայծակ մը կ'իջնէ՝ մոխիր կը դարձնէ զինքը: Հայկ ալ միւս կողմէն տեղաւորեց իրենները, Արմենակ և Կադմոս՝ իր միւս որդիներով բանակին երկու կողմը դրաւ, սրոնք քաջ և ճարպիկ էին սուր և աղեղ գործածելու մէջ: Իսկ ինքը՝ բանակին առջևը կեցած՝ իբր երկաթէ անտեղիտալի պարիսպ մը, եռանկեան ձևով շարեց յարմարցուց բանակը: Եւ ահա ականթարթի մէջ, նշան տրուածին պէս, երկու թուխ և մրրկոտ ամուկերու նման յարձակեցան և իրար խառնուեցան երկու բանակները:

Ինչպիսի՜ ահաւոր տեսարան մը ներկայացաւ այն ատեն, երբ վահաններու կոփկոփիւնք միացած աղեղանց ձայններուն հետ՝ խուլ գլղղումով կը հնչեցնէին օգը, և երկիրն ալ կը հեծէր կարծես այն սոսկափիթխար հսկայից քայլերուն ներքև: Որպիսի՜ յուսահատ ողբի ձայներ կը զարհուրեցնէին լսողները, երբ չկարծուած պահուն մահացու նետեր և սլաքներ՝ հայ դիւցազանց ուժեղ բազուկներէն թռչելով՝ երկիր կը թաւալեցնէին թշնամույն գունդերը: Ամէն հայ զինուոր՝ իրենց մէկ մէկ ընդունած հարուածները հարիւրներով կը փոխանակէին: Երկար ժամանակ անպարտելի մնաց կռիւը. զայրացաւ, զարմացաւ Բէլ՝ թէ ինչպէս կը դիմանան հայերը այնչափ սակաւաթիւ գնդով իրեն բիւրաւոր զօլքերուն դէմ: Հոն հայկ արևատիպ կը փայլէր իր աննման գիւցազներուն մէջ. շատ շուտ յառաջ կը նետուէր իր կրակէ սրտով և ծարուած սրով, չորս գին մրրկելով մահ և ոտարտափ կը ձգէր թշնամուսց զնդին վրայ:

կարծես իր անձն անմատչելի դարձեր էր թշնամի հարուածներուն: Այս տեսնելով Բէլ՝ յուսահատած սկսաւ ետ քաշուիլ և ամրանալ երկու բլուրներուն մէջ, սպասելով որ իր բովանդակ զօրքը հասնի և դարձեալ սկսին պատերազմիլ: Իմացաւ Հայկ թէ ահ և սարսափ լքուցեր են Բելայ սիրտը և աչքերը մթնցուցեր: յարմար առ ի թ համարելով՝ առաջ նետուեցաւ աներկիւղ, մտեցաւ տխտանեան հըսկային, ուղղեց և կորովի բազուկներով քարչեց լայնալիճ աղեղը, և երեք թևեան մահասայր սլաքը դէպ ուղիղ Բելայ կուրծքի տախտակին հանդիպելով, թափով անցաւ միջէն և գետին մխեցաւ: Իսկոյն ահազին զղրղումով երկիր կործանեցաւ անճուռի և սոսկափի թխար հսկան և հողին փչեց: Իսկ անոր ամբոխ բազմութիւնը տեսնելով մեր Հայկ նահապետին այսպիսի դիւցազնական քաջութեան գործը, իրենց զէնքերը և աւարը թողլով՝ հազիւ փախչելով ապատեցան մահուան հարուածներէն:

Այսպիսի քաջութեան մը յիշատակը ապագայ սերնդոց մէջ յաւերժացնելու և զանոնք յաղթութեան սիրով վառելու համար, պատերազմին տեղը դատակերտ մը շինեց մեր քաջ դիւցազը, և Հայք դրաւ անունը: Այս գիւղէս սակաւ մի հեռու դէպ ի հարաւ՝ կը գտնուի Աստուաճալև գիւղը, որուն համար ողոյսին գողտրիկ աւանդութիւն մը կը պատմէ, իրր թէ պատերազմի տապնապալից վայրկենին երևցեր է Աստուած Հայկայ, օրհներ է անոր աղեղը՝ որ իրեն փառաց գործիք պիտի ըլլար և թշնամոյն՝ զէնք մահու: Այս երկու գիւղերուն մէջ կը գտնուի ուրիշ աւելի վսեմ՝ և աւելի սիրուն յիշատակարան մը, Հայկայ յերդ կոչուած, մենայեալ սեպացեալ բլուրի մը ծայրը, ուր կը տեսնուին գեւ երեք կամ չորս կարգ մեծամեծ քարանց աւերակներ: Իսկ բլուրին ստորտը, ուր ինկաւ կործանեցաւ Բէլ իր հազարաւոր հսկաներով, Գեղեղմանք

անուանեց Հայկ. անոր քստմնելի դիակն ալ հրա-  
մայեց որ Հարք տանին և բարձր բլուրի մը վրայ  
թաղեն՝ ի պարծանս իրեն քաջութեան և յամօթ  
թշնամեաց: իր կտրիճ թոռան կազմոսի ալ շատ  
պարգևներ տալով՝ դարձուց իր նախկին բնակու-  
թեան տեղը: Իսկ ինքը՝ կը կարծուի թէ քիչ մը  
ժամանակ ալ բնակած ըլլայ վանայ մօտերը, ուր  
պարտէզներու և այգեստանեայց մէջ Հայկա՛յանք  
անուամբ տեղ մը կը յիշատակուի, այն քարա-  
ժայռ բլուրին մօտ, ուր բաւական ժամանակէ  
ի վեր գտնուեցան ձեռագործ այրեր և բեւեռա-  
քանդակ արձանագրութիւններ: Իր կենաց վեր-  
ջին տարիները անցուց Հարքի բնակութեան մէջ,  
ուր յետ խաղաղութեամբ կառավարելու հպա-  
տակ ազգերը, այլևայլ բարեկարգութեամբք և շի-  
նութեամբք զարդարելու երկիրը, խաղաղութեամբ  
վախճանեցաւ, անդրանիկ որդւոյն Արմենակայ  
յանձնելով ազգին կառավարութիւնը:







ՏԻԳՐԱՆ Բ.

## Տ Ի Գ Ր Ա Ն Բ

**Ա**ԶԳԱՍԼԻՐ սիրտ մը կ'ախորժի միշտ մնալով ման գալ հայրենի հողին վրայ, կը սիրէ դիակը և գգուել իր ծննդավայրը և նախնեաց յիշատակարանները. և եթէ չգտնէ զանոնք սրտին ուզածին պէս, դարուց անընդհատ հարուածներէն անմաշ, դեռ ևս կանգուն յոտին և մանկութեան դալար գափիններով պսակուած, սակայն անոր աւերակներուն մէջ իսկ կը գտնէ բան մը՝ որ իր այրած սրտին զովութիւն և սփոփանք կ'ըլլայ: Այնպիսին եթէ հայրենի հողէն դուրս՝ օտարներու պայծառ վարդերուն մէջ, չըսեմ՝ հայրենի թառամած վարդ մը՝ այլ և փուշ մը գտնելու ըլլայ, կրնայ անթունդ և անզգայ նայիլ և զանց ընել: Ապա որչափ աւելի թունդ պիտի ելլայ սիրտը, երբ ուրիշներու քաջերուն մէջ տեսնէ ազգային դիւցազ մը, որ թէպէտ ինկած, այո, յազթանակներու և հասակին ծանրութեան ներքև, բայց ինկնալու միջոց իսկ՝ օտար դիւցազանց դիակները իրեն օթոց և բարձրած է. ինչպէս բարձրաբերձ եզին մը, որ գետին թաւալած միջոց իսկ՝ դաշտերու ծառերն և ծաղկըներն իրեն ներքև թաղելով, իր վսեմութիւնը և գեղեցկութիւնը բոլորովին չի կորսընցներ:

Այսպիսի մէկն եղաւ ահա, Հայկակ, մեր Տիգրան Բ արշակունի թագաւորը, որուն քաջութեան և ուրիշ ամէն բանի վրայ՝ որչափ որ մերն



է առաջին իրաւունքը, սակայն մէկ բան միայն՝  
և թերևս իրաւացի ալ՝ ուրիշները կ'ուզեն յա-  
փըջտակել մեզմէ, այս է՝ իր անուան և համբա-  
ւին եւ պատերազմներու մանրամասն տեղեկու-  
թիւնը: Վասն զի, մինչդեռ ազգային երգիչները  
և պատմիչները լուծեան և մուսացութեան մէջ  
թաղած՝ սոոյդ քիչ բան աւանդած են մեզի, ու-  
րիշ ազգերու ժամանակակից պատմիչները՝ մե-  
ծամեծ դրուատիքով ի գիր արձանացուցեր են  
անոր քաջութիւնները և յեանոց աւանդեր են.  
մինչև հոսովմայիցի մեծ ճարտարախօսը կիկերոն  
չի տարակուսիր ըսել մեր արշակունի Տիգրանայ  
համար, ամենահօր քազառք Ասիոյ (Potentissimus  
rex Asiae).

Սա՛ որդի էր Արտաշէս առաջինին, որուն քա-  
ջութեան և աշխարհակալութեան վրայ պատմուած  
զարմանալի իրերուն եթէ հաւատք ալ չուզենք  
ընծայել, բայց միշտ կը ստիպուինք խոստովանիլ՝  
թէ անոնք սոսկ մտացածին բաներ ալ չեն կըր-  
նար ըլլալ: Յոյները և դրացի ազգերը լսելով  
ասոր մահը, կէս ուրախացած և կէս վայրացած՝  
արշաւեցին մեր երկրին սահմաններուն վրայ. և  
որչափ մեծ եղաւ անոնց զարմանքը և սարսափը,  
երբ բազմաթիւ գնդով դիմացին կանգնած  
տեսան Արտաշիսեան հօրամայն կորիւնը՝ Տիգրան,  
որ Միհրդատայ հետ սաստիկ կոտորած մը տա-  
լով՝ փախուց հալածեց զանոնք մինչև իրենց տե-  
ղերը: Անկէ զառնալով Մաթակ, որ է կեսարիա,  
տիրեց փոքր Ասիոյ և Միհրդատայ ձեռքը յանձ-  
նեց, Պոնտոսի և Միջերկրեայց թագաւոր դնելով  
զինքը: Ասով գոհ չեղաւ. այնպիսի սիրտ և հոգի  
մ'ունէր, որ կարծես կ'ուզէր կենաց ամէն մէկ  
օրը՝ այլ և ժամերը՝ յաղթութեամբ պսակուած  
տեսնել. և իրաւցնէ, ըսական էր որ շարժէր սու-  
սերը կամ՝ ազեղը՝ միշտ ինքն էր յաղթողը: Նեղ

կը համարէր իր թագաւորութեան սահմանները. և նման առիւծու, որ փշրելով գառաղիղին վանդակները, դուրս կը խոյանայ, կ'աւրէ, կը ջարդէ. այսպէս նաև Տիգրան արշաւեց մեր աշխարհին չորս կողմը, և շատ թագաւորներ գերի բռնելով՝ սարսափեցուց բոլոր դրացի ազգերը, տէրութեան սահմանները ընդարձակեց. մանաւանդ թէ, աւելի ճիշդ խօսելով, թորենացոյն ըսածը կատարեց, Սաւանն քաջաց՝ զէնն իւրեանց, Այս յաղթանակներու և յաջողութեանց վրայ այնչափ բարձրացաւ Տիգրանայ սիրտը, որ մինչև կը կարծէր թէ աշխարհիս վրայ ամէն բան իր ակնարկութեամբ կը յաջողի: Եւ ինչպէս կ'ըսեն հռովմայեցի պատմիչները, իրեն գերի բռնած թագաւորները՝ միշտ ձեռնամուտ կը կենային գիմացը և կը ծառայէին. մանաւանդ թէ անոնցմէ չորսը՝ միշտ իր հետ կը պտըացնէր իբրու թիկնապահներ կամ իբրու շքոյ և փառաւորութեան համար: Երբոր իրեն պերճաստսորդ անխաբարանոց երիվարին վրայ նստած՝ կը շրջէր իրեն ժողովրդեան մէջ, անոնց երջանկութիւն և խաղաղութիւն բաշխելու, և կամ իրմէ յաղթուած ազգերու աղերսարկու հրեշտակներուն գիմաց կ'ենէր հաշտութեան կամ սպառնալեաց պատգամը որոտալու, այն չորս հէք թագապուրկ թագաւորները, հագած արքունական պատմուճանը յամօթ և կորանս իրենց թշուառութեան, հեախոտս կ'երթային միշտ անոր մօտէն: — Երբոր արքունի գահոյից վրայ բազմած՝ հրապարակաւ կը ճառէր նախարարներուն և իշխաններուն առջև, կամ՝ ազգային հանդէս մը իր ներկայութեամբ կը պատուէր, միշտ գիմացը ստփի վրայ կը կենային, իբր թէ անով իրենց ծառայ կամ գերի ըլլալը խոստովանէին: Սակայն Տիգրանայ կրօնասիրութիւնն ալ ոչինչ պակաս զարմնալի եղաւ. բոլոր նուա-

ճած աղգերու քուրմերը և կուռքերը Հայաստան բերաւ, մեհեաններ շինեց և զարգարեց, և ժողովուրդը իր օրինակով յորդորեց հեթանոս կրօնքը սիրելու. ուսկից հրաժարելով Բագրասունիք, որոնք ճշմարիտ աստուածապաշտ էին, աւաւանոնց ձեռքէն սպարապետութեան իշխանութիւնը և միայն թագադրութեան պատիւը թողուց:

Նոյն ժամանակները Սելեկիացոց տէրութիւնը տկարացեր էր, ներքին այլևայլ շփոթութեանց պատճառով. անոնց իշխանները մտածեցին որ օտար թագաւորի մը ձեռքը յանձնեն իրենց տէրութիւնը, որպէս զի գոնեա անով խաղաղութիւն գտնեն. այս նպատակով հրաւիրեցին Տիգրան, լսելով որ անոր ձեռքին տակ գտնուած ժողովուրդները լիովի խաղաղութիւն և երջանկութիւն կը վայելեն: Փութայ՝ աճապարեց Տիգրան, եւ հալածելով Անտիոքոսը՝ թագաւորեց Սելեկիացոց և Ասորոց երկրին. իրեն փոխանակ տեղապահ թողլով Անտիոք քաղաքին մէջ Մազդատ անունով իշխան մը, ինքը դնաց Պաղեստին, ուր շատ հրեաներ գերի բռնելով՝ Մծրին քաղաքը դարձաւ, և գերիները Քասաղ գետին քով վարդգէս աւանին մէջ բնակեցուց:

Երբոր Հռովմայեցոց Սիլլա զօրավարը մեռաւ, անոր Միհրդատայ հետ դրած հաշտութեան դաշինքն ալ վերցուեցաւ. ուստի Միհրդատ իմացուց զայն Տիգրանայ՝ որ բազմութեամբ զօրաց յարձակի կապադովկիոյ վրայ և անոր տիրէ: Արդէն Տիգրան յաղթանակներով և աւարով ճոխացած՝ պատերազմելու առթի մը կը սպասէր. վաղեց և տիրեց կապադովկիոյ, և այն կողմերէն երեսուն հազար գերի հետը Հայաստան բերաւ: Անոնց տեղեր և քաղաքներ տալով, ամայի և աւնապատ տեղ չի թողուց Հայաստանի մէջ, այլ շէնցուց, ուռճացուց և մարդաբնակ ըրաւ մինչև հովիտները և լեռները:

Եթէ Տիգրան ահաւոր և ջախջախիչ թակ մ'էր իր թշնամեաց գլխուն, նոյնչափ ալ բարեկամներուն և իրեն դիմողներուն ապաւէն մ'էր: Միհրդատ յաղթուելով Լուկուլլոսէն, իրեն վերաւոր սրտին չգտաւ ուրիշ լաւագոյն սպեղանի մը՝ քան հովանին և սէրը Տիգրանայ: Նոյն ժամանակ Սելևկիացւոց թագաւորին կղէոպատրա կինը, որ Պտղոմայիդ քաղաքին մէջ կը թագաւորէր, Տիգրանայ դէմ գրգռեց Ատորինները և Սելևկիացիները: Տիգրան լսելով զայն՝ բազմաթիւ գունդերով փութաց իսկոյն ապստամբները նուաճել պաշարելով տիրեց Պտղոմայիդ քաղաքին, և կղէոպատրա թագուհին ալ՝ որ յուսահատած Սելևկիոյ միջնաբերդին մէջ ապաւիններ էր՝ բռնեց և սպաննեց: Այս կոտորածիս և սպանութեան լուրը սարսափեցուց զամէլքը: Հրեայք վախնալով՝ թէ Տիգրանայ օրհասարեր սուրը յանկարծ իրենց դէմ ալ կը շողայ, անոնց Աղեքսանդրէ թագուհին առատ և ճոխ ընծաններ ու դեսպաններ զրկեց անոր, երբ Պտղոմայիդ քաղաքը պաշարեր էր: Որոնք հասնելով առ Տիգրան՝ ընծաներով և ազերսով ողորցցին անոր բարկութիւնը և խնդրեցին որ իրենց վնաս մը չի հասցունէ: Իսկ Տիգրան սիրով ընդունելով անոնց նուէրները և ազաւանքը, մանաւանդ թէ գովելով անոնց խոնարհամտութիւնը, խոստացաւ ոչ միայն չարիք չհասցունել իրենց, այլ և ըստ կարելւոյն՝ օգնել և բարիք ընել:

Լուկուլլոս իմանալով որ Միհրդատ Տիգրանայ քով ապաւիններ է, դեսպան զրկեց անոր՝ որ իր ձեռքը մատնէ Միհրդատը: Իսկ Տիգրան պատասխանեց, թէ «այնչափ վատ և անսիրտ չեմ, որ իմ աղղականս և բարեկամս ձեր ձեռքը մատնեմ: Եթէ կ'ուզէք պատերազմիլ՝ պատրաստ եմ»: և Միհրդատայ տասն հազար ձիաւոր զօրք

տարով, ուղարկեց զինքը Պոնտոս : Տիգրանայ այս խրոխտ եւ խիստ պատասխանը հռովմայեցի զօրավարին սիրտը գրգռեց, թողուց նա Միհրգատ և իր ատելութիւնը Տիգրանայ դէմ դարձուց . ինչպէս վարազն ալ թողլով վայրկեան մը իր որսը՝ անոր դէմ կը խոյանայ՝ որ զայն ձեռքէն յափշտակել կ'ուզէ : Լուկուլլոս բանակը դարձուց Տիգրանակերտի վրայ և պաշարեց զայն . անոր դէմ Տիգրան վեց հազար զինուոր զրկեց, որոնք կէս մ'իրենց անձնական քաջութեամբ եւ ճարտարութեամբ, կէս մ'ալ գիշերուան մթին վարագուրով ծածկուած՝ ճեղքեցին Հռովմայեցւոց բանակը, մտան քաղաքին մէջ, և Տիգրանայ բոլոր գանձերը և հարճերը առած փախուցին իրենց հետ, որուն վրայ ապշած մնացին Հռովմայեցիք : Վերջը Տիգրան ալ երեք հարիւր փաթտուն հազար երկաթապատ սպառազէն զօրքով Լուկուլլոսի դէմ գնաց . երբ լսեց Լուկուլլոս՝ սարսափեցաւ, և քսանուչորս գունդ սուած հետը՝ հազարաւոր աղեղնաւորներով և պարսաւորներով Տիգրանայ դէմ ճակատեցաւ ընդարձակ դաշտի մը մէջ :

Տիգրան տեսնելով Հռովմայեցւոց բանակին սակաւութիւնը՝ արհամարհանօք այն հուշակաւոր խօսքը ըստ . *ի՛նչ եւս ասուիք, եթէ դեսպանուքեւսն եկեր եւ՝ շատ եւս, իսկ եթէ պատերազմի՝ քիչ եւս* . և այս ըսելով՝ անհող կեցաւ և չի կարգաւորեց բանակը, բայց իրեն յանձնապատասխանութեան պատիժը գտաւ այս անգամ : Նա որ ամէն տեղ բախտը իրեն նպատատաւոր տեսեր էր, եւ միշտ թշնամեաց աւարով՝ յաջողութեամբ եւ յաղթութեամբք պսակուած հայրենիք դարձեր էր, կրնար թերևս անգամ մ'ալ թշնամոյն գիմաց անփոյթ կենալ, բայց ոչ այն դէպքին եւ զօրավարին գիմաց : Վասնզի, մինչդեռ հռովմայեցի զօրքը լքեր վհատեր էր, Լուկուլլոս՝ յանդուզն

խորհրդով՝ խրախուսեց իրենները, և հրամայեց որ յանկարծ Հայոց վրայ յարձակին։ Տիգրան նախ չհաւատաց. բայց երբ թշնամեաց նետերը կարկուտի նման սկսան իր բանակին վրայ թօթափիլ, իմացաւ սխալը, բայց շատ ուշ։ Շփոթեցաւ Տիգրան և զօրքն ալ շփոթցուց. փոխանակ թշնամոյն դէմ՝ մղելու զանոնք՝ փողերը հնչեցնել տուաւ որ ետ քաշուին. ասոր վրայ Հռովմայեցիք սիրտ առած՝ հալածեցին Տիգրանայ զօրքը, հինգ հազար հոգի սպաննեցին, եւ շատերն ալ գերի բռնեցին. իսկ ինքը Տիգրան հազիւ կրցաւ ամրոցի մը մէջ ապաւինիլ։ Լուկուլտոս այս յաղթութեամբ քաջալերուած, Տիգրանակերտի վրայ դնաց, տիրեց և բոլոր գանձերը յափշտակեց. այն պահուն Հայոց ձիաւոր զօրքը վրայ հասաւ, պատերազմեցաւ Լուկուլտոսի բանակին հետ, և փախչիլ կեղծեց։ Երբ տեսան որ Հռովմայեցի զօրքը խառնափնդոր առանց կարգի ետունէն կը վազեն, յանկարծ ետ դառնալով՝ սաստիկ ջարդ մը տուին Լուկուլտոսի բանակին։

Սակայն ազգի մը այնչափ վնաս չեն հասցուններ օտարները, որչափ որ ներքին և ընտանի թշնամին. վերջինս աւելի մտաւ ըլլալով, նոյնչափ ալ վտանգաւոր է, և անոր հասուցած վնասն ալ անդարմանելի։ Եթէ Տիգրանայ ապստամբ որդին Տիրան՝ չի բանար հայրենի աշխարհին դռները Պոմպէոսի դիմաց, անտարակոյս նա չէր կրնար չըսեմ՝ տիրել այլ և կոխել իսկ մեր հայրենի սահմանները։ Ստիպուեցաւ Տիգրան հաշտութիւն ընել Պոմպէոսի հետ, և անթիւ պարգևներով մեծարել զինքը և անոր զօրքը, և այս կերպով ապահովել գէթ իրեն թաղը և երկիրը։

Տիգրան ծերացած ըլլալով՝ իր կենդանութեան միջոց Արտաւազդ որդին թողաւ որեցուց. սա՛

կայն սրտի բնական արութիւնը ծերութեան չի նայիր, այլ դեռ աւելի զարմանալի կ'ըլլայ այն թարշամած հասակին մէջ, ինչպէս որ արեն ալ մայր մտնելու միջոց՝ եթէ ոչ պայծառ՝ գոնէ աւելի գեղեցիկ և անոյշ կ'երևի: Գաբխանոս՝ որ նոյն միջոց Ասորւոց կուսակալ դրուած էր, չկըրնալով Տիգրանայ զօրութեան դէմ կենալ, լռեց և հաշտութիւն ըրաւ. և զարձեալ չգրգռելու համար այն յոգնած՝ այլ ամենի առիւծը, խոհեաութիւն համարեցաւ հեռանալ այն կողմերէն և Եգիպտոս գնաց: Կրասոս ալ, եթէ իր ծովածաւալ ճոխութեան հաւասար քաջութիւն և պատերազմի հմտութիւն ունենար, պիտի չկրնար Պարթևներուն անվրէպ և ահաւոր նետերէն ազատիլ. և հոս Պարթև ըսելով, Հայկակ, դու Հայերն ալ իմացիր, որոնք ազգակից և դաշնակից ժողովուրդներ էին: Կրասոսի և անոր ամբողջ բանակին կատորածը սաստիկ զայրացուց Հռովմայեցիները. վրէժինգիր սրտերու սպառնալիքը և սուսերաց փայլը վարհուրեցուցին Տիգրանը, որ ուզելով Պարսից Արշէգ թագաւորին հետ հաշտութիւն ընել, անոր տուաւ նախադահութիւնը՝ զոր իր հայրը յափշտակեր էր Պարթևներէն: Այսպէս երկու հզօր տէրութիւնները իրարու հետ միաբանելով՝ կրցան քիչ մը ժամանակ Հռովմայեցւոց բուռն արշաւանքը բռնել կամ՝ գէթ հանդարտեցնել. և յերաւի, իսկոյն անթիւ զօրք ժողովելով երկու մեծ բանակ կազմեցին, որոնց մէկուն սպարապետ եղաւ Բարզափրան Ռչտունեայ նախարարը, իսկ միւսին՝ Պարսից թագաւորին որդին Բակուր. ասոնք գնացին Փիւնիկէի, Ասորւոց և Պարստինու վրայ, և ամէն տեղ յաջողութիւն գտան: Տիգրան անկէ վերջը շատ չապրեցաւ, յիսունևչորս տարի թագաւորելէն յետոյ՝ մեռաւ ութսունևհինգ տարեկան: Այս թա-

գաւորիս արժաթ և պղինձ դրամները կը դըտ-  
նուին մինչեւ հիմակ, որոնց վրայ կ'երևի անոր  
անմըուս դիւցազնական կերպարանքը: Եւ իրաւ-  
ցնէ, Հայկակ, ուրիշ ի՞նչ կերպարանքի ներքեւ  
կրնայիր երեսկայել այս արի և վեհանձն թա-  
գաւորը, քան միշտ երիտասարդ աշխուժից եւ  
կորովի մէջ, որ չյոգնեցաւ երբեք պատերազմ-  
ներէ, չվախցաւ վտանգներէ, չդադրեցաւ հայ-  
րենիքը ծաղկեցնելէ և ընդարձակելէ, որով եւ  
աննման հանդիսացաւ մեր արշակունի հեթանոս  
թագաւորներուն մէջ:







ԱՐՏԱՇԷՍ Բ

## Ա Ր Տ Ա Շ Է Ս Բ

**Ա**ՀԱ. քեզի, Հայկակ, ուրիշ թագաւոր մ'ալ, որուն պարծանաց և արուժեան համբաւը՝ ողբոց և սուգի այնչափ դարերը չկրցան նուագեցնել մեր սրտերէն, և կարծես կը լսենք տակաւին Գաղթնացի սրտայլով բամբիւններու թրթուումները, որոնք երգեցին երբեմն անոր կենաց ամենէն սիրելի եւ ճոխ հանդէսները, եւ միանգամայն պանծալի և տխուր մահը, որ սև քօղով ծածկեց՝ բայց չմոռցուց իր կենդանութեան միջոցի մեր հայրենի աշխարհին զարգացումը եւ բարգաւաճանքը. այս թագաւորս է Արտաշէս Բ:

Ասոր անունը, ուրիշ փառքերէ զատ, անով աւելի անմահացաւ՝ որ այնպիսի ամուր նեցուկ մ'եղաւ մեր արքունի գահուն, որ չկրցան կործանել զայն ոչ հռովմէական հզօր պետութիւնը և ոչ ալ հիւսիսային ազգերու բարբարոս յարձակումները: Բայց նիւթական կացութենէն աւելի, հայրենեաց կամ՝ ազգին մտաւոր և բարոյական վիճակը բարձրացուց, որով նախանձելի ըրաւ զայն դրացի և հեռաւոր ազգերու. վասն զի մինչդեռ մէկ ձեռքով թշնամեաց գունդերը և զէնքերը դուրս կը վանէր, միւսով՝ գիտութեանց և արուեստից լոյսը կը վառէր իր ազգին սրտին մէջ: Միով բանիւ, ինքն եղաւ առաջին որ բացաւ մեր աշխարհին մէջ ատտիկեան ոսկեղարը, գիտութիւնը և արուեստները ծաղկեցնելով, քաղաքա-

կրթութեամբ և աշխարհաշինութեամբ պճնելով մեր հայրենիքը, և վաճառականութեան սաստիկ մղում մը տալով:

Մանուկն Արտաշէս գրեթէ աղետից մէջ բացաւ իր աչքերը, սուր և նախճիր պատեր էին իրեն խանձարուրքը. և սակայն ծածուկ տեսութեամբ՝ նոյն աղետից մէջ ալ երջանկութիւն եւ յաջողութիւն զինքը ձեռքէ չի ձգեցին. մինչդեռ իր եղբարքն անխնայ կերպով զոհ գնացին դահճի անգութ սրոյն, ինքը կրցաւ ազատիլ ստընտուին ձեռքով: Քաջ ասպետն Սմբատ Բագրատունի՝ աւելի եւս ապահովցնելու համար արքայազարմ մանկան կեանքը, որ հայրենեաց միակ յոյսն էր, Երուանդ բռնաւորին ձեռքէն փախուց զինքը Պարսկաստան, ուր իբրու արքայորդի սնու և մեծցաւ Դարեհ թագաւորին արքունեաց մէջ: Երուանդ իմանալով այս բանս, ուզեց մինչև հոն ալ հասցնել իր նենգաւոր վրիժուց թոյնը. ուստի գրեց Դարեհի և Սմբատ Բագրատունուոյ, թէ մանուկն Արտաշէս ազգով բնիկ արշակունի չէ, այլ մար հովուի մորդի. ուստի չըլլայ թէ թագաւորեցնեն զինքը, այլ իրեն զրկեն: Բայց երբ խիստ պատասխաններ ընդունելով՝ իմացաւ թէ իր մաքին ծածուկ դաւը խայտառակուեցաւ, յուսահատած սկսաւ քաղաքները պատապարել, և իրեն ամբողջան և ապաստանի համար յատկապէս քաղաք մը շինելով՝ իր անուամբ Երուանդալիկնրտ կոչեց. հոն իրեն առանձին պալատ մը շինեց՝ ծածուկ գետնուղիներով, թշնամեաց ո՛ր և է դաւաճանութենէ ազատ մնալու համար: Սակայն թագաւոր՝ մը որ իր ժողովրդեան սէրը և հաւատարմութիւնը չունի ապաստանարան, ի զուրբն ուրիշ ամէն միջոցներ, որուն թշուառ օրինակներ՝ թողլով մէկդի ուրիշ ազգերը՝ մեր պատմութեան մէջ քիչ չեն տեսնուիր:

Սմբատայ քաջութեանց և հաւատարմութեան համբաւը մինչև Պարսից թագաւորին ականջը հասնելով՝ գովեց զայն, զարմացաւ և ուզեց վարձատրել: Հարցուց անոր՝ թէ ի՞նչ բան կը փափաքէր. նա բոլոր ազգին և աշխարհին օգուտը վեր դասելով քան իր անձնական շահը և մեծութիւնը, հրաման և զօրք խնդրեց միայն՝ որ երթայ հայրենի գահը բռնաւորին ձեռքէն առնու և Արշակունեաց բնիկ ժառանգին Արտաշիսի դարձնէ: Հաւանեցաւ թագաւորը, Ասորեստանի և Ատրպատականի կտրիճ զօրաց բազմաթիւ գունդեր յանձնեց Սմբատայ ձեռքը և զրկեց Երուանդի վրայ: Երուանդ լսելով այս բանս, շատ զօրք ժողովեց քովը վրաց, Միջագետաց և կեսարիոյ կողմերէն՝ մեծամեծ պարզներ խոստանալով անոնց. և այլևայլ խումբերու բաժնելով զանոնք՝ ճակատեցուց Արտաշիսի հօր և բազմագունդ բանակին դէմ՝ իբրու մէկ մէկ երկաթէ պարիսպներ. իսկ ինքը փախչելով ապաւինեցաւ իր քաղաքին մէջ: Սակայն Արտաշիսի եւ Սմբատայ կաշմբուռն ուժոյն և քաջութեան առջև կործանեցան այն զօրաց պարիսպները. մինչև Գեղամայ ծովուն եզերքը հասաւ՝ արշաւեց Արտաշիսի բանակը, և կ'ուզէր սպառսպուռ ջախջախել Երուանդայ վերջապահ գունդն ալ, որ Ախուրեան գետին եզերքը ճակատեր կեցեր էր: Արտաշէս բնաւ վախ չունէր Երուանդէն, միայն Մուրացան տոհմին նահապետէն՝ Արգամ՝ անուամբ զօրավարէն կը վախէր, որ ի բնէ արիասիրտ և յանդուգն մէկն ըլլալով, կարող էր մեծ ջարդ և մլաս հասցընել իր բանակին: Այս տեղ Արտաշէս խորագիտութիւնը ձեռք առնելով՝ մարդ զըրկեց Արգամի, որ համուզէ զինքը իր կողմն անցընելու պատերազմի խաւնուրդին միջոց: Երբոր պատերազմի նշանը տրուեցաւ, և ըստ հրամանին

Սմբատայ, պղնձէ փողերը հնչեցին, իսկոյն սաստիկ յարձակումով սկսան կռուիլ երկու բանակներն ալ. այնտեղ քաջն Սմբատ՝ որ առիւծաբար մռնչելով հեռուէն իսկ ետ կը նահանջէր թշնամւոյն խումբերը, այժմ՝ ըստ գեղեցիկ նմանութեան խորենացւոյն՝ արծուօրէն խոյանալով կաքաւներու. խումբին մէջ, մահացու հարուածներ կ'իջեցնէր ոտխայ գնդին վրայ: Սակայն երկու կողմերուն ալ գրեթէ հաւասարազօր արութեան պատճառով յաղթութեան նժարը տակաւին հաւասարաչափ կեցեր էր, երբ յանկարծօրէն շփութութիւն մը ծագեցաւ Երուանդայ բանակին մէջ՝ Արգամայ իր ամբողջ գնդով Արտաշիսի կողմը անցնելուն համար, որուն հետեւեցան նաև ուրիշ նախարարներ, իրենց հետ միասին յաղթութեան անխն ալ Առտաշիսին բանակը սահեցընելով: Այս կատաղի պատերազմիս մէջ քիչ մնաց որ Արտաշիսի կեանքը զոհ պիտի երթար իր յանդգնութեան, արդէն պաշարուած ըլլալով չորս կողմէն քաջ Տաւրացիներէն, եթէ իր դայեկորդին սէգն և արին Գիսակ արծուաբար սլանալով իր սիրելի թագաւորին և թշնամւոյն սրոյն մէջ նետուելով չազատէր զանիկայ: Իսկ ինքը, աւաղ, յետ անոնցմէ շատերը գիտապատ գետին փռելու իր անպարտելի բազկով, յաղթական սուսերը և դրօշակը ձեռքը լռնած ինկաւ քաջութեամբ:

Գիշերը վրայ հասաւ, պատեց մութը. սակայն արութեամբ և վրէժխնդիր թշնամութեամբ լի սրտերը տակաւին մ'թութեան մէջ ալ իրենց սայրասուր սրաքայ ծայրերով կը փնտռէին ոտխայ կուրծքերը և չէին դադրեր մահացու հարուածներ տալէն, մինչև որ Երուանդայ բանակին անձանց թիւը հետզհետէ նուազելով, աճապարեց գոնեա փախստեամբ ազատել իր կեանքը: Սմբատ հաւածեց թշնամին մինչև անոր կենաց հուսկ վեր-

լին թեւը. իսկոյն փոքրիկ գունդով մը Երուանդայ ետեւէն գնաց, և թող շտուաւ քաղաքին դրոները գոցել՝ մինչեւ որ Արտաշէս հասնելով, մեռեալները թաղել տուաւ և տիրեց քաղաքին. իսկ եղկելին Երուանդ, իր պալատին անկեան մը մէջ պահոււրտած ըլլալով, զինուորի մը սուրէն սպանուած գտնուեցաւ:

Յետ տիրելու հայրենական երկրին և իր նախահարց գահը բռնաւորին ձեռքէն ազատելու, Սմբատ ասպետ՝ Սանատրկոյ թագով Վարտաշէս բոլոր Հայաստանի թագաւոր պսակեց: Արտաշէս սուսուրէն վարձատրեց իրեն բոլոր բարերարները. Պարսից զօրքերը այլևայլ թանկացիլն գանձերով և պարգևներով գարձուց իրենց աշխարհը. իսկ քաջին Արգամայ՝ իրեն խոստման համեմատ՝ թագաւորութեան երկրորդ գահը տուաւ, իշխանութիւն ալ տալով որ կարենայ գլուխը յակընթակապ պսակ զնել, ոսկի օղեր կախել, ոսկի բաժակով ըմպել, ե ոսկի դգալ և պատառաքաղ գործածել: Սմբատն ալ զօրաց սպարապետ դրաւ, անոր իշխանութեան յանձնելով բոլոր աշխարհին գործակալները և արքունի տունը. իսկ Ներսէս՝ Գիսակայ որդին՝ նախարարներուն կարգը բարձրացուց բոլոր տնով տեղով՝ հօրը ըրած քաջութեան պատճառով, Դիմաքսեան անունը տալով անոնց: Յետոյ Սմբատ՝ Արտաշիսի հրամանով սպաննեց Երուազ քրմնպետը՝ Երուանդայ եղբայրը, և անոր քով գտնուած գանձերը և մեհեաններուն բոլոր զարդերը և հինգ հարիւր ծառաները թագաւորին բերաւ. Արտաշէս ալ բոլոր ծառաները Սմբատայ պարգեւեց, իսկ գանձին վրայ ինքն ալ ուրիշ գանձեր աւելցնելով՝ Դարեհի զրկեց ի շնորհակալութիւն:

Աշխարհը խաղաղութիւն վերջը, ձեռք զարկաւ շէնցնելու և բարեկարգելու. նախ և առաջ այն

տեղ՝ ուր Երասխ և Մեծամօր գետերը իրար կը խառնուին, գեղեցիկ բլուրի մը վրայ շինեց կամ նորոգեց Արտաշատ քաղաքը, զարդարեց զոյն Երուանդակերտ քաղաքին զարդերով, հոյակապ պալատներ և մեհեաններ կանգնել տուաւ, և նորանոր պարիսպներով ամրացնելով՝ արքայանիստ քաղաք ըրաւ։ Նոյն ժամանակ Ալանները միաբանելով վրաց և ուրիշ գրացի բարբարոս ազգերու հետ, նման տարմատարմ աւերիչ մոռեխներու, խուռն բազմութեամբ յարձուկեցան Հայաստանի վրայ։ Աճապարեց Արտաշէս Սմբատայ հետ, իսկոյն անոնց դէմ՝ ելաւ բազմագունդ զօրքերով, և կուր գետին մօտերը սաստիկ պատերազմ մ'եղաւ երկու քաջ և աղեղնաւոր ազգերուն մէջ, ինչպէս կ'ըսէ Խորենացին։ Սակայն Հայք քաջագոյն հանդիսացան։ Ալանները ստիպուեցան ետ քաշուիլ, մինչև գետին միւս եզերքը անցան. պատերազմին մէջ Հայք գերի բռնեցին Ալանաց արքայորդին։ Ասոր վրայ խոնարհեցաւ բարբարոս թագաւորը, հաշտութիւն և իր որդւոյն ազատութիւն ինդրեց Արտաշիսէն. բայց երբ տեսաւ թէ նա յանձն չառնուր, գողտրիկ և հնարիմաց ճարտարութիւն ձեռք առնելով՝ իր աչագեղ դստեր Սաթլինկան միջոցով հասաւ նպատակին։ Արտաշէս՝ Ալաններու արքայորդին ազատեց գերութենէն, այլ անոր փոխարէն ընդունեցաւ զՍաթլինիկ իրեն հարսնութեան, որ Հայոց թագուհի պսակուեցաւ։ Այնպիսի շքեղ և ճոխ հանդէսներով կատարուեցաւ հարսանիքը, որուն նմանը բնաւ չյիշատակուիր մեր պատմութեան մէջ, զոր ազգային բամբիւռ և երգիչները չուզելով լուռութեան մէջ թաղել, անոր անոյշ արձագանգները մինչև մեր օրերը հասուցին, որոնք մեր ազգային դպրութեան իբր գեղեցկագոյն նշխարներ եւ նշմարներ՝ կը պզուին և կը մեծարուին բոլոր հայ բանասէրներէն։

Յետ այսպիսի յաջողութեանց և պատերազմիկ պարծանքներու, Արտաշիսի գլխաւոր փոյթն և ջանքն եղաւ՝ Հայաստանի ներքին զարգացումն և բարգաւաճանքը, թէ և Արտաշիսի յաղթութեամբք պատկուած կեանքն եւ հայրախնամ թագաւորութիւնը կարօտ չէր ուրիշ մեծագոյն պարծանքի մը, որով մեր թագաւորներու դասակարգին մէջ պայծառագոյն տեղի մ'ունենար. սակայն իր միւս ունեցած ձիրքերն և արդիւնքներն ալ վրան աւելցնելով, թերևս ամէն թագաւորէ աւելի սիրելի եղաւ նա մեզի, եթէ ոչ նաև գիւցազնագոյն, (վասն զի այս մասամբ ոմանք իրմէ աւելի գերազանց գտնուեցան): Օտար աշխարհներէ գաղթականներ բերելով՝ հրկրին մշակութիւնը և վաճառականութիւնը ծաղկեցուց, որով ուրիշ աշխարհներու հետ սերտ յարաբերութեան մէջ մտուց Հայաստանը: Կամուրջներ, աշտարակներ, գղեակներ և քաղաքներ շինել տուաւ, իսկ եղածները նորոգեց, ամրացուց և զարդարեց. արուեստից և ճարտարութեանց վարժարաններ կանգնեց, և ամէն տեսակ ուսմանց և գիտութեանց սէրը վստեց ամենուն սրտին մէջ: Արդէն բոլոր երկիրն արտաքուստ և ներքուստ խոր խաղաղութիւն մը կը վայելէր. սէր և միաբանութիւն ամենուն սրտերը մէկտեղ ձուլեր՝ միացուցեր էին. բոլորովին ջնջուեր և անհետացեր էին իրարու դէմ՝ նախանձու և ատելութեան զգացումները, որոնց աղետալի հետեանքները յաճախ վեր ի վայր ըրին մեր աշխարհին կարգն և խաղաղութիւնը: Բոլոր ժողովուրդն ալ ժիր գործօնեութեամբ անդուլ անդադար կ'աշխատէր մեղուօրէն, և ամէն մարդ իր վիճակին և արուեստին համեմատ իր երջանկութիւնը գտնել կը ջանար. որով բոլոր շրջակայ ազգերուն նախան-



ձելի եղաւ Հայաստան, և շատերը թողով իրենց բնիկ հայրենիքը՝ հոն կ'երթային բնակելու:

Արտաշէս վեց որդի ունեցաւ Սաթիւնիկէն. Արտաւազդ, Վրոյր, Մաժան, Տիրան, Զարեհ և Տիգրան: Ասոնցմէ անդրանիկն՝ որ էր Արտաւազդ, ի բնէ քաջ և կորովի, բայց խրոխտ եւ փառասէր անձ մ'ըլլալով, չէր կրնար անտարբեր աչքով դիտել զԱրգամ՝ այնքան մեծամեծ պատուոյ և իշխանութեան մէջ յղփացած. անոր համար գրգռեց իր Արտաշէս հայրը՝ ամբաստանելով զԱրգամ, իբր թէ կ'ուզէ սպաննել և ինքը թագաւորել: Այս անգամ խաբուեցաւ թագաւորը, չիմացաւ որդւոյն չարութիւնը և գժտեցաւ Արգամի հետ. ուստի ղրկեց իր Մաժան որդին բազմաձեռն գնդով, հրամայելով որ երթայ Մուրացան ազգին մեծամեծները կոտորէ, Արգամի տունն ալ այրէ և յարքունիս գրաւէ անոր ինչքը:

Գոհ չեղաւ Արտաւազդ Արգամի երկրորդութեան պատիւը կորզելով, նախանձով և ատելութեամբ սաստիկ խիւազարուած՝ իր իշխանութեան գահը վտանգի մէջ կը համարէր՝ քանի որ կ'ապրէր Արգամ: անոր համար սպաննեց զինքը եւ տնով տեղով բնաջինջ ըրաւ: Նոյն ժամանակները Պարսկաստանի մէջ ալ խռովութիւն կար թագաւորութեան նկատմամբ. վասն զի Արշակ Դ մեռնելով՝ մեր Արտաշէսը փոխանակ անոր թագաւորեցուց իր անուանակից Արտաշէսը՝ Պարսից արքայորդին. սակայն Պարսիկները չուզեցին հնազանդիլ անոր. կասբից երկիրն ալ ապստամբեցաւ մեր թագաւորէն, ուստի հարկ եղաւ ղրկել Սմբատը, որ գնաց խռովութիւսը խաղաղեց, Արտաշէս պարսիկը թագաւորեցուց, և կասբից աշխարհը նուաճելով, բռնեց տեղւոյն Զարգմանոս թագաւորը և անոր հետ միասին ուրիշ բազմաթիւ գերիներ բերաւ Հայաստան:

Արտաշէս անվարձ չթողուց իր հաւատարիմ սպարապետին Սմբատայ քաջութիւնը և արդիւնքները, որ թէպէտ մարմնով ծերացեր էր, այլ իր մէջ անծերանալի կորով և գալար սիրտ մը կը կրէր: Գողթան մէջ գտնուած արքունի կալուածները, Ուղտու ակունքը, և բոլոր աւարը անոր պարգևեց. ասոր վրայ ալ նախանձելով Արտաւազդ, ուզեց ինքն առնուլ զօրաց սպարապետութիւնը: Սմբատ իմանալով այս բանը, հրաժարեցաւ սպարապետութենէն և Ասորեստանի կողմերը գնաց բնակելու՝ Տմորեաց գաւառին Ալկի աւանին մէջ: Հասաւ Արտաւազդ նպատակին, զօրաց սպարապետ եղաւ. բայց այս անգամ միւս եղբարքն իրեն վրայ նախանձելով, սաստիկ հակառակութիւն ծագեցաւ արքայորդուց մէջ. այն ատեն Արտաշէս մտածեց ամէնն ալ թաղաւորութեան մեծամեծ գործերուն վրայ դնել, զանոնք խաղաղելու համար: Վրոյր որդին, որ իմաստուն և բանաստեղծ երիտասարդ մ'էր, արքունի տանը հազարապետ և գործակալ դրաւ. իսկ Մ'աժան որդւոյն՝ Արամազդայ քրմապետութեան պաշտօնը տուաւ Անի ամրոցին մէջ. զօրաց իշխանութիւնն ալ չորս մասի բաժնելով, արևելեան գունդը՝ որ ամենէն աւելի բազմութիւն էր՝ Արտաւազդայ տուաւ, միանգամայն սպարապետ կարգելով զինքը. արևմտեանը՝ Տիրանայ յանձնեց, հիւսիսայինը՝ Չարեհին տուաւ, իսկ հարաւայինը՝ դարձեալ Սմբատայ ձեռքը յանձնեց:

Տեսնելով Արտաշէս որ տէրութիւնը ըստ ամենայնի խաղաղ և բարեկարգ դիրք մ'առաւ, եւ վստահացած իր արքայորդուց քաջութեան վրայ, գլուխ վերուց Հռովմայեցուց կայսերութեան դէմ և չէր ուզեր անոնց հարկ տալ, որուն հետևեցան նաև Պարսիկները: Այն ժամանակ Տրայխանոս կայսրը բարկանալով զօրք ղրկեց Հայոց վրայ:

որոնք երբ կեսարիոյ մօտերը եկան, Տիրան իր արևմտեան գնդով անոնց դէմ ելաւ. սակայն չկարենալով Հռովմայեցւոց հաստարուռն զօրութեան դէմ գնել, յաղթուեցաւ և մինչև Բասենոյ ընդարձակ հովիտը քշուեցաւ: Օգնութեան հասան Արտաւազդ և Զարեհ իրենց զօրքերով, և սաստիկ պատերազմ և կոտորած եղաւ երկու կողմէն. քիչ մնաց որ այս անգամ ալ բոլորովին պիտի կորսնցնէին Հայք յաղթութիւնը, եթէ ծերացած առիւծն Սմբատ չխոյանար արծուօրէն և չհասնէր օգնութեան, որուն սուկ ներկայութիւնը բաւական եղաւ վառել ամրապնդել լքեալ զօրքերուն սիրտը. գոչեց խրախուսեց բանակը, ինքն եղաւ առաջին յարձակողը թշնամւոյն բանակին վրայ, և այն վերջին անգամ՝ ալ ցուցընելով իր պատերազմական բազմափորձ հմտութիւնը և հայկական կորովը, սաստիկ կոտորած մը տուաւ Հռովմայեցւոց և հալածեց մինչև կեսարիոյ սահմանները: Այս ալ բաւական չեղաւ, Հայք իրենց սահմաններէն անդին անցան, Պարսից հետ մէկ եղած՝ Յունաց և Կապադովկացւոց երկիրները մտան, ջարդեցին, ասպատակեցին, շատ տեղեր և քաղաքներ այրեցին:

Երբոր լսեց Տրայիանոս այս ամէն բաներս, ինքն անձամբ եկաւ. Հայոց և միւս ապստամբող տէրութեանց վրայ՝ քաջ և բազմաթիւ զօրաց գունդեր հետը առած: Այս անգամ՝ սիրտ չբրաւ Արտաշէս պատերազմով դէմը ելնել, վասն զի Սմբատ ալ բոլորովին ծերացեր և զէնքերը թողուցեր էր: Աճապարեց ընդ առաջ երթալ կայսեր շատ ընծաներով և անցած տարիներուն հարկերով. ասով կրցաւ անոր բարկութիւնը իջեցնել:

Քանի մը տարի վերջը երբ Մարտաց կողմերը կ'երթար Արտաշէս, ճամբան սաստիկ հիւանդանալով՝ հարկ եղաւ որ Մարանդ գաւառին Բա-

կուրակերտ աւանին մէջ կենայ. բժշկայ օգնութեանէն յուսահատած՝ դից օգնութեան ապաւինեցաւ, որուն համար նուէրներով պատգամուոր մ'ալ ուղարկեց Երիզա քաղաքին Արտեմիդեայ մեհեանը: Այն յետին պահուն, երբ մահուան սև վարագոյրը անոր աչաց առջև պիտի փակէր աշխարհիս տեսարանը, յիշելով իր կենաց երջանիկ առաւօտը և պայծառ միջօրէն, փափաքեցաւ վերջին անգամ՝ մ'ալ տեսնել հայրենեաց վայելչութիւնը, զոր այնքան ասարի անխոնջ ճիգերով զարդարեր և ճոխացուցեր էր իբր դշխոյ Ասիոյ: Իր վերջին շունչին հետ՝ վերջին անուշիկ ողջոյնն ալ աւանդեց անոր, և հառաչելով այս սրտաուռչ տողերս արտասանեց.

« Ի՛ տայր ինձ զժուի ծխանի

Իւ զառաւօտն նուասարդի.

Զվազելն եղանց և զվաղելն եղչերուաց.

Մեր փոյ հարուսք և լծբկի հարկանէար »:

Արտաշիսի կենաց թիւը փութով խղեցաւ, յետ քառասուն և մէկ տարի թագաւորելու եւ հայրաբար խնամելու իր ողոր և աշխարհը: Այս տխուր զուժս իսկոյն տարածուելուն պէս, բոլոր սիրելիներուն սիրար տխրութեամբ համակեց և սևթոյր քօլով պատեց հայրենեաց արևը, որ մինչև այն ժամանակ պայծառ և երջանիկ ծագեր էր Հայաստանի վրայ: Շատերը՝ յետ իրենց սիրելի թագաւորին արևը մթնած խուարած տեսնելու՝ ալ իրենք զիրենք անարժան համարելով արևուն լոյսը վայելելու, նեակցին զիրենք անոր գերեզմանին մէջ՝ մէկտեղ ննջելու խապաղիկ յաւիտենական քունը: Սխրալի և տխրալի կերպով կատարեցին անոր մեծահանդէս յուղարկա-

ւորութիւնը, զոր գեղեցիկ խօսքերով կը նկարագրէ խորենացին, փոխ առնելով անշուշտ կամ գողթնացի սրտեռանդն վիպասաններէն և կամ ազգային զրոյցներէն, և կ'արժէ հոս դնել ամբողջապէս առանց այլայլելու՝ բնագրին գեղեցկութիւնը չխանգարելու համար. « Դագադքն էին ոսկեղէնք, գահոյքն և անկողինքն բեհեզեայ, և պատմութեանն որ զմարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկևով առաջի եգեալ և զգահոյիւքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն սզգականացն. և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք, և նահապետք և նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն վաշտք, ամենքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ՝ ճակատիցին. և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զինիան ձայնարկու կուսանք սեւազգեստք և աշխարող կահայք, և զհետ բազմութիւն ուամկին: Եւ այսպէս տարեալ թաղեցին, և շուրջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահունք »: Թագաւորեց Արտաշէս Քրիստոսի 85 թուականին, և 134ին մեռաւ իբր վաթսուն տարեկան:







ՍՍ.ԹԻՆԻԿ

## Ս Ա Ք Ի Ն Ի Կ

**Ե**թէ գեղարուեստից և քերթողութեան մայրը Յունաստան իր ամպածրար դիցարնակ Ոլիմպոսով կը պարծի, միթէ Հայաստան աւելի իրաւունք մը չունի՞ պարծելու իրեն սրբածայր Մասիսովը, որ երկու աշխարհներուն կամ՝ հսկայ դարերուն մէջ մէկ հատիկ զօդ և վկայ ըլլալով, հաւասարապէս նուիրական է ամենուն ալ, հայուն և օտարին: Չէի՞ն կրնար միթէ մեր վիպասաններն ալ՝ ազգային դից և դիցունհիներու կաճառ մը խմբել հոն, եթէ սրբազան աւանդութիւնը սկիզբէն աւելի բարձրագոյն կրօնքի մը նուիրած չըլլար զայն. ուստի և իրաւամբ մերինները անպտաշաճ համարեցան Ոլիմպոսի չափ նուաստացնել զայն, իբրու տեսարանի մը վրայ ներկայացնելով հոն հոմերական աստուածներուն ամօթալի հեռը և սէրը միանգամայն: Ապա ուրեմն ուրիշ աւելի նուրբ՝ եթէ ոչ սուրբ գաւառ մը պէտք է փնտռել, ուր կարենանք դասել Սաթիւնիկ՝ Հայաստանի ծիրանածին դշտոյն, և եթէ կարելի ըլլայ, ընդ մէջ երկնի և երկրի: Այս նազելի դըշխոյիս պատմութիւնը՝ ազգային աւանդութեանց մէջ ամենէն աւելի գողտր և փափուկ դրուագներէն մէկն է, արժանաւոր նիւթ վիպասաններու կամ թատերգակ քերթողներու:



Սաթինիկ ազգով Ալան էր։ Այս ազգիս պատմութիւնն ու ծագումը թէ և մեզ անծանօթ է, նման այն հսկայ գետերու աղբերականց՝ Կովկասու մըշտնջենաւոր և ձորերու մէջ ծածկուած, այլ այսչափ միայն յայտնի է, որ Ալանք այն խուժադուժ և վայրագ ազգերէն չեն, որոնց բարբը և դործք իրենց անուանց պէս՝ սարսափ կ'ազգեն սրտերու և լսելեաց. ինչպէս են Հեճմատակք, Կատիչք, Թաւասպարք, և այլն։ Մեր Քերթողահայրը Ալաններու վրայ խօսած միջոց, գրեթէ միշտ Քաչ և Աղեղնաշոր կը կոչէ զանոնք՝ իրենց քաջութեան համար։

Արդէն ծանօթ են քեզ, Հայկակ, մեր Աշխարհաշէն Արտաշէս թագաւորին մեծագործութիւնները, դաստակերտներ շինելը, արուեստներ ծաղկեցնելը և անոր պատերազմները, զորս կանխապատմեցի քեզ համառօտիւ նախորդ գլխուն մէջ. և որպէս զի հարկ չըլլայ կրկնել քեզի նոյն բաները, դու ինքնին յիշողութեանդ մէջ պատկերացուր զանոնք անգամ մ'ալ, որոնք Սաթինիկի պատմութեան հետ ամենամեծ կապ ունին։

Երբ Արտաշէս իր այնքան փառաւոր պատերազմներու և յաղթութեանց պտուղը կը վայելէր, երջանկութիւն և խաղաղութիւն ամեն կողմէ կը յորդէին բոլոր աշխարհին մէջ, և իր գրգանաց գաստակերտին մէջ՝ վայրկեան մը ինքզինքը Ելիւսեան դաշտերուն մէջ կը կարծէր, և ահա բազմախուռն հրոսակ մը տիգաւորներու և աղեղնաորներու՝ Կովկասու սառնամած դռները փըշրելով, կը խուժեն Հայաստան։ Անշուշտ տեսած ես, Հայկակ, գետ մը, թէ ինչպէս լերանց գագաթներէն իջնելով՝ ճամբան ինչ ջուր կամ առուակ որ գտնէ՝ կ'առնու կը լափէ, և հետզհետէ աճելով և սաստկանալով ծով կը թափի. այսպէս նաև Ալանք, ճամբուն վրայ ինչ ժողովուրդ որ

գտան՝ ընկճեցին նուաճեցին, և իրենց հետ խառնելով՝ տէգերով և աղեղներով զինեցին զանոնք Հայոց դէմ: Արտաշէս լսելուն պէս ժողովեց իր քաջ զօրքերը, և Սմբատ Բագրատունւոյն հետ ճակատեցաւ Ալանաց դէմ, որոնք պատերազմի սկիզբէն չկարենալով Հայոց բանակին բուռն յարձակման և նետերու հարուածներուն դէմ դնել, ետ մղուելով կուր գետին միւս ափը անցան:

Հայք յաղթող էին, բայց տակաւին պատերազմը կը շարունակէր. նոյն ժամանակ Ալանաց արքայորդին զէն ի ձեռին քաջաբար յառաջ կը նետուի, և չուզելով անջան որս մ'ըլլալ, տիգով և սրով ամբաւ մահեր գործելէն վերջը՝ կը պաշարուի Հայոց խումբէ մը քաջերէն և գերի կը բռնուի: Այս դէպքը բոլորովին լքոյց թագաւորին սիրտը, զօրաց զէնքերն ալ թուլցան. վասն զի արքայորդին էր միակ յոյսը և լոյսը իր հօրը թագաւորութեան՝ որ մօտ էր խոնարհելու. առանց անոր ի զուր էր յուսալ՝ նոր արշալոյս մ'ունենալ: Ալանաց թագաւորը ամէն բան յանձն կ'առնու, կը խոստանայ Արտաշիսի ամբաւ ընծայ և ուրիշ թանկագին պարգևներ տալ, միայն թէ ազատէ իր արքայորդին. բայց նա գոռոզութեամբ կը մերժէ ամէն պայման. ուրիշ աւելի քնքոյշ հարուած մը պէտք էր՝ որ բոլորովին կակղէր անոր սալացած սիրտը: Գերեալ պատանւոյն քոյրը Սաթինիկ կու դայ գետեզերքը, և դարևանդի մը վրայ կեցած՝ թարգմաններու բերնով այս խօսքերը կ'ուղղէ Հայոց թագաւորին. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց, եկ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ. զի միտ քինու ոչ է օրէն դիւցազանց զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով և ի ստրկաց կարգի պահել, և թշնամութիւն յաւի-

տենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաս-  
տատել »:

Ըսելով Արտաշէս Սաթինիկի այս իմաստալից  
խօսքերը՝ զնաց գետափին մօտ, և Ալանաց օ-  
րիորդին շնորհալի գեղեցկութեամբ զմայլած,  
խաժական աղաւնին փոխանակեց քաջաթուխ արծ-  
ւոյն հետ. դարձուց արքայորդի պատանին և ա-  
նոր Սաթինիկ քոյրը իրեն հարսնութեան առաւ-  
Հաճոյ երեցաւ. Ալանաց թագաւորին այս փոխա-  
նակութիւնը. բայց ուզելով իր գստեր ազնուա-  
կանութիւնը և գերազանց արժանիքը ցուցնել,  
« Եւ ուտտի՛, կ'ըսէ, տացէ քաջն Արտաշէս հա-  
զարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քա-  
ջազոյ կոյս օրիորդիս Ալանաց »: — Հարսանեաց  
հանդէսներու փառաւորութիւնը և ճոխութիւնը  
աննման էին. գինեւէտ Գողթան բամբիռները, ու-  
րոճք երկար ժամանակէ ի վեր լոբեր կը հանգ-  
չէին, յանկարծ արթնցան. նոր աշխուժով և նոր  
կորովով հնչեցուցին երգիչները զանոնք, յար-  
քունիս Արտաշիսի. և անշուշտ այն ոգելից եր-  
գերու մէկ փոքրիկ նշխարը համարելու է սոյն  
հետագայ գեղեցիկ տողերը, զոր կ'աւանդէ մեզ  
Խորենացին.

« Հեծաւ արբ արքայն Արտաշէս ի սեռն գեղեցիկ.

Եւ հանեալ զսակեօղ շիկափոկ պարանն,

Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն,

Եւ ձգեալ զսակեօղ շիկափոկ պարանն՝

Ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց.

Եւ շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին.

Արագ հասուցանելով ի բանակն իւր »:

Գեղեցիկ երգս կամ քերթուածիկս՝ բանաս-  
տեղծական այլաբանութիւն մ'է այն դէպքին՝ զոր  
վերը յիշատակեցինք. և Խորենացին ուզելով

մեկնել թէ ի՛նչ կը նշանակէ «Ոսկէօղ շիկափոկ պարան», այս խօսքերը կը յաւելու. «Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր, լայքա շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս, աւնու զտիկին օրիորդն Սաթինիկ»։ Դարձեալ վիպա- սաններն ուզելով նկարագրել հարսին և փեսային կողմանէ եղած առատաձեռն ընծաները, այսպէս կ'երգեն.

« Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արատչիսի,

Տեղայր մարգարիտ ի հարսութեան Սաթինիկան » :


Վասն զի մեր թագաւորներու սովորութիւնն էր, որ իրենց հարսանեաց օրը՝ երբ արքունեաց դուռը կը հասնէին, հռովմայեցի հիւպատոսներուն պէս ոսկի կը սփռէին հանդիսականներուն, ինչպէս որ թագուհիներն ալ հարսանեկան առա- գաստին մէջ մարգարիտ կը ցանէին :

Այս հարսանեաց պատճառով Ալանք և Հայք գաշնակից և բարեկամ ազգեր եղան . ուստի, ժամանակ անցնելէն յետոյ երբ Ալանաց թագա-ւորը մեռաւ, և ուրիշ բռնաւոր մը յափշտակելով Սաթինիկին եղբօր օրինաւոր թագը և զահը՝ հալածեց զանիկայ, այն ժամանակ Արատչիսի հրամանով Այրաքաջն Սմբատ զօրքով Ալանաց աշխարհը գնաց, հալածեց բռնաւորը և Սաթինի-կի եղբայրը հաստատեց իրեն հայրենի գահուն վրայ. անոր թշնամեաց երկիրը քանդեց աւերեց և բազմաթիւ գերիներ Հայաստան բերաւ, որոնք Մասիսի հարաւ-արեելեան կողմը ընակելով Շա-ւարչական գաւառին մէջ, անոնց անուամբ Ար-տազ կոչուեցաւ :

Սաթինիկ ասով ալ նշանաւոր գտնուեցաւ. հայ թագուհիներուն մէջ, որ երեք թագաւոր որդի ունեցաւ, որոնք նախ տէրութեան այլևայլ գոր-

ծերու մէջ փայլեցան, պատերազմներու մէջ քաջացան, յամենայնի մեծանուն հանդիսացան, եւ ապա իրենց հօրը արքունի գահուն վրայ բարձրացան յաջորդաբար: Իր արքունեաց մէջ մտաւ նաև քրիստոնէական հաւատքը, և ոմանք ազգականներէն հաւատացին ի Քրիստոս եւ յետոյ նահատակուեցան. ասոնք են Ս. Սուքիասանք: Իսկ թէ թագուհին ալ դարձեր է արդեօք ի քրիստոնէսւթիւն, պատմութիւնը ստոյգ բան մը չաւանդեր մնլի:





է միայն այն հոգին՝ որ հաւասար է ամէն մարդ-  
կեղէն էակի մէջ, և որ վառելով տատուածային  
սիրոյ և շնորհաց բոցով, աւելի քան աներկիւզ  
կտրիճներու մէջ՝ վայլեցաւ և զարմանալի երե-  
ցաւ Հռիփսիմեանց և անոնց նմանեաց մէջ, իրենց  
բնական տկարութեան պաճառով, և անոնցմէ  
առաջ՝ մեր Սանդուխտին մէջ:

Սանդուխտ՝ դուստր էր մեր Սանատրուկ թա-  
գաւորին: Սա՛ նմի թագէտոս առաքելոյն քարո-  
զութեամբ քրիստոնեայ եղաւ, բայց յետոյ թա-  
գին և ծիրանւոյն անիծակուռ սէրը դարձեալ  
հեթանոսութեան խաւարին մէջ ձգեց զինքը. ու-  
րովհետեւ մեծամեծները և իշխանները կռապաշտ  
ըլլալով, կռապաշտ թագաւոր կ'ուզէին վրանին:  
Սուրբ հաւատքի քարոզութիւնը և թագէտոս ա-  
ռաքելոյն հրաշքներուն համբաւը փութով ամէն  
տեղ հռչակուեցաւ ի զարմանս ամենուն. վասն զի  
անիկայ հրաշքով ինչպէս մարմինները՝ նոյնպէս  
ալ հոգիները կը բժշկէր. կոյրերը, կաղերը և  
բորտոնները՝ գերբնական լուսով և յուսով զօրա-  
ցած և բժշկուած, իրենց աստուածները թող-  
լով՝ ճամարիտ Աստուծոյ զօրութիւնը կը հըռ-  
չակէին: Այս լուրը հասնելով նաև Սան-  
դուխտի ականջին, փայլակի մը նման անոր կէս  
մութ և կէս լոյս հոգւոն աչքերը բացաւ. և ինչ-  
պէս դեռ նոր ծլած գողարիկ շուշան մը, որ տա-  
կաւին առատեան զովագին ցօղիկը չընդունած՝  
կը բանայ կարօտով իր բաժակը և անոր կը  
սպասէ, — կամ թէ ինչպէս թիթեռնիկ մը,  
տեսնելով մթութեան միջէն հեռաւոր լոյս մը,  
թափ կու տայ բոլոր ուժով իրեն փափկիկ թե-  
ւերուն և դէպ ի լոյսը կը դիմէ, — այսպէս ալ  
Սանդուխտ բացաւ ամբիժ սրտին բաժակը՝ երկ-  
նաւոր շնորհաց հոսանքը ընդունելու, և հոգւոյն  
թեւերով դիմելով առ լոյսն Քրիստոսի՝ ընդունե-  
ցաւ զայն և համբուրեց:

Այնուհետև Սանդուխտ իրեն միակ հայր զԱստուած կը ճանչնար երկինքը, իսկ երկրիս վրայ՝ Թադէոս առաքեալը: Մկրտութեան խորհուրդն առանց հրաշքի չեղաւ. ներքին լուսոյն ազգարար՝ արտաքին լոյս մը փայլեցաւ սուրբ կուսին բուրրաւքը, և միանգամայն երկնաւոր ձայն մը հնչեց, որ քաջալերելով զինքը կը հրաւիրէր երկնաւոր հարսանեաց վայելքին: Սոյն գերահրաշտեսիլը և ձայնը շատերուն քարայած սրտերը շարժելով, բազմաթիւ հեթանոսներ քրիստոնեայ դարձան: Քրիստոսի խաչին այս կատարեալ յաղթանակիս վրայ զայրանալով դիւական ոգին, գլրգուեց նաև Սանատրուկ թագաւորը, որ իր բարկութեան բոցը ուզեց քրիստոնէից անմեղ արեամբ շիջուցանել. բայց փոխանակ շիջանելու՝ աւելի ևս բորբոքեցաւ, երբ տեսաւ որ հրաշքները կ'աճէին, և արեան սուրբ հոսանքը գունդագունդ վկաներ և քրիստոնեաներ կը փթթեցնէր: Սակայն թագաւորին զայրոյթն աւելի ևս սաստկացաւ և ծանրացաւ իր Սանդուխտ դստեր վրայ, զոր բռնել տալով՝ շղթայակապ ուրիշ բազմաթիւ քրիստոնէից հետ բանտ դնել հրամայեց:

Թադէոս անմխիթար չթողուց զանոնք բանտին մէջ. անոր մարմինը՝ թափանցիկ եղած կամ երկնաւոր զօրութեամբ մը հոգիացած՝ լուսէն և օդէն աւելի երազ և գիւրաւ կ'ելնէր ու կը մտնէր խաւարչուտ բանտերու ներքին և մթին խորշերը, թէ և հարիւրաւոր փականք և պահապաններ ալ ըլլային: Ո՛րքան խանդաղատանքով և զարմացմամբ ինկաւ արդեօք Սանդուխտ՝ առաքելոյն ոտքը, իր հօր և վարդապետին երկնընթաց գարշապարները համբուրելու. իսկ առաքեալն ինչպիսի գորովանքով համբուրեց արդեօք Սանդուխտի կապանքները, որ ոսկի ապփրանջաններէ և մեհնանդներէ աւելի կը փայլէին անոր ձեռաց



և պարանոցին վրայ: Արտասուք և գորով երկուստեք քաղցրացուցին կապանաց դառնութիւնը. աղօթք, հոգևոր ընթերցմունք և յորդորք առաքելոյն զօրացուցին երանեալ կուսին հոգին և ցաւերը մեղմացուցին: Եւ ահա բացուեցաւ յանկարծ ձեղունը, որոտումն ձայնի և նորաքանչ լոյս մը բոլոր բանտեալներուն սիրտը լցուց մխիթարութեամբ, և մանաւանդ Սանդուխտին սիրտը, որուն յատուկ կերպով լսելի կ'ըլլար ձայնը. երկնաւոր վարձուց խոստումն արիացուց զանոնք, և աշխարհս՝ իրեն վաղանցուկ փառքերով՝ և վայելներով ծուխի նման անհետացաւ անոնց աչաց առջևէն: Նոյն աստուածազօրեցիկ ձայնին զօրութեամբ արձակուեցան անոնց կապանքը, մարմիննին ուղջացան, և բանտերուն դռները ինքնիրենց բացուեցան. բանտապանները տեսնելով այս հրաշքը, զարհուրած և ափշած փութացին առաքելոյն ոտքը ինկան, և անոնցմէ երեսուններեք հոգի հաւատարմով ի Քրիստոս, իրենց ընտանեաց հետ մկրտուեցան: Այս անգամ չհանդուրժեց դէր. մարդակերպ երեցաւ հոն և յանդիմանեց բանտապանները. բայց առաքելոյն մէկ խօսքը բաւական եղաւ անոր լրբութիւնը խայտառակելու:

Սատանան ջանաց նորէն գրգռել թագաւորը. բայց նա կը վարանէր՝ կը տատամնէր, չէր գիտեր թէ ի՞նչ ընէ որ կարենայ իր դուստրը՝ մանաւանդ թէ ինքզինքը այն տագնապէն ազատել: Որովհետև մէկ կողմանէ չէր կրնար անտարբեր մնալ իր հայրենի սիրոյն և կուռքերուն արհամարհուիլը տեսնելով, զորոնք մերժելով Սանդուխտ՝ թաշելոյն ետևէ կը փութար. և միւս կողմանէ՝ սիրտը առաջ չէր երթար տանջել կամ սպաննել այնպիսի աննման, մտացի և շնորհազեղ դուստր մը, զոր ոյնքան սիրով գգուեր. և սնու-

ցեր էր. Այսպէս ահա վարանած տագնապած կ'ուզէր իր դառնութեան թոյնը թաղէս առաքելոյն վրայ թափել, իրեն դատեր մոլորութեան և այնչափ շփոթից պտտճառ զինքը համարելով. ուստի իշխաններէն մին զրկեց որ երթայ բռնէ առաքեալը. Յայց ինչ պարմունք և արշալոյս էր այն՝ որ յանկարծ պաշարեց իշխանը և անոր մարդիկը, երբ բանտին դռները բաց տեսան, չորս բոլորը ահաւոր լոյս մը պատած, և մէջը կը տեսնուէր բազմութիւն լուսազգեստ արանց. թագէտ առաքեալն ալ արևու նման փայլուն կեցեր էր մէջտեղ և կը քարոզէր, իսկ Սանդուխտ լուսնի նման անոյշ և մեղմ՝ լուսով կը փայլէր անոնց մէջ. Այս տեսիլքէն աւելի վարհուրած քան պարմացած՝ գիտին ինկաւ. իշխանը իւր մարդիկներով, սկսան տանջուիլ աւելի իրենց խղճէն քան դիւէն, և յուսահատ ձայներ կ'արձակէին. փութաց վազեց առաքեալը, աղօթեց վրանին, և Յիսուսի անուամբ զամէնն ալ բժշկելով՝ դարձուց Քրիստոսի սուրբ հաւատքին. Սակայն այս նորածիլ նորաբողոք բոյսերը երկար ժամանակ չմնացին իրենց կակոններուն վրայ, փութով տեղացին հարուածներ և տանջանքներ կարկուտի նման, զարկին կտորեցին զանոնք անխնայ այնչափ սաստիկ և երագ, որ կրկին զանազան սուռակներ՝ ջրոյ և արեան՝ մէկտեղ խառնուելով մկրտութեան աւտզանին մէջ, անոնց լուսափայլ պատմութեանները յանկարծ նահատակաց նռնագոյն ծիրանիներով պճնեցան, վասն զի նշանաւոր մարդ ըլլալով իշխանը, թագաւորը լսելուն պէս հրամայեց որ փութով սպաննեն զինքը և անոր մարդիկը. և այսպէս մէկ օրուան մէջ երկու հարիւր հոգի նահատակուեցան ընդ այր և ընդ կին. Սրբուհի Սանդուխտ նախանձելով անոնց երջանիկ բախտին, արտասուօք և զարովալիք

զգացումներով համբուրելով մի առ մի անոնց սուրբ և լուսափայլ նշխարները, պատուեց և պատեց գանոնք ազնիւ խունկերով և սուրբ կտուներով և մեծահանդէս շուքով թաղեց իր տան մօտ:

Սանդուխտ դարձեալ բանալ վազեց, ուր սուրբ առաքեալը հիսնալի լուսով մը շրջապատուած կ'աղօթէր եռանգագին: Այսպէս ահա, Հայկակ, մեր փափուկ և արիասիրտ կոյսը տեղւոյն և պատշաճին համեմատ թողլով մերթ իր պալանսսիրտ հեղուկիւնը, յանկարծ արժիւ կը դառնար, կը խզէր կապանքները, կը յաղթէր արգելներուն, կը դիմէր ատեան, տանջանարանները և յետին յնարանն անգամ նահատակներուն՝ ի պաշտպանութիւն, ի յորդոր և ի խրախոյս, և վերջապէս ի պատիւ և ի պաշտօն անոնց սրբասուն նշխարներուն: Ելրբեմն ալ սիրամիջիկ և մեղրամաղձիկ տատրակի նման կ'առանձնանար բանտին խորշը, և յիսուսակիր սրտով կը հեծէր, կը հառաչէր առ սիրտ սիրելւոյն, անուշիկ կերպով կը բողբոջէր անոր, թէ «մինչև երբ պիտի երկարի իմ պանդխտութիւնս. կ'այրիմ՝ և կը հիւժիմ, կ'ըսէր նա Յիսուսի, քու սիրովդ կը հալիմ. խսնդակաք եւ ի սէր քո»: Տեսնելով առաքեալը Սանդուխտի այս կարգէ դուրս սէրն առ Յիսուս և արտասուքը, կը սփոփէր զինքը քաղցր խօսքերով թէ՛ Դուստր իմ, սակաւիկ մ'ալ համբերէ վշտերուդ և փութով կ'երթաս առ անձկալին սրտիդ:

Եթէ այսքան կը սիրէր Սանդուխտ զՅիսուս, կրնաս ապա, Հայկակ, երևակայել մօքով այն գործովալիբ խանդաղատանաց չափը և սաստկութիւնը, որով կը մեծարէր և կը գզուէր սրտին մէջ՝ երբ կ'ընդունէր զինքը առաքելոյն ձեռքէն ամենասուրբ խորհրդուն մէջ. վասն զի շատ հաւանական է, և կրնամ ըսել թէ ստոյգ իսկ, թէ թաղէոս առաքեալը բանտին մէջ պատարագելով՝

այն կենդանի և Յիսուսի վառ սիրով կազմուած սեղաններուն վրայ, նահատակաց և խոստովանողաց սրբազան լանջերուն վրայ ըսել կ'ուզեմ, յառաջագոյն կու. տար անոնց անմահութեան զէնքը և լապտերը՝ անցաւոր մահուան քայլն աւրիութեամբ ընելու համար: Եւ յետ կազդուրելու հոգևով այն հրեշտակային հացով, որքան արգեօք անոյշ և ցանկալի կ'երևէր անոնց հաւասարապէս քուն և մահ, հուր և սուր, տանջանք և անդորրանք:

Եւ մինչդեռ այն կենդանի նահատակաց երջանիկ խումբը, միշտ անրաժան ընկերներ Սանդուխտի բանտին մէջ և հաղորդ անոր ամէն վշտաց և նեղութեանց, անուշակ քնով կ'երագէին իրենց ապագայ նահատակութիւնը և հոգիներուն պսակազարդ երկինք թռչիլը, իրօք իսկ նոյն խոստմունք և տեսիլք կ'ըլլային թագէտո առաքելոյն. զորոնք պատմելով յետոյ Սանդուխտի ընկերներուն, սաստիկ ուրախութենէն և սրտի գորովէն սկսան լալ բարձրաձայն: Եւ երբ այսպիսի անոյշ արտասուաց և հրճուանաց վայելքով երկընքի ուրախութեան ճաշակը կ'առնուին երանելի խոստովանողները, յանկարծ զօրականք վրայ հասան, կապեցին սուրբ առաքեալը և անոր միւս ընկերները՝ որոնց հետ նաև Սանդուխտը, և թագաւորին դիմաց տարին: Թագաւորը տեսնելուն պէս Սանդուխտը՝ ցառքեց իսկոյն աթոռէն և գրկաբաց վազեց, համբուրեց դուստրը և իր արքունի գահուն վրայ բազմեցնել կ'ուզէր. այլ պինդ կեցաւ Սանդուխտ, յաղթեց սրտին և որդիական զգացումներուն, ընդդիմացաւ. հօրը գգուանքին և անոր երեսն անդամ չուզեց նայիլ: Այս բանիս վրայ սառ կտրելով թագաւորը, հազիւ կրցաւ կափկափելով այս խօսքերս ըսել. Ուրացար ուրեմն զիս, դուստր իմ, սիրեցի՛ր ինձմէ

աւելի այդ մնորեցուցիչը. կ'երդնում աստուած-  
ներուն վրայ, որ չարաչար մահուամբ պիտի սպան-  
նեմ՝ զքեզ և զինքը: Որուն համարձակ պատաս-  
խանեց կոյսը. Զոր դու մնորեցուցիչ կը կոչես,  
նա միայն ազատեց զիս մեղորոշեան անդունդ-  
ներէն, և ճանչցուց ինձի ֆրիստոս՝ ճշմարիտ  
Աստուածը, Տէր և արարիչ երկնի և երկրի: Սոն-  
դուխտի այս պատասխանը, որուն մէջ գերազոյն  
իմաստութիւն և քաղցրութիւն կը փայլի, թա-  
գաւորին սիրտը դառնութեամբ և ատելութեամբ  
լեցուց, և կամուտը խլութեամբ բոլորովին փա-  
կեց իրեն սիրտը ճշմարտութեան դէմ: Ուստի  
հրամայեց դահիճներուն սր կուսին ձեռքերն և  
տուր կապելով՝ սկսին ծեծել և չարչարիչ անխը-  
նայ, մինչև որ ցաւերէն ստիպուած ուրանայ  
զՔրիստոս: Այնուհետև անմեղ ազաւնեակը դա-  
ժան բազէներու ձեռքն ինկաւ, որոնք կը տեղա-  
յին հարուածները անոր փափկիկ մարմնոյն վրայ,  
կարծես իրարու ձեռքէ յափշտակել ուղելով ան-  
գթութեան փառքը կամ մրցանակը:

Մինչդեռ այն հարուածներուն տակ շնչասպառ  
և ուժաբեկ նուազելու վրայ էր Սոնդուխտ, յան-  
կարժ երկնքէն ահաւոր ձայն մը հնչեց՝ որ կ'ը-  
սէր. Զորացիր, դուստր իմ, հաստատ կեցիր  
հաւատքիդ վրայ, ես քեզի հիտ եմ: Նոյն պա-  
հուն իսկոյն շղթաները արձակուեցան, և կուսին  
չորս բոլորը ծագած սաստիկ լուսէն շլացան դահիճ-  
ներու աչքերն. շարժ և որոտմունք սկսան թըն-  
դացնել երկիրը, և թագաւորէն սկսեալ ամենուն  
վրայ ահ և սարսափ տիրեց: Իսկ Սոնդուխտ  
հանդարտութեամբ դուրս ելաւ այն տեղէն և  
գնաց առ Ս. Թադէոս, որուն ոտքերը համբու-  
րելով ըսաւ. Ահա զօրացուց և օգնեց ինձ Քրիս-  
տոս, արձակեց շղթաներս և ամչցուց սատա-  
հան և անոր արբանեակները:

Թագաւորը զարհուրած՝ այն պատուհասէն ազատելու ուրիշ հնարք չգտաւ, բայց միայն դիմել առ Աստուածն քրիստոնէից՝ զոր ինքը չէր ճանչնար, և որուն երկրպագուները կը շարշարէր: Եւ միթէ ինքը չունէր աստուածներ, որ փրկէին զինքը այն պատիժներէն. այո՛, ունէր, որոնք թերեւ անթիւ էին, և ամէն օր անոնց այնչափ պատիւ և պաշտօն կը մատուցանէր. բայց կամ խուլ էին Բահաղու պէս, և կամ մարդածախ՝ Մողղբի պէս, կամ շարագործ և վնասակար՝ Բաբելացուոց վիշապին նման: Ուստի զրկեց իշխան մը առ Թագէտս՝ խնդրելով որ աղաչէ և իջեցնէ Աստուծոյ բարկութիւնը: Սիրով ընդունեցաւ առաքեալը թագաւորին զրկած հրեշտակութիւնը, և աղօթքով դադրեցուց շարժը, ամէն կողմ՝ խաղաղութիւն եղաւ, կապանքները լուծան և որոտման ահեղ ձայներն ալ լուեցին: Այս զարմանալի հրաշքս լուսաւորեց իշխանին միտքը, որ թագաւորին կողմանէ աղերսաւոր ելկեր էր առաքելոյն, և բոլոր ընտանիքով հաւատարմով ի Քրիստոս՝ մկրտուեցաւ և անունն ալ Սամուէլ կոչուեցաւ: Սանատրուկ լսելով այս բանս, սաստիկ զայրացաւ և հրամայեց՝ որ սրածայր եւ երկայն բևեռներ գամելով անոր ոտքերուն՝ սպաննեն զինքը. և այնպէս արիարար նահատակուեցաւ, իրեն հետ ուրիշ եօթը անձինք ալ: Անոնց նշխարներուն վրայ հիանալի լոյս մը ծագեցաւ, և հեթանոսներուն վրայ ալ դարձեալ սաստիկ սարսափ մը տիրեց. զիշեր ժամանակ գնաց Սանդուխտ ընկերներով, պատեց անոնց մարմինը սուրբ կտաւներով և փոքր ձորակին մէջ թաղեց:

Այնուհետեւ առաքեալ մը դարձաւ Սանդուխտ, գերազանց զօրութիւն մը ստացաւ. և ալ աւելի գերագոյն պաշտօն մը ստանձնեց կարծես իր

վրայ. վշտացիալները կը մխիթարէր, կարօտելոց հաց և զգեստ կը բաշխէր, հիւանդներուն առողջութիւն կը պարգևէր, և ուրիշ այլ և այլ հրաշքներ կ'ընէր յանուն Յիսուսի: Այս ամէն զարմանալի հրաշքներուն համբաւը թագաւորին ականջը հասնելով, և իմանալով թէ քրիստոնէութեան աճման և զարգանալու գլխաւոր պատճառը Սանդուխտն է, խլելով սրտէն ամէն գուլթ և դորով հայրենի, հրամայեց բռնել և սպաննել զանիկայ: Հարկ չկար խուզել փնտտել այս կամ այն տեղ Սանդուխտը գտնելու համար, վասն զի նահատակութեան փափաքով և յուսով լի միշտ բանտին և ստեանին չորս կողմը կը պտըտէր. նման թիթեռնիկի՝ որ իր ցաւալի կատարածը գիտնալով հանդերձ, ճրագի լուսոյն չորս բոլորը կը դառնայ կը թռչտի: Դահիճները բռնեցին Սանդուխտ և գլխաաման տեղը տարին, որ յետ երկայն և հռանդագին աղօթելու՝ զուարթութեամբ և սիրով մատոյց պարանոցը՝ որ գլխատեն զինքը. բայց Աստուծոյ թոյլատուութեամբ՝ դահիճը սուրը ձեռք առնելով, փոխանակ Սանդուխտին՝ դահճապետը սպաննեց: Իսկ հեթանոսք այս բանիս վրայ դեռ աւելի դրդուելով գիււէն, վազեցին սուրբ կուսին վրայ. բայց Աստուծոյ հրաշքով բան մ'ալ չկրցան ընել անոր, և զիրար սպաննեցին: Մինչդեռ Սանդուխտ ծունր դրած անոնց մէջ կ'աղօթէր Աստուծոյ որ առնու հոգին, զինուորներէն մէկը սուրը Սանդուխտի սիրտը մխեց, որ իսկոյն Աստուծոյ ձեռքը աւանդեց մաքուր հոգին՝ յամին 41 Դեկտեմբեր 15ին: Նոյն միջոց անոյշ հոտ մը լուրեց, և հրաշալի լոյս մը ծագելով՝ երեք օր և երեք գիշեր սիւնածակ կը փայլէր անոր մարմնոյն վրայ. այս հրաշքէս՝ նոյն օրերը գրեթէ երեք հազար հոգի հաւատացին ի Քրիստոս: Թագէտս առաքեալը լսե.

լով զայս, եկաւ ինդութեամբ և մեծահասփէս  
չքով և պաշտամամբք նոյն տեղը թաղեց իր սրբ-  
բասուն սանիկին ողջախոհ մարմինը, ուսկից միշտ  
լոյս կը ծագէր և անդադար հրաշքներ կ'ըլ-  
լային:







*Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՆԱՆՈՐԷՉ*

## Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ

**Չ**ԿԱՅ հայ մը, որ նոյն իսկ իր մանկական հասակին՝ երբ գիտակցութիւնը զարթնու և իր հայկազն արեան ըստակ սրտին վրայ սկսի ընթեռնուլ իր սիրուն համազգի անունները, անոնց սկիզբը չտեսնէ ոսկի տառերով գրուած այսպիսի անուն մը՝ Երուսաղիմ։ Թէպէտ այնչափ անուս լինի, որ չգիտնայ այդ անունը կրող անձին մեծամեծ գործերը՝ և փոյթ այլ շունենայ գիտնալու, բայց այդ խորհրդաւոր բառի ծանօթութեան հետ կ'իմանայ ևս՝ թէ շատ և կարևոր իմաստներ կը բովանդակէ նա իր մէջ. և իբրև բնական օրէնք մը՝ որ իր գիտութեան առարկայ եղած ըլլար ծննդեան օրէն, կ'ըմբռնէ թէ այդ անձն իրեն և իր ազգին լոյս տուեր է, հաւատոյ և ճշմարտութեան լոյսը, քան զոր առելի մեծ բարեք չկայ երկրիս վրայ։ Սակայն գու, հայկակ, առելի հետամուտ ևս մեր հարց յիշատակները քննելու և տեղեկանալու, ուստի ես ալ քու փափաքդ կատարելու համար՝ համառօտիւ պատմեմ՝ մեր երջանիկ հօր՝ Լուսաւորչի վարքը։

Գիտես որ Արտաշիւր Պարսից թագաւորը մեր քաջ խորովի սուրէն սարսափած՝ ուզեց վատութեամբ ապահովցնել իրեն զահը. ուստի անոր դէմ՝ գաւաճանութիւն գործեց Անակ Պահլուունի

նախարարին ձեռքով, որ իբր փախստական Հայաստան եկաւ. խաբուեցաւ խոսրով, և սիրով ընդունեցաւ զինքը իր ձմերսցը՝ Ուալի գաւառին մէջ. Երբ գարնան զեփիւռը շնչեց, թագաւորին հետ Անակ ալ գարձաւ վաղարշապատ, և յարմար առթի մը կը սպասէր իր գաւը ի գլուխ հանելու: Օր մը թագաւորին հետ որսի երթալով, նենգութեամբ հեռացուց քովէն իշխանները, և մէկ բուլի մէջ սուրը շողացնելը և անոր սիրտը շիտելը մէկ ըրաւ. և յետ մարելու Հայոց անգին արեւը, հեծաւ ձին և փախաւ. հալածուելով մեր քաջերէն. բայց Երասխ վիշապի նման կուլ սուրաւ այն գազանը, խառնելով իր փրփրագէզ կոհակներուն մէջ. Ահա այդ գայլէն, Հայկակ, սուրաւ մեզի Աստուած գաւ. մը, այդ փուշէն՝ վարդ մը պարգեւեց մեզի. ուզեց որ մեր հեթանոսութեան գիշերի մթութեան մէջ՝ այդ սեւացած արեւելքէն յանկարծ պայծառ արեգակ մը ծագէ, եւ զմեզ լուսաւորէ: Գո չէր կայտառ մանուկ մը, որ հօրը մեր աշխարհը գտնուած ժամանակ ծնաւ. 257ին, վաղարշապատ քաղաքին մէջ, սրովհետեւ Պարսկաստան արժանի չէր անոր. և երբ Հայոց վրէժխնդիր սուրը սկսաւ ջնջել իրենց տունը, իր դայեակը Սոփիա՝ որ քրիստոնեայ էր, զինքը փախուց կեսարիա, Գրիգոր կոչելով անունը՝ ինչպէս երկնաւոր աղանի մը կոչեր էր ճանապարհին վրայ: Հոն ուսմամբ և բարեպաշտութեամբ զարգացաւ՝ մինչև իր երիտասարդութիւնը, եւ ամուսնանալով Մարիամ՝ անուն համեստ օրիորդի մը հետ, յետ երկու որդի ունենալու, հրաժարեցան իրարմէ: Մարիամ՝ մտաւ կուսանոց մը, ինքն ալ ուրիշ ասպարէզ:

Հասակին հետ միտքն ալ վարդանալով, սկսեր էր խորհրդածել՝ ճանշնալ իր կորուսած հայրենիքը, իր տունը: Զգուեցաւ ստակաց՝ երբ լսեց

իր հօր ըրածը, որուն վախանակ ինքը զղջայ. նոյն ժամէն միտքը դրաւ՝ անոր ծայրագոյն վատութեան և նենդութեան օրինակին հանդէպ կանգնել ծայրագոյն վեհանձնութեան և առաքինութեան օրինակ մը: փնտռեց իրեն նման պանդուխտ կորիւն մը՝ Տրդատը, խոսարովի որդին, Հռովմայ մէջ. և առանց յայտնելու իրեն սիլ լինելը, ծառայ և սիրելի եղաւ անոր:

Երբ Տրդատ երևելի գործերով ինքզինքը Հայոց կորսուած թագին արժանաւոր ցուցնելով՝ դարձաւ Հայաստան, շնորհակալութեան համար ուղեց Անահիտ դիցուհւոյն նուէրներ ընծայել. Գրիգորի ալ հրամայեց որ անոր տաճարը պըսակներ և ծաղիկներ տանի: Քրիստոնեայ նահատակին պատերազմի կէտը հասեր էր. ժամանակ էր իր արհամբը Տրդատոյ և Հայաստանի ըրած կորստեան անպարտ հատուցում՝ մ'ընել, ինչպէս կանխաւ որոշեր էր: Համարձակութեամբ պատասխանեց՝ թէ «Քրիստոնեայ եմ, և միայն երկնից անտես Աստուածը պաշտեմ» և ոչ անոր շինած կուռքերը՝: Զարմացաւ զայրացաւ թագաւորը. ամէն բանի մէջ ծայրայեղ Տրդատը հրամայեց չարաչար հարուածներով տանջել սուրբը, և յետոյ Արտաշատի վարապին մէջ ձգել, մանաւանդ երբ իմացաւ որ իր հայրը սպանող արքայանեղ դաւաճան Անակայ որդին էր:

Մեր նոր Գանիէլը մնաց երկար տարիներ այն սուր վիրապին մէջ, զարմանալի զօրութեամբ օձերու և իժիրու բերանները փակելով: Ոչ ղբ այնուհետև կը յիշէր Գրիգորը, ոչ ղբ վրան կը մտածէր, բայց ի բարեպաշտ այրի կնոջմէ մը, որ հրեշտակէն ազգուած՝ ամէն օր կ'երթար հաց մը կը ձգէր Արտաշատի վիրապին մէջ: Այդ բարեպաշտ կինը, աւանդութեան մը համեմատ, Ազուիթան էր՝ Ս. Թէոդոր Սալհունիի մայրը:

Տանուշորս անգամ՝ ըստ աննդութեան, երկիրս տարեկան փոփոխութեանց ենթարկուեր և ժամանակին ազդեցութիւնները կրեր էր՝ բաց ի խոր վիրապէն Արտաշատի, երբ սէգն Տրդատ խրատուած երկնքէն և զգաստացած՝ մեռած և ոչնչացած կարծուածը հանեց վիրապէն, և անոր ձեռքէն իր և բոլոր աշխարհին համար նոր կեանք ստացաւ։ Ելաւ Ս. Գրիգոր, և մինչև այն ժամանակ թագուցած լոյսը սփռեց ամէն կողմ։ Իր բանտարգելութեան ժամանակ նահատակուած Հռիփսիմեան կուսանաց նշխարները ամփոփեց և փառաւորեց անոյշ մեղեդիով. երկնային եռանդով վառուած՝ աշխարհին բոլոր անկիւնները կոխել սկսաւ՝ քաջ և աստուածասէր թագաւորը թիկունք ունենալով. հոգևոր զէնքով զիւրաց խումբերու հետ կուռելով, և մարմնաւոր զէնքով երբեմն անոնց պաշտօնեաներուն հետ, կործանեց մեհեանները, յաղթական խաչեր տնկեց անոնց աւերակներուն վրայ. հեթանոսութիւնը սարսափած անհետ եղաւ, աշխարհ զարմացաւ՝ երանի տուաւ Հայոց և անոնց գերափայլ Լուսաւորչին։

Մինչդեռ այսպէս քրիստոնէութիւնը կը կանգնէր իր նոր տապանը կամ՝ գահը՝ հին աստուածապաշտ Մասիսի ալէգարդ զագաթին վրայ, որ պիտի հսկէր բոլոր Հայաստանի վրայ և հեռըզհեռէ խաղաղութիւն ծաւալէր ամէն կողմ, ահա երկնաւոր ձայն մը կը կոչէր Լուսաւորիչ՝ Հայաստանեայց նորածին եկեղեցւոյ հովիւ ըլլալու։ Հարկ էր հնազանդիլ թէպէտ իոննարհութիւնը չհաճէր։ Բոլոր գաւառներէն գիմեցին եկան նախարարները և սեպուհները զօրքերով՝ իրենց յաղթողին յաղթանակը փառաւորելու, և խուռն բազմութեամբ գիմեցին կեսարիա. արդէն մտտեցեր էին՝ երբ կրպաղովկիոյ սահմանները գլրդեցան այս նորօրինակ ասպատակէն. բախե-

ցին մայրաքաղաքին դռները, շարժեցին քաղաքը, բացին և իրենց նահատակը տարին կացուցին Ղևոնդիոս հայրապետին առջև՝ յայտնելով իրենց և թագաւորին խնդիրը։ Չայն տուաւ նա իր եպիսկոպոսներուն, որոնք հետաքրքրութեամբ վազեցին տեսնելու Հայոց աշխարհը վերուվար ընող Գրիգորը։ յոյն ճարտարախօս լեզուներ և քաջատես աչքեր առ վայր մը լռեցին և աաչեցան երբ իմացան թէ իրենց գիմնաց կեցողը՝ բազմաշարչար կենդանի վկայ մ'է Քրիստոսի, իրենց գրքերը յուզող և իրենց պէս քաջալեզու գիտնական մը։ Ս. Ղևոնդիոս մեծ պարծանքով դբաւ աչը անոր զլլտուն վրայ. օծեց, մեծարեց անոր հետ նախարարները՝ պարգևներով և Հայոց թագաւորը՝ թուղթով։ Շարժեցաւ Ս. Գրիգոր՝ առնելով իրեն հետ յոյն և ասորի իմաստուն եկեղեցականներ, ինչպէս նաև Յովհաննէս Սկրտչի և Աթանապիսէս վկայի մասունքները, դարձաւ Հայաստան։

Գիտես, Հայկակ, մեր ազգին իր նախնիքներէն ժառանգած մէկ զարմանալի ձիրքը՝ հաստատամրտութիւնը, որով դիւրաւ չթողուր ո՛ր և է սուփորութիւն կամ կարծիք առանց նորանշան դէպք կամ ցոյց մը տեսնելու. այդ գովելի ձիրքը գործածեր է երբեմն նաև անպատեհ իրաց և ժամանակի մէջ։ Այսպէս մինչ բոլոր աշխարհը լուսաւորչի ցուցած հրաշքներով և յորդորներով դարձած էր ի քրիստոնէութիւն, Տարօնի դաւառը չէր ուզած թողուլ իր հայրենի ժխտտ մըրճոտ աստուածները, որովհետև զանոնք կը համարէր Հայաստանի փառաց և զօրութեան պաշտպանները։ Եւ երբ Հայոց որեարը կեսարիայէն դառնարով մտեցաւ Տարօնի, քուրմերը և ժողովուրդը զէնք առած, անոնցմէ աւելի բազմութեամբ՝ ոմանք դարանասուտ ըլլալով, ոմանք

յայտնի ճակատելով՝ խռովութիւն ձգեցին և ըսկասն կռուիլ: Լուսաւորիչ տագնապած՝ Մոկաց իշխանին ձեռքով Սյզկան բերդը ապաստանեցաւ, զոր իսկոյն պաշարեցին թշնամիները: Գիշերը վրայ հասաւ և օգնեց պաշարեալներուն, որով սուրհանդակ մը գաղտուկ գնաց իմացուց նախարարներուն՝ վտանգը. անոնց մէկ մասը օգնութեան գնաց սուրբին և ջարդեց պաշարողները. մէկ մասն ալ լերանց ստորտը բանակողներուն դէմ գնաց, որոնց զօրագլուխ էր Արձան քրմապետը, կատաղի, յամառ և դիցամոլ մարդ մը, որ մինչև յետին շունչ կռուեցաւ Հայոց զօրքերուն դէմ: Բայց վերջապէս զօրացաւ քրիստոնէից կողմը, Արձան և անոր Դեմետր որդին սպանուեցան, մեհեանները և բազմիւնները կործանեցան, կռուքերը փշրուեցան, և անոնց աւերակին վրայ բարձրացաւ խաչը, որ պարգևեր էր իրենց այն յաղթութիւնը:

Մեկնելով անկէ դիմեցին Աշտիշատ, ուր կար ի հնուց անուանի մեհեան մը. և երբ այնչափ մօտեցան Եփրատ գետին, որ անոր սահանաց շառաչը սկսաւ լսուիլ, յանկարծ անտես ձեռք մը բռնեց կեցուց շորս ճերմակ ջորիներ լծուած կառքը, որ Դեռնգիտէ պարգևուած սուրբ Յովհաննէս Մկրտչի և Աթանապինեայ նշխարները կը տանէր: Երկնաւոր պատգամաբեր մ'էր՝ որ երևնալով պատուիրեց Լուսաւորչին հոն չվկայարան մը շինել. կատարեց հրամանը, և նշխարներէն մէկ մասը զետեղեց անոր մէջ: Յետոյ՝ հրամայեց նախարարներուն քակել յիշեալ տաճարը. մեծապէս զարմացան անոնք երբ անոր դուռը ոտանայէն աներևութացած գտան. բայց դեռ տուելի ապշեցան՝ երբ Լուսաւորչի մէկ խաչանը շանը իսկոյն կործանեց դայն, Երիքովի պարիսպներէն աւելի դզրդիւն հանելով:

Տրդաստ լսելով անոնց դարձը, ընտանեւք Բագ-  
րեանդի Բագուան գիւղաքաղաքը գիմաւորելու  
գնաց սուրբ հայրապետը, Հոն Ս. Գրիգոր Եփ-  
րատայ վճիտ ջուրերուն մէջ մկրտեց թագա-  
ւորական ընտանիքը և անհամար բազմութիւն  
մը. այս առաջին անգամն էր՝ որ ազգ մը ամ-  
բողջովին քրիստոնեայ կը դառնար, և տէրու-  
թեան կրօնք կը ճանչցուէր քրիստոնէութիւնը ։  
Յետոյ դարձաւ վաղարշապատ մայրաքաղաքը, եւ  
սկսաւ աշխարհին շինութեան և բարեկարգու-  
թեան պարապիլ. մկրտեց բոլոր աշխարհը, շի-  
նեց վանքեր, հիւրանոցներ և կուռաստաններ .  
բազմութիւ վարժատուններ կանգնեց, որոնց մէջ  
ժողովելով նախնի քուրմերուն որդիքը, քրիստո-  
նէական կրօնքին վսեմ՝ գիտութիւնը դրոշմեց  
անոնց մտքին մէջ. իմաստութեան ասպարէզը  
բացաւ անոնց առջև, աստուածային հոգի շնչեց,  
և բագիններուն ճենճերոտ հրոյն պաշտօնեաները՝  
երկնաւոր սուրբ և սրտահեշտ հրոյն պաշտօնեա-  
ներ ըրաւ. կ'ըսուի թէ չորս հարիւր եպիսկո-  
պոս ձեռնադրեց բոլոր գաւառներուն համար,  
որոնց մէջ միշտ՝ մանաւանդ ի ժողովս՝ կը փայլէր  
ինքն իբրև արև մը աստղներուն մէջ ։

Երբ սրտին ամէն փափաքները կատարուած  
տեսաւ, շնորհակալ եղաւ Աստուծոյ. թողուց ա-  
թուր և փառքը, գիմեց անապատ, ուր տարի-  
ներով աղօթքի և պահոց պարապեցաւ ճշնարա-  
նի մը մէջ. Սակայն ստէպ այցելութեան կ'ենէր  
իր հօտին, կ'օրհնէր կը մխիթարէր զամէնքը,  
իբր զօրագլուխ մը կը քաջալերէր եկեղեցական-  
ները՝ անընդհատ աշխատելու ազգի պայծառու-  
թեան. և յետոյ կը դառնար իր քարայրը, Աս-  
տուծոյ հետ կը խօսակցէր, և կը խնդրէր որ ալ  
իր ծերութեան և յոգնած գլխուն հանգիստ  
շնորհէ հասարակաց մօր գիրկը, հողի մէջ. Բայց



նա դեռ հարկաւոր էր ազգին՝ իր ազօթքով և գործերով:

Այս ժամանակները Լուսաւորչի երկու որդիքը վրիժանէս և Արիստակէս՝ որ օտար աշխարհներ ծածկուած էին՝ յանկարծ յայտնուեցան. որուն վրայ Տրդատ ուրախացած՝ տարաւ զանոնք առ սուրբն՝ Մանեայ այրը, և խնդրեց որ իրեն տեղ Արիստակէս փոխանորդ դնէ. նա ալ յանձն առաւ և ձեռնադրեց, և աւելի ևս խաղաղացաւ իր անապատական վիճակին մէջ:

Լսենք ուրիշ դէպք մ'ալ, թողլով բանիբուն հմուտներուն քննել անոր ատուգութիւնը կամ անստուգութիւնը: Երբ մեծին կոստանդիանոսի քրիստոնեայ դառնալը լսեց Տրդատ, փութով գնաց Լուսաւորչի հետ անոր այցելութեան. և մեծ ընդունելութիւն գտան կայսրէն և Հռովմայ Սեղբեսարոս Քահանայապետէն: Երբ առաջին անգամ տեսան զիրար երկու ծերունի հայրապետները և երկու թագապսակ իշխանները գլուխառնեցան իրարու հետ. անլուծանելի սէր և բարեկամութիւն հաստատեցին. հոն ալ Լուսաւորչի համբաւը զինքը և իր աստիճանը փառաւորեց. և Հայաստանեայց հայրապետը հռովմեական սրտերու մէջ ընդարձակ տեղ գրաւելով՝ ետ դարձաւ իր աշխարհը՝ թագաւորին հետ, յիշատակի պարգևներ տալով ու ընդունելով երկու կողմանէ:

Լուսաւորչի ժամանակ հանդիպեցաւ նաև Նիկիոյ պանծալի տիեզերական՝ առաջին ժողովը, ուր չուզելով նա իր վկայական անուամբ երևիլ և պատուիլ, Արիստակէս որդին զրկեց, որ գնաց կատարեց իր հրեշտակութիւնը, և պատուով և նորանոր կանոններով ետ դարձաւ: Լուսաւորիչ վերջին անգամ մ'ալ բարձրացաւ իր աթոռին վրայ, տարածեց բողոքները՝ մինչև ընթերցաւ որդին

նիկիական հանգանակը, և Հայաստանեայց եկեղեցւոն բերան ըլլալով արտասանեց իր այն յաւերժայիչատակ խօսքերը: « Իսկ մեք փառաւորեսցուք » և այլն:

Արդեօք ուրիշ անգամ մ'ալ հնչեցունց նա իր վսեմ ձայնը ի լսելիս ժողովրդեան, թէ լոկ անոր անխօս մատնիւրը գծեցին մազալաթի վրայ այն պանչիլի Յաճախապատում ճառերը, զորոնք գրող եղեգան ճոճուցը իր բնական քարայրին կարծր պատերն իսկ կակղացուցին: Գուցէ անոր կենաց թելը այն ճառերուն վերջի բառին կը սպասէր, որ երբ աւարտեցաւ՝ իսկոյն կտրեցաւ և այն. և մինչ խամրած շրթունքները յիտին բոպէին Հայաստանի խաղաղութիւն կը միմիջէին, մաքուր հոգին՝ նման իր մանկութեան ծաղիկը ապրիցնելու ժամանակ՝ անոր հոտը առած և զմայլած ազաւնոյն, թռաւ փախաւ երկինք՝ ճիւղացած արդեամբք երեսնամեայ հայրապետութեան, յետ 331 ամին՝ որ է իր վերջին առանձնութեան թուականը. բայց մահուան ժամանակն անյայտ է: Անոր անեղծ մնացած մարմինը ծածկուեցաւ հովուաց ձեռքով վրանաձև քարայրի մը ներքե. զոր յետ տարիներու Գառնիկ անուամբ ճղնաւոր մը տեսիլքով գտնելով, տարաւ Թորգան. անկէ բերին վաղարչապատ, և տպա տարածուեցաւ ամէն կողմ:

Ս. Գրիգոր եղաւ փայլուն անօթ մը սրբութեան և առաքինութեան. ախպար արդարներու կենաց և մահուան, հայրապետական ոգւոյ և եռանդեան, քահանայական կարգի փոխմութեան և մեծութեան. որուն վրայ աչ միայն մենք պանչացած կը զմայլինք, այլ և օտար ազգեր՝ օտար ժողովուրդներ հանդիսով կը մեծարեն Յունաստանի մէջ և Եւրոպա՝ անոր սուրբ մատուցը եւ յիշատակը: Թողունք ուրիշները, գլխաւորապէս

ի նէպապոլիս իտալիոյ փառաւոր եկեղեցի կանգնած են իրեն ի պատիւ որուն մէջ հանգուցած են անոր նշխարներէն մեծ մաս մը՝ և տեղացիք ի հնուց կը պատուեն զինքը մանաւանդ իբրև պաշտպան իրենց թագաւորութեան: — Հայկակ, այս յիշատակիս վրայ կրնաս անխռով մնալ. օ տարք իրենց թագը մեր հօր ձեռքը յանձներ են. իսկ մենք. ուր է մեր թագը, ուր՝ անոր խը նամակալ Լուսաւորչի աջը. միթէ մեր հայրը օ տարները մեզմէ աւելի՞ կը սիրէ, որ ամփոփած կ'երեւի իր գուլթը մեզմէ. ահ, մի՛ գուցէ մենք զմեզ անոր անարժան ցուցած ըլլանք: Անոր ամբաւ սիրոյն արդիւնքները դեռ կը տեսնուին մեր վրայ. անով մենք՝ թէպէտ խորտակուած, բայց չենք փշրած. անով են մեր յաճախ ունեցած յաջողութիւնները. անով արտաքին ցուցեր հետըզհետէ կ'արժարժեն մեր յուսոյ մարած խարոյկը: Եթէ գիտնայինք Լուսաւորչի արժանաւոր սրդիք ըլլալ, եթէ ունենայինք անոր անձնանուիրութիւնը մեր եղբարց և աշխարհի փրկութեան համար, եթէ հասարակաց սիրոյն առջև չիջանէր մեր անձնական սէրը, հիմակ մենք չէինք զանազա նուիր անոնցմէ՝ որոնք երբեմն Լուսաւորչի աստուածահաճոյ աղօթքին առատ պտուղները կը վայելէին, և մեր հարց աննման շառաւիղներ չէինք երկիր. հիմակ մեր սուրբ հայրը դարձեալ կ'ընծայէր մեզի Տրդատներ, Սահակներ և վարդաններ, իրեն նման լոյսեր:... Բաւական է, Հայկակ, փոքր ինչ ուժ տանք, ուղղենք մեր սրտերը, և ահա արդէն իսկ յոյսը կը բանայ մեր առջև իւր դռները. ահա կը վերջայ մեր թշուառ վիճակը. և Հայաստան շքեղ փրկութեամբ կը դառնայ գրախտ և երկրորդ երկունք Գրիգորի:





ՄԵԾՆ ՏՐԴԱՏ

## Մ Ե Ծ Ն Տ Ր Դ Ա Տ

**Յ**ԻՇԵՍ արդեօք, Հայկակ, թէ՛ մենք այ ժամանակաւ մեր սրով կը պարծէինք, այն սրով զոր հիմակ խորտակած կը տեսնես. կ'իմանաս թէ սորկութեան լուծը մեր վրայ առանձին ծանրութիւն և զգուանք մը կ'ազդէ, և ինչո՞ւ համար. — որովհետեւ դա մեզ բնիկ չէ՛ այլ եկամուտ. որովհետեւ մեր նախկին ազատութեան շունչը դեռ մեր սրտի և ոնգաց մէջ կը խաղայ : Երբ աշխարհիս վրայ մեծամեծ գահակալներ բռնութեամբ կամ յափշտակութեամբ տիրելով կ'որոտային կը պարծէին իրենց զօրութեամբ և համբաւով, մեր բնիկ հայրենեաց՝ Այրարատայ մէջ ալ կ'իշխէր արդար գահ մը, թագաւորութիւն մը, որուն համար գառն էր լսել այն բելանման ամբարտաւաններու կծու կծու խօսքերը և սպանալիքները, սկսած այն ժամանակէն, երբ մեր սեփական մայրենի լեզուն որոշեց զմեզ մարդկային ազգի խառնազանճէն և ամբիփեց Հայաստանի սուրբ հողին վրայ : Այդ ժամէն մեր նահապետները սրեցին սրբեցին իրենց զէնքերը և փայլեցնել սկսան թշնամեաց արեան մէջ. յետոյ երբ արդար վաստակով պսակ մը բոլորեցին իրենց ճակտին վրայ, անոնց գաւազանը՝ խորտակելով այն հպարտներուն գոռոզութիւնը, նահանջեց

ամբեցուց անոնց յանդուգն յարձակումները : Բայց մեր ազգն ալ ծծեց հասարակաց օգը, ինքն ալ ժամանակին և բախտին խաղալիկ եղաւ, եւ երբեմն երբեմն անոնց սրընթաց հեղեղներուն մէջ խառնուած անյայտացած տեսաւ իրեն թագը : Սակայն մենք բախտաւոր ենք : Հայաստանը հանեց այնպիսի դիւցազներ, որ վտանգներու անձնատուր ըլլալով՝ յարձակեցան դուրս խլեցին զայն և դարձեալ իրենց գլուխը գրին : Այդ քաջ թագաւորներէն պատկառանքով մեր խորհրդածուծեան նիւթ առնունք մեծ, սուրբ՝ և ուրիշ հազարումէկ շքադիր անուններու արժանաւոր Արշակունին Տրդատ :

Հայոց տունը սուգ էր պատեր, երբ սատանայածին Սասանեան Արտաշիր թագաւորը չկարենալով զօրութեամբ՝ դաւով սպաննել տուաւ մեր Տրդատայ հայրը, Արեաց և Հոովմայեցուց յազթող խոտրովը : Արտաշիր ասպատակեց մեր աշխարհը, մեծ կոտորած ըրաւ, ի սուր մաշեց արքայորդիները, որուն ձեռքէն ազատեցաւ միայն Տրդատ որ դեռ մանուկ էր, նման դաշտի վրայ բուսած ցորենի այն մատաղ հասկին, որ ուրիշներէն աւելի կարճ ըլլալով՝ մանգաղին սուր հարուածը չընդունիր : Արաւազդ Մանգակունին առաւ զինքը և փոխաւ Հոովմ : Հոն սնանելով եւ կտրիճ երիտասարդ մը դառնալով՝ մտաւ կայսեր ազատաց խումբին մէջ, Լիկիանէ կոմսին իշխանութեան ներքեւ : Իսկ վատ Սասանեանը տիրեց մեր աշխարհին, ջնջեց հաւատարիմ՝ և կորովի Մանգակունի նախարարին ցեղը :

Տրդատի առոյգ և վայելուչ կերպարանքը սկըսաւ զինքը ամենուն սիրելի ընել : մանաւանդ անոր վեհանձն և քիչ մը հպարտ ոգին և արշակունի արիւնը, որ անոր սրտին մէջ բարձրութեան գաղափար մը զարթուցեր և մարմնոյն

զարմանալի կորով մը տուեր էր, տակաւ կ'ազգէին անոր մտքին մէջ՝ թէ քան ամէն ուրիշ մարդկեղէն արարած իրաւցնէ մեծ և բարձր է ինքը. որուն ցոյցը նոյն ժամանակէն իրօք ալ սկսաւ տալ: Զէնք շարժել, կատապի ձիերու վրայ ուժը և ճարտարութիւնը փորձել, և ուրիշ անթիւ քաջութիւններ գործելը անոր համար ոչինչ բաներ էին, մինչդեռ տեսնողները կ'ապշտէին: Գազանամարտութեան ժամանակ ցուլի մը դէմ ախոյեան հանդիսանալով՝ բռնեց անոր եղջիւրներէն և այնպէս ցնցեց, որ սոսկալի գազանը մէկէն գետին ինկաւ, թողլով եղջիւրները անոր ձեռքին մէջ՝ իբրև աւար:

Կառարչաւի ժամանակ անոր հակառակորդը այդ արուեստին մէջ աւելի ճարտար գտնուելով, զինքը կառքէն վար ձգեց. նա այնպէս ինկաւ՝ իբր թէ կոմաւ նետուած ըլլար. յետոյ նոյն րոպէին աճապարեց բռնեց կառքը, և չորս ձիերն արձանապած անշարժ կեցան. իր յաղթանակը տարօրինակ էր:

Նոյն ժամանակները Հռովմայեցիք Գոթաց գէմ պատերազմի ելան. զօրքը սովէն տանջուած յարձակեցան սպաննեցին կայսրը, և յետոյ իշխաններուն վրայ վազելով՝ գիմեցին նաև Լիկիանէի վրանը. յանկարծ անոնց գէմ՝ ելաւ երիտասարդ մը՝ թուրը բացած, և այնպէս որոտաց անոնց երեսն ի վեր և սպառնացաւ, որ սարսափած հեռացան. դա էր Տրդատ, որ չուղելով ընկերներուն նման փախչիլ յարձակողներուն սուրէն, ընդդիմացաւ անոնց և այսպէս ազատեց իր տէրը:

Այդ գէպքէն երկու տարի վերջը (284ին), Պարսից գէմ պատերազմի գնաց կարոս կայսրը. Տրդատ ալ Հռովմայեցւոց բանակին մէջ էր, որ քաջութեամբ կոուեցաւ և շատ մարդ սպանեց



թշնամիներէն: Բայց երբ կոռնակ հայկազն օգ-  
նութեան հասաւ Պարսից՝ Եփրատ գետի՝ մե-  
տերը, կայսրը յալթուեցաւ, հռովմայեցի լեգէոն-  
ները ցրուեցան, և Տրդատի ձին սպանուած  
ըլլալով պատերազմի մէջ, չկրցաւ իրեններուն  
հետ փախչիլ: Բայց նա սզատելու հնարքը գը-  
տաւ. հոնեց առաւ ձիոյն կողմածը և իր զէն-  
քերը, նետուեցաւ գետին մէջ, և արագութեամբ  
լողալով անցաւ միւս կողմը. և մինչ լիկիանէ  
մեռած կը կարծէր իր հաւատարիմ՝ կորիճը, նա  
յանկարծ գնաց արձանոցաւ առջևը:

Սակայն դեռ վերջը չեկաւ Տրդատոյ քաջու-  
թեան տախտերուն. որէ օր նորանոր սուպարէզ-  
ներ կը բացուէին անոր առջև: Հարկ է ըսել,  
Հայկակ, թէ նախախնամութիւնը կամաւ այս փոր-  
ձութեանց կ'ուզէր ենթարկել զինքը, որպէս զի  
ըլլայ վարժ և կարողանայ օր մը Հայաստանի  
կարծանած գահը արիարար կանգնել և հաստա-  
տել նախկին պատուանդանին վրայ, մանաւանդ  
թէ բեւեռել՝ որ ինչ և է մրրիկ չկարենայ վերջս-  
տին տապալել. բայց դեռ վերջին փորձ մ'ալ  
մնացեր էր, այն ևս հասաւ:

Գոթաց թագաւորը պատերազմի ձայն տուաւ  
Գիսկղեաթիանոս կայսեր, որ նոր թագաւորեր էր.  
նա ալ հրաման զրկեց, և սմէն կողմերէ եկան  
ժողովեցան զօրքերը որոչեալ քաղաք մը: Կէս  
գիշեր էր՝ երբ հոն հասաւ. նաև լիկիանէ իր  
բանակով, և գուռները դոց գտաւ. իրենց ձիերը  
յոգնած էին և անօթի, և խոտ չէր գտնուեր: Ար-  
ծուի արագութեամբ վեր թռու. Տրդատ պտրըս-  
պին վրայ, ներս անցաւ և սկսաւ հոն գտնուած  
խոտի դէզերէն մեծամեծ կոյտեր գուրս թափել.  
և յանկարծ անոնց միջէն սկսան ահագին աղա-  
զակիւր լուիլ. երբ զօրքերը սարսափած՝ իրենց  
զէնքերով կը ցրուէին զանոնք, տեսնոյ ջախջա-

խուած կիսամահ էչեր (կամ շուներ), զորոնք Տրդատ առանց որոշելու խոտերէն՝ որոնց մէջ հանգչէին, վար կը թափէր:

Պատերազմին նախընթաց օրը Գոթայ թագաւորը կայսեր պատգամ՝ զրկեց, որ, եթէ կ'ուզէ՝ առանց արիւնհեղուժեան վճարեն գործը, երկու թագաւորները մենամարտելով իրարու հետ: Դիողգետիանոս տագնապեցաւ անոր ուժէն և հսկայ հասակէն. բայց իշխանները պատմեցին Տրդատին քաջութիւնները, որուն վրայ վստահացած՝ իր կայսերական զգեստները անոր հագցուց, և իբրև թագաւոր՝ թշնամոյն դէմ հանեց: Փողերը հնչեցին, և երկու մենամարտիկներն իրարու հանդիպեցան: Փրփրաց թշնամին, սպառնալիք և հայհոյանք թափելով բերնէն, վերուց սուրը, յարձակեցաւ ասոյեանին վրայ, կարծելով զարհուրեցնել զինքը: Բայց արգօք կայծակ էր՝ թէ անոր նման մարդկեղէն արարած մը՝ ակնթարդի մէջ իր վրայ խոյսցողը ինքը լաւ իմացաւ. շանթահարածի պէս թուլացաւ մնաց, երբ քողարկած հայ կորովին թռաւ՝ մահացու հարուած մը տուաւ անոր, քարչեց յափշտակեց երիվարի նիւսէն, և տարաւ կեցուց ծածկուած կայսեր տուջև: Աքանչացաւ Դիողգետիանոս, ելաւ համբուրեց յաղթողը, և ի վարձ անոր արուժեան՝ հանեց մեծ զօրավարական ոսկեշող թուր մը և կապել կ'ուզէր անոր մէջքը: Բայց յանկարծ երախտագէտ զօրականներէն շշուկ մը լսուեցաւ՝ թէ այդ վարձն արքայորդւոյ մը համար սակաւ է. զարմացաւ և ուրախացաւ. կայսրը՝ երբ լսեց այդ նոր անունը. հանեց իր գանձէն ականակուռ թագ մը և արքայակերպը մեծ հանդիսով ստոյգ թագաւոր պսակեց. հռովմէական գունդեր տուաւ և զրկեց Հայաստան իր գահը ձեռք բերելու:

Այս անակնկալ լուրը երբ մեր նախարարներուն ականջը հասաւ, ամէնքն ալ բազմութեամբ գնացին Կեսարիա դիմաւորելու իրենց նոր թագաւորը: Գտաւ Տրդատ հոն իր սիրելի քոյրը Խոսրովիդուխտ, զոր Օտա Ամատունի նախարարն ազատեր կոտորածէն և պահեր էր ամէն զգուշութեամբ: Իշխաններէն զմանս պատուեց՝ վարձատրեց, զմանս պատերազմի պատրաստեց. յետոյ ձեռք առաւ իր նախնեաց բազմափորձ սուրը, քանի մ'անգամ՝ շողացուց և բոլորովին յարմար գտաւ իր բազկին: Կատաղաբար յարձակեցաւ Պարսից զօրքերուն վրայ մեծ մասը ջարդեց, մաս մ'ալ փախուց՝ հալածեց մինչև իրենց սահմանները, պատուիրեց զօրավարներուն որ միշտ հսկեն, և ինքն Երիզայ աւանը դարձաւ՝ իր չյուսացած գործը կատարելու:

Հոն էր Հայոց աշխարհին ինամակալ Անահիտ տիկնոջ մեհեանը, որուն ուզեց թագաւորը զոհ մատուցանել: Կը յիշես, Հայկակ, թէ այդ ժամանակ ինչ հանդիպեցաւ. ծանօթ են քեզ մեր հօր Լուսաւորչի կրած սաստիկ տանջանքները, որ չուզելով հեթանոսական պաշտամանց հաղորդիլ, Տրդատայ կրօնամուտութեան և կատալութեան զոհ եղաւ սուրբ հաւատքին համար, և յետոյ մութ վիրապի մը մէջ ձգուեցաւ:

Երբ Տրդատ բացուած տեսաւ իր առջև փառաց ընդարձակ ասպարէզ մը, իր նախորդաց բրածը չբրածը ինքն ուզեց գործել. միտքը դրաւ անոնց ամենուն չկրցած վրէժը ինքը պահանջել հայրենեաց բոլոր թշնամիներէն: Կանգնեցաւ անգամ մը, քաղցած առիւծի կրակոտ աչքերով նայեցաւ շուրջը, կոչեց իրեն մօտ Հայոց գունդերը, թափ տուաւ նիզակին, մտրակեց ձին և սլացաւ: Համառօտ ըսելով՝ սակաւ ժամանակի մէջ Հայաստանի բոլոր քաղաքները սրբեց Պար-

սից զօրքերէն, այրեց անոնց դրօշները և հայկականները կանգնեց անոնց տեղ. և ասով ալ դո՛հ չըլլալով, վազեց Ասորեստան և Պարսկաստան, կոտորեց՝ սուրեց և աւարեց, ամէն կողմ ահ և մահ սփռեց: Վո՛ւամ (Գ) արքայից արքայն քնէ նոր արթնցածի պէս շուարեցաւ մնաց, երբ տեսաւ որ Հայոց քաջ թագաւորը Տրդատ, որուն անունը դեռ հազիւ լսած էր, ամէն բան խանգարեր՝ վերուվայր ըրած, և իր երկիրները յափշտակած էր: Ա՛լ դանդաղելու ժամանակ չէր, յանդուզն թշնամին դեռ կը սպառնար. ուստի ժողովեց իր զօրքերը և ճակատեցաւ: Դիւրին է գուշակել այս մարտին ելքը՝ երբ երկինք և բախտը Տրդատայ կողմն էին. խստնուեցան իրարու հետ, զարկին և զարնուեցան. Հայոց քաջին բազուկները հետզհետէ նոր ոյժ ստացան, սպառեցին ատելի Պարսիկները, յառաջ անցաւ և նիզակը կանգնելով իր վիրաւոր զօրքերուն հանդէպ, ցրուեց թշնամիները:

Ուրիշ անգամ դարձեալ կրկնուեցաւ այս մարտս. այժմ լսենք, Հայկակ, մեր Տրդատայ սիրահար խորնոյճ պատկառելի ծերունւոյն հրափառ սրտի խօսքերը. « կորովեացն Պարսից զփորձ առեալ զսաստկութեան սկային և չկուռ վառուածոցն, բազում վիրօք պատեալ զձին՝ սատակեցին նետաձուգութեամբք. որոյ զարկուցեալ յերկիր ընկենոյր զարքայն: Իսկ նորա յարուցեալ և ի հետի յարձակեալ, փոխանակ իւր զբազումն ընկենոյր ի թշնամեացն, և զմիոյ ուրումն զձի կալեալ, աւրիարար աշտանակեալ և դարձեալ յերկրորդին միւսանգամ կամաւոր լեալ հետի՝ սուսերաւ զբրամակս փղացն պուղէր », և արեան սարսուփելի հեղեղներու մէջ յաղթական դրօշը կը ծածանէր:

Պարսկական գարուց ի դարս յաւերժացած

գոռուլութիւնը՝ այդ նորայարոյց քաջին դէմ կատարութեան փոխուեցաւ. ուզեցին վերջին յուսահատ փորձ մ'ալ ընել. խրախուսեցին զիրար, պատրաստեցին փիղեր և գունդեր, ձայն տուին Տրդատայ. նա ալ յօժարութեամբ ընդունեցաւ անոնց հրաւերը. նոր Կոհեր, Գոչեց և թուաւ : Երբ տեսան թշնամիք. իրենց վայրկենի մէջ ստացած քաջասրտութիւնը վայրկենի մէջ ալ ցրուեցաւ ծուխի նման : Բայց նա անոնց փոքր ինչ յոյս տալու և պատերազմէն առաջ չփախցնելու համար, իջաւ իր նժոյզէն, հեռացուց զայն, որովհետև իր սրունքները թէպէտ հաստաջիլ՝ բայց աւելի թեթեւ և դիւրաշարժ գտաւ, ինչպէս վարժեցուցեր էր հռովմէական խաղերու մէջ : Առաւ վահանը և սուրը, փողեց և նետուեցաւ կատղած զազաններու հրամակներուն մէջ. անտես ոգւոյ մը պէս շփոթեց զամէնքը, սարսափեցուց իրեն վիթխարի կերպարանքովը, ցրուեց՝ փախուց զանոնք, և որոնք յանդգնեցան գիմադրիլ իրեն՝ սրախողխող սպանուեցան : Նոյն ուժով յարձակեցաւ Տրդատ Տիգրանէն ալ հեռու, շրջան ըրաւ տիրեց մերձակայ երկիրներուն՝ յափշտակելով զանոնք Պարսից ձեռքէն :

Վռամայ յաջորդը ներսեհ՝ աւելի զօրաւոր և վտանգաւոր էր իրեն քան միւս թշնամիները՝ կ'ուզէր անոր վրայ ալ յարձակիլ, բայց իր կըտորիճ զօրավարներէն շատերը նախորդ պատերազմին մէջ կորուսած ըլլալով՝ չէր համարձակեր : Այն ժամանակ ուրիշ հնարք մտածեց. զօրք գումարեց և սպասեց Հռովմայեցւոց՝ որ պատրաստուեր էին Պարսից վրայ գալու. եւ երբ լսեց անոնց Ասորեստան հասնիլը և պատերազմին սկսիլը, ինքն ալ Պարսկաստանի հիւսիսային կողմերը վազեց, և ամբողջ տարւոյ մ'ընթացքի մէջ գործեց՝ ինչ որ կրցաւ, խելով և տիրելով մին-

չև որ երեք տէրութիւնները հաշտութիւն ըրին, և մեր կորովի թագաւորը հոն վերակացուներ թողլով դարձաւ Հայաստան:

Այն ժամանակէն մինչև վերջերը, ո՛հ, ի՛նչ և ուանդեամբ և աշխուժիւ կը հնչէին Հայոց բամբիռներուն ձայները՝ խառն ժողովրդեան երգերուն հետ. երբ կ'ուզէին անոնք գովել հայրենեաց համար նահատակութիւններ գործող կտրիճ մը՝ կ'ըսէին. « Իբրև զսէզն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց »: Եւ մանաւանդ ինչպէս սաստկացաւ այդ երգերուն աշխոյժը՝ երբ յետ այսչափ յաղթանակներու նուապեցին նաև մեր թագաւորին փեսայութիւնը և նորապսակ թագուհւոյն Աշխենի՝ Ալանաց օրիորդին՝ եղած շքեղ ընդունելութիւնը: Թէպէտ զանոնք տեսնելու բախտը մեզ ալ չէ տրուած՝ բայց ունինք սիրտ՝ որ կը յիշէ զայն և կը զգայ:..

Տե՛ս, Հայկակ ի՛նչ նոր և խորհրդաւոր խօսքեր են ասոնք, որ հոգեհուազ երգչին բերնէն կը լսուին. « Երկունք փրկութեան աշխարհի ճեպէին »: Արտաքին թշնամիները և կռիւները վերջանալով՝ ներքին և նմանապէս շահաւէտ՝ բայց անսովոր կռիւ մը սկսաւ: Հայաստանի մէջ երևցան հարածուած քրիստոնեայ կուսաններ, Հաիփսիմեանք, որոնք մեր աշխարհին հոգևոր փրկութեան աւետարեր աղանձիներ եղան. սակայն ինչպէս Սրբոյն Գրիգորի, այսպէս նաև այն անմեղներուն չխնայելով Տրդատ, նահատակել տուաւ և անոնց մարմինները դաշտի վրայ ձգեց: Բարկացաւ Աստուած՝ և շարժեցաւ խրատելու զայն մտնաւանդ՝ քան պատժելու ինչպէս ուրիշ անողորմ հեթանոսները, այդ պատժոյն չափը և պայմանը բոլորովին յայտնի չէ մեզի. բայց այսչափ կարող ենք գուշակել՝ որ Տրդատայ նման հոգւով

և մարմնով հսկայ մը զգաստացնելու համար թե-  
թե հարուած մը բաւական չէր:

Վերջապէս տեսիլքով յայտնեց Աստուած հա-  
մեստ խոսարովիդուխտին, թէ կ'ուզէ բժշկել իր  
եղբայրը և աշխարհը՝ տասնուչորս տարի առաջ  
կորսուած Գրիգորի մը ձեռքով. նախարարները  
կէս մը ծիծաղելով անոր կենդանութեան մասին՝  
կէս մը կասկածելով, գնացին՝ գտան և հանեցին  
սուրբը վիրապէս. որ եկաւ և առանց իր կրած-  
ները յիշելու՝ աղօթքով բժշկութիւն առաւ ա-  
նոնց և քարոզեց սուրբ հաւատքը: Տրդատ՝ կուռ-  
քերու ջերմ սիրողը՝ Քրիստոսի ջերմ սիրող ե-  
ղաւ. ուզեց իր վիճակակիցներուն մէջ գերազանց  
երևիլ նաև աստուածաշատութեամբ. ուստի իրմէ  
« Բանաւոր ողջակէզներ և փրկութեան զոհեր »  
եղած վկայուհեաց սիրոյն համար առ վայր մի  
մոռցաւ իր թագը և ծիրանին, արհամարհեց  
քառաձի կառքը, և Երկնաւորին խոնարհութեան  
հետեւելով առաւ իր ծառայից հանդերձը և ձեւը,  
գնաց ելաւ Մասիսի բարձունքը, ուսին վրայ  
բարձուց մեծամեծ քարեր, և հսկայաբար վա-  
զելով՝ բերաւ վկայարաններու հիմունքը դրաւ,  
տաճարներ կանգնեց:

Յետոյ ձի հեծած և թուրը բացած՝ ընկաւ  
Լուսաւորչի առջև և սկսաւ հեթանոսութեան դէմ  
պատերազմիլ. իր ձեռքով կործանեց դից մե-  
հեանները և եկեղեցիներ կանգնեց անոնց տեղ.  
Փշրեց անշունչ աստուածները և կենդանի Աս-  
տուծոյն անունը և նշանը բարձրացուց անոնց  
վրայ. սրբեց Հայաստանը հեթանոս կրօնքին դըս-  
րովելի սովորութիւններէն. թէպէտ չյաջողեցաւ  
հիմնովին ջնջել անոր սերմերը ամենուն սրտէն:

Երբ Լուսաւորիչ եպիսկոպոս ձեռնադրուելով  
կեսարիայէն դարձաւ, այն ժամանակ Տրդատ  
մտաւ Եփրատայ փրփրալից կոհակներուն մէջ,

լուաց իր հին մեղքերը, և Յովհաննէս անուան հետ ստացաւ անոր յարմար փափուկ և հեղ սիրտ մը, այլ առանց մերժելու իրմէ թագի պարտուպատշաճ կորովի Տրդատայ մը սիրաբաժնէ: Շատ երկար պիտի տեէր եթէ մի առ մի յիշէինք քաջին և սրբոյն ամէն առաքինութիւնները, ճգնութիւնները արտասուալից հառաչանքները, մանաւանդ բարեկարգութիւնները՝ զոր զործեց Հայաստանի մէջ Ս. Գրիգորի հաճութեամբ. ուստի զանոնք միայն յիշենք՝ որ աւելի զարմանալի են փառք մեր հայ անուան՝ օտարներուն առջև:

Այս ժամանակ՝ որ է շորձորդ դարուն սկիզբը, մինչդեռ մեր ռզգը և արքունիք սուրբ հաւատոց պայծառութեամբ կը պարծէր, ուրիշ աշխարհներու մէջ քրիստոնէութիւնը գետնադամբաններուն ընդքն ծածկուած անյայտացած՝ հեթանոսութիւնը համարձակ կ'իշխէր մեծամեծաց աթոռներուն վրայ: Տրդատ՝ արդէն ծանօթ անոնց իր մարմնական ձիւղքերով և գործերով՝ այժմ ծանօթացաւ նաև քրիստոնէութեամբ, և ամենուն կատալութիւնը շարժեց իր վրայ, որոնք ատամնին կրճտելով՝ սպառնալից խաղացին մեր աշխարհին վրայ. անոնց առաջինն եղաւ, (ինչպէս կը պատմէ Եւսեբիոս), Մաքսիմիանոս բռնաւորը, որ անյուսալի շարդ մ'ընդունելով Տրդատէն՝ ամօթահար դարձաւ իր աշխարհը, և յետոյ փչեց հոգին դառն մահուամբ:

Երբոր լսեց Տրդատ մեծին կոստանդիանոսի քրիստոնեայ ըլլալը և կ'ուզէր տեսութեան երթալ՝ յանկարծ գուժ մ'եկաւ թէ հիւսիսային բարբարոս ազգերու Գեղաբեհոն թագաւորը հասեր աւերեր է վրաց աշխարհը և անոնց Միհրան թագաւորը փախուցեր: Տրդատ՝ երեսուն հազար զօրք տայով Ապահունեաց իշխանին՝ վրաց օգնութեան զրկեց, որ գնաց յաղթեց և գերեց,



և Աղձնեայ Գոռով նախարարը պահապան թողլով  
ես դարձաւ Սլկունեաց Սղուկ նախարարին ալ  
Տարօնի հսկողութիւնը յանձնելով՝ շարունակեց  
Տրդատ իր ճանապարհը դէպ ի Հոռովմ :

Չայս յարմար առիթ սեպելով Շապուհ Պար-  
սից թագաւորը և Գեղոսեհոն, ոսկւոյ կշիռքով  
կուրացուցին այդ երկու նախարարներուն աչ-  
քերը և պատրաստուեցան յարձակիլ անտերունչ  
Հայաստանի վրայ : Բայց խոհեմ և խորագէտն  
Տրդատ կանխաւ փորձ ըլլալով թշնամեաց ատե-  
լութեան, յետ մեծամեծ պատիւներ ընդունելու  
կայսրէն, փութաց՝ անոնցմէ առաջ հասաւ իր  
աշխարհը, տեսաւ մօտալուտ վտանքը, և երբ կը  
պատրաստուէր և դեռ բաւական զօրք չէր ժող-  
ված : Բասլացին Գեղոսեհոն հասաւ Տարօն և բա-  
նակ դրաւ : Քաջն Տրդատ սկիզբէն քիչ մը եր-  
կիւղ զգաց՝ երբ տեսաւ թշնամեոյն ահագին պատ-  
րաստութիւնը . սակայն յիշելով՝ թէ ինքը սո-  
վորական մարդ չէ, և ո՞ր և է մարդկային զօրու-  
թիւն իր առջև թեթև հողմէ չզանազանիւր, քա-  
ջալերեց իր երեսուն հազարը, չորս մասի վերա-  
ծեց, երեքը հոս՝ հոն դարանակալ դրաւ և չոր-  
րորգը ճակատեցուց և յարձակեցաւ : Թշնամի-  
ներն անոնց ուժէն մերձակայ անտառի մը մէջ  
մղուեցան . այն պահուն դարանակալներն ալ  
գուրս վազեցին և սկսան անխնայ ջարդել, մեծ  
մասը սպաննեցին և ստուար մաս մ'ալ գերի  
բռնեցին :

Այս լեղի պատառէն դառնացած Բասլացին՝  
Հաշտենից դաշտը գնաց բանակեցաւ, և սպառ-  
նալեզք մարդ զրկեց առ Տրդատ՝ որ գերիները  
և անոնց վրայ դրամ ալ աւելցնելով իրեն դարձ-  
նէ . նա փոխանակ պատասխանելու՝ առաւ զօր-  
քերը և գնաց անոր գոռոզութիւնը իջեցնելու :  
Օրը տարաժամեր էր՝ երբ պատերազմը սկսաւ :

երկու կողմանէ ալ կատաղաբար կռուեցան. Պատերազմին ամենէն տաք տտենը, երբ Տրդատ՝ զօրավար մը իր առջև ձգած կը հալածէր, գաղտ հասաւ ետեէն Գեղոսէն, որ անոր նման ուժեղ և յաղթանդամ էր, և երիվարին վրայ կապուած կաշեայ երկայն պարանը նետելով՝ անոր ձախ ուսին և բազկին մէջ անցուց. կայծակի արագութեամբ դարձաւ մեր անյաղթ հսկան, բռնեց չուանը և անշարժ կեցուց հակառակորդը: Անոր յանդգնութիւնը սրտաբեկութեան փոխուեցաւ, փորձեց փախչիլ թայց չկրցաւ. որովհետև քաջին սուրն առանց դանդաղելու իջաւ երկու բաժնեց անոր հուժկու հասակը՝ հանդերձ ձիոյն թիկամբը: Թիշատակաց արժանի քաջութիւններ գործեցին նաև մեր կտրիճ նախարարները. դեռ անստոյգ էր բախտին վճիռը երբ մութը կոխեց և երկու բանակները ստիպուեցան ամփոփուիլ: Գիշերն անցաւ, և պատերազմի փողերը դեռ չհնչած թըշնամիք իրենց սպարապետին վատ և յանդուգն խորհրդով մահը աչք առած, պատառեցին Հայոց զօրքը և հասան ուղղակի թագաւորին վրանը: Մռնչեց Արշակունին, քարչեց սուրը պատենէն և դուրս վազեց՝ ինչպէս առիւծ մը որջէն. շատերը գետին փռեց գիտապատտ՝ և հանդիպեցաւ զօրապետին, որ զօրաց շփոթութիւն ձգելէն օգտուելով խոցեց անոր ուսը. այդ հարուածը նոր ոյժ մ'ազդեց քաջին, որ փոխանակ նուազելու աւելի ևս զօրացաւ, կշռեց բազկին հարուածը անոր գլխոյն վրայ՝ երկու ճեղքեց: Թըշնամիք այդ զօրավարէն ալ զրկուելով՝ յուսահատած փախան. յաղթողը վանեց գիրենք մինչև Հոնաց աշխարհը. որոնք պատանդներ տալով հաշտութիւն ըրին:

Պետութեան ամբողջեան համար՝ բացի ուրիշ բարեկարգութիւններէն, ինչպէս են՝ շինութիւնք,

յառաջագիմութիւն գիտութեանց և արուեստից, հաստատեց նաև չորս կուսակալներ աշխարհին չորս կողմը, որոնք պատրաստ պիտի ըլլային միշտ թշնամեաց յարձակումներուն՝ դէմ և թափաւորին ձայն տային։ Այսպէս տարածեց իր համբաւը շրջակայ ազգերուն մէջ, կոչուելով «ահեղազօր՝ միահեծան թագաւոր հիւսիսոյ»։ Այս անունս արդեամբ ալ ստուգուելով՝ թուլացան դադրեցան հակառակորդք, և Հայաստան Ս. Տըրդատայ հովանաւորութեան ներքեւ երկար ժամանակ վայելեց իրեն չափած չվայելած խաղաղութիւնը և երջանկութիւնը։

Սակայն այդ արտաքին խաղաղութիւնն ազմուկեց մեծամեծաց սրտերուն մէջ հաւատոյ խաղաղութիւնը, ինչպէս կ'ողբայ մեր ծերունի ֆերթողահայրը։ Սատուածսիրութիւնը վերցուեցաւ անոնց սրտերէն և սեղի տուաւ անկարգութեանց։ Եանդիմանեց, յորդորեց զանոնք Տրդատ, մաշեցաւ լեզուն, մերթ իշխանական սաստ, մերթ հայրական գորովալից խօսքեր և մերթ քրիստոնէական վայել եղբայրական սղղարարութիւններ անպակաս ընելով։ Բայց ի զօր ոչ մի օգուտ չտեսաւ։

Ոչ այնչափ յիսուն և վեց տարիներու թագին և ոչ կենաց զանազան տեսարաններով իր առջև հանդիսացած ութսուն և հինգ տարիներու ծանրութենէն ճնշուած, որուն դեռ բաւական ոյժ ունէր տանելու, քան որչափ աստուածային օրինաց ոսնառութենէն դառնացած, թողուց մերկացաւ թագը և ծիրանին՝ առաւ Դաւթի ցանկացած աղանոյ թիւերը, և թռաւ դադրեցաւ անապատին մէջ, մտաւ իր լուսատուին իրեն ժառանգութիւն թողած ցուրտ այրը՝ այրած սրտին զովութիւն մը գտնելու, զոր չունէր արքունական գահոյից վրայ։ Իսկ վերջինս և իր դատը վերին տեսչութեան յանձնեց։ Աւելորդ է ըսել թէ այն

երկնաւոր ձայնը՝ որ այնչափ մեծութենէ այնպիսի աղքատութեան հրաւիրեց զինքը, ինչ հոգևոր հուր վառեց անոր սրտին մէջ, մանաւանդ թէ արդէն վառուածն արծարծեց, որով խիստ և անտանելի ճգնութիւններ սիրով յանձն առաւ և կրեց Աստուծոյ համար՝ մինչև իր Կեսաց ճրագին մարելուն վերջին կէտը՝ որ մտեցեր էր:

Նախարարները աղաչանքով կանչեցին զինքը՝ իմացնելով թէ զղացեր են իրենց գործերուն վրայ: Նա չուզեց հաւատալ անոնց և թողուլ իր հոգևոր խաղաղութիւնը, և դառնալ առաջին ներութեան մէջ: — Սոսկա, Հայկակ, երբ ամպարը տութեան և ազգատեցութեան յետին եղեւը լսեա: — Այդ զղացողներէն ոմանք երբ տեսան թէ հրաժարեցաւ սուրբը, կեղծաւոր և նենգաւոր բաժակին մէջ թոն խառնելով՝ մատուցին անոր, և Հայաստանի կանգնողին և նորոգողին ութսուն և հինգ տարիներու ծերութեան ալիքը փոխանակ օրհնութեան՝ ցաւոց հառաչանքով իջուցին իր յաւիտենական հանգիստը (յաւին 342):

Աւսդ, այդ էր վարձքը առաքինութեան քաջ և ազգասէր թագաւորին, աստուածասէր անձին, հաւատոց և հայրենեաց դիւցազին, որուն վրայ Աստուած իսկ զարմացաւ, երբ յաջողեցաւ գործել անոր վրայ՝ ինչ որ ինքը հաճեցաւ. այն է, ամենայն ինչ հիանալի ցուցնել, իր մարմնոյն կորովը, ըրած յաղթանակները, առած շահաւէտ խրատը, դարձը, մեծ բարեպաշտութիւնը, խոնարհութիւնը, և պսակեց զինքը կրկին թագաւոր երկնքի մէջ: Լուսնք, Հայկակ. յիշե՛ք միայն անոր շքեղ և արքայազայել յուղարկաւորութիւնը՝ զոր ըրին սիրելիք և մտերիմք, որոնք անոր կենդանութեան ժամանակ իբրև գերագոյն արարած մը նկատեր էին զինքը, և մեռնելէն

վերջը իբրև սրբազան մասունք պաշտելի սուրբի մը և վերջին աւանդ տիեզերահրոչակ թագաւորին Հայոց՝ առ իրեն սիրելի աշխարհը: Ահա անոր թագման նկարագիրը՝ որ խորենացւոյն կ'ընծայուի. կը տանէին զինքը թորգան իր հանգըստարանը՝ ւարժաթապատ դիակիր դագաղօք, յորում լծեալ շորիք ոսկեսանձք, գունակ գունակ հանգերձիւք զդագաղան զարդարելով. և վաշտք զօրացն աստի և անտի վառեալք զինուք և նշանակք. իսկ առաջի դագաղացն՝ ձայնք աստուածօրհնութեան, և բուրմունք խնկոց. իսկ աստի և անտի բարեկամք և սիրելիք, ընտանիք և բազումք յորդուց նորա հետեակ անկեալ. և զկնի գագաղացն փողք և տաւիղք ողբոց, և կուսանք ողբասացք. թող զայլ ուամիկան որ երթային զհետանթիւ բազմութեամբ: Եւ այսպէս հասեալք ի տեղին, արարեալ տապան թագաւորական ի քարանց կճեայց, և ի վերայ ապակի արկեալ. յորում եգեալ զգանձն պատուական, զանուշահոտ զպատարազն, զմեծն վաստակաւորն, և տարեալ թաղեցին զնա ի տեղուջ զբօսանաց մեծին Գրիգորի, զոր պարսպեալ անուանեաց իւր պարտէզաւ — իսկ մենք, Հայկակ, որ զուրկ ենք մնացեր մեր պաշտելի թագաւորին ամէն յիշատակներէն, յիշենք դոնէ իր պաշտելի անունը զոր թողուց աշխարհիս վրայ, Հայաստանեայց եկեղեցւոյն մէջ և քու սրտիդ խորը՝ իբրև անջինջ կնիք մը, որ միշտ յիշես թէ հագորդ ես իրեն հաւատոց և արեան. և եթէ չփափաքիս իր թագին, գոնէ ցանկաս անոր տակ ծածկուած գլխուն եւ սրտին:







ՍՐԲՈՒՀԻ ԱՇԻԷՆ

## ՍՐԲՈՒՆԻ ԱՇԽԷՆ

**Ե**թէ հայ ազգն հեթանոսութեան նախկին ժամանակները չէ ունեցեր իր Մուսանները և Սիրիլյանները, բայց գոնեա կրնայ բարձր ի գլուխ պարծիլ քրիստոնէութեան ժամանակ ունեցած վկայուհիներով, խաչակիր դշխոյներով և թագազարդ սրբուհիներով: Ասոնց դասէն է նաև Աշխէն, մանաւանդ թէ պարագլուխ ալ կը համարուի հայազարմ սրբասէր թագուհիներուն, որոնք երկրաւոր դարպասէն երկնաւորը փոխադրուեցան՝ բայց ոչ առանց անցնելու նախապէս Գողգոթայի գագաթէն, ուր իրենց թագին գոհարները փուշերով հիւսեցին և իրենց ոսկեթել ծիրանինները՝ Քրիստոսի արեամբ գունեցին:

Աշխէն՝ իր մարմնոյն և հասակին վայելչութեամբ և շնորհքով, ներքին գեղեցկութեամբ կորովով, մտաց և սրտին փափկութեամբ՝ ոչ միայն առաջին և գերազանց կը հանդիսանայ քան բոլոր ծիրանազարդ հայ բամբուխները, այլ և իրաւամբ կրքնայ մրցիլ հոյակապ և բարեպաշտ թագուհիներու հետ հին և նոր դարերուն: Ասոր յիշատակը հրաշափառապէս կատարուելով կրօնից ամենէն աւելի նուիրական տեղերու և հանդէսներու մէջ, ամենևին չենք խղճեր՝ երկինքն ալ սրբազան գըլխոյից կարգին մէջ՝ նկատել զինքը փառաւորա-



գոյն քան յատերը, և կը ներկայանայ մեզ պատմութեանս մէջ՝ մերթ իբր նոր Դեբուրա կամ Յուդիթ մը՝ անվեհեր կորովով և արուժեամբ սրտին, մերթ ալ նոր Եսթիր մը գերազանցութեամբ ձրից հոգւոյն և մարմնոյն, և երբեմն ալ իբր նոր Շամուռէ մը իր անձին և տիկնութեան պատիւը նուիրելով ողջակէզ Բարձրելոյն:

Տրդատ, յետ բոլորովին նուաճելու թշնամիները և խաղաղելու Հայաստանը, նախարարաց միջէն ամենէն ազնուականը Սմբատ Բագրատունին զըրկեց Ալանաց Աշխադարա թագաւորին որպէս զի անոր դուստրը՝ Աշխէն կոյսը իրեն հարսնութեան համար խնդրէ և բերէ: Աշխէն՝ որչափ որ վայրենի տեղերու և բարբարոս ազգերու մէջ կը բնակէր, այլ կը նմանէր փշոց կամ վայրենի մացառներու մէջ ինկած և մոռցուած վարդի մը, որուն համեստութեան և գեղեցկութեան համբաւը՝ բուրելով ծագկի անոյշ հոտի նման՝ Տրդատայ սիրտը իրեն ձգած էր: Քաջ ասպետը փութով յարմարցուց ամէն բան և փառք առաւ բերաւ: Աշխէն Տրդատայ ապարանքը, որ նախ արչակունի գրել հրամայեց, յետոյ ծիրանեզ պճնելով և թագով պսակելով՝ ամենայն Հայոց թագուհի հռչակեց զինքը: Աւելորդ է և թերևս անկարելի ալ արքունեաց հանդէսները, շքեղութիւնը և անոր հետ բոլոր աշխարհին ուրախութիւնը նկարագրել: ասպագայ երջանիկ օրերուն արշալոյսը գեղեցիկ յոյսերով լի սկսաւ փայլիլ ամենուն աչքին: Վասն զի կրնար արդեօք, Հայկակ, այնպիսի արժանաւոր թագաւորի մի՞ աւելի արժանագոյն դշխոյ մը գտնուիլ:

Տրդատայ հետ միասին Աշխէն ալ քրիստոնէական կրօնքի լոյսն ընդունեցաւ, և Եփրատայ վտակները Յորդանանու երջանիկ բաստին արժանացան: Այնուհետև աշխարհիս թողլով փառքը

և վայելքը, ինքն իրեն մասն և ժառանգութիւն ընտրեց՝ հոգ և աշխատութիւն, միով բանիւ, արքունիքը՝ ճգնարան դարձուց։ Ո՞ր գիտէ՝ քանի՛ անգամ հանելով նա գլխէն ոսկեկուռ թաղը՝ որ շատ ծանր կու գար իր խոնարհ անձին, և դնելով զայն թաշելոյն ոտքը՝ փոխանակ անոր Յիսուսի փշեայ պսակով կը պճնէր իր քնքոյշ գլուխը. և յաճախ ծիրանւոյն ներքև չէր հագներ արդեօք խարազն և ուրիշ խայթող և պինդ զգեստներ՝ փափուկ և անմեղ մարմինը ճնշելու, և թերևս այնպիսի մեղքերու վրայ ապաշխարելու որոնց ստուերն անգամ կը սարսափեցնէր զինքը։ Ո՛ւր ո՞ր քաջ կը հանդիսանար Տրդատ՝ կամ կրօնքին բարեգարգութեանց և կամ աշխարհին բարեկարգութեանց, հոն նոյնպիսի արդեամբք և ջանքով կը փայլէր նաև Աշխէն։ Եթէ Տրդատ՝ առանց բնաւ սուսերը ձեռքէ ձգելու՝ խաչ ի բռին կ'աւերէր մեհանները, կը կործանէր բազինները, իսկ Աշխէն՝ սուսերը առաթուր կոխած՝ մէկ ձեռքով պինդ բռնած խաչը և միւսով ճշմարտութեան ջահը, կը հալածէր դիւաց փաղանգը, հեթանոսութեան մութը կը փարատէր, և քրիստոնէութեան լոյսը ամէն տեղ կը ծաւալէր։ Եթէ հարկ ըլլար եկեղեցի կամ վկայարան կանգնել, հոն կը գիմէր կը փութար Աշխէն՝ բարոյապէս և նիւթապէս օգնելու անոնց շինութեան, ինչպէս կը վկայէ ինքն իսկ Ագաթանգեղոս. «Եւ նոցա (այս է, Աշխէն և Խոսրովիդուխտ) երթալ օգնել գործոյն, և առեալ զչափ տապանացն՝ փոսել փորել զտեղին, հանգիստ սըրբոցն ի ներքս ի տաճարն հանգստաբանացն »։ նոյնպէս ուրիշ տեղ մը, «ինքեանք երկղքին՝ Աշխէն տիկին և Խոսրովիդուխտ քոյր թագաւորին, ըստ բրել բրողին ի հանդերձս իւրեանց ընկալեալ զհողն՝ արտաքս պեղէին... և զդիրս սըր-

բոցն իւրաքանչիւր բնակութեան յօրինէին իւրեանց ձեռքն»։ Որպիսի՛ չքնաղ օրինակ այն քրիստոնեայ բարեպաշտ տիկնայց, որոնց բնական տկարութիւնը առաքինական գործերու մէջ զարմանալի արութեան կը փոխուի. որոնք երբ աստուածսիրութեան նորանոր կայծերով բորբոքած՝ յանչափս կ'արժարժեն իրենց սրտի խանդը, կը մոռնան իրենց ընդաբոյս փափկասիրութիւնը և դիւրութեան հետամըտութիւնը, կը սանձահարեն փառասիրութիւնը, և իրենց զարգ' թշուառաց խնամարկութիւնը կը համարին. աւարգ և գոեհիկներու պատշաճ կարծուած ծառայութիւնք երբ կը խառնուին անոնց ազնուականութեան հետ և անոնց մատանց գործ կ'ըլլան, կը բարձրանան՝ կ'ազնուականանան. և որ յառաջ մեծամեծներու արհամարհելի էին, այժմ՝ ամենուն աչքը կը դիւթեն, և շատերու նախանձը կը շարժեն՝ անոնց նմանելու։ Այսպիսի առաքինի տիկնայք և թագուհիք շատ կան ի պատմութեան. բայց քան զամէնքը գերազանցեց մերս Աշխէն յիշիալ զարմանալի գործով։ Նա իր բարձրագոյն անձամբ և օրինակով, եթէ ներուի այսպէս ըսել, կարծես ուրիշ նորագոյն փայլ և սիրելութիւն մը կը յաւելոյր շքեղագոյն իսկ տաւքինութեանց վրայ, եթէ մեծն Լուսաւորիչ խոսքով և գրով կը քարոզէր և կը վարդապետէր առաքինութիւնը և ճշմարտութիւնը, Տրդատ և Խոսրովիդուխտ գործով յարգելի և մեծարոյ կ'ընէին, իսկ Աշխէն՝ սրտով սիրելի կ'ընէր զանոնք։

Բայց Աշխէնի տիկնութեան թաւին ամենէն աւելի փայլուն գոհարներ՝ իր գթած և կարեկից սրտին արգասիք՝ ողորմութեան գործերն էին, որոնք սակայն անոր ներքին առաքինութեանց քով՝ լուսափայլ հոգւոյն սոսկ արտաքին ճառա-

գայթններ կրնան համարուիլ: Անոր աստուածազարդ և ընդարձակ սիրտը, եթէ կարելի ըլլայ այսպէս բացատրել, երեք զլխաւոր մասի կը բաժնուէր՝ վիճակին երեք կարևորագոյն հոգոց և պարտուց համեմատ, որոնք ապա միանալով ի մի կէտ՝ կը դիմէին առ Աստուած. առաջին՝ մայրութեան և տիկնութեան պարտք, երկրորդ՝ աղքատաց և կարօտելոց խմանք, երրորդ՝ իր հոգւոյն փոխ և խնամք: Եթէ առաջնոյն մէջ ճիշդ և աշալուրջ գտնուեցաւ, երկրորդին մէջ՝ ամենահաս և առատաբաշխ, իսկ երրորդին մէջ՝ ևս աւելի ճշգրտոյն և մեծահոգ, որ այնքան պարտուց և պատշաճից մէջ՝ երբեք անփոյթ չեղաւ իր ներքին մարդը բարեզարդելու, և արքունեաց մէջ անգամ՝ գիտցաւ իբր ի կոուսաստանի համեստութեամբ զարդարել իր անձը և՛ մենախօսիլ Աստուծոյ հետ: Սակայն ճամբորտապէս քրիստոնեայ և խոնարհ հոգին՝ թէ՛ և փորձեց և իմացաւ թէ՛ արքունիք և տիկնութիւն քնաւ արգիլք չէին իրեն կատարելութեան ճանապարհին, բայց տեսաւ թէ՛ օգնութիւն մ'ալ չեն ըներ իրեն՝ մտնաւանդ սրտին, որ միշտ դէպ ի բարձրերը կ'ուզէր թռչիլ. տեսաւ որ խիստ բարձր՝ գուցէ և շատ ալ նուաստ կ'երևէին այնուհետեւ գահ, թագ և ծիրանի. ուզեց թօթափել զանոնք իրմէ և թեթննալ: Այս դիտմամբ յետին և անդարց մնաս բարեաւ մ'ըսաւ արքունեաց և տիկնութեան, առանձնացաւ Գառնի քաղաքը, զոր փոքր մի յառաջ չէ'իցուցեր և ամրացուցեր էր Տրդատ: Այս մենարանին մէջ՝ ուր յօժարութեամբ փակեց ինքզինքը մինչև ի մահ՝ իբրու ճգնասուն ողջախոհ սատրակ մը, ո՞ր գիտէ ինչպիսի՞ ճգնութեամբ, անքուն հսկումներով և մշտամուռնչ աղօթքով կանցընէր Աշխէն իր օրերը, որ յետ երկար տարիներ արժանապէս կրե-

լու Հայոց տիկնութեան թագը, կը փափաքէր և կը պատրաստէր իր անձը հարսնութեան երկնաւոր փեսային: Այնուհետեւ ազատ ամէն հոգեւորէ, կենաց օրերը և ժամերը լիուրի արդեամբք և հոգեւոր վաստակներով կը հիւսէր: Միայն հոգի, միտք և սիրտ կ'ազդէին և կը ներգործէին անոր վրայ, վասն զի մարմինը բոլորովին մեռած էր իրեն համար. մանաւանդ թէ թեթեւ եւ նրբին տապան մ'եղեր էր այն սրովբէասարաս հոգւոյն, ուստի և մեղմիկ ճիգ մը, աստուածային սիրոյ հեզիկ զեփիւռ մը բաւական էր բանալ այն հազիւ փակուած տապանը: Եւ յիրաւի այս կերպով, աստուածային սիրոյն բոցերով խարուկեալ՝ խաղաղութեամբ աւանդեց հոգին ի ձեռս Փրկչին: — Ո՛հ, երջանիկ և քաղցր մահ, որուն արժանանալու համար, Հայկակ, որ գիտեմ թէ կը փափագիս, պէտք է նմանիլ և այն ամէն առաքինութեանց, որոնցմով փայլեցաւ աշխարհիս վրայ մեծափառ և երանայիշատակ սրբուհի Ալեան Տիկին:







Ս . ԽՈՍՐՈՎԻԴՆԻՍ

## Ս. ԽՈՍՐՈՎԻ ԴՈՒՒՏ

**Ա**ՅՍ խորհրդաւոր անձս, Հայկակ, որուն բոլոր կենաց շրջանը՝ նուիրական քօղով մը ծածկուած է, իսկ կատարածը՝ զեռ աւելի խորհրդական անյայտութեան մէջ թաղուած կը մնայ, յիրաւի այն գերաշխարհիկ հողիններէն մին է, որոնց վրայ կրնանք միայն զարմանալ, այլ անոնց զործերը քննել կամ հետեիլ՝ անկարելի է: Դեռաբուսիկ հասակի մէջ՝ երբ արքունական ցեղը համայնաջինջ կորստեան վտանգի մէջ էր, Խոսրովիդուխա ևս իր հղբօր նման՝ գայեկի ձեռքով ազատեցաւ նենգաւոր սուրէն: Սասանեանց բռնակալութեան երեսուն և չորս տարիներու ընթացքին մէջ՝ Օտա Ամատունի նախարարին հայրենի պաշտպանութեան և խնամակալութեան ներքե, հեռի անգութ աչքերէ և սրտերէ՝ Անի ամրոցին մէջ կ'աճէր և կը զարգանար հասակով, մինչև որ եկաւ իր ծիրանածին եղբայրը և պաշտօնաց հայրենի գահը: Այն պահուն միայն ելաւ նա միայնութենէն և Հայոց երաժշտակ օրիորդաց խմբին մէջ խառնուեցաւ՝ մանաւանդ թէ պուխ կեցաւ, իր քաջափառ քաջաբաստիկ եղբօր յաղթանակը հռչակելու, և անկէ աւելի Աստուծոյ հրաշագործ աջը:

Սա՛ կուսակրօն կենօր հեթանոսական կրօնքին



մէջ գերաշխարհիկ երևոյթ մը ներկայացնելով՝ միշտ մնացեր է Օրիորդ Հայոց, միշտ խոսարովի-գուխտ, թերևս թաքուն վերին տեսչութեամբ մը, որ զինքը միայն ընտրեց իր հայրենատուր սուտ կրօնքէն, որպէս զի ինքը նախ իբրու ճարմանդ մը յօգի միանայ քրիստոնէական՝ կրօնքին հետ, որ յետ սակաւ ժամանակի՝ Լուսաւորչի ձեռքով պիտի ծագէր Հայաստան աշխարհին մէջ. այն կրօնքին կ'ըսեմ, որուն իբրու հեզափայլ արշալոյս մը ծագեցան յանկարծ արևմուտքէն՝ հրաշալի կուսանքն Հռիփսիմիանք, վարդազոյն նահա-տակութեամբ խառնուելու Հայաստանեայց նոր արևելքին հետ։ Բայց երբ Հայոց աշխարհին կենսաբեր վերածնութեան երջանիկ ժամը հասաւ, այն բիւրաւորներէն խոսարովիգուխտ միայն ընտրուեցաւ իբրու աւետաւոր կամ հրաւիրակ լուսաբեր ծագման. անոր համար Աստուծոյ հրեշտակն այլ իրեն միայն երևցաւ տեսլան մը մէջ, և յայտնեց թէ վիրապի մէջ ձգուած Գրիգորը տակաւին ողջ է, որուն ձեռքով իր ախտակիր եղբայրը՝ գոռոզն Տրդատ և բոլոր Հայաստանեայք բժշկութիւն և փրկութիւն պիտի գտնէին։ Անհաւատները՝ դեռ Քրիստոսի և Գրիգորի չհաւատացած, կը հաւատան խոսարովիգուխտի. և ահա կ'ելլէ կը ծագի Գրիգոր այն մութ վիրապէն, փոթորկէ մը վերջ ամպերէն դուրս ցատքող արևուն պէս։ Անկէ յետոյ ինչ բաներ պատահեցան, արդէն ծանօթ են քեզ, Հայկակ, նախընթաց պատմութիւններէն, անոր համար զանց կ'ընեմ նոյն բաները կրկնել։ Բայց չեմ կրնար բոլորովին լուութեամբ անցնիլ, և չյիշել այն գովութիւնը՝ զոր կու տայ խորենացին խոսարովիգուխտի այս խօսքերով. «Էր և սան նորա խոսրովիգուխտ կուսան համեստ որպէս զօրինաւոր դը, և ոչ ամենևին ունէր անդուռն բերան նման

այլ կանանց ու եթէ հեթանոսութեան միջոց այսչափ առաքինի էր, ապա քրիստոնէայ ըլլալէն վերջը ինչպիսի՛ և որչափ շնորհքով և սրբութեամբ փայլեցաւ և պճնեցաւ այս զուարթածաղիկ կոյսը :

Այնուհետև խոսրովիդուխտ մեր աշխարհին վերանորոգութեան բոլոր կարևոր դէպքերուն մէջ հաղորդ կը գտնուի. իր թագապսակ եղբօր, դշխոյին և սքանչելի Գրիգորին հետ կը փութայ արքայավայել կտաւներով պատել իր նմանեաց՝ նահատակ կուսանաց սուրբ նշխարները, և անոնց հանգստեան համար արժանաւոր տաճարներ, և խորաններ պատրաստել: Այնոնց հետ կը շրջի հեթանոսութեան տաճարները և բազիլիկները կործանելու, և անոնց տեղ՝ ճշմարիտ Աստուծոյ և անոր սրբոց՝ մատուռներ, սեղաներ և խաչեր կանգնելու համար: Թագաւորին ամէն հանդէսներուն մէջ՝ թագուհւոյն հետ կը տեսնուի նաև թագաձին օրիորդը՝ իբրու Հայոց օրիորդներուն գասապետ. թագաւորին և թագուհւոյն հաւասար կը ստորագրէ և նա իր անունը արքունի թըղթոց և հրովարտակներու ներքև, և իր անուամբ պատասխան ևս կ'ընդունի անոնցմէ:

Արքունի կեանքը, Հայկակ, խորշակի կը նմանի, որ առաքինութեան ծաղիկներուն և կուսութեան շուշանին արգելք կ'ըլլայ լաւ զարգանալու, մանաւանդ տկար սեւին: Սակայն խոսրովիդուխտի անմեղութիւնը և աստուածային ներքին հուրը յաղթեց արտաքին ամէն արգելքի. թէև Հայոց արքունիքը Տրդատայ պէս աստուածատէր թագաւորի ապարանքը՝ թշնամի էր զեղխութեանց և քրիստոնէական համեստութեան դէմ՝ զինող հաճոյքներու թիրևս խոսրովիդուխտ կանուխէն ալ կը հրաժարէր արքունիքէն. եթէ ուզէր զրկուիլ այն աստուածպաշտական և եղբայրսիրական ամբաւ:

գործերէն՝ զոր կարող էր գործել՝ հոն մնալովն։ Բայց ինչ զանազանութիւն կար արքունիքի եւ միայնութեան մէջ անոր սրտին համար՝ որ խզած էր զինքը աշխարհի հետ կապող ամէն կապերէ. որուն առջև փառք և փափկասիրութիւն իրենց բոլոր հրապոյրները կորսնցուցեր էին։ — Զարմանալի և աննման թոսրովիդուխտ. ինչպէս քրիստոնէութեան մէջ անոր տունկ մ'ըլլալով գիտցար այնպիսի հասուն և ազնիւ պտուղ տալ։ Զքեզ թող իրենց գաստիարակ առնուն քրիստոնեայ կուսանք՝ որոնք քու շաւղիդ կը հետեին, և այն մեծուհիք՝ որոնք չեն գիտեր թէ ինչպէս սրբութիւն և մեծութիւն կրնան միասին ապրիլ։

Յետ քրիստոնէական կրօնքին հաստատուելուն Հայոց մէջ, երբ Տրդատ ալ կը փափաղէր առանձնանալ Լուսաւորչի նման, իր այնպիսի օրիորդքեռ՝ իբրու մշտնջենաւոր և անմոռաց յիշատակ՝ պարգևեց իրեն սարաւոյթը կամ հովանոցը, որուն համար այսպէս կ'աւանդէ թորհնացին . « Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զչինուած ամրոցին Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, պանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ թոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով »։ Յետ անոնց՝ սա ալ իր շուշանափայլ կենաց արևը խոնարհելու մօտ տեսնելով, ազնուական սիրոյն եւ սրտին հուրը զովացնելու համար՝ թուի թէ առանձնադաւ այն հովանոցին մէջ, բնութեան լուսութեան և առանձնութեան մէջ՝ իր միակ սիրելոյն հետ սրտէ ի սիրտ խօսելու և հանդերձեալ երանութեան ճաշակը վայելելու համար։ Հոն՝ իբրու խորագէտ քննիչ մը գէպքերու և մարդկային սըրտերու՝ մերթ կը յիշէր անցած զարմանալի փո-

փոխութիւնները, մերձակայ պետութեանց և իր իսկ ազգային արքունի գահուն՝ նախ կործանիլը և յետոյ այնպէս ամրապինդ հաստատուիլը, եւ մերթ հեթանոս կրօնքին խորարմատ տիրապետութիւնը և ապա բոլորովին ջնջուիլը՝ և փոխանակ անոր քրիստոնէութեան կանգնուիլը. — մերթ սխրալի կուսանաց նահատակութեան և հանգրտեան նուիրական տեղերու (Աղջոց վանքը) այցելելով, մի առ մի կը ներկայացնէր մտքին առջև անոնց կենաց ամէն մէկ գէպքերը և կը խօսէր անոնց յիշատակներուն հետ. երբեմն ալ այսպիսի և դեռ աւելի վսեմ խորհրդածութեամբք զգածուած՝ կը դիտէր, կը խորհէր և կը նուագէր ուրիշ աւելի սրբագոյն յիշատակներ, անցնելով մտքով Երասխայ հովիտներէն և Սասնայ ալէզարդ բարձունքներէն, Գառնոյ ամրոցին բլրգանց խրամատներէն և ամբոխաշատ Արտաշատու և վաղարշապատու խոնած հրապարակներու միջէն: Մնգամ մ'ալ դարձեալ՝ իր գահըին արևելեան անդաստակներէն՝ Գեղամայ լեռանց ծայրերը բարձրանալով, և ապա լուիկ միջիկ իջնելով իր հառաչանքները խառնելու մշտահոսն Ազատայ կարկաշաձայն հառաչանքներուն հետ, որ մի՞ ին խոխոմներուն միջէն սողոսկելով կ'երթայ կ'անհետանայ, այն անմարդաձայն և սրտագրաւ արձագանգներու մէջ՝ օտար և նորալուր ձայն մը հնչեց, անուշ ձայն մը՝ որ այս ամէն բանէս կը հրաւիրէր զինքը ուրիշ մէկ անփորձ և անճառելի բանի մը, երկրաւոր կեանքէն և ապարանքէն՝ երկնաւոր կեանքը և աստղազարդ խորանը, ուր արդ յաւերժանալով Սանդուխտի Հոփփիսիմէի և ուրիշ կուսանաց հետ, տարուէ տարի կը տօնուի Եկեղեցւոյ մէջ իրենց զուգակիցներուն հետ՝ եղբոր և Աշխէն տիկնոջ... Եւ ո՞ գիտէ, յատկաշնորհ օրիորդն Հայոց, սրովրէտսարաս կոյսն, խորհրդ-

դազգեացն խոսրովիդուխտ, Մանեայ կուսին և անոր մենարանի ժառանգողին՝ Լուսաւորչի նման՝ արդեօք առանձնութեան մէջ միայնակ չաւանդեց Աստուծոյ իր սրբամենայ հոգին. — երիցս գեղանին՝ թողլով մեզի երիցս չքնազ և նուիրական իր այն գահաւանդակը, օգապարիկ սարաւոյթը, երիցս գեղեցիկ՝ տեղւոյն և բնութեան վայելչութեամբ, ճարտարութեամբ արուեստին և սրբութեամբ կուսիս: Յիրաւի ցանկալի էր մեզ, Հայկակ, այսպիսի տեղերու մէջ երկար դեգերիլ, ուր այսպիսի վեհագոյն անձ մը՝ այսպէս ազնուաբար ապրեցաւ, խոկաց, ազօթեց, հսկեց, հուսկ ապա թերևս և զուարթեց քունը քնացաւ, յետ գրեթէ ութսնամեայ սրբամարտուր և արդիւնալիր կենաց:







*ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ*

## ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ

**Ե**թի մարդս իր ստեղծական կամ մահկանացու բնութեան վրայ զգենուր գերարուն եւ անմահ էութիւն մը, միթէ աւելի գերագոյն կամ տարբեր բան պիտի ըլլար, Հայկակ, քան ինչ որ եղաւ և ներկայացաւ պատմութեան մէջ՝ մեր սուրբ հայրը Մեծն Ներսէս Պարթև Աշխարհիս ամենէն հոյակապ անձանց կատարելութիւնները գեղեցիկ կերպով միացուցած իր անձին վրայ, այնքան երկար տարիներ տարածեց մեր հայրենեաց վրայ իր հայրական հովանին, և անշուշտ կը յիշես Հայկակ, թէ քանի՛ անգամ՝ հաստատուն բռնեց արքունի գահը՝ մինչ կործանելու վրայ էր, և յետ ամօթալի կործանման ալ քանի՛ անգամ՝ յոտին կանգնեց զայն. «Րչափ անգամ՝ զինուց և զրահից զօրութենէն աւելի՛ իր աստուածազգեցիկ պերճախօսութեամբ և պատկառելի սրբութեամբն ազատեց աշխարհս օտար զէնքերու հարուածներէն և մօտալուտ վտանգներէն. մէկ խօսքով եղաւ ամբարտակ մը կամ պարիսպ՝ թըշնամեաց յարձակումներուն դէս, բարեկարգիչ ըովանդակ ազգիս և աշխարհիս, ախոյեան կրօնքի և սրբութեան, յորգորիչ գիտութեանց, եւ բաշխիչ յաղթութեանց և յաջողուածներու. բայց, աւանդ, յիտ այնչափ և այնպիսի բարիքներու եւ



երախտեաց, (ամօթ է, Հայկակ, և յիշել իսկ, ուր մնաց պատմել), զոհ եղաւ ամբարիշտ թագաւորի մը զեղծումեղծ բարուց և կրքերուն:

Մեծն Ներսէս՝ որդի էր Աթանազիւնեայ, դառն ոստէ՝ քաղցրահամ՝ պտուղ, որ մարուր մնալով բալորովին իր անարժան հօր ազգեցութենէն, արժանաւոր ժառանգ հանդիսացաւ իրեն հաւուն՝ Ս. Բուսիկին, որուն պարծանք և յաւիտենական մխիթարանք եղաւ սրտին՝ նախ քան իր ծնանելը, մեծամեծ խոստումներով և տեսեամբ հրեշտակին: Սա թէ և հայրենական փուշերու մէջ ծնաւ, բայց չքնաղագիւտ ծաղկի մը պէս՝ դեռաբուսիկ հասակէն ուրիշ աւելի պարարտ և արգաւանդ հողի մէջ տարուեցաւ տնկուեցաւ՝ կեսարիա քաղաքը, ուր հմուտ վարժապետաց առաջնորդութեամբ՝ իրեն սեփականեց յունական լեզուն և հանճարը. և անկէ Բիւզանդիոն երթալով, ամէն գիտութեանց և դպրութեանց մէջ զարգացաւ: Այնտեղ հայկական կորովի միտքը զուգելով յունական կիրթ և փափուկ սրտին հետ, յառաջ եկաւ չգիտեմ ինչպիսի՛ գերաշխարհիկ հոգի մը. ուսկից ծագեցաւ իրեն համանման վեհ հոգի մը, ներսխավայել կորիւն մը, մանաւանդ թէ աննման լուսաւոր մ'ազգիս Ս. Սահակ:

Յետ վախճանելու իր սրբասէր ամուսնոյն, որ Մրամիկոնեանց ցեղէն Սանդուխտ անունով օրիորդ մ'էր, թողլով Ներսէս կեսարիա քաղաքը և անոր հետ ամուսնական կեանքը, հայրենիք դարցաւ և մտաւ արքունիքը և Արշակ թագաւորին սենեկապետ եղաւ: Նոյն միջոցին հայրապետական աթոռը գրեթէ լքեալ ամայի մնացեր էր. վասն զի յիտ ցանկալի նահատակութեան Ս. Բուսիկին, լուսաւորչի ցեղէն չգտնուեցաւ արժանաւոր մը անոր աթոռը գրաւելու, ուստի ձեռնհրէց և

օտարամուտ անարժան արանց ձեռքը անցաւ հայրապետական գաւազանը . այս պատճառով Հայաստան ամէն տեսակ աղէտներու և թշուառութեանց, եղբրանց և սպանութեանց պժգալի թատրը մ'եղեր էր : Բայց երկնաւոր ասեղ սպառնալիք և հարուածք, և սաստիկ բողոքներ և քրթմնջիւնք հաննելով թագաւորին ականջը , վերջապէս արթննալով իր մահաքուն թմրութենէն՝ աճապարեց փութաց և ուրիշներն ալ փութացուց արժանաւոր ժառանգ և յաջորդ մը փնտռելու Լուսաւորչի աթոռին : Նոյն ժամանակները Գնունեաց ցեղէն Պարզ և անուամբ մեծ նախարար մը, որ Շիրակայ գեղազուարճ լեռանց և ծաղկաւէտ հովիտներուն մէջ միայնացած սուրբ կենսոք և երկնաւոր վայելքներով կը պարապէր : Իբր աստուածային ազգեցութեամբ՝ մատնանիշ կը ցուցնէր հեռուէն այն հոգեյոյս ջահը, որ նոյն իսկ թագաւորին ապարանից մէջ խոնարհութեամբ քողարկեալ՝ իբր գրուանի տակ ծածկուած էր : Եւ յիրաւի գտան, տեսան և հաւատացին թէ նա ինքն է շնորհազարդ պատանին Ներսէս, սենեկապետ թագաւորին և հազարապետ արքունի տանը, որ վայելչութեամբ հասակին և դիմաց գեղեցկութեամբ կը գերազանցէր քան բոլոր հասակակիցները . ինչպէս կ'ըսեն ականատես վկայք և պատմիչք, թէ « էր նա մեծահասակ, վայելուչ երեսօք և ահագին տեսողաց » :

Թէ և շատ ընդդիմացաւ Ներսէս ժողովրդեան, նախարարաց և թագաւորին իսկ կամքին, իրեն և անոնց մեղքերը յանդիմանելով, համարձակ երեսնին զարնելով անոնց ապերախաութիւնը՝ մանաւանդ թագաւորներուն առ իր նախահարքը . բայց անոնք անոր խօսքերուն վրայ ոչ զայրացան և ոչ ալ համոզուեցան . գիշեր ցորեկ պահապան

Ներու հսկողութեան տակ էր՝ թագաւորին հրամանով, որ չըլլայ թէ փախչի Սյունհետև չընդգիմացաւ Ներսէս. մանաւանդ երբ տեսեամբ ալ ստուգեց թէ Աստուծոյ կամքն այն էր։ Յիրաւի սրտաշարժ տեսարան մ'էր այն, երբ հրապարակաւ արքունեաց և ժողովրդեան առջև մերկացուցին Ներսէս իր աշխարհական և զինուորական զգեստներէն. ուր ինքն իսկ թագաւորը, կ'ըսէ պատմիչը, լի ցասմամբ հանեց անոր պողովատիկ սուսերը՝ հանդերձ մարգարտակապ կամարով եւ արքայատուր պատմուճանով։ Բայց երբ մերկացընելու կարգն եկաւ այն գանգրահեր թագանման և վարսագեղ գլխուն, ըստ գրելոյ պատմիչներու շատերը չկրցան իրենց արտասուքը զսպել, «Ձի ոչ պք գոյր, կ'ըսեն, նման նմա ի մարգիկ»։ Յետ այս բռնադատ խուզման հերաց՝ փաւստոս սնուամբ եպիսկոպոս մը կանչեցին, որ եկաւ սարկաւազ ձեռնադրեց Ներսէս։

Ըստ սովորութեան՝ կաթողիկոս ձեռնադրուելու համար հարկ էր նեասարիա երթալ, և տեւոյն արքեպիսկոպոսէն առնուլ ձեռնադրութիւնը։ Ներսիսի գէպ ի նեասարիա ճանապարհորդութիւնը կատարեալ յաղթանակի մը կերպարանք ունէր. կային հետը գրեթէ քսանհինգ մեծաթոռ եպիսկոպոսներ, նոյնչափ ալ իշխաններ և նախարարներ և չորս հազար սպառազէն հեծելոց բանակ մը։ Ներսէս՝ այն շքեղ ամբոխին մէջտեղ՝ որոնք իր չորս բոլորը շարուեր էին ճառագայթածև՝ կը նստի վսեմարար սպիտակաձիգ ջորիներու կառքի մը վրայ, որ իրեն հասակագեղ կերպարանքով՝ թագաւորավայել պերճութիւն մը կը ցուցնէր։ Համբաւը, երկվարաց խրխինջը և դոփիւնը այնքան բազմութեան զղորդը և զինուց շառաչը՝ սարսափ ձգեցին ամէն տեղ, ուսկից որ կ'անցնէին, թշնամեաց հրոսակ մը կարծուելով։ Բայց

փութով անոնց սարսափը սիրոյ և մեծարանաց փոխուեցաւ, երբ իմացան որ իրենց ապագայ հայրապետին ամբոխն էր այն։ Այն ժամանակ կեսարիոյ հայրապետն էր Եւսեբիոս, որ շատ սիրով ընդունեցաւ զանոնք և մեծարեց, մանաւանդ երբ տեսաւ Արշակ թագաւորին նամակը և ընծաները։ Փութաց շրջակայ յոյն եպիսկոպոսները գումարեց, և անոնց հետ միարան մեծ շքով ձեռնադրեց Ներսէս՝ կաթողիկոս ամենայն Հայոց։ այն երկնահարաշ հանդիսին միջոց՝ գերագոյն նըշաններ երեցան։ Հայրապետ ձեռնադրուելէն վերջը՝ երբ Ս. Ներսէս աստուածային հրաշալի պատարագին զոհը կը մատուցանէր՝ հրեղէն բուցոյ սիւն մ'իջաւ վրան, և դէմքը լուսաւորուեցաւ։

Այնուհետև աւելի շքեղ հանդիսով և ճոխագոյն ընծաներով՝ փութացին դառնալ հայրենիք։ Այս անգամ նոյն իսկ իշխանները և ժողովուրդը ուր տեղէն որ պիտի անցնէր Ս. Ներսէս, ընդ առաջ ելնելով կը սպասէին անձկանօք անոր դալստեան և տեսոյն, անոր աստուածատուր օրհնութեանց և պարգևներուն հաղորդ ըլլալու համար։ Չկար ազգի խորութիւն։ Յոյնք և Ասորիք՝ Հայոց հետ խառն կը դիմէին անոր սրբազան ոտից առջև խոնարհելու, իրենց սլ փառք և պարծանք համարելով զանիկայ, թէ և ներքուստ կը նախանձէին Հայոց բազմին և երանի կու տային անոնց։ Աքանջելի բժշկութիւններ և զարմանալի հրաշքներ ամէն տեղ հռչակեցին Ներսիսի գալուստը։ Հասաւ Սերաստիա, ուր այլևայլ եկեղեցեաց հիմնարկութեան պատճառով՝ վայրիկ մը սպասեց և հանգչեցաւ։ Նախ քան աւետաւոր նուիրակները՝ արդէն համբաւը հասեր էր Արշակայ, որ փութաց ընդ առաջ ելաւ մինչև Առիւծ լիւրան մօտերը, ուր յետ սիրալիւր և ուրախական գրկախառնութեանց թագաւորին և կաթողիկոսին, տարին

Ներսէս մեծաշուք յազժանակով և նստուցին Ս. Գրիգորի աթուը, և բոլոր ազգին տեսութեան զեկը անոր ձեռքը յանձնեցին:

Եթէ Ներսէս՝ ազգին հոգը և խնամքը վրան ստանձնելէն առաջ՝ արդէն հայր էր և մխիթար որբերու և այրիներու, ինչ եղաւ ապա յեա արգեամբը իսկ առաջնորդ և հայրապետ ըլլալու: Երջանիկ տարիներ՝ սրոնց մէջ վայելեց ազգը, բայց երազ անցան սահեցան. սրբան բազմութիւնք վանորէից և կուսաստանաց շէնցուցին լեռները և հովիտները, մատրոնք և եկեղեցիք՝ զարդարեցին դաշտերը և անապատները. ինչպիսի հոյակապ հիւրանոցներ և եղբայրանոցներ լեցուեցան քաղաքներու և գիւղերու մէջ, սրբան դարմանոցներ ամէն տեսակ հիւանդութեանց: Պարծանքով կ'ըսեն և կը կրկնեն մեր պատմիչները, թէ մեծին Ներսիսի հայրապետութեան օրերով՝ մուրացիկ կամ աղքատ շէին տեսնուեր բնաւ քաղաքներու և գիւղերու մէջ: Իշխանաց և դատաւորաց ձեռքը դրաւ արգարութեան կը շիռը, մեծատանց սրաին մեջ՝ ողորմութեան եւ եղբայրսիրութեան գութը հաստատեց, որբերու և աղքատներու հայր եղաւ, վշտացելոց արտասուքը սրբեց, տրտմութեան տեղ ուրախութիւն և ժպիտ փայլեցուց ամենուն գէմբին վրայ, արկարներուն պատըսպարան եղաւ, լքելոց յոյսը և ապաւինութիւնն առ Աստուած դարձուց: Այն, քաղցր և գլխած հայր էր նա. բայց և արգար վրէժխնդիր Աստուծոյ փառաց և պատուոյն. եւ ըստ պահանջելոյ տեղւոյն եւ պարագային՝ յանկարծ գլխութեան և բարութեան շնորհքները՝ սպառնալիք եւ հարուածք կը դառնային անոր ձեռքին մէջ. այն աչքերէն՝ ուսկից յոյս և մխիթարութիւն կը գտնէին տկաքը եւ վշտացեալք, յանկարծ բարկութեան և վրէժխնդ

գրութեան շանթիք կը թօթափէին անգեղջ և խտտասիրտ մեղաւորներուն գլուխը, կ'արհամարհէր նա ամէն մարդկային ակնածութիւն եւ երկիւղ, ոչ ծիրանիէն կը պատկառէր և ոչ արքունի թագէն, երբօր տեսնէր թէ Աստուծոյ անունը կ'արհամարհուէր, և արդարութիւնն ոտնակոխ կ'ըլլար: Յանկարծ Սամուելի հոգին կը զգենուր, երբ անոստոսոյ Սաւուղ մը տեսնէր զիմացը. մերթ իբրու Նաթան մը՝ ոչ եթէ առաւելով կամ պատիպատ խօսքերով՝ այլ յայտնապէս կը յանդիմանէր թագաւորին ոճիրները, և ուրիշ անգամ Եզրայի նման մարդկային կրօնց կռուքերը կը փշրէր. անոնց հետևողները կ'այրէր կը ջարգէր աստուածային հրով՝ Բահազու պաշտօնեաններուն նման: Հեթանոսական սովորութեանց մնացորդները վերուց, և անոնց տեղ՝ առաքելական կախովներ և ձայրեկի կարգեր հաստատեց՝ ինչպէս կը կոչէ Բուզանդ: Ինքն էր միանգամայն հայրապետ և թագաւոր աշխարհին. նախարարութեանց գասակարգը ինքը հաստատեց՝ չորս հարիւր բարձ որոշելով զանոնք. նոյնպէս Հայաստանի այլեայլ նահանգներուն մէջ գրեթէ չորս հարիւր եպիսկոպոս հաստատեց, իսկ վանքերու թիւը՝ զորս ինքն կառուց և կառուցանել տուաւ, մինչև երկու հազարի կը հասցունեն: Ոչինչ նուազ ուսմանց և գիտութեանց ալ ջանք բրտւ. Ս. Ներսէս, յոյն և ասորի լեզուներուն մասնաւոր գաբրոցներ հաստատելով. միով բանիւ կրնանք բնել մեր պատմիչներուն հետ, որ Հայաստան բնաւ այսպիսի ժամանակ մը չէր ունեցած և թերևս պիտի չունենար ալ՝ եկեղեցական և աշխարհական բարեկարգութեանց և փառաց ծայրը հասած ըլլալով: — Թերևս այս թիւերուն և բացատրութեանց մէջ փոքր ինչ չափազանցութիւն տեսնես, Հայկակ. բայց միթէ ներելի չէ՞,

այսպիսի մեծ և աննման անձի մը վրայ գրելու միջոց՝ եթէ սակաւ ինչ չափազանցութիւն մտնէ յոչ կամն. միթէ կարելի՞ է անտարբեր գրչով ներկայացնել ընթերցողներուն այսպիսի անձի մը նկարագիրը: Արդ յետ տեսնելու և հրճուելու մեծին Ներսիսի յաղթանակներով և յաջողութեամբք, Կառնանք վայրիկ մ'ալ անոր հոգւոյն և մարմնոյն կրած վշտերը նկատելու:

Ներսէս իր բոլոր հայրապետութեան ժամանակ՝ որ գրեթէ քսան տարի կը հաշուի, անդադար այցելութեան ելլելով վանորէից և եկեղեցեաց, անոնց պայծառութեան և բարեկարգութեան հոգ կը տանէր: Այս պատճառով ալ իւրաքանչիւր եկեղեցեաց և վանորէից ընդարձակ կալուածներ և հասոյթներ տուած էր, որպէս զի ամենեկին կարօտութիւն չունենալով և ազատ ըլլալով ո՛ր և է մարմնաւոր և առօրեա, հոգերէ, իրենց միակ փոյթն և հոգն ըլլայ՝ հոգւոց փրկութեան և Աստուծոյ տան մաքրութեան և վայելչութեան պարակի:

Անգամ մը Այրարատեան գաւառին մէջ իր հայրապետական այցելութիւնն ըրած միջոց՝ հանդիպեցաւ Ներսէս Հայրմարգպետին, որ թագաւորահայր կը կոչուէր. սա տեսնելով վանորէից ընդարձակ գատակերտները և նախանձելով անոնց՝ յանդուգն սպառնալիքով ըսաւ առ Ներսէս. Երբոր թագաւորին երթամ, այդ բոլոր երկիրները յարքունիս գրաւել պիտի սամ: Վշտացաւ Ներսէս այն ժպիրհ խօսքերուն վրայ, խաղաց անոր մէջ մարգարէական հոգին, և թէպէտ շատ ջանաց զսպել ինքզինքը, բայց վերջապէս բացաւ բերանը և հանգարաւ հոգւով այս խօսքերս միայն ըսաւ. Այդ քո սպառնալիքիդ համար պիտի չի հասնիս թագաւորին քով: Եւ յերաւի կատարուեցաւ սրբոյն այս խօսքը. վասն զի երբոր

Հայրմարդպեան խրոխտագին հեծած ձիուն վըրայ Եփրատայ ավանց քովէն՝ Սանատրուկի շինած Մծուրք քաղաքին մտերէն կ'երթար կը փութար առ թագաւորն, յանկարծ մթին անտառայ խորերէն՝ քաջին Շաւասպայ Արծրունոյ սայրասուր սլաքը՝ իրրև թէ որսի պատճառով՝ թռասողեցաւ օձու պէս, և թափով մխելով անօրինին թիկանց մէջ, իսկոյն գետին տապալեց զանիկայ. ասոր վրայ ավչեցան զարմացան ըտղները և տեսողները:

Դարձեալ ծանօթ է քեզ, Հայկակ, Գնելայ ըսպանութեան և փառանձեմի եղերական դէպքը, որ թէպէտ քերթողի մը՝ մանաւանդ թէ ողբերգակի մը գրչին և հանճարոյն կրնայ արժանաւոր նիւթ ընծայել, բայց մեր պատմութեան ամենէն սև էջերէն մին է, որ Արշակայ ուրիշ ոճրագործութիւններէն զատ՝ աւելի սև արատ մ'ալ սուելցուց անոր թագին վրայ: Հոն ալ դիմեց Ներսէս օգնութեան անպարտ և եղկելի Գնելայ, բայց ի՞նչ օգուտ. կուրացեր խլացեր էր թագաւորը, անզղայ դարձեր և մարդկութենէ զուրս ելեր էր. խողի նման կնճացած, ինչպէս կը նկարագրէ պատմիչը, իրեն սամոյրին մէջ սմբած կըծկած՝ կը խորդար և կը շչէր: Նոյն պահուն ալ բացաւ հայրապետը իրեն սուրբ բերանը, ուսկից սոսկալի անէծք և նզովք տեղացին թշուառականին գլուխը, ահագին հարուածներ՝ որոնց ազետալի արդիւնքը կը նշմարուի տակաւին հայ ազգին վրայ: Այլ ի՞նչ շահ, ի՞նչ օգուտ անկէ. ինչպէս որ կարկուտը, որչափ ալ ուժգին և տեղատարափ թօթափի սեպացեալ ժայռի մը գլուխ՝ չկրնար անոր վրաս կամ՝ ազդեցութիւն ընել. այսպէս էին Ներսիսի խօսքերն ալ Արշակայ քաղացած սրտին: Ոճիւրք զոճիրս կը ծնանին. բաւական չէր Գնելայ սրախողխող մահը, հրամայեց



Արշակ իր միւս Տիրիթ եղբորորդին ալ սպաննել, որ յիրաւի բոլոր չարեաց պատճառ եղած էր և ըստ արժանւոյն գտաւ իր պատիժը: Արթնցաւ վերջապէս Արշակ մրափելէն, բայց ինչ օգուտ, շատ ուշ էր. լացաւ Գնեւայ դիակին վրայ, փոխանակ իր հոգւոյն վրայ լալու, զղջաց ու լացաւ ըրած, ներուն վրայ, ինչպէս զղջաց երբեմն Սաւուղ ալ. որուն թէ և առաջի բերան սուրբ հայրապետը իբրու անողոք Սամուէլ մը ներկայացաւ, փութով նորէն Ներսէս դառնալով, զիջաւ քաղցրացաւ և ներեց անոր, իշխանաց և ուրիշ սրբազան անձանց միջնորդութեամբ:

Նոյն միջոցները՝ արևմտեան կողմէն բիւզանդական ասիերէն փութորիկ մը կը պատրաստուէր. հուր և կայծակունք մէկտեղ եկած՝ եկեղեցւոյ և հայրենեաց մօտալուտ վտանգ և օրհաս կը սպառնային: Արշակ այս անգամ չէր կրնար՝ ինչպէս առաջ՝ խուլ կամ կոյր ձեանալ, չէր կրնար անտարբեր անզգայ մնալ. դիմեց առ Ներսէս՝ որ ազօթքով փարատէ փութորիկը և ազատէ զինքը և աշխարհը այն վտանգէն: Այս նպատակով առաւ Ներսէս իրեն հետ մեծագանձ ընծաներ և բազմութիւն երևելի և փառաւոր իշխաններու, աճապարեց Պոլիս առ վաղէս կայսրը, որ բուն փութորիկին հեղինակն էր: Առաջ շատ սիրով ընդունեցաւ և մեծարեց Ներսէսը և հայ իշխանները. բայց որովհետև կայսրը արիստութեան հերձուածով խմորուած էր, այն սէրը և բարեկամութիւնը չէին կրնար երկար ժամանակ տևել, հարկ էր որ շուտ կամ ուշ իրարու զարնուէին երկու հակառակ գաղափարներով հոգիները, եւ յիրաւի առիթը չուշացաւ:

Վաղէս կայսեր միամօր որդին մահացու հիւանդացաւ. հայրը տագնապած և մարդկային դարմաններէ անյոյս՝ գիմեց մեր Ներսիսին որ

աղօթքով բժշկէ որդին. Ներսէս յանձն չառաւ մէկէն, և համարձակ կայսեր երեսը զարնելով իրեն մոլորութիւնը, «Մինչև որ ետ չկենաս, ըսաւ, քու չար աղանդէդ, և եկեղեցւոյ ուղիղ և ճշմարիտ վարդապետութիւնը չընդունիս, ոչ միայն որդիդ առողջութիւն չգտներ, այլ շուտով կը վախճանի. և ես տասնուհինգ օր ժամանակ կու տամ՝ քեզի, որպէս զի ապաշխարես և որդիդ ալ առողջանայ բոլորովին»։ Կայսրը յամառելով իր չարեաց մէջ, տասնուհինգ օրէ վերջը մեռաւ որդին։ Սուգ և զայրոյթ միանգամայն տիրեցին կայսեր վրայ, այլայլած դիմեց Ս. Ներսիսի վերայ. բայց ոչ անոր աղերսը և ոչ սպառնալիքը չկրցան դրդուեցնել Ներսիսի միտքը. իմացաւ կայսրը թէ նա իր ճանչցած եպիսկոպոսներէն չէ, և թէ անոր ագամանդեայ հոգւոյն դիմաց ոչինչ են կապանք, տանջանք և մահ, որոնք փոխանակ փնտսելու՝ դեռ աւելի կ'ամրացնեն և կը պայծառացնեն զինքը. ուստի հրամայեց որ անբոյս անապատ և ամայի կղզի մը «ի հովոյն մեհի» աքսորեն մեծն Ներսէս, իրեն Ռաստոմ սարկաւազով և ուրիշ կղերիկոններով։

Այն անապատը կամ կղզին՝ անբեր և ապաւեր ժայռ մ'էր, ուր ոչ մարդ և ոչ գազան կը բնակէր, զուրկ և ամայի ամէն տեսակ շնչաւոր և անշունչ էակներէ, անջուր և անպատսպարան։

Այս ահաւոր անապատին մէջ աքսորուեցան Ս. Ներսէս և ընկերները, որոնք հրաշքով անջուր և անսուաղ անցուցին առաջին օրերը. բայց երթալով ծարաւն ու քաղցը սկսաւ նեղել և Ս. Ներսիսի աղօթից ապաւինեցան. որուն վրայ յանկարծ սաստիկ հով մը փչելով ծովուն երեսը, բազմութիւն ձկներու լեցուեցաւ եղբրքը, ուր աղ և փայտ ալ գտան. բայց հրաշալի փայտ, որ ինքն իր մէջ պահելով կրակը՝ պէտք եղած միջոց

դուրս կ'արժարժէր զայն: Ասոր վրայ սիրտ աւին սրբոյն ընկերները, և ուրիշ աղօթքի ալ կարօտութիւն տեսան՝ ջուր բղխեցնելու համար. զայն ևս կատարեց Ս. Ներսէս, և աղօթքէն վերջ ըսկըսան փորել աւազը, ուսկից ցրտագին՝ վճիա և բարեհամ ջրոյ առատ վտակ մը սկսաւ վեր ցայտել երկնապող և սուղանել շրջակայ ցամաք տեղերը: Այս կերպով դտան իրենց ամենօրեայ կերակուրը և բնաւ չէր նուազեր այն. իսկ Ս. Ներսէս տքնութեամբք և մշտամուռնչ աղօթքով կ'անցնէր օրերը, և երկու շաբաթն անգամ՝ մը կը ճաշակէր:

Յետ ամիսներու, զիշեր մը յանկարծ Ս. Ներսէս կ'երեւի վազեսի երազին մէջ, որ երկասյրի սուր մը բռնած ձեռքը՝ սպառնալից գէմքով եւ ձայնով կշտամրելով անոր բոլոր հասուցած շարիքները, եպիսկոպոսաց սպանութիւնները եւ աքսորը, կը սպառնար խողխողել զինքը. կ'այլագունի՝ կը սարսափի կայսրը, տրիւն քրտինք կը մոռնէ, եւ այն ահաւոր տագնապէն կ'արթննայ: Սակայն տեսիլը կը շարունակէ և կը հալածէ զինքը. դուրս կը նետուի անկողնէն եւ գողգոջուն քայլերով սենեկէ սենեակ կը փախչի. կը վազեն պալատականք եւ թիկնապահք, այլ զուր տեղ կը ջանան փարատել անոր ցնորական երկիւղը: Եւ յիրաւի թշուառականը քանի մը ժամէն երազներու աշխարհէն իրական աշխարհը գլորելով՝ չարաչար մահուամբ կը մեռնի, ըստ ոմանց՝ աներեւոյթ սրով, ըստ այլոց՝ ողջ ողջ պրելով: — Ճիշդ նոյն օրը եւ նոյն պահուն Ս. Ներսիսի կղզին ալ ուրիշ տեսարան մը կը ներկայացնէր: Այն կողմերէն պատահամար նաւավարներ անցնելով, կը տեսնեն հեռուէն որ այն անմարդի կարծուած կղզոյն մէջ բոցեր կ'երևին. չափազանց հետաքրքրութիւններն կը յաղթէ ի-

րենց երկիւղին, կ'երթան կը մօտենան կզգւոյն  
և կը տեսնեն որ յերաւի իրենց նման մարդիկ  
կան հոն: Այս լուրս կը տարածուի իսկոյն կայ-  
սերանիստ քաղաքին մէջ և կը հասնի մինչև բա-  
րեպաշտ թէոզոս կայսեր ականջը, որ նոյն մի-  
ջոցները արևելեան կայսերութեան գահուն վրայ  
բարձրացեր էր: Խմանալով թէ կենդանի է Ս.  
Ներսէս, շուտով բերել կու տայ մայրաքաղաքը՝  
հանդերձ իրեն ընկերներով, իբրու խոտովանող  
Քրիստոսի կը պատուէ և կը մեծարէ զանիկայ,  
և յետոյ շատ մեծագանձ ընծաներով կ'ուղարկէ  
զինքն իր հայրենիքը:

Ինչպէս որ արևը՝ յետ պահ մը ծածկուելու  
ամպերուն ներքև՝ աւելի զուարթ և աւելի պայ-  
ծառ կը ծագէ, այսպէս նաև ծագեցաւ և զուար-  
թացուց Ս. Ներսէս մեր աշխարհը, գրեթէ յիս  
միամեայ բացակայութեան: Թագաւորն, իշխանք  
և ժողովուրդը լսելով զայս, կարծեցին թէ յա-  
րութիւն առեր է Ս. Ներսէս. ուրախութեամբ  
ընդ առաջ ելան՝ ծաղկանց պսակներով և սըր-  
տագին մաղթանքներով, հանդէսներ և սօ-  
նախմբութիւններ կատարեցին: այնուհետև սկը-  
սաւ դարձեալ պայծառանալ և զուարթանալ ե-  
կեղեցին և Լուսաւորչի այրի մնացեալ աթոռը :  
Սակայն ուրախութիւնը փութով սուգի փոխուե-  
ցաւ, լուսափայլ առաւօտը շուտով տեսաւ իր երե-  
կոյն, երբ լսեց և ստուգեց Ներսէս Արշակայ ը-  
րած անօրէն գործերը, և աչքով իսկ նշմարեց  
հեռուէն՝ այն ամօթապարտ Արշակաւան քաղաքին  
մէջին և ժանտ կերպարանքը. խրատ և յանգի-  
մանութիւն ոչինչ ազդեցին, հարկ էր աւելի  
խիստ սաստ մը տալ՝ պատուհաս մը: Չգիտեմ՝  
ստուգիւ՞ թէ եկան դարձեալ երկնառաք հրեշտակ-  
ներ՝ այն նոր Սողոմ-Պոմմըրը ի հուր և յաւեր  
մատնելու. այլ այսչափ ինչ յայտնի է, թէ սաստիկ

գետնաչարժ մը, համաճարակ հիւանդութիւններ և ցաւեր, արհաւիրք և հարուածք բոլոր քաղաքացիները մեռուցին կամ փախուցին, որով եւ հիմնայատակ եղաւ քաղաքը: Առ ժամ՝ մի ծածկուեցաւ Ներսէս, թողուց Հայաստան և Ուռհա քաղաքը գնաց. Արշակ ալ գտաւ յարմար ժամանակ իր շար կամքը կատարելու. գտաւ Չունիկ անուանով չնչին քահանայ մը, և փոխանակ Ներսիսի՝ ուղեց և յաջողեցաւ հայրապետ գնել զանիկայ. բայց հազիւ վայրկեան մը տեւեց. այն սրբազան գահուն շուրջը՝ վերէն վարէն հուր ելաւ ճարակեցաւ, այրեց մրկեց անարժանաբար վրան բազմոզը, և ինքն անարատ մնաց: Իսկ եղկելին Արշակ չէր մտածեր՝ թէ Աստուծոյ արդարութեան կշիռը չափէն աւելի ծանրացեր էր. բարկութեան սուսերը կը ճօճէր շարեացապարտ գլխուն վրայ և մօտ էր խզելու: Աւաղելի Արշակ, որ թէպէտ տասնուեօթ տարիներու մօտ անգարար պատերազմելով Պարսից դէմ՝ ուժալիւս ըրաւ զանոնք, բայց հայ զիւցազսնց շատերուն արևն ալ մարեց և անոնց սուրբերը բթացուց. մօտեցեր էր Հայաստանի օրհասը. թշնամիք չորս բոլորն առած՝ կը ջանային նենգութեամբ կամ բռնութեամբ իրարու ձեռքէ յափշտակել զայն՝ իբրու ոսկեխնձոր մը: Բայց ամենէն աւելի մեր դրացին Շապուհ՝ ատելութեամբ և քինու կը ծխար, որուն խորամանկ հնարքին որս ըլլալով Արշակ՝ կամայ և ակամայ ստիպուեցաւ գնալ Պարսկաստան վասակ Սամիկոնեան զօրավարին հետ: Հոն կապելով զինքը՝ տարին փակեցին Անյուշ բերդին մէջ, ուր սարսափելի մահուամբ խզեց բռնաբար իր կենաց թելը՝ ի պատիժ այնչափ ոճրագործութեանց, յետ գրիթէ 17 տարի թագաւորելու:

Ս. Ներսէս լսեց Արշակայ մահը և լացաւ, ինչ-

պէս Դաւիթ ալ լացաւ Արեւոտումայ վրայ . դիմեց իսկոյն Պոլիս առ Թէոդոս կայսրը, և փոխանակ Արշակայ՝ անոր Պապ որդին թագաւորեցուց, քաջակորով Մուշեցի ալ իրեն վասակ հօրը տեղ սպարապետ դնել տուաւ . կայսրը ուրիշ շատ յոյն զօրավարներ և գունդեր անոնց օգնական տալով՝ մեծ շքով ուղարկեց Հայաստան . Նոյն միջոցները սպարակական բռնութեան ներքե՛ բոլորովին այլափոխած էր Հայաստան . ամէն կողմ աւերակաց հետքեր կը նշմարուէին . եկեղեցիք քարուքանդ ելած՝ անոնց տեղ ատրուշաններ կանգնած էին, և փոխանակ ինկոյց օրհնութեան՝ գարշահոտ ճննճեր և ծուխ վեր կը բարձրանային :

Շապուհ թագաւորը մեծին Ներսիսի և Մուշեղայ գալուստը լսելուն պէս, խորամանկ իժի նման անձայն գուրս սողալով որջէն՝ յանկարծ դիմացնին ելաւ ըստմանով գնդով . սակայն Մուշեղայ քաջութեան դէմ չկարենալով կենալ՝ հազիւ կրցաւ մազապուր փախչիլ . Բայց յետ սակաւ մի յոգնութեան՝ դարձեալ գումարեց զօրքերը, ձայն տուաւ բոլոր դրացի խուժողութ ազգերու և թագաւորաց, և անոնց հետ միացած՝ հեղեղօրէն արշաւեց Հայաստան . հասաւ մինչեւ Ջիրաւայ դաշտը, ընեց Նուպատ լեռան մօտակայ սահմանները . իսկ Մուշեղ՝ Հոյոց բանակին ըսպարապետը՝ առանց ամենեւին տաղհապելու գնաց առ մեծն Ներսէս, անոր օրհնութիւնն առաւ . եւ խնդրեց որ ինքն հազցրնէ իրեն զէնքերը եւ զրահները . Այս օրհնութեամբ խրախուսուած և զուարթացած, ձայն տուաւ ձայն առաւ Մուշեղ, վառեց քաջալերեց զօրքերը, մէկ մէկ կորիւն դարձօց . իսկ ինքը՝ իբրև որսի հմուտ և ամհհի առիւծ մը՝ չորս բոլորն առած մամիկոնեան եւ հայազգի կրակոտ կորիւնները, քաջ քաջ յառաջ

կը նհասուէր թշնամեաց գունդերուն մէջ, և կայ-  
ծակի պէս ամէն կողմ դառնայով՝ ամէն կողմ՝  
հասնելով, շատերը խոցելով՝ գետին թաւալելով  
և ինքն անխոց մնալով, թշնամեաց դիպադէզ  
դիականց վրայ յաղթութեան գրօշը կը կանգ-  
նէր: — Նոյն պահուն Նպատ լերան բարձրէն  
մեծն Ներսէս՝ թեկերը երկինք բարձրացուցած  
մոփսիտարար՝ զօրաց և զօրավարաց զէնքերէն  
աւելի ստատիկ ջարդ և կոտորած կը հասցնէր  
թշնամեաց գնդին վրայ. իր սրբանուէր ազօթքով՝  
մերթ արևուն ճառագայթները Հայոց կողմէն  
Պարսից սեպուհի բանակին վրայ շողացնելով  
շեշտակի՝ կուրուժեամբ կը շրայնէր զանոնք. և  
մերթ հօփուն ընթացքը գէպ ի Պարսիկները  
զարձնելով, անոնց նետերը և տէգերը ետ դառ-  
նայով՝ ուժգին թափով Պարսից սրտերուն մէջ  
կը մխէին, որուն վրայ Հայոց սուրբն ալ հաս-  
նելով՝ անոնց գլուխները մէկ մէկ հարուածով  
գետին կը թօթափէին: Ալ շերկարենք, Հայկակ,  
Ջիրաւայ դաշտին վրայ. փախան արդէն կորա-  
կոր թշնամեաց գունդերը, և միայն քաջակորով  
Մուշեղայ յաղթական գրօշակը կը ծածանի օ-  
դուն մէջ. կը հնչէ յաղթութեան շեփորը, բոլոր  
հայակոյտ բանակը դափնեպսակ զարդարուած և  
զուարթագէժ՝ կը փութայ առ թագաւորն և առ  
սուրբ հայրապետն: — Այլ մենք առաջ անցնինք  
և մեր պատմութեան թելը շարունակենք:

Հազիւ թէ թագաւորեց Պապ, սկսաւ հօրը  
շաւղին հետեիլ և Աստուծոյ պատուիրանները  
ոտքի տակ առնուլ. ինքզինքը բոլորովին ամթալի  
կըլքերու գերի ըրաւ. սրչափ կը խրատէր և կը  
սաստէր Ներսէս, նա նոյնչափ կ'առաւելուր կար-  
ծես անօրէնութեալ կշիռը: Ստիպուեցաւ հայ-  
րապետը մինչև Աստուծոյ տան դռները փակել  
թագաւորին գիմաց, ինչպէս ճիշդ նոյն ժամա-

նակները յարեմուտա՝ միննոյ՛ տրութիւնը ցոյց տուաւ նաև Ս. Ամբրոսիոս Թէոփոսի նման կայսեր մը: Թագաւորը զայրացած՝ բայց իր սրտին մէջ միտերած սխը պատրուակելով, հրաւիրեց սուրբ հայրապետն արքայական ճաշի լեկեցեաց գաւառին խախ աւանին մէջ. հոն կեղծուպատիր մեծարանքով քօզարկեց Պապ իր ծածուկ ատելութիւնը, անարժան սրտին փուշերը՝ վարդի թերթերով ծածկեց: Ռեստի հուպիտ և մելի թագաւորն առաւ ոսկի բաժակը, լեցուց արնիւ օ. շարակը, բայց անկէ առաջ՝ ժանտ մահապեղը, և լրբաբար մատոյց հայրապետին ըմպելու. ըմպեց զայն Ս. Ներսէս՝ իրբու մարտիրոսական բաժակ մը և գոհութիւն մատոյց Ստուծոյ՛ Ս՛ թագնեցան մէկէն սրբոյն լուսարծարծ աշքերը, խոսրեցաւ աստուածափայլ դէմքը, թուրացան սրբազան բազուկները. յանգիմանեց վերջին անգամ՝ մ՛ալ թագաւորին անարժան գործը՝ բայց չգատապարտեց, այնչափ մեծ էր հայրենի գութը եւ քրիստոսական հեզութիւնը սրբոյն. այնուհետեւ լռեց և փութաց հայրապետանոցը, որուն ետեւ վազեցին նախարարները և մեծամեծները եւ յորդորեցին զինքը որ գեղթափ առնու. բայց անօգուտ էր, որովհետեւ սրտին վրայ հղած կապուտակ նշանը, բոլորակ և մեծ «քան գչափ նկանակի միոյ», կը ցուցնէր թէ արգէ՛ն թոյնն ըրած էր իր մահացու արգեցութիւնը:

Մահուան գութը հասած կարապի նման, որ՝ ըստ քերթողաց սրտաուռչ ձայնով իր մահը կ'երգէ կամ կ'ողբայ, մեր սուրբ հայրապետն ալ՝ փոխանակ իր մահուան՝ ողբաց արգին ապագայ կրելիք շարիքները, զորոնք տեսաւ մարգարէական հոգւով և պատմեց ի լուր ժողովրդեան՝ ի զգուշութիւն անոնց: Յետոյ օրհնեց բոլոր ժողովուրդը, և առանձին կերպով Մամիկանեանց տիրոսէր եւ




քաջ ցեղը, մնաւ Աստուծոյ տաճարը և հոն աստուածախօս շրթամբք մատոյց առ սուրբ եկեղեցին և առ քահանայական դասն իր սրտառուչ հրաժեշտը այս խօսքերով. «Ողջոյն քեզ սուրբ եկեղեցի, ողջոյն քեզ սեղան սրբութեան, ողջոյն ձեզ դասք քահանայից. ես ճանապարհորդեցի առ արարիչն իմ... ասէա մեկնիմ ի ձէնջ սիրելի եղբարք ի կոչումն Աստուծոյ իմի...»: Աղօթքէն վերջը՝ զօրացած ելաւ կանգնեցաւ՝ որպէս թէ երկնից պատգամ մը պիտի որոտար. ամփոփուեցաւ ինքն իր մէջ, փակեց աչքերը անարժան աշխարհէս, սիրտը և միտքն՝ առ Աստուած վերացուց, և նոյն պահուն սրովբէական հոգին խըզելով սրբասուն մարմնոյն կապը՝ թռաւ. սլացաւ երկինք՝ խառնուելու իր նախորդ հայրապետաց խումբին մէջ. ժողովուրդը և քահանայք կը սպասէին տակաւին սրբոյն աղօթից վերջանալուն. վասն զի յետ հոգին աւանդելուն՝ դեռ ձեռքերը բազկատարած բռնած, աչքերը երկինք վերուցած, ոտքի վրայ կանգուն կեցեր էր. մտեցան քահանայք որ բաղմեցնեն զինքը հայրապետական դահուն վրայ: Այլ ի՞նչ փշուլթիւն, ի՞նչ զարմանք և ինչպիսի՞ ցաւ կայծակնահար ըրաւ զանոնք, երբ տեսան թէ արդէն հոգին աւանդեր էր Աստուծոյ. չգիտեմ թէ աւելի հիացմն արդեօք անոր սրանչելի մահուան վրայ, թէ ցաւեցան մանաւանդ այնպիսի հօր մը կորստեան վըրայ: Աշխարհախումբ հանդիսով և թագաւորափայել շքեղութեամբ պատեցին սրբոյն մարմինը ճոխ և մաքուր կտաւներով, և տարին թաղեցին թիւ աւանի հայրենական շիրմին մէջ: Փերեզմանին վրայ քառասուն օր լուսեղէն սիւն մը կը փայլէր, ուր կը դիմէին շերմաւանդն սրտիւ ամէն տեսակ ախտաժէտներ, որոնք բոլորովին առողջացած ետ դառնալով՝ շնորհակալ կ'ըլլային Աստուծոյ և սրբուն:

Նախ քան փակելը, Հայկակ, Ս. Ներսիսի հրաշալի վարուց պատմութեան այս էջը, տեսնենք կամ քննենք սակաւ մի՛ թէ արդեօք ամենեին գրաւոր երկասիրութիւն մը չէ՞ աւանդած մեզի, նա՛ որ յունական գիտութեամբ բարգաւաճ երկու քաղաքներու մէջ առնչով իր ուսումնական կրթութիւնը, վարժապետներուն անգամ՝ սիրելի և սխրալի եղաւ՝ մտաց և հանճարոյն նրբութեամբ և յաջողակութեամբ նա՛ որ ուսմանց և գիտութեանց Մեկենաս ըլլալով մեր ազգին մէջ, իր օրով զարդարեց և ծաղկեցուց Հայաստան վարժարաններով և դպրոցներով. — այս նկատմամբ բոլորովին կը լռէ պատմութիւնը: Բայց միթէ կարելի՞ է որ այսպիսի հայրապետ մը՝ զօրաւոր բանիւք և արդեամբք, ընաւ վերաբերութիւն ունեցած չըլլայ դրացի թագաւորաց կամ հայրապետաց հետ, ստորակարգ եպիսկոպոսներու հետ. կարելի՞ է կարծել թէ ընաւ հոգևոր և եկեղեցական կոնդակներ, խրատներ և հրահանգներ գրած չըլլայ առ ժառանգաւորս, քահանայս, միանձունս և առ ժողովուրդը այլևայլ առիթներու մէջ, որոնք յաճախ կը պատահին: Սակայն աւելորդ է այսպիսի ենթադրութեանց դիմել, ուր լաւ հետազօտող և քննադատ աչք մը կրնայ նշմարել պատմութեանց մէջ, թէ Մաշտոց գրքին մաս մը Ս. Հօրս մտաց արդիւնքն է, նոյնպէս Պատարագամատուցին և Ճամազքքին այլևայլ մասերը, ինչպէս կ'ընթեռնունք Բիւզանդի մօտ՝ Գնեկայ սպանութեան պատմութեան մէջ. դարձեալ Քահանայաքարդին ազօթքներէն մէկ քանին և այն սրտառուչ հրաժարական Ողջոյնքը՝ միթէ սրբոյս եռանդուն սըրտին արտադրութիւնք չե՞ն: Նոյնպէս իր մահուանէն առաջ՝ մարգարէական հոգևով խօսած այն երկար դրուագը, զոր կ'ընթեռնունք Մեսրոպը երիցու պատմութեան մէջ, միթէ պակաս գեղե

ցիկ և իմաստալից է քան Ս. Եփրեմայ կամ Ոսկերեբանի ընծայուած ճառերն: Բաւական համարելով արդ այսչափս, Հայկակ, այս գերածայրեալ հայրապետիս վրայ սղօտ գաղափար մը տալու համար, — որուն վրայ որչափ աւելի ընէք կամ խօսինք, նոյնչափ ևս կ'ախորժինք եւ կը կարօտինք, և երբեք չենք յագենար, — անցնինք խօսելու կրօնքի և հայրենեաց մեծ դիցազին վրայ, որուն հողին Ս. Ներսիսի շունչովը կազմուեցաւ:







**ՔԱԶԱԿՈՐՈՎՆ ՄՈՒՇԵՆՂ**

## ՔԱԶԱԿՈՐՈՎՆ ՄՈՒՇԵՂ

**ԱՄԱՌՆԱՅԻՆ** փայլուն և տօթագին արևը երկնից կամարին միջէն կարծես բան մը կը դիտէ, բան մը կը փնտռէ իր կրակաթափ աչքերով. բովանդակ ընտելիւնը շարժման և կենդանութեան սաստկագոյն եռուզեոի մէջ է. չկայ անշունչ և անխօսուն էակ մը՝ որ չի շնչէ կամ՝ չի խօսի այն պահուն: Բայց յանկարծ ուրիշ աւելի սաստկագոյն շառաչ մ'է՝ որ կը լսեմ, Հայկակ, Ձիրաւայ դաշտին կողմերէն... կը տեսնեմ, կը լսեմ՝ ինչպիսի՜ լայնալիճ աղեղներու չկահիւն է այն, ձիերու խրխինջ, ոտքերու և սմբակներու դոփիւն. տես, ինչպէս սուսերաց և սաղաւարտներու փայլփլմունք կը մրցին կարծես արևու լուսոյն հետ. և յիրաւի քիչ կը մնայ որ նսեմանայ բոլորովին արևը՝ եթէ ոչ զինուց և զբահից շողալէն, գոնեա նետերու և գեղարդանց բազմութենէն, որոնք երկու հակառակ կողմերէն տեղալով երկու բանակներուն վրայ, նման դէմ ընդդէմ հոսանաց կարկուտի, նոնննեաց ծաղիկներու պէս՝ ժիր և դալար երիտասարդ հասակը անխնայ կը թօթափեն գետին: Երթանք, մտուհնաք, Հայկակ, այս երկու բանակներուն. տեսնենք ի՞նչ է, ի՞նչ կ'ուզեն և ո՞ք են: Եւ ահա երկու վերամբարձ գրօշներ ծալ ի ծալ կը ծածա.

նին երկուստեք. մին՝ փայլուն և սպիտակ, որ մեզի աւելի մօտ է և ծանօթ կ'երևի. իսկ միւսը՝ մոխրագոյն և ժանտատեսիլ, որ և բաւական հեռու է մեզէ: Սակայն թողունք վայրիկ մը այն արեան ճապաղեօք և գոլորչիով խտացած դաշտը, սպանողաց և սպանելոց՝ վատերուն և քաջերուն ահաւոր նախճիրը, խառնիխուռն գոչումը և բախումը՝ որոնք ականջնիս կը իլայնեն, և նոյն դաշտին դէպ ի հարաւ—արեւմտեան կողմը բարձրացած գեղադիտակ լեռան վրայ ելնենք, դիտելու համար թէ վերջապէս յաղթութեան նըժարն ըր կողմը պիտի հակի: Բայց, Հայկակ, աննման էակ մը կը նշմարեմ ես հոն, աստուածակերպ ոգի մը, որ մովսիսարար բազկատարած աղօթքով՝ տարերաց և երկնից կ'իշխէ, կը դադրեցնէ կամ կը խաւարեցնէ ըստ կամս երկնից լուսաւորները, սաստկաշունչ հովերուն ընթացքը կը բռնէ կամ կը խոտորեցնէ. միով բանիւ, յաղթութիւն կը շնորհէ մէկ բանակին, իսկ միւսին՝ ամօթ և կորակոր պարտութիւն: - Իմացար սնշուշտ, Հայկակ, թէ Նպատ լեռան վրայ ենք, (ուր քիչ մ'առաջ գտնուեցանք արդէն, նախորդ գլխուն մէջ), և այս նոր Մովսէսը՝ մեծ և սուրբ Ներսէս Պարթևն է: Թողունք արդ զինքը իր յաւիտենական անդորրութեան մէջ, և դառնանք նոյն պատերազմին միւս գլխաւոր դիւցազին գործերը նկատելու, դիտելու և սխրանալու, զոր և կրնանք իրաւցնէ պատերազմներու Ոգի կոչել և հուշակել, որ գրեթէ պատերազմներու մէջ ծնաւ, պատերազմներու մէջ սնաւ ու զարգացաւ, հուսկ ապա պատերազմելով ալ մեռաւ և նահատակեցաւ՝ թէ և ոչ պատերազմի մէջ. սա ինքն է՝ Քաջակորովն Մուշեղ, որդի վասակայ Մամիկոնենոյ:

Սա լսելով իրեն առիւծասիրտ հօր անգութ

մահը և Արշակ թագաւորին եղերական կատարածը, փախաւ Հայաստանէն և գնաց Պոլիս առ կայսրն Յունաց, ուր գտաւ նաև սուրբն Ներսէս: Հոն կայսրը զինքը սպարապետ կարգեց փոխանակ հօրը, Արշակայ Պապ որդին ալ թագաւոր դնելով՝ մեծին Ներսիսի խնդրանօք, հայ և յոյն զօրաց բազմութեամբ փութացուց դէպ ի Հայաստան, մեր հայրենեաց ազատութեան և կենաց վերջին պլլայցոյ կայծը նորէն վառելու կամ գէթ արծարծելու համար: Հայրենի հողին վրայ առաջին անգամ կը ներկայանայ մեզ Մուշեղ պատերազմական դաշտին վրայ, երբ հազիւ Հայոց սահմանները կոխած կը յարձակի Պարսից բանակին վրայ, և վառասիրտ նապաստակներու նման ցիրուցան ընելով՝ մինչև Պարսկաստանի խորերը կը հալածէ վանոնք: Երբոր Դարանաղեաց գաւառը հասաւ, իմացաւ որ երկու պարսիկ զօրավարք՝ Զիկ և կարէն բռնացեր տիրացեր էին այն կողմերուն. աճապարեց Մուշեղ, եւ ակնթարթի մը մէջ՝ այն աշխարհաւեր չարագործ մարդկանց վրայ վագել, զանոնք իրենց լարած որոգայթին մէջ բռնելով՝ սրախողխող ընել, եւ բոլոր բանակնին ջարդել և հալածելը մէկ ըրաւ. գնաց մինչև Ատրպատականի Գանձակ քաղաքը, տիրեց անոր, քանդեց ատրուշանները, սրբեց բոլոր Հայաստանը, և պարսիկ ոտք մը չթողուց հայրենի հողին վրայ:

Այս առաջին յաղթութեանս վրայ սիրտ առած մուշեղեան գունդը, երբ իրենց հայկական կոկորդալիր հագադներով գոչեցին միաձայն, Սոչո Տեառն և Մուշեղայ, թնդացին անտառները և լեռները, դղրդեցան դաշտերը և հովիտները. ուրոնց գէմընդգէմ արձագանդներէն արթնցան՝ սիրտ առին հայազարմ ոգիք, որոնք պարսկական գերութեան լուծին ներքև ճնշուած՝ ընդ մէջ կե-



նաց և մահու կը հեծէին թշուառարար : Ելան կանգնեցան գունդագունդ վարազունք հայրենեաց, խորտակեցին գերութեան երկաթները, մանաւանդ թէ իրենց զէնք և զրահ դարձուցին, անոնցմով առնելու վրէժնին Պարսիկներէն՝ Մուշեղի անպարտելի դրօշին ներքե : Այսպիսի յաջողութեամբք սկսաւ Պապ իր թագաւորութիւնը, տիրեց բոլոր Հայաստանի, առաւ ամուր բերդերը, և մանաւանդ Գարօնից բերդը, ուր կը պահուէին արշակունի թագաւորաց դանձերը : Իսկ Մուշեղ միացամ Ս. Կերսիսի հետ՝ աշխարհին և կրօնից պայծառութեան կ'աշխատէր, աւերեալ եկեղեցեաց շինութեան և նորոգութեան ձեռնառու կ'ըլլար : Երկուքը մի անձն եղամ՝ երկու զօրաւոր մտքեր և սրտեր մէկտեղ միացամ, զարմանալի իրեր յառաջ կը բերէին : Վասն զի ուր որ Մուշեղի զինուած աջը կը տկարանար, հոն Կերսիսի հրաշագործ խաչը օգնութեան կը հասնէր. և ուր որ ուժ և զէնք հարկ ըլլար, հոն Մուշեղի օրհնեալ սուտերը զարմանալի կը հանգիսանար :

Սակայն Մուշեղի առաջին զործն էր՝ պաշտպանել հայրենիքը արտաքին թշնամեաց դէմ, և հաստատուն բռնել արքունի գահը և թաղը, որուն միակ նեցուկ՝ իրեն կորովի և հաւատարիմ նախահարքն եղամ էին՝ Տրդատայ ժամանակէն ի վեր : Այս նպատակով գումարեց նա իր սպառազէն գունդը, և գնաց Հայոց և Պարսից սահմաններուն վրայ կեցաւ, պատերազմի ձայն տալով թշնամուղին : Եւ մինչդեռ Մուշեղ կազմ եւ պատրաստ՝ քառասուն հազար ընտիր և կորիճ մարդիկ հետն առամ՝ դարանի նստեր կը սպասէր, գաղաշտ Շապուհն ալ իր ազճատած խելապատակին մէջ նորանոր հնարքներ, նորանոր նենգութիւններ մտածելով, կը յուսար փութալ

աճապարել Մուշեղի առջին առնուլ, Հայոց սահմանապլուխները բռնել, բերդերուն տիրել, եւ ճանապարհաց անցքերուն և կիրճերուն մէջ դարան նստիլ: Տուաւ անօրէն Մերուժանին ձեռքը անհամար զօրաց գունդ մը և ղրկեց իր առջևէն. ինքն ալ ետևէն բալոր տիկնանց խումբը առած՝ կու գար մրմռալով և սպառնալով հիմնայատակ ընել բոլոր Հայոց աշխարհը: Եւ ահա անմիջապէս նոյն պահուն որ Պարսիկները Հայոց սահմանը պիտի կոխէին, յանկարծ լերանց ծայրերէն, բերդերու աշտարակներէն՝ պարիսպներէն, անտառաց խորերէն՝ յորդահոսան տարափ մը քարանց, նետերու, սլաքներու, տէգերու՝ քառասուն հազար հայկական կորովի բազուկներէ թռած՝ Պարսից բանակին վրայ տեղացին. և մտ էին Պարսիկները անոնց բազմութեան ներքև թաղուելու, երբ անոնցմէ առաջ փութացին, հասան, կանգնեցան քսան հազար զօրաց բանակ մը, և իբր երկաթէ պարիսպ մը զէմերնին առին: Կը փայլէր մէջերնին Մուշեղ՝ անբնական-աւարտուց երի վարին վրայ կանգնած՝ քան նստած, որուն ահաւոր տեսլենէն սարսափած Պարսիկները՝ ետ ետ քաշուելով, թիկնապարձոյց փախան վատարար. Շապուհ ալ միաձի փախչելով՝ հազիւ կըրցաւ ազատիլ: Հայք առին թագաւորին վրանը և դանձերը, գերի բռնեցին անոր արկինը և կանանց խումբը. բայց Մուշեղ ամէն պատուով եւ զգուշութեամբ պահելով զանոնք, արձակեց յետոյ առ Շապուհ թագաւորը: Իսկ պարսիկ մեծամեծներէն և զօրավարներէն վեցհարիւր հոգի բռնեց, զամէնն ալ սպաննել և տիկ հանել տալով՝ խոտով լեցուց զանոնք, ի վրէժ իր վասակ հօրը. որոնցմէ զմմանս Պապ թագաւորին ղրկեց, եւ զմմանս ալ Պարսից սահմանապլուխը արձանացուց՝ որ տեսնեն ամենքը թէ ինչ կ'ըլլայ վատերուն կատարածը:

Եթէ Աքիլլեսի ուզինք նմանցնել Մուշեղ իրեն քաջութեանց համար, ապա որո՞ւ նմանցնենք զինքը, Հայկակ, իր աննման և դիւցազնական առաքինութեանց համար, որուն առջև կը խաւարին և տեղի կու տան աշխարհիս ամենէն վսեմ և մեծանձն կարծուած զօրավարներն անգամ՝ Միլտիադէսք, Արիստիդէսք, Փարիոսք և Փարբիկիոսք, Սկիպիոնք և Կեսարք։ Ո՞ր դիւցազը, որ զօրավարը արդեօք այնպիսի վեհանձնութիւն ցըցուց նման պարագայի մէջ՝ ինչպէս ցըցուց Մուշեղ Շապուհի թագուհւոյն և կանանց, որուն համար մարդկային առաքինութենէ աւելի՝ գերբնական զօրութիւն մ'ալ պէտք էր, զոր քրիստոնէութենէ դուրս՝ որ կրօնքը կրնար ազգել կամ ներշնչել մարդուս։ Ապա յիշուէի այս բանիս մէջ ալ, կրնանք ըսել համարձակ և պարծանքով իսկ, թէ ինքը Մուշեղ տուաւ առաջին օրինակ աշխարհիս բոլոր զօրավարներուն. որուն վրայ Պարսից թագաւորն ալ ուրախացած՝ մանաւանդ թէ հիացած, սովորական մահկանացուներէն գերազանց մէկը համարելով Մուշեղ, ինչպէս որ իրօք ալ այնպէս էր, ի պատիւ և յիշատակ անոր մեծանձնութեան՝ նկարել տուաւ զինուո բաժակին վրայ՝ դիւցազին և անոր ճերմակ օգապար ձիուն պատկերը. եւ ամէն խնճոյից ատեն երբ գինի ըմպէր՝ այս խօսքը կը կրկնէր. Ճերմակաձիւն գինի արթցէ, եւ կամ, Փառաց ձերմակ ձիոյն. — Անշուշտ, Հայկակ, եւ իրեն աստուածներուն կարգը դասելով Մուշեղը՝ պիտի պաշտէր Շապուհ, եթէ տակաւին սրտին մէջ դրոշմած չըլլար այն սաստիկ խուճապը եւ սարսափը զոր ունեցաւ Մուշեղի սուրէն, եւ չկասկածէր թէ ուրիշ նման հարուած մ'ալ կրնար դեռ ընդունիլ։ Սակայն Մուշեղի այս գերազանց առաքինութիւնը եւ դիւցազնութիւնը՝ որ իրեն թշնամեաց իսկ զար-

մանալի եւ նախանձելի եղաւ, չգիտեմ ինչպէս Պապ թագաւորին չար երեւցաւ, որուն համար թշնամացաւ ալ Մուշեղի հետ:

Վերջապէս արթննալով Շապուհ երկար ափշութենէն, քինու եւ վրէժխնդրութեան ոգւով վառուած՝ գումարեց կանչեց բոլոր հարկատու ազգերը եւ ժողովուրդները, կովկասու ձիւնաւատ սառամանիքներէն սկսեալ մինչեւ Հնդկաստանի արեւակէզ աւազուտքը, ամէն տեսակ լեզու, ցեղ եւ կերպարան խառնադանձ մարդիկներու, (ինչպէս անուամբ ալ անճոռնի, գունդերը Գուրուրէից, Մադագասց, Ճմահաց, Շղիպաց եւ այլն), որոնց հետ անճոռնի փղերու երամակներ ալ, եւ բոլորը մէկ բանակ ըրած զրկեց Հայաստանի վրայ: Այս վայրենի եւ բարբարոս խառնիճադանձը լեցուեցաւ Ատրպատականի դաշտին մէջ, մտաւ Հայոց սահմանները, ամէն կողմ սկըսաւ ասպատակել, դերփել եւ քանդել. Մուշեղ ալ փութով Հայոց եւ Յունաց քաջերը ժողովելով, նպատ լերան եւ Եփրատ գետին մտակայ Ձիրաւ դաշտին մէջ բանակեցաւ: Պարսից բանակին մէջ նշանաւոր էր քաջութեամբ եւ յաղթանդամ հասակով Հոնաց Ուռնայր թագաւորը, որ գոռոգութեամբ ըսաւ Պարսից թագաւորին, թէ 'Իու քու գնդովդ Յունաց բանակին դէմ ելիր, իսկ Մուշեղի եւ Հայոց դունդին դէմ ինձի թող որ ելնեմ': Ուռնայրի այս խօսքը լսելով Մանուէլ Մուշեղի եղբայրը, որ Պարսից քով գերի կամ պատանդ էր, ըսաւ. «Գիրկս զբազում փշով արկեր, թէ ժողովես՝ մանուկ ես». եւ կամ ինչպէս կ'ըսէ Բիւզանդ, Մերուժանայ բերանը դընելով զայն, «Աստ արկեր զգազիւ գիրկս, բայց թէ ժողովիլ կարիցես՝ մեծ զարմանք իցեն»: Այս խօսքս, ո՞վ ալ ըսած ըլլայ, Հայկակ, և ինչ կերպով՝ մեզի կարևոր չէ. բայց այսչափ միայն,

որ Մուշեղի քաջութիւնը կը ցուցնէ: Յետոյ Մանուէլ գաղտուկ կերպով Մուշեղի ականջը հասուց Ուռնայրի խորհուրդը. նա փոխանակ այլայլելու՝ աւելի ևս զուարթացաւ, զօրութեամբն Աստուծոյ և ազօթքով Ս. Ներսիսի՝ յուսալով ընկճել և յաղթահարել զուող թագաւորին փրացումը:

Երկու բանակներն ալ պատրաստ էին կռուելու, բայց տակաւին պատերազմական շեփորները չէին հնչած. — Ս. Ներսէս և Պապ թագաւորը հասան Ձիրաւայ դաշտը, ուր Հայք մարմնաւորէն աւելի՝ հոգևոր պատրաստութիւններ տեսան, կրօնից և հայրենեաց պատերազմ մը համարելով զայն: Մինչդեռ բովանդակ հայկական բանակը խաղաղիկ կը ննջէր, — ոմանք իրենց ընտանիքը և սիրելիքը երազելով, ուրիշները՝ վազուան յաղթութիւնը, և ոմանք ալ երկնաւոր հայրենեաց տօնախմբութիւնը՝ ուր կը յուսային և կ'ըղձային երթալ, — Ս. Ներսէս ազօթքով կը հսկէր բոլոր գիշերը: Առաւօտեան դէմ կանգնեց սեղանը և մատոյց Աստուծոյ անմահ պատարագը. իննսուն հազար քրիստոնեայ զօրաց բանակը (հայ և յոյն խառն), զրահաւորք և զինեալք՝ ծունր գրին, գետին խոնարհեցան: Հնչեցին ծնծղայք և նուիրական շեփորները, որոնք այն զինուց և զրահից շաշիւնին հետ խառնուած՝ լերանց և քարանձաւաց միջէն այնպիսի վսեմ՝ և ահագնալուր արձագանգներ հնչեցուցին, որ կարող էին Երկրովի պարիսպներուն նման տասնեակ պարիսպներ կործանել, ուր մնաց այն խուժադուժ և խառնաղանձ բանակը, որոնք կէս մը զարհուրած և կէս մ'ալ քունէն և արիւթենէն ընդարմացած՝ պիտի ձգէին փախչէին, եթէ յանկարծ Հայոց բանակին մէջ՝ յետ այնքան ձայնից և շառաչմանց՝ գերեզմանական խոր լուծիւն և ան-

չարժուծիւն մը չի տիրէր... աստուածահրաշ խորհրդոյն ամենէն սրբազան պահէն էր, ուր արտասուախառն և զուարթածաղիկ դիմնք, մաքուր և եռանդուն սրտով հաղորդեցան արժանաւորքն այն անմահական սեղանոյն: Այնուհետև « թելծեալ գոյնք քան զարժուիս՝ զօրացեալք առաւել քան զառիժունս », կարծես հուր ու բոց կը շնչէին, փայլատակունք կը ցոլանային անոնց աչքերէն, և բազուկներէն կայծակունք կը թօթափէին: Պապ թագաւորը նման Սաւուղայ իր երիվարը և զէնքերը Մուշեղի սուաւ. այլ երկրորդս այս Դաւիթ՝ նման առաջնոյն՝ մերժեց զանոնք. Աստուծոյ ահը և զօրութիւնը զգեցաւ փոխանակ զինուց և զրահից, առաւ Ս. Դերասիսի ձեռքէն սուսերը և անոր օրհնութիւնը, և իբրև նոր սմն Մակարէ՝ հեծած սրաթուիչ ճախրասլաց ճերմակին վրայ, կը թուչէր և կը խայտար քան թէ կ'ընթանար, և որուն աչքին բան չէին երևիր ոչ սուր, ոչ հուր և ոչ գազանք: Իսկ Ս. Դերասէս թագաւորին հետ Նպատ լերան գլուխը ելլելով, կ'աղօթէր հաւատոց և աշխարհին յաջողութեան և երջանկութեան համար:

Մուշեղ՝ յետ քաջալերելու և սրտապնդելու բոլոր բանակը, Յունաց գունդը ձախ կողմը դրաւ՝ Պարսից բանակին դէմ, իսկ Հայոց գունդը՝ աջ կողմը տեղաւորեց Հոնաց և ուրիշ բարբարոսներուն դէմ: Ի զուր է այնուհետև այս կամ այն տեղ փնտռել Մուշեղ, վասն զի փայլակի պէս ակնթարթի մէջ ամէն կողմ՝ կը շողայ, ամէն տեղ կ'որոտայ, ամենուն կը հասնի. կարգէ դուրս արագութիւն և աշխոյժ մը կը փայլի վրան, որ թշնամեաց աչքը կը շլացնէ եւ մինչև անգամ՝ խելքերնին կը թռցնէ: Կայծակի նման կը մտնէ անարի Սրեայ գնդին մէջ, իբր արևակէզ չորացեալ եզեզանց անտառի մը մէջ,

կ'այրէ կը լափէ զանոնք Մամիկոնեան Աքիլլեսի սուսերը, և ո՞վ է որ համարձակի դէմ դնել զայրացած առիծուն. «Առիծ գոչիցէ, և ո՞վ իցէ որ ոչ սարսիցէ»: Ամէն մէկ քայլը, ամէն մէկ շարժումը Մուշեղի՝ օրհասարներ էր Պարսից եւ բարբարոսաց գնդին. թշնամեաց դիականց եւ վիրաւորաց բազմութեան մէջ կը ծածկուի նա պահ մը, զոր տեսնելով Պապ՝ դունաթափ կ'ըլլայ և կը զարհուրի, կարծելով թէ թշնամեաց կողմն անցաւ Մուշեղ կամ մատնութիւն մ'ըրաւ, ինչպէս առաջուց ալ կը կասկածէր. բայց Ս. Ներսէս՝ վստահ Մամիկոնեանց աննենդ արուածեան վրայ, կը զօրացնէ՝ սիրտ կու տայ թագաւորին և իր ազօթքը կը շարունակէ:

Մինչդեռ մուշեղեան գունդը և բարբարոսք քաջութեամբ և բուռն յարձակումով կը կռուէին իրարու դէմ, կարծես թէ զարբիններու ուռանց ձայներ և մայրևորաց ճայթիւնք հնչելով երկու հանդիպակաց լերանց մէջ՝ ականջները կը գռռնչեցնէին: Հոն քաջն Սպանդարատ կամսարական սրակնեայ արծուի նման, որ պտուտքելով օդուն մէջ՝ ուժգին թափով կը խոյանայ որսին վրայ, յարձակելով կը ճեղքէ թշնամեաց ստուար խումբը, և լեկաց Շէրգիր թագաւորին վրայ վազելով մէկ հարուածով գետին կը տապալէ զանիկայ և բոլոր գունդը ցիրուցան կ'ընէ: Վերջապէս բարբարոսաց բանակը՝ ոգեսպառ և ուժաթափ Հայոց հարուածներէն՝ ամօթապարտ և կորակորի փախուստ կը խուճապէ. Պարսից Շապուհ թագաւորն ալ՝ հետիոտս փոսէ փոս ցատքելով և ծակէ ծակ սողալով օձի նման, այս անգամ ալ կ'ազատի: Իսկ Մուշեղ զօրավարն յանկարծ Ռուսայրի ետևէն կը հասնի, անոր մօտ եղողներուն վրայ սուր կը շարժէ և բոլոր ուժով նիզակը թափ զարնելով անոր ճաղատ դլխուն՝ ձիէն վար կը

ձգէ. թէ և բռնադոյն հարուած մը սուաւ, կ'ըսէ պատմիչը, — և միթէ կարելի էր Մամիկոնեանի մը բազկէն թուլագոյն հարուած սպասել, — կը ծեծէ անոր գլուխը և կ'ըսէ. Եթէ դու Ուռնայր ես, ես ալ Մուշեղ եմ. բայց դու շնորհակալ եւ զիր որ թագ ունիս, վասն զի ես թագաւոր մարդ չեմ սպաններ. այս ըսելով՝ թոյլ տուաւ որ ութ հեծելովք փախչի Հոնաց աշխարհը. Սմբատ ասպետն ալ՝ որ քաջերուն մէջ քաջագոյն հանդիսացաւ պատերազմի մէջ, գտաւ իր արդար բարկուածեան և վրէժի որսը՝ չարեացապարտ Մերուժան Արծրունին. իբր թագադիր ասպետ՝ հրացած շամիրով պսակեց արժանապէս հրոյ արբանեակը, եւ ազգուրաց հայը՝ ուրացելոց թագաւոր յուղարկեց թարամանի անիծակուռ բնակարանը:

Պատերազմէն վերջը՝ ոմանք նախանձով կապուտկած կամ սեցած, ուրիշներն ալ Մուշեղի պայծառ յաղթանակներէն չլացած՝ ամբաստանեցին զինքը թագաւորին առջև, իբրու մատնիչ և կուսակից Պարսից. պատմեցին թէ ի՞նչպէս Շապուհ թագաւորին կանայքը անվնաս և պատուով արձակեց, նոյնպէս Ուռնայր թագաւորը գերի բռնելով պատերազմին մէջ՝ թողուց որ փախչի Մակայն Մուշեղ համարձակ կերպով խօսեցաւ, խրատեց և յանդիմանեց թագաւորը՝ որ ամէն ամբաստանութեանց և չարախօսութեանց դիւրահաւան չըլլայ, և արդարացնելով ինքզինքը՝ դարձեալ թագաւորին սիրտը շահեցաւ. Այնուհետև Մուշեղի վահանը և սուսերը խաղաղեցին և ապահովեցին հայրենիքը՝ արտաքին թշնամիներէ. բայց ոչ և ներքին շփոթները, որոնց պատճառը նոյն իսկ թագաւորն էր՝ իրեն զազրագործ պղծութեանց համար, սրոնցմով Աստուծոյ արդար բարկութեան պատուհասը և ազգին կործանումը



երագեց՝ փութացուց, շիջեցնելով այնպիսի լուսափայլ արև մը՝ Ս. Ներսէս, որ թէ՛ հայրենեաց և թէ՛ եկեղեցւոյ զարդ և երջանկութիւն էր : Մուշեղ և բոլոր Մամիկոնեան ազգատոհմը, որ այս նոր Յակովբայ ցուպ և գաւազան էին մխիթարութեան, անոր օրհնութիւնները ընդունելով, իբրու մէկ մէկ Յուդա և Յովսէփ՝ աճեցան եւ զօրացան նորափեսուր արժիւններու նման :

Յետ սգալի մահուան մեծ և սուրբ հայրապետին, տիրութեան քող մը պատեց առ հասարակ ամենուն գիմաց և սրտին վրայ, և պահ մը յիւրաւի « թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց », ըստ փափկանուագ հոգերգողին, մինչև Մուշեղի կորովալիր բազուկներն անգամ այնչափ լքեր տկարացեր էին, որ կ'ուզէր թողուլ զէն և զրահ, շէն և աշխարհ, և առանձնանալ հայրենեաց եւ ազգին անդարմանելի կորուստն ողբալու : Քանի՛ անգամ նախարարներն առաջարկեցին իրեն, կորզել Պապայ անարժան գլխէն արքունի թագը և անով պսակել իր արժանաւոր գլուխը, որ յիւրաւի Մուշեղի նման անձի համար թէ՛ դիւրին էր և թէ շատ ալ վայելուչ. բայց նա մերժեց փեմաբար, պատերազմներու մէջ հնայած և մաշած սաղուարտը գերադաս համարելով քան մարգարտագարդ և ոսկեկուռ թագը : Իսկ Ս. Ներսիսի մահուան վրէժխնդրութիւնն Սասունոյ թողուց, ինչպէս որ յիւրաւի քիչ վերջը պատահեցաւ. թէտղոս կայսեր հրամանով գտաւ Պապ իր այնչափ ոճիրներուն արժանաւոր պատուհասը : Պապայ յաջորդեց վարագդատ, որ արչակունի էր և թագաւորական ցեղէ . բայց որչափ որ թեթևութեամբ և կորովութեամբ մարմնոյ զորմանալի էր՝ իբր նոր ոմն վահագն կամ Հերակլէս մը, դժբախտաբար նոյնչափ այլ զուրկ էր ազնուականութենէ մտքի և սրտի : Մուշեղի թշնա-

միք յարմար առիթ գտնելով՝ իրենց ստիպասուտ քսութիւնները տեղացին վարազդատի ականջը, որ դիւրահաւան գտնուելով՝ նման Պապայ և աւելի վատ քան զանիկայ՝ դիւրաւ իրենց կողմը որսացին։ Բայց կը վախէր նա Մուշեղի կորովութենէն և կ'ակնածէր ևս ուստի նենգութեամբ ճաշի հրաւիրեց զինքը, և ուտելու միջոց յանկարծ վրան յարձակեցաւ և նիզակը անոր սրտին մէջ մխեց։ Իսկ մեր զիւցազն անխռով թագաւորին երեսը գտնելով անոր ապերախտութիւնը, հարցուց. «Սոյ յոր երախտեաց վերայ», որուն պատասխանեց վարազդատ լրբարար. «Կնա դու հարց ցՊապ, թէ զնա վասն է՞ր ետուր ի ձեռս սպանողաց»։ այն ատեն կրկնեց վեմամբար վիրաւոր առիւծը. «Ի վերայ իմոյ վաստակոցն, արհան և քրտանց, որ փոխանակ դաստաւակի՝ սլաքաւ նետի սրբէի զքիրտն իս, արդ այս եղև հատուցումն ինձ. օրհնեալ է Աստուած. բայց ընդէր ոչ դիպեցաւ մահ իմ ի պատերազմս և ի վերայ երիւարի վասն քրիստոնէից»... Ահա քեզ, Հայկակ, զիւցազի մը՝ այլ քրիստոնեայ զիւցազի մը արժանաւոր գործ և խօսք, որոնց վերայ զմայլէ՛ և զարմացիր՝ սրչափ կ'ուզես և կ'ախորժիս, և նմանէ՛ սրչափ որ կրնաս։ Հագիւ թէ կատարեց Մուշեղ իր խօսքը, Սահառունեաց Սմբատ իշխանը յարձակելով անոր վրայ՝ սրով զարկաւ սպաննեց անգթօրէն. որուն մարմինը մեծաշուք հանդիսով տարին Տարօն գաւառը և հոն շատ կոծով և սգով Գլակայ վանքին մէջ թաղեցին։

Սակայն Մամիկոնեանին անպարտ արիւնը վրէժ կը գոչէր, և դժոխոց կատաղիք կը կրծէին վարազդատի անգուլթ սիրտը, եթէ ունէր նա սիրտ, մինչև որ Մուշեղի եղբայրը Մանուէլ՝ ազատելով Պարսից աշխարհէն եղբայրներով եւ

որդիքներով, եկաւ և պատերազմելով տիրեց Հայաստանի, մերժեց հալածեց վարազդատը, եւ կարնոյ դաշտին մէջ կռուելով կատաղաբար՝ ահաւոր ջարդ մը տուաւ անոր բանակին: Պատերազմի միջոց Մանուէլ իրեն Հմայեակ որդւով վարսզգատ թագաւորին վրայ յարձակեցաւ եւ մէկ հարուածով դետին տապալեց զինքը ձիէն. փութաց աճապարեց քաջայանդուզն և անձնագեղ պատանին Հմայեակ, հանեց պատենէն պողովատիկ սուսերը և առ հտեղ պիտի սպաննէր, եթէ Մանուէլ հայրը չարգելուր զինքը և անոր դուռիս կռիւհարելով միայն՝ մեծանձնութեամբ չթողուր որ կորագլուխ փախչի Յունաց աշխարհը, ուր մեռաւ վատաբար:







Ս. ՍԱՀԱԿ ԳՍԸԹԵՒ

## Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

**Ինչո՞ւ** որ սովորաբար գեղեցիկ վերջալոյսը նշան մ'է կամ արդիւնք նոյն օրուան ըրած գեղեցիկ առաւօտեան և պայծառ միջօրէին. այսպէս ալ, Հայկակ, մեր հայրենեաց և ազգին ազատութեան յետին վերջալոյսը՝ զոր պիտի տեսնենք հիմակ, յիրաւի մեր ազգին անցելոյն գեղեցիկ և պայծառ փառաւորութիւնը կը ցուցընէ. բայց ի՞նչ օգուտ, որ յետ քիչ մը պըլպըլու՝ պիտի մարի եւ անհետանայ, և անոր պիտի յաջորդէ աղջամուղջ գիշեր մը: Բայց ո՞չ, Հայկակ. դեռ պահ մը պիտի վայելենք և պիտի հրճուինք մեր ազգին պայծառ յաջողութեամբք, իազաղ և բարգաւաճ տարիներով. պիտի աեսնենք որ յանկարծ ոսկեղար մը պիտի ծագի մեզի, այլ աւելի պիտի փայլակէ քան թէ փայլի. որովհետեւ անմիջապէս գերութեան շղթաներուն ներքեւ պիտի նսեմանայ ոսկին, արեան եւ աւերակներու սզգեցութեամբ անագ եւ կապար պիտի դառնայ: Ահա այսպիսի տխուր ու զուարթ տեսարաններ պիտի բացուին դիմացդ, Հայկակ, Ս. Սահակայ Պարթեւի վարքը կարդալուդ միջոց:

Ծնաւ սա Քրիստոսի 354 թուականին Ս. Ներսիսէ, գերազանց հօր արժանաւոր որդի: Իր

անունը, կրօնական և մտաւոր զարգացումը առաւ կեսարիոյ և Բիւզանդիոնի մէջ, որով վերաբերութիւն ալ ունեցաւ այնպիսի գերագոյն անձանց հետ, որոնք եկեղեցւոյ վեհագոյն շրջան մը կազմեցին, այն է Դ դարը: Հայաստան ալ ընդհանուր եկեղեցւոյ պայծառութեան հազարդ եղաւ, գոնեա կրօնական և մտաւոր մասամբ: Վասն զի նոյն միջոյնները կամ քիչ մը յետոյ (ե դարուն մէջ) ունեցաւ իր ոսկեգարը: Բայց որքան աղօտ էին այն նշոյլները, որոնք նոյն ժամանակի արևելեան կայսերութեան կեդրոնէն՝ Բիւզանդիոնէ կը հասնէին մեզի: — Ուրիշ խօսքով բացատրեմ՝ զայս. եթէ եկեղեցւոյ մասննագրական զարգացման և պայծառութեան դարը, բոլորովին ներհակ նւթական լուսաւորութեան, իր մեղմ և անոյշ արշալոյսն ունեցաւ յարևմուտս (ի Հռովմ), ջերմ և պայծառ բարձրագագաթ միջօրէն՝ Բիւզանդիոնի մէջ, իսկ իրեն վերջալոյսն երևեցաւ և տևեց Հայաստանի մէջ մինչև Զ դարուն սկիզբը: Եւ ո՞վ էր արդեօք մեր ազգին և հայրենեաց այնպիսի պայծառութեան հեղինակ՝ եթէ ոչ նոյն ինքն Ս. Սահակ, որ թագաւորութեան կործանելու միջոց՝ դեռ քառասուն տարւոյ չափ ոչ միայն կանգուն՝ այլ և փայլուն և յարգարուն պահեց արքունի գահը և թագը: Երջանիկ հայրապետ, որ կարծես կրանիտեայ խարսխի վրայ հաստատուած, այնքան անդուլ ծփանքներու գլմանալով, իր կիսադարեան հայրապետութեան շրջանին մէջ՝ տեսաւ նորավառ աչօք Ս. Հարցմէ ոմանց կենաց վերջին կայծերը, վայելեց ուրիշներուն պայծառագոյն օրերը, և շատերուն ալ՝ որ քան զինքը կրտսերագոյնք էին հասակով և ժամանակով՝ շիջանիլը և շրջանին լմնցնելը տեսաւ:

Ս. Սահակ իրեն կենաց առաջին երեսուն եւ հինգ տարիները Հայաստանէն դուրս անցուց, և

անշուշտ շատ պատիւներ և պաշտօններ ալ ստացաւ Բիւզանդիոնի մէջ կայսերաց պալատը՝ թէ՛ իրեն անձնական կատարելութեամբք և թէ՛ ազգատոհմին ազնուականութեամբ: Իրեն հօր նման ամուսնական վիճակ ընտրեց, Ղուսաւորչի ցեղը բոլորովին անժառանգ չթողլու համար, բայց Աստուած՝ ի պատուհաս հայ ազգին որ չճանչցաւ և չյարգեց այնպիսի գերապանձ անձանց արդիւնքը՝ արդէն իսկ վճռեր էր անժառանգ թողուլ, ինչպէս որ յայտնեց ալ սուրբին հրաշալի տեսլեամբ մը, մինչդեռ սարկաւադ էր վաղարշապատու մայր եկեղեցւոյն մէջ և հսկումն կ'ընէր աւագ հինգշաբաթի օր մը: Դասրիկ մ'ունեցաւ միայն՝ Մաւհակակոյն անուամբ, զոր յետոյ հարսնութեան տուաւ Մամիկոնեան Համազասպ իշխանին, ուսկից ծնան երեք սխրալի և պանծալի դիւցազունք և նահատակք երկնից և հայրենեաց՝ Կարմիրն վարդաւն, Հմայիսկ և Համազասպեան, որոնցմէ առաջինը իրեն որդեգրեց Ս. Սահակ, և առանձին խնամով սնոյց և պահեց իբրև սըրբազան աւանդ մը:

Յետ մահուան Մեծին Ներսիսի, կաթողիկոսական աթոռը գրեթէ ամայի մնացեր էր, մերթ օտարաղգի և մերթ իրենց բարձրագոյն կոչման անարժան անձանց ձեռքն անցնելով: Բայց երբ խորով Գ. թագաւորը խոհական և քաղաքագէտ վարմունկով կրցաւ ազգին երկու բաժնուած նախարարները միաբանել և խաղաղել Հայաստան, յամին 389 բազմեցուց Մեծին Ներսիսի աթոռը՝ անոր արժանաժառանգ որդին, Մեծն Սահակ Պարթև: Սա իր աստուածազարդ հօրը քաղցր յիշատակները արթնցուց ժողովրդեան սրտին մէջ, և այնուհետև ինքն եղաւ անոր միակ մխիթարութիւն և ապաւէն ամէն վշտաց մէջ: Մէկ կողմանէ՝ օրինաւոր յաջորդ և ժառանգ ըլլալով



լուսաւորչայ նուիրական ցեղին, և միւս կողմանէ՝ խնամի, և ազգական թագաւորներու, — ո՛ր թողունք անոր միւս մեծամեծ ձիրքերը և բարեմասնութիւնքը, — մեծ և զօրաւոր էր Ս. Սահակայ ազգեցութիւնը ժողովրդեան վրայ. ոչ միայն հայր և զաստիարակ էր ժողովրդեան, այլ և իշխող և թագաւոր սրտերու, ուսկից ոչ միայն խոսրով սկսաւ վախնալ, այլ և նոյն իսկ Պարսից թագաւորը: Այս երկիրդէս հանդարտելու համար՝ նենգաւոր հնաւք մը մտածեց պարսիկ թագաւորը. յանցաւոր վճռեց միանգամայն թէ՛ խոսրով եւ թէ՛ Ս. Սահակ. առաջինը՝ իր այլևայլ ինքնագլուխ գործոց եւ ապստամբութեան ցոյցերու համար, իսկ Ս. Սահակ՝ անհրաման կաթողիկոս նստելուն: Խոսրով խարուելով վռամ՝ Գի ցանցին մէջ ինկաւ, և ստիպուած Տիզրոն գնաց. հոն զըրկուելով թողէն՝ Անյուշ բերդը տարուեցաւ, ուր կը հսկէր տակաւին քիչ տարի առաջ անձնասպան եղած Արչակայ ուրուն: Անոր տեղ թագաւոր գրուեցաւ վռամչապուհ եղբայրը, որ խոհական զգուշաւորութեամբ և խաղաղասէր բնուորութեամբ թէ՛ Պարսից թագաւորին և թէ՛ ժողովրդեան սիրելի եղաւ: Վռամ՝ Ս. Սահակն ալ վար առաւ հայրապետութենէն, որուն վրայ սուրբ հայրապետը փութաց Տիզրոն թագաւորին արքունիքը, ցըցուց հոն իր պերճախօս և կորովի հանճարը թագաւորին առջև, սիրելի և պատկառելի եղաւ անոր. հաստատուեցաւ իր հայրապետութեան մէջ, բոլոր խնդիրներն ընդունեցաւ, իրեն փեսան՝ Համազասպ Մամիկոնէից տէրը՝ ոչ միայն սպարապետ զնել տուաւ, այլ և հայ նախարարներու գասակարգին մէջ բարձրացուց զինքը պատուով, կնքել և հաստատել տուաւ այն նշանաւոր Գահնաւնակը, որ մինչև մեր ձեռքը հասաւ իր անուամբ: Ամէն բանի մէջ նմանող և հետևող

եղաւ հօրը, նորոգիչ և հաստատիչ քաղաքական և եկեղեցական բարեկարգութեանց, շէնցուց՝ պայծառացուց Աստուծոյ եկեղեցին և հայրենիքը, մտաւոր և բարոյական կրթութեան և զարգացման յորդորիչ եղաւ, ուսմանց և գիտութեանց ջահ և Մեկենաս հանդիսացաւ: Սակայն այս ամէն բաներն ընելու և յաջողելու համար՝ այնպիսի նպատակ և ձեռնտուութիւն մ'ունեցաւ Ս. Սահակ, որ այն ևս Աստուծոյ պարգև մ'էր, ուսկից զուրկ էին իր հայրը և նախահարք, այն է Գրոց գիւտը, որ իրեն ժամանակ պատահեցաւ: Ս. Մեսրոպայ ձեռքով: — Թողունք զայս առ այժմ, Հայկակ, և յետոյ համառօտիւ յիշատակենք նոյն գերաշնորհ վարդապետին վարուց պատմութեան մէջ: Եւ այսպէս՝ մինչդեռ բոլոր աշխարհն ուրախութեան մէջ կը պարէր, բոլոր սրտերը և հոգիները կը հրճուէին՝ յարտասուս գորովելու չափ՝ տեսնելով այն յանկարծափայլ պայծառութիւնը և մտաւոր զարգացումը, և սողմնեան ժիր վախտուն զօրաւորները հեռու աշխարհներ թեւածելով՝ երկար և ամայի պանդխտութեան մէջ կը հաւաքէին մեղուաբար օտար գրատանց անոյշ հիւրերը, Ս. Սահակ ալ Հայաստանի խորը՝ Աստուածաշունչ գրոց թարգմանութեան կը պարապէր:

Յամին 421 վախճանեցաւ բարեացապարտ թագաւորը վաւախապաւս, որ քսանեմէկ տարի խաղաղ և խոհական թագաւորութեամբ՝ կրցաւ հայրենեաց հնացած վերքերը բուժել, և խաղաղել այն արքունի գահը, որ Տրդատայ մահուանէն վերջը՝ անգուլ անգաղար կ'երերար և կործանելու վտանգի մէջ էր: Հարկաւ այսպիսի թագաւորի մը մահը ամենուն սիրտը սգով և կոծով պատեց և ուրիշ նորանոր վերքեր բացաւ, զորս բուժելու համար, աւանդ հարկ էր որ իրեն պէս

Թագաւոր մ'ելէր: Վռամչապհոյ որդին Արտաշէս՝ դժբախտաբար տասնամեայ անմիտ մանուկ մ'էր. ուստի Ս. Սահակ՝ որ ազգին հայրն էր՝ փութաց առ Յագկերտ Ա. և խնդրեց իրմէ որ դարձեալ Վռամչապհոյ թագաւորի եղբայրը՝ Խոսրովը թագաւորեցնէ, որ Անյուշ բերդին մէջ արգիլուած՝ մահուան կը սպասէր: Ս. Սահակայ խնդիրքը ծանր և անհնարին բան էր. որովհետև Անյուշ բերդին մէջ փակել մէկը, նոյն էր մահուան գիւղը ձգել մէկը, որուն ճիրաններէն կորզել՝ խիթալի և դժուարին բան էր նոյն իսկ թագաւորին համար:

Սակայն Ս. Սահակայ շնորհքը կրցաւ այսպիսի անփոփոխելի օրէնք մը փոխել տալ. ելաւ Խոսրով ու ժաթախի և հիւծեալ, և այն ալէզարդ գլուխը անգամ մ'ալ պճնեց ծաղիկ հասակին մէջ կրած թագով. և թէպէտ քիչ ժամանակ միայն կրցաւ կրել զայն, այլ գէթ պատուով մեռաւ և Ս. Սահակայ օրհնութեամբ իջաւ իր հարց դամբանը: Յետ որու թէ և քանի մը տարի դատարկ մնաց արքունի գահը, բայց Պարսիկները չկրցան գրաւել զայն. վասն զի հազիւ թէ Յագկերտի որդին Շապուհ մէկ քանի տարի թագաւորեց մեր ազգին վրայ, անարգանքով և վատուածեամբ՝ աճապարեց հօրը հետ արիւնթաթառ գերեզման մտաւ և թագաւորեց Պարսից Վռամ Գ, որ ի բնէ անհանգարտ մէկն ըլլալով, անմիջապէս Յունաց գէմ պատերազմ՝ բացաւ և դարձեալ սոնակօխ և վերիվայր ըրաւ մեր աշխարհը: Նոյն միջոցները Ս. Սահակ յունաբաժին հայոց մասին մէջ ապաւինեցաւ, և իր վարդան թուրը զրկեց Ս. Մեսրոպրայ հետ առ թէոզոս կայսրը, ուր ստրատելատութեան պատիւ ընդունեցաւ հօրը տեղ: Բայց ասով Ս. Սահակ չզրկեց Հայաստանի միւս մասին ընակիչները՝ հայրենի խը

նամբէն և պաշտպանութենէ, որոնք այլևայլ նեղութիւններ և վնասներ հասուցած ըլլալով պարսիկ պաշտօնէից՝ Շապուհի երթալէն վերջը Վռամ թագաւորին վրժինգրութենէն սարսափած և յուսահատած իրեն գիմած էին: Սուրբ հայրապետը փութացուց՝ միջնորդ և աղերսարկու զրկեց առ թագաւորը Սահակ ասպետն և իր վարդան թուր. սակայն անով ալ գոհ չըլլալով, ինքնին գնաց առ Վռամ, ուր գերազանց պերճախօսութեամբ՝ ոչ միայն Հայոց աշխարհն ազատեց անոր բարկութենէն, այլ և այնքան տարի ամայի մնացած արքունի գահուն վրայ բազմեցուց Արտաշէսը՝ Վռամչապհոյ որդին: Բայց ինչպէս որ Պապ ապերախտ և ապաշնորհ գտնուեցաւ առ Մեծն Ներսէս, այսպէս նաև Արտաշէս ստահակ և անսասող եղաւ Ս. Սահակայ խրատուց, մինչև որ իրեն անկարգութեամբք և զազրութեամբք բոլորովին զրուեցուց և զայրացուց ազգին մեծամեծները և իշխանները, որոնք նոյնպէս արհամարհելով սուրբ հայրապետին շահաւէտ և օգտակար խրատը և խորհուրդը, գիմեցին Պարսից արքունիքը և մասնեցին Արտաշէսը՝ իրմէ աւելի պիղծ և անօրէն թագաւորի մը ձեռքը, մնորեալ գառնուկը արիւնարբու գայլին ձեռքը ձգեցին, ըստ գեղեցիկ բացատրութեան Ս. Սահակայ. այս ալ բաւական չէր, ամբաստանեցին նաև Ս. Սահակ, և յանցաւոր ցըցուցին զինքը տէրութեան օրինաց դէմ:

Քաջ և զուարթուն հովիւն աճապարեց Տիգրոսն Վռամայ արքունիքը, և հոն վեհաբան և կորովի աւտենախօսութեամբ՝ չըսեմ՝ բոլորովին անպարտ՝ այլ անդատապարտ ցըցուց Արտաշէսը, կարկեց նախարարներուն լիւրը լեզուները, և մինչև անգամ համարձակեցաւ Պարսից կրօնքին անտուղութիւնները և ստութիւնը կշտամբել. և այնու

հանդերձ լուսաւոր եւ անպարտ ելաւ ինքն ատե-  
նէն եւ ակնածելի եղաւ պարսիկ մեծամեծներուն :  
Սակայն այս անգամ՝ չարութիւնն աւելի տեղի  
ունեցաւ ժանտ վռամայ սրտին մէջ, որ արշա-  
կունի թագաւորաց յետին մնացած կայծն ալ  
ուզեց բոլորովին շիջեցնել. անոր հետ առ ժամ  
մի զրկեց նաև Հայաստան Ս. Սահակայ լուսա-  
ւոր պայծառութենէն եւ հայրազութ խնամքէն,  
3-4 տարի արգելելով զինքը Պօրսկաստանի  
մէջ (428-432) :

Պարսիկ բռնութիւնն ըրաւ առաջին քայլը.  
գարեւոր գերութեան շղթային առաջին օղակն  
անցուց այրիացած Հայաստանի փափուկ պարա-  
նոցը, երբ հայ թագաւորի փոխանակ՝ պարսիկ  
մարզպան մը դրաւ վռամ. իսկ Ս. Սահակայ  
նման աստուածարեալ հայրապետի մը փոխանորդ-  
գրաւ չարալեզու Սուրմակ անունով երէց մը, որ  
երկար ժամանակ չկրցաւ բազմիլ սուրբին գահուն  
վրայ, ոսկից աներևոյթ հուր մը վառեցաւ,  
այրեց լափեց զինքն եւ իրեն յաջորդ պիղծ ու  
զեղծ Բրքիշուն, որ ստկաւ ժամանակէ հալածուե-  
լով իշխաննիրէն եւ ժողովրդենէն, դարձեալ  
խնդրեցին նախարարներն իրենց գլխաւոր եւ  
անձնանուէր հովիւը Ս. Սահակ : Բայց երբ  
վռամ կասկածելով հայրապետին անխորհախ  
հաւատարմութեան վրայ, կիսկատար եւ թերի  
իշխանութիւն մը կ'ուզէր աւանդել իրեն, սոսկ  
ներքին եւ հոգևոր կառավարութիւն մը, իսկ բուն  
առաջնորդութիւնը Շմուէլ անուամբ մէկու մը  
ձեռքը յանձնել, այն ժամանակ կանգնեցաւ ա-  
տենին մէջ Ս. Սահակ, եւ այնպիսի վեհմ՛, ազ-  
գու եւ պերճաբան լեզուով ցըցոց թագաւորին  
եւ մեծամեծներուն իր քառասուն տարիէ աւելի  
ըրած հաւատարիմ ծառայութիւնները, եւ փո-  
խադարձ անոնց ապերախտութիւնը եւ զինքը

անվարձ թողուլը, որ ամէնքն ափշած պապսնձած իրարու երես կը նայէին. ամէնքն ալ փոքրկացան դիմացը, ամէնքն ալ սեցան շլացան անոր ճառագայթարձակ պայծառութենէն. մինչև թագաւորն անգամ հիացած և պատկառած անոր անվախ և քաջախօս լեզուին վրայ, հրամայեց գանձեր եւ պարգևներ տալ իրեն: Այլ Ս. Սահակ մերժելով ամէն պարգև և գանձ, խնդրեց վռամէն որ հայ նախարարներուն պատուոյ և իշխանութեան Գահնամակը հաստատէ դարձեալ, և Արշակունեաց խնամի եղող իշխանաց կալուածներն ետ դարձնէ: Կատարեց վռամ հայրապետին բոլոր խնդիրները, և անոր թոռն ալ Ս. վարդանը՝ հաստատեց Մամիկոնէից տէրութեան և Հայոց սպարապետութեան պատուոյն մէջ: Յաղթանակով դարձաւ Ս. Սահակ իր աթոռը, բայց քիչ ժամանակէն թողլով զայն, առանձնացաւ Բագրևանդ գաւառին մէջ, Ս. Յովհաննու ուխտատեղին, աղօթից և ճրգնութեանց պարապելու, ազգին ընդհանուր հոգևոր հոգաբարձութիւնը յանձնելով իր հոգեկցին՝ Ս. Մեսրոպայ. բայց առանց թողլու բոլորովին իրեն սիրելի ազգը, որուն վրայ կը սփռէր տակաւին հայրենի գութը և խնամքը, խրատելով և վարդապետելով դարձեալ առաջուան նման:

Ս. Սահակայ արգելանաց միջոց կատարուեցաւ Եփեսոսի սուրբ ժողովը (յամին 431). սակայն Նեստորի ժանտութեան սերմանիքը սակաւին տարիներով կ'աճէին և կը վրդովէին փոքր Հայոց սահմանները. մանաւանդ անոր վարժապետին, Թէոդորի Մոպսուեստացւոյ գրեանք, որոնք ուրիշ հերետիկոսաց դէմ գրուած ըլլալով, արտաքսապէս ուղղափառութեան երևոյթ ունէին: Այս առթիւ այլևայլ թղթակցութիւններ ունեցաւ Ս. Սահակ՝ Մելիտիոնոյ Ակակ եպիսկոպոսին եւ Պոլսոյ Պրովկոս հայրապետին հետ. և յետինս՝ անոյշ և սրբազան ոճով պատասխանելով մեր շը-

նորհնազարդ և ծերունի հայրապետին, այսպէս կը գրէ. « Երանի որ հանապազորդ լինիցին ի քաղցրահայեաց տեսիլ աստուածագեղ երեսացդ »: Այս թուղթերէս զատ Ս. Սահակ ունի նաև ուրիշ գեղեցիկ և երկար վարդապետական նամակներ ալ՝ նոյներուն կամ ուրիշ անձանց գրած, մահուանէն 2-3 տարի առաջ, որոնց մէջ կը փայլի հաւասարապէս ծայրագոյն իմաստութիւն, խորին աստուածաբանութիւն և աստուածաբեալ հոգի:

Նոյն միջոցները պատահեցաւ և Շմուէլի մահը, որ սաստիկ ազահուլթեամբ զգուելի եղած էր արդէն բոլոր ազգին. ասոր մահը յարմար առիթ համարելով նախարարները, դիմեցին առոտս Ս. Սահակայ, ներումն խնդրեցին իրենց անխորհուրդ գործին համար, և շատ պաղատեցան որ դարձեալ անյիշաչարութեամբ նստի հայրապետական աթոռը: Բայց Ս. Սահակ յանձն չառաւ՝ պատճառելով իրեն ծայրագարդ հասակը և հանդերձեալ կենաց պատրաստութիւնը. բայց երբ շատ թախանձեցին, բացաւ և ցրցուց անոնց իրեն սրտին անբուժելի խոցը, և կարկեց անոնց բերանը՝ ըսելով. « Քահահայանալ ի վերայ տիրանենդ ժողովրդոց ոչ կարեմ »: Պատմեց անոնց ունեցած տեսիլը, և լացուց զանոնք. պատմեց և ազգին վրայ գալիք հայաժանքները և վըշտերը, և ցուցուց անոնց սրտերը և զարհուրեցուց, որուն վրայ կորակոր և սրտաբեկ՝ լռեցին և քաշուեցան իշխանները և մեծամեծները: Արտասուեց ինքն ալ, յուզուեցաւ և գորովեցաւ Ս. Սահակայ ազամանդեայ սիրտն ալ, իրեն սիրելի ազգը այնպէս որբ և անմխիթար թողլուն համար. սակայն աստուածային սիրով և մանաւանդ աստուածային կամաց հպատակութեամբ կնքեց և պնդեց իր սիրտը և աչքը, և « յայնմհետէ ամփոփեալ զինքն յամենայն աշխարհածուփ զբոսա-

նաց, աղօթից միայն պարապէր և վարդապետութեան»։ — Մինք ալ, Հայկակ, եթէ կ'ախորժիս, թողունք և մոռնանք վայրիկ մը հայրենիք և աշխարհ, և թեթեցած բոլորովին ուրիշ մտածութիւններէ և հոգերէ, (վասն զի ուրիշ կերպ անկարելի է), մոռննք Ս. Հօրս մենարանը, հանդիսատես ըլլալու անոր գերաշխարհիկ ճգնութեանց, մշտամոռնչ աղօթքներուն, երկնասպաց հառաչանաց և հեծութեանց, որով գերազանցեց նա և քան իր նախահալքը, ըստ վկայութեան Քերթողհօր, թէ « Սա ամենայն առաքինութեանց հարցն նմանեալ, աղօթիցն մասամբ առաւելեաց.... քանզի մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայն՝ որ յանապատան են»։ Չուզած էր նա մէկ անձին վրայ ծայրագոյն աստիճանի աշխարհահոգ տեսչութիւն՝ ծայրագոյն ներանձնութեան և աստուածտեսութեան հետ. երկու ձեռքով յաջողակ էր գերազանցօրէն, աջով՝ եկեղեցին շէն կը պահէր, կը բարեգարդէր, կը պայծառացնէր. իսկ ձախով՝ ամբողջ ազգ մը և աշխարհ մը կը խնամէր, կ'առաջնորդէր, կը կանգնէր և կը պաշտպանէր։ Սնոր բովանդակ կենաց իննսնամեայ շրջանը թատր մ'եղաւ այլազան հանգէսներու. այն սաստկածուփ և երերուն ժամանակներու մէջ, երբ հայրենեաց լսատափայտը, եթէ կարելի ըլլայ այսպէս բացատրել, անդուլ ծփանաց և ելևէջքի մէջ կը տատանէր, կրցաւ նա անշարժ և անյողդողդ մնալ և բռնել եկեղեցւոյ և հայրենեաց զեկը։ Բայց, աւանդ, երբ անփորձ և տհաս մտքեր կ'որդեցին սուրբին ճարտար ձեռքէն՝ համաշխարհի վարչութեան սանձը կամ բախտը, եղկելիներն իրենց հետ բոլոր աշխարհն և ազգն ալ անկ անդունդի մէջ գահավիժեցին։ Որդեսէր հայրը՝ յետ երկիցս և երիցս կարկատելու և բուժելու անոնց



հասուցած դառն վնասները և վէրքերը, յետ երկիցս և երիցս խրատելու և յանդիմանելու զանոնք, ալ ևս լուաց ձեռքերը, ամփոփեց իր օրհնեալ և պահպանողական աջը, և «նաւն (որ է՝ մեր աշխարհը) ի վտանգի կայր» փշրելու և ընկըղմելու: Տեսաւ զայն Ս. Սահակ, յետին անգամ մ'ալ արտասուեց, և յետոյ փակեց աչքերը. նոյն միջոց Յազկերտի զօրաց արշաւանքը մինչև Բագուան հասնելով, ելաւ անկէ և հեռացաւ, որպէս զի զինուց և պատերազմաց աղմուկները չվրդովեն իր գերերկրեայ լուսթիւնը և հանգարտութիւնը, և աւելի ապահով՝ աւելի խաղաղաւէտ տեղ մը առանձնացաւ՝ Բյուր կոչուած գիւղը: Սրբափայլ ծերունին Աստուծոյ յանձնեց ազգը և եկեղեցին, բաշխեց իր օրհնութիւնը և շնորհքները ձեռասուն աշակերտաց, հոգեսուն զաւակաց և թոռանց. թողուց անոնց անգին և անկապուտ ժառանգութիւն՝ իրեն առաքինութիւնները և մտաւոր երկասիրութիւնները. յետոյ կարծես տիրաբար հրամայեց իր մարմնոյն՝ սըրբատէր հոգւոյն պահարանին, թէ ալ բաւ է, թող որ թուչի հոգիս առ վարձահատոյցն իմ Քրիստոս, ի վայելս անճառ երանութեանց: Եւ թուաւ ոլացաւ իսկոյն աղանակերպ մաքուր հոգին առ Քրիստոս Սեպտեմբեր 5ին 439ին. յիւրաւի «մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող»: Իշխանները և մեծամեծները ազգին, որոնք չճանչցան և չյարգեցին՝ ինչպէս որ վայել էր՝ այնպիսի գերաշխարհիկ անձի մը մեծութիւնը և չքնաղագիւտ ձիւրքերը անոր կենդանութեան միջոց, յետ մահուան՝ ճանչցան եւ ստորջացան, բայց ինչ օգուտ: Էրբոր սուրբին մահուան բօթը հնչեց, ամէն կողմ՝ տիրեց սուգ և ցաւ. խուռն բազմութիւն աղնուական իշխաններու, քահանայից և միանձանց, և սուրբին ա-

չակերտները՝ որոնց պարագլուխ էր Երեմիա սարկաւազապետը, դիմեցին ի հանգիստ սուրբ հայրապետին. և արտասուախառն հեծեծանքով՝ շքեղ հանդիսով տարին սուրբին մարմինը մինչև Աշտիշատ, ուր հանգուցին մաքուր տապանի մէջ. որուն վրայ յետոյ արժանաւոր մատուռ մը և մեծապայծառ եկեղեցի մը կանգնեցին Մամիկոնեանք:

Այսպիսի գերազանց անձի մը մատենագրական արգեանց վրայ հակիրճ ծանօթութիւն մ'ալ տանք, Հայկակ, որ իրաւամբ մեր մատենագրութեան Հայր կը կոչուի: Ս. Հօրս երկատիրութեանց մէջ գլխաւոր և առաջինն է Աւտուաճաւ շունչ գրոց թարգմանութիւնը, զոր յանձն առաւ եւ աւարտեց թախանձանօք բոլոր ազգին եւ թագաւորին, որ և իրեն և մեզի յաւիտենական պարծանաց նիւթ եղաւ, գերազանց և աննման համարուելով քան բոլոր թարգմանութիւնները Ս. Գրոց, զոր ամենքն ալ թագաւորի թարգմանութեանց կը կոչեն: Ինքը յօրինեց նոյնպէս թարգմանաբար Ձեռնադրոշքեանց կարգը, ընդարձակելով զայն և փոփոխելով. յետոյ ձեռնաւորութեամբ Ս. Մեսրովբայ՝ Մաշտոց կոչուած եկեղեցական ծէսերուն և պաշտամանց դրքին ազօթքներուն մաս մ'ալ ինքը շարադրեց. նոյնպէս յօրինեց Աշխարհարադի կարգը. իսկ Քահու նայաքադը և Հոգեհանգիստը ասորերենէ թարգմանեց Ս. Եփրեմայ ազօթքներէն: Իսկ այն վեսս, ճարտարահիւս և քաղցրանուագ շարականներն Առագ շարաքոշ՝ (ի բաց առեալ մէկ բանի շարականներ կամ օրհնութիւններ), Ս. Սահակայ վրսեմ և արգասաւոր հանճարին արդիւնք են, որոնց մէջ ըստ պատշաճի և գեղեցիկ կերպով յարմարած են իմաստից և նուիրական օրերու

յիշատակներուն՝ այն տխուր և անողշ, մանաւանդ թէ սրտազրեցիկ եղանակները: Ճաւնագրքի աղօթքներուն ալ առաջին և գլխաւոր հեղինակ Ս. Սահակ կը համարուի. ունի նաև ճոխ և հոգեշունչ աղօթքներով հիւսուած Պատարագամատոյց մը: Այս ամէն աղօթքներէս դուրս՝ ունի իր սրգեռէր սրտին, և հովուական պաշտաման արդիւնքները՝ խրատք և յորդորք և կանոնք առ Եպիսկոպոսունս, միանձունս, քահանայս և առ բոլոր եկեղեցական դասակարգս ուղղեալ, որոնց մէջ իմաստից գեղեցկութեան, լեզուին յատակութեան և վսեմութեան հետ՝ կը փայլի անոր գերիմաստ միտքը և հանճարը, յստակ և եռանդուն սիրտը, ճշմարտասէր և զօրաւոր հոգին. իսկ անոր վարդապետական թուղթերը յիշատակեցինք արդէն և աւելորդ է կրկնել հոս: Ուստի լռենք, Հայկակ, այսպիսի գերազանց անձի մը վրայ ալ աւելի գրելէն և խօսելէն. և մտղթենք սուրբէն, որ անպակաս ընէ մեր աղգին և աշխարհին վրայէն իր հայրենի խնամքը և պահպանողական աջը:







Ս. ԲԱՍԻԼՈՎԵՐ

## Ս . Մ Ե Ս Ր Ո Վ Բ

**ՅԵՏ** հանդիսատես ըլլալու մինչև հոս, Հայկակ, պատերազմներու, մեծամեծ շահատակութեանց, փառաւոր և շռուաչուն արարքներու, արդյանկարծ պիտի գտնենք զմեզ Տարօնի լեռներուն և քարանձաւներուն մէջ, ուր պիտի լսենք երգոց և օրհնութեանց քաղցր ներդաշնակութիւն մը, պիտի նշմարենք երփնագոյն ծիրանեփայլ ամպ մը խունկի, աղօթից և հառաչանքներու, որ երկինք կը բարձրանայ: Ե՛կ ուրեմն, մօտեցի՛ր, ո՛վ հայրենասէր հոգի, որ տեսնես թէ ո՞վ է այս խորհրդաւոր անձը... անձ մը՝ որ բոլոր կեանքը արքունեաց և բարձրագոյն պաշտամանց մէջ անցուցեր է, անձ մը՝ որ զէնքերու և զրահներու մէջ, թերևս պատերազմներու մէջ ալ շատերէն աւելի գերազանց հանդիսացեր է: — Ահա կը թռչի, կը սաւառնի մենասէր տատրակը՝ Տարօնի շինաւէտ և մարդաձայն կողմերէն՝ անձայն և ամայի բարձունքներուն վրայ Սիւնեաց աշխարհին. կ'երթայ յետոյ Հայոց գինեւէտ Գողթն գաւառը, անշուշտ խրատելու և վարդապետելու ժուժկալութիւն և զգաստութիւն այն զբօսասէր և կենցաղասէր մարդիկներուն:

Այդ անձը, Հայկակ, Ս. Մեսրոպ կամ Մաշտոց վարդապետն է, Տարօն գաւառին Հացեկաց գիւ-

զէն, վարդան անունով մէկու մը որդի, ծնած սակաւ մի յառաջ քան սուրբն Սահակ (352—353)։ Մանուկ հասակէն մտավարժ և քաջուսումն ըլլալով, փութով զարգացաւ և ուսաւ յունական լեզուն և դպրութիւնը. այն դեռափթիթ տարիքէն՝ կը փայլէր վրան վարդապետական հոգի մը, և զարմանալի ցոյցեր և նշաններ կու տար տեսնողներուն իր ապագայ մեծութեան։ Աւելորդ է պատմել՝ թէ ինչպէս զարմանալի յաջողակութեամբ և գերազանց հանճարովը յանկարծ սովորական վիճակէ մինչև դերագոյն աստիճաններուն բարձրացաւ. նախ մեծին Ներսիսի փղջրաւոր եղաւ, և անոր վսեմական մահուան միջոց ըսածները և տեսածները աւանդեց յիտիններուն. վերջը արքունեաց մէջ մտնելով՝ քարտուղար եւ դիւանապետ եղաւ, լաւ թարգմանիչ և գրիչ ըլլալով։ Մտաւ նաև զինուորական ասպարէզին մէջ, յորում յառաջադէմ եղաւ շատերէն աւելի և սիրելի՝ իր ստորակարգ հպատակներուն. միով բանիւ, ճարտար և յաջող եղաւ զէնքի և գրչի մէջ, քաջ և արի թէ երկնաւոր և թէ երկրաւոր հանդէսներու մէջ։ Վերջապէս քանի մը տարիէն զզուելով աշխարհիս առերևոյթ շքեղութենէն և յեղյեղուկ բախտէն, թողուց զէնքը և պատմուճանը, — միայն գրիչն իրեն անբաժան ընկեր պահելով, — հրաժեշտ տուաւ արքունեաց, պատերազմական դաշտի, մէկ խօսքով բոլոր աշխարհիս, և առանձնացաւ Տարօն գաւառին մէջ աստուածխոհութեան և ճգնութեան պարապելու համար։

Ժողովեց շուրջը խումբ մը իրեն նման տատրակներու՝ սրբասէր աշակերտաց, որոնց հետ միաբան՝ կ'ենէր և կը բարձրանար սրբութեան և կատարելութեան ճանապարհին մէջ։ Յիրաւի սաղմոսին այն անուշ խօսքն ո՛ւր աւելի գեղեցիկ

և պատշաճ կերպով կը յարմարի՝ քան այս տեղ.  
«Ձի՛ բարի կամ զի՛ վայելուչ, զի՛ բնակին եղ-  
բարք ի միասին » . ահա խաչակիր և փշապսակ  
ճգնաւորներու լուսերամ՝ դաս մը, որ չէ թէ  
մարդկանց՝ այլ հրեշտակներուն իսկ զարմանք կը  
պատճառէ :

Եւ ահա տարօնեան լուսաթև արծիւը՝ իրեն ա-  
շակերտներն առած կը թռչի կ'երթայ Սիւնեաց  
կողմերը, ուր կը տեսնէ երկնքի համար ուրիշ  
լուսագոյն որսեր, Քրիստոսի համար կարևոր  
պատերազմներ ստույթեան, տղիտույթեան և ուրիշ  
ազգի ազգի ախտերու դէսուկ՝ իջնէ Գողթն գաւառը,  
ընդ առաջ կ'ելլէ տեղւոյն բարեպաշտ իշխանը  
Շամբիթ և սիրով կ'ընդունի Աստուծոյ ծառան .  
կ'աշխատի հոն Ս. Մեսրովբ իրեն աշակերտնե-  
րով, կ'ուսուցանէ տգէտներուն Աստուծոյ ճանա-  
պարհը, կը քարոզէ մոլորելոց Քրիստոսի հա-  
ւատքը, հեթանոսական սովորութիւնները և մնա-  
պաշտութիւնները բնաջինջ կ'ընէ ժողովրդեան  
սրտէն և նոյն կողմերուն նոր լուսաւորիչ մը  
կ'ըլլայ . աղօթքով և սրբակրօն վարքով դեները  
կը հալածէ, և իրեն գործերով կենդանի օրինակ  
կ'ըլլայ ամէն առաքինութեանց :

Ս. Սահակ և Ս. Մեսրովբ, սիրալիր ամուլք եւ  
իրարու աջակիցք միշտ ամէն բանի մէջ, թէպէտ  
և ունէին գերազանց սրբութիւն և գիտութիւն,  
ունէին այնչափ կամք և զօրութիւն՝ որ կրնային  
իրենց միմապատ և տգիտութեամբ կաշկանդուած  
ազգը լուսաւորել և զարգացնել . սակայն, ինչպէս  
ըսինք, նոյն բանին ուրիշ կարևոր միջոց մը կար  
որ կը պակսէր, այն է՝ ազգային լեզուի դպրու-  
թիւն : Այս բանիս համար ստիպուած էին օտար  
լեզուներ ուսանիլ թէ աշխարհականք և թէ եկե-  
ղեցականք, իրենց քաղաքական կամ սրբազան  
պաշտամունքը լաւ կատարելու համար . և միթէ



ամէնքն ալ ունէին հաւասար յաջողութիւն եւ դիւրութիւն ուսանելու։ Այս դժուարութիւնս ահա շատերուն անհոգութեան պատճառ էր, միանգամայն կրօնից և գիտութեան զարգացման մեծապէս արգելք կ'ըլլար։ Այս ամէն բաներս խորհրդածելով Ս. Մեսրովբ, եւ անհրաժեշտ հարկ համարելով ազգային բնիկ գրերու պէտքը, նախ աղօթքով Աստուծոյ ապաւինեցաւ, ուսկից զօրացած դիմեց Ս. Սահակայ (յամին 403), որ նոյն միջոցին այն խնդրոյն համար խորհուրդ կ'ընէր եպիսկոպոսաց ժողովով։ Եւ որովհետև Ս. Սահակ բոլոր ազգին հոգևոր հոգը վրան առած էր, Ս. Մեսրովբայ յանձնեց այս խնդիրը. թագաւորին ալ ազաչեց որ կրցածին չափ օգնէ եւ ձեռնառութիւն ընէ գործոյն յաջողութեան համար։

Բարեպաշտ և ուսումնասէր թագաւորը վռաչապուհ՝ զանց չըրաւ իր կողմէն ամէն նպաստ և օգնականութիւն Ս. Մեսրովբայ՝ արքունի գանձով և իշխանութեամբ։ Իրեն և Ս. Սահակայ յանձնարարական թղթերով ուղարկեց զինքը Միջագետք, ուր լսե՛ր էին թէ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մը քով հայերէն գրեր կը գտնուին։ Գնաց Ս. Մեսրովբ և գտաւ իրաւցնէ անոր քով հայերէն կոչուած կամ համարուած գրերը եւ Հայաստան բերաւ, որուն վրայ թագաւորը և Ս. Հայրապետը շատ ուրախացան։ Բայց անոնց ուրախութիւնը ծիրանի գօտիի պէս փայլեցաւ պահ մը և իսկոյն փարատեցաւ, երբ յետ երկու տարի անդուլ աշխատելու՝ տեսան որ Դանիէլեան նշանագիրները հայերէն ճովա լեզուին արտասանութեան համար անյարմար և անբաւական էին։ — Բայց թէ ի՞նչ գրեր էին արդեօք Դանիէլեան նշանագիր կոչուածները, ի՞նչ վիճակի մէջ, ուստի՞ մնացած կամ եկած, ի՞նչպէս ասորի եկեղեցաւ։

կանի մը քով կը գտնուէին, և այլն, այսպիսի նուրբ և երկար խնդիրները մատենագրութեան և բանասիրաց թողլով, փութանք մենք, Հայկակ, Ս. Մեսրոպայ հետ՝ անցնինք համառօտիւ և թեթեակի այն բոլոր հնարները, սաժանելի ուղեւորութիւնները, անոր սրտին տազնապները ընդ մէջ յուսոյ և անյուսութեան, և երթանք մինչեւ Սամուսատ քաղաքը առ մեծանուն Հռուփինոս գրիչը, աշակերտ Իպիփանու, ուր երկնաւոր լուսով և հնարիմաց ճարտարութեամբ գտաւ Ս. Մեսրոպ իր և մեր փափաքելին (յամին 406)։ Յետոյ Հռուփինոս ճարտար մատամբք իւրաքանչիւր գրերուն կամ տառերուն այն ձևերը սուաւ, ինչ կերպով որ կ'առաջնորդէր կամ ցոյց կու տար իրեն Ս. Մեսրոպ, որոնք հիմակ մեարդութեան կամ երկարագիր կը կոչուին։ Երբ քաղաքին մէջ, տակաւին Հայաստան չվերադարձած, փորձ մ'ըրաւ սուրբ վարդապետը՝ Սողոմոնի Առակաց գիրքը հայերէն թարգմանելու, և փորձն ըստ ամենայնի յաջող գնաց։ Այնուհետեւ առաւ խնդութեամբ Ս. Մեսրոպ աշակերտները եւ այն ցանկալի գանձը՝ փութաց Հայաստան. եւ կարելի է, Հայկակ, նկարագրել հոս մեր հայրենեաց համաշխարհի ուրախութիւնը, երբ լսեցին այն հրաշալի գիւտին պատմութիւնը և Ս. Մեսրոպայ գալուստը։ Թագաւորը, կաթողիկոսը, իշխանք, և բոլոր աշխարհը փութացին ընդ առաջ ելլել և սրտատրոփ կը սպասէին Ս. Մեսրոպայ, երբ յանկարծ Ռահ գետին մօտերը իրարու հանդիպեցան։ Հոն շուշանափայլ երամբ տղայոց և օրիորդաց՝ քաղցրաձայն նուագներով և ծափաձայն ուրախութեամբ, դափնեայ և վարդի պսակներ կը սփռէին երանելոյն ոտքերուն ներքեւ։ Բայց պսակներէն աւելի՝ սրտալիր և գորովական համբոյրներով կը պճնէին սուրբին ձեռքերը

և ուղբերը, որ իբրու նոր Մովսէս մը՝ աստուածագիծ տառերու տախտակները բռնած՝ ինչպէս թէ Սինէական լեռնէն իջնելով՝ կը մտնէր յաղթանակով հայրենիք։ Աշակերտք և սուսուցիչք միանգամայն կը խզէին յոյն և ասորի լեզուաց դարևոր գերութեան շղթաները, կը վշտէին օտար այբուբենից պնակիտները, կը հնչէին եկեղեցիներու մէջ հայրենատուր բարբառով քաղցրալուր երգեր և օրհնութիւններ. արքունի վրձիւները և հրովարտակները, հայրապետական կոնդակները, աղօթից գրքերը նոր փայլ մը կ'առնուին, նոր գեղեցկութիւն և քաղցրութիւն մը կը ղգենուին։

Սակայն հայերէն տառերու և լեզուի գլխաւոր նախկին գործածութիւնը Ս. Գրոց թարգմանութեան մէջ եղաւ. որուն նախ ինքը Ս. Մեսրոպէ տալով առաջին ճաշակը, վերջը գլխաւոր գործակիցն և աջակից եղաւ սուրբ Սահակայ նոյն Գրոց թարգմանութեան։ Սակայն Ս. Մեսրոպէ չթուոց անով իրեն աշխարհաքարոզ վարդապետի կեանքը. կը շրջէր ամէն տեղ, կ'ուսուցանէր անընդհատ, կը վարդապետէր անձանձիւր, խումբ խումբ աշակերտներ կը ժողվէր, ամեն տեղ հայերէն լեզուի և այլևայլ գիտութեանց վարժարաններ կը բանար, յունական ճեմարաններ և լիկէոններ կը հաստատէր։

Ըուսափիւռ ջահ մ'էր Ս. Մեսրոպէ, որուն նշոյլները կը հասնէին մինչև շրջակայ աշխարհները. վիրք և Աղուանք իրարու ձեռքէ կը խլէին զինքը, որոնց համար ալ նշանագրեր հնարեց եւ անոնց լեզուով թարգմանել տուաւ Ս. Գիրքը. դպրոցներ և ուսումնարաններ հաստատեց այն տեղերուն մէջ, և իրեն աշակերտները ուսուցիչ և վարդապետ թողուց հոն։ Սուրբին հրաշալի համբաւը մինչև Բիւզանդիոն հասաւ՝ փոքր թէնդոս

կայսեր և Ատտիկոս հայրապետին ականջը, և կը բաղձային տեսնել զինքը, ինչպէս որ առիթն ալ չուշացաւ, երբ հետը առած Ս. Սահակայ թոռնիկը՝ կարմրափայլ վարդանը, անոր յանձնարարութեամբ կայսերանիստ քաղաքը գնաց, ուր մեծաշուք սիրով հիւրընկալեցին զիրենք կայսրը և հայրապետը, պատուեցին և մեծարեցին, և ակումբիտ պատուանունն ալ տուին իրեն, որ ծայրագոյն վարդապետութեան աստիճան էր: Ընդունելի եղաւ անոնց նոյնպէս իրեն խնդիրքը, և հաւանեցան և գրեցին որ Ս. Սահակ հովուէ յունաբաժին Հայերը, և հոն ալ վարժարաններ հաստատեն հայերէն դպրութեան: Այս տեղ ալ Ս. Մեսրոպայ առջև նորագոյն և ընդարձակ ասպարէզ մը բացուեցաւ, ամէն կողմէ յաջողակ և փութաջան տղայոց բազմութիւն մը ժողովեց, յարքունուստ դարման և ոռճիկ հաստատել տուաւ անոնց համար, որպէս զի անզբաղ ուսմանց պարապին, ուր ինքն ալ անձանձրոյթ և ժիրաժիր կ'ուսուցանէր և կը վարդապետէր: Ասոր հետ միանգամայն Ս. Մեսրոպայ գլխաւոր ջանքն եղաւ՝ թորթորիտն կոչուած աղանդաւորները անաչառ կերպով քննել, դատել և պատժել, եթէ հարկ ըլլար, ինչպէս որ պատուիրած էր իրեն Ս. Սահակ:

Աստուածաշնորհ վարդապետը, ինչպէս կը վրկայէ անոր վարուց վայելչագիր պատմիչը, բոլոր կենօք չափ՝ ամառ ձմեռ՝ գիշեր ցորեկ կը քարոզէր և կը վարդապետէր, նմանելով երկնաւոր վարդապետին, մոլորեալները կը դարձընէր, տըգէտները կը լուսաւորէր, իշխանները կը խրատէր կամ կը յանդիմանէր՝ ինչպէս որ հարկը պահանջէր, հարուստներուն և աղքատներուն հաւասար կը քարոզէր, մանաւանդ թէ վերջիններուն վրայ աւելի գութ և գորով կը ցուցնէր:

Քանի՛ քանի անգամ բանտերը մտնելով՝ մերթ կապելոց շղթաները կ'արձակէր կամ կը թեթեղցնէր, մերթ բանտերէն ալ կ'ազատէր, անիրաւ մուրհակները կը պատռէր, և ամէն տեսակ չարութեանց դէմ՝ իբրու ամբարտակ մը կը կանգնէր: Ո՛րչափ անգամ կարօտելոց հաց եւ զգեստ կը բաշխէր, աղքատներուն յարկ և ապաւէն կը ճարէր, լքելոց յոյսը և ուժը կ'արծարծէր, վշտացելոց սիրտը երկնաւոր սպեղանիով կը բուժէր: Համատարած և աշխարհահոգակ հայր մ'էր ամենուն, միանգամայն առաջնորդ և օրինակ միանձանց. հոգւով և սրտով՝ մենաբաններուն մէջ կը ճգնէր, հրեշտակներուն հետ կը կենակցէր, Աստուծոյ հետ կը խօսակցէր. իսկ մարմնով՝ հոն էր ուր որ հարկը կամ հայրենի դուժը կը պահանջէր, հոն կը փութար և կը հասնէր՝ ուր որ շնորհաց կամ հրաշքի պէտքը կար:

Խոտարուտ, անսուաղ և գետնախշոյի տքնութեամբք կը տանջէր իր սրբասուն մարմինը. լըուութեան մէջ անգամ արգեամբք և դործով կը քարոզէր ասաքրինութիւնը, իսկ եթէ խօսէր՝ սրտին բոցերով կը վառէր ուրիշներուն սրտերը առաքրինութեան սիրով: Աւելորդ է երկնցնել, Հոյկակ, և անկարելի իսկ՝ մանրամասն նկարագրել այն բոլոր ճգնութիւնները, որոնք մեր ողբերգակ գողթնացի Մուսային համեմատ Չարհոռեցուցանեն վնարմեոյս քնուրթիւն, վասն զի սա առաւել գոսւռ ճգնութեանց մասին քան բոլոր իր նախնիքը. և ո՛վ որ կը փափաքի, կարող է ընթեռնուլ կորեան հրաշալի նկարագիրը:

Սակայն ճգնութիւններէն աւելի՝ մաշեցուցին երանելոյն կեանքը և սիրտը՝ Ս. Սահակայ մահուան վրայ ունեցած տխրութիւնը և սուգը. վասն զի երկուքը՝ իբր անբաժան ամուլք, ինչ-

պէս ըսինք, և կամ իրր կրկին հոգիներ և թևեր մէկ մարմնոյ մէջ, միասիրտ և միաբան կը դիմէին և կը վերանային սրբութեան և գիտութեան ծայրը: Ս. Սահակայ մահուընէն վեց ամիս վերջը, Այրարատ գաւառի Նոր-Քաղաքին (վաղարշապատու) մէջ, յետ թեթև և սակաւատև հիւանդութեան, անդորր և երջանիկ մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս (յամի 440): Բայց նախ քան երջանիկ ննջումը, թեթևցած ամէն ցաւերէ եւ զուարթացած հոգևով, կանգնեցաւ մեծահաւատ և մեծահոգի վարդապետն իր ձեռասուն աչակերտաց խմբին մէջ, օրհնեց զանոնք, խրատեց և քաջալերեց, տուաւ յետին սիրալիր ողջոյնները, փակեց աչքերը և տեսաւ իրեն պսակիչը Քրիստոս: Նոյն պահուն շողաձև սքանչելի լուսաւոր խաչ մ'երևցաւ երկինքը, որ տևեց մինչև երանելոյն թաղման վերջը, զոր տեսնելով աչակերտները և բազմութիւն հաւատացելոց՝ օրհնեցին զԱստուած և սուրբը: Յետոյ երկու գլխաւոր նախարարք՝ Հմայեակ և վահան և ուրիշ դասք ժառանգաւորաց, քահանայից, միանձանց և բլւրաւոր ժողովրդեան, սաղմոսներով և երգերով, ջահերով և լուցեալ մոմեղէններով Օշական գիւղը տարին, և փառաւոր շքեղութեամբ թաղեցին իրեն համար պատրաստուած դամբանին մէջ, որուն վրայ, (յամի 440—441) քաջահաւատ եւ քաջատոհմիկ վահան Ամատունի իշխանը՝ հրաշալի և փառաւոր տաճար մը շինեց, որուն մնացորդք մինչև հիմակ կանգուն կեցեր են:


Ս. Մեսրոպայ գրաւոր երկասիրութիւնք արդէն յայտնի են քեզի, Հայկակ. գլխաւորապէս Մաշտոց կոչուած գիրքն է, որուն մէջ պտնուած ծէսերու և եկեղեցական պաշտամանց կարգադրիչ ինքն եղաւ, նոյնպէս անոր մէջ եղած աղօթքներուն մեծ մասը ինքը թարգմանեց և շարադրեց,

Թէ և ազգային պատմիչք նոյնը կ'աւանդեն մեր շատ հայրապետներուն համար: Ս. Գրոց Թարգմանութեան մէջ ալ մեծ մասն ունեցաւ, թէ եւ որոշ չենք գիտեր՝ թէ բաց ի Առակաց գրքէն (որուն ամբողջ թարգմանութիւնը Ս. Մեսարովբայ կ'ընծայուի յատկապէս)՝ որ մասերն անոր սկեզէն գրչին արդիւնք են: Նոյնպէս ինքը յօրինեց Ս'նճ պահոց շարականները, ուրիշ այլևայլ սրտաշարժ և հռանդուն աղօթքներ, ճառեր և խրատական նամակներ, ինչպէս կը վկայէ կորիւն, թէ « բազում թուղթս խրատագիրս և զգացուցիչս ընդ ամենայն գառառս առաքէր »: Արդ այսպիսի գերազանց և հոյակապ անձի մը կհնայ պատմութիւնը չեմ կրնար լաւագոյն կերպով կնքել, Հայկակ, բայց միայն իբեն հոգեկիր աշակերտին խորենացոյ խօսքերը մէջ բերելով. « Գերազանցեալ (սորա) քան զոմենայն որ զայնու ժամանակաւ էին առաքինիք, քանզի ամբարտաւանութիւն և մարգահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ զուով, և երկնայնոցն զարգարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի Կոյր տեսեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւք պայծառ, Կործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերոյ, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ »:









ՂԵԻՈՆԴ ԵՐԷՑ

## ՂԵԻՈՆԴ ԵՐԷՑ

**Ա**ԻԱՐԱՅՐԵԱՆ դաշտին և անոր մէջ կատարուած հոգեխորհուրդ և վսեմ հանդէսներուն տեսարանը կամ վարագոյրը՝ թէպէտ չէի ուզեր բանալ քեզ, Հայկակ, առանց նախնապէս երևան բերելու անոր վեհագոյն և աննման դիւցազը՝ Մամիկոնեան Կարմիրն վարդան, սակայն ստիպուած եմ գոնեա մասամբ միայն բանալ քեզի զայն, մեր սխրալի և պանծալի հօր՝ Ս. Ղևոնդայ վանանդեցի երիցուն վարքը, հոգւոյն աննկուն արութիւնը, անհամեմատ արդիւնքը առ եկեղեցին և առ հայրենիս, և վերջապէս քաջայայլթ նահատակութիւնը համառօտիւ պատմելու համար:

Սա ան է, Հայկակ, որ երբ փոթորկալից ամպերը ծածկեր էին մեր հայրենեաց սլորտը, իբր նոր Մատաթի մը՝ աստուածային և հայրենատուր օրինաց պաշտպան կանգնելով, բոցաշունչ բերանով՝ գերարժարժ սրտիւ և հոգեբուխ խօսքերով հրացուց և հրաշացուց հայրենաուէր հոգիները, վառեց արժարժեց դիւցազանց սրտերը, երկնաուոր նահատակութեան և արութեան կայծեր ցոլացուց ամէն տեղ և վերջապէս փարատելով այն ամպերը, ի դերև հանեց թշնամւոյն չարամիտ հնարքները, կործանեց Պարսից ատրուշանները, և ազատեց եկեղեցին և հայրե-

նիքը սպառնալից վտանգէն: Սակայն որչափ որ այս գերապանծ սուրբիս և հայրենեաց հօրս կենաց միջօրէն փայլուն է, մուտքը կամ կատարածը՝ պայծառ և յաղթական, այնչափ ալ անոր ծնունդը՝ չըսեմ մթապատ՝ այլ անծանօթ է մեզի և անթափանց քօղով ծածկուած:

Դ՛նաւ սա վանանդայ իջևանից գիւղին մէջ, խոհեմազարդ վռամշապուհի թագաւորութեան ժամանակ, և արչակունի հարստութեան խաղաղ վերջալուսոյն միջոց: Մանկական հասակէն խոհականութեամբ և անսոգիւտ վարքով կը փայլէր հասակակցաց մէջ, իսկ ուսումնասէր և փութաջան յառաջադիմութեամբ քան զամէնքը գերազանց էր. ուստի և արժանաւոր կերպով Աստուծոյ պաշտօնէից կարգը մտնելով՝ մատաղ հասակի մէջ քահանայական սրբագոյն աստիճանին արժանացաւ: Այն ատեն տակաւին հայերէն դպրութիւն չըլլալով, ինչպէս կը պահանջէր իր վիճակը և պաշտօնը, հայրենի բարբառին պէս ուսաւ և հմտացաւ ասորի և յոյն լեզուներուն. եկեղեցւոյ նուիրեց հոգւոյն և մտաց նախընծայ երախայրիքը, և եռանդուն սրտին կայտառ կայծակունքը ծաւալեց հայրենակցաց հոգւոյն և սրտին մէջ, հայրաբար գգուելով՝ խնամելով և ուսուցանելով զանոնք: Այնչափ անհամեմատ կերպով բարձր և ժրաջան էր նա քան բոլոր իր՝ երիցակիցները և վարդապետները՝ սրբազան պաշտամանց և աւետարանական քարոզութեան մէջ, որ ականատես պատմիչները լիուլի գրուատելով զինքը կ'ըսեն, թէ էր նա « ընտրեալ և ճշմարիտ ի գործ մշակութեան Աստուծոյ »: Արդ եթէ այսպիսի գերազանց անձի մը լուութիւնն անգամ՝ այնչափ պերճախօս էր և բազմիմաստ, որ յոգնահոյլ ակըսբի մէջ « տեսակութեամբ հրեշտականման երեսացըն կերպարանի » փայլելով, ինչպէս կ'ըսէ Փար-

պեցին, կը հիացնէր տենողները՝ ապա ի՞նչ զարմանք՝ եթէ իրեն շնորհալի խօսքերով կը սքանչացնէր, կը վառէր, կը զմայլեցնէր և կը յափըշտակէր լսողները, և ընդ հակառակն՝ կորովի խօսքերով շանթահար և ամբարշտան կ'ընէր ճշմարտութեան թշնամիները: — Այսպիսի մէկն էր, Հայկակ, վանանդեցի կորովամիտ և քաղցրաբան երէցը, որ նախ քան բիւզանդական վարժարանները յաճախելը՝ մարգարէից և առաքելոց հոգեգուարճ Կարոյններուն մէջ կատարեալ վարդապետ և քարոզիչ եղեր էր:

Երբոր յանկարծապիտ հայերէն տառերու և դպրութեան աւետիսը հնչեց, ո՞վ արդեօք այնչափ խայտաց և պարեց ուրախութեամբ՝ որչափ երիտասարդ երէցը Ղևոնդ, որ իրեն զուարթածաղիկ մնրուօք մտաւ խառնուեցաւ մանկազունից դասակին մէջ, և անոնց հետ միասին կը ժրանար՝ մանաւանդ թէ կը յառաջէր դեռ աւելի մխիլ իմաստից և մատենից խորերը: Միթէ փոքր պարծանք է Ղևոնդայ համար՝ պարագլուխ ըլլալ այն երկարողի և ուշեղ վաթսուն պատանիներուն, որոնցմէ ապա մեծամեծ և նշանաւոր վարդապետներ՝ հայրապետներ և մատենագիրներ ելան. մանաւանդ թէ անոնց երկու անգամ վերակացու կամ վարդապետ ալ դրուեցաւ Ս. Մեսրոպէն: Բայց նա վարդապետական պատիւն ալ՝ գաւազանն ալ մէկդի դնելով, առաւ իրեն ուղևորի ցուպը և կորեան հետ փութաց Բիւզանդիոն. ուր Կոնստնտին իրեն միւս ծանօթ և մրտերիմ ընկերները, անոնց հետ միասին խոյացաւ և արչաւեց քաջարար Կիտութեան ասպարէզին մէջ, ըմպեց և տրբեցաւ հոն կենդանի աղբիւրներէ, գանձեց ժրաբար և մեղուաբար մողին բլիթներուն մէջ իմաստից քաղցրահամ հիւթեր. և յետ եռամեայ պանդխտութեան (յա-

մի 434) դարձաւ իրեն ընկերներով հայրենիք, և գտաւ Ս. Սահակ և Ս. Մեսրոպը Աշտիշատ քաղաքին մէջ. որոնց ընծայաբեր ըլլալով իրենց լրտեսած աւետեաց երկրին ամենէն պարարտ բերքերը նուիրեցին անոնց, կանոնական և եկեղեցական գրքերը, և երեք տիեզերական սուրբ ժողովներուն հաստատած կանոնները և վճիռները, և մանաւանդ Ս. Գրոց ստոյգ և հաստատուն օրինակները:

Այնուհետև Ս. Ղևոնդ կը պտրապի անխոնջ քարոզելու, վարդապետելու, թարգմանելու եկեղեցական գրուածները և Ս. Հարց ճառերը, կը մտնէ այլևայլ ժողովներու մէջ, և իրեն լուսաւոր մտքով ուղղիչ և առաջնորդ կ'ըլլայ ամէն բանի. մանաւանդ յետ երջանիկ փոխման երկու մեծամեծ լուսաւորներուն ազգիս՝ Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ: Նոյն ատեն ազգին և հայրենեաց գերութեան միջոցն էր. ամէն կողմէ մետալուտ վտանգներ կը սպառնային. ներքին և արտաքին երկպառակութիւն տիրեր էր բոլոր ժողովրդեան սրտին մէջ, շատերը իշխաններէն և մեծամեծներէն՝ կէս հրապուրուած և կէս ահաբեկած Սասանական բռնութենէն, բոլորովին ուժացեր էին կրօնից և հայրենեաց ճշմարիտ սէրէն, կամաւ կուրացեր՝ խլացեր էին աւետարանական քարոզութենէն, խոտորեր էին իրենց նախահարց լուսահետ շուղէն: Այսպիսի դժուարին պարագաներու և այլախոհ մարդկանց մէջ՝ խոհական և քաջարանջ մէկը պէտք էր ըլլալ ազգին առաջնորդ, հռանդուն և հնարագէտ անձ մը. և ո՞վ աւելի յարմարագոյն էր ասոր՝ քան երէցս վանանդեցի. ունէր, այո՛, և Յովսէփ կաթողիկոսը (որ տակաւին ձեռնադրութիւն չունէր՝ ժամանանակին հրաշագործ գաւազանը, այլ պէտք էր իրեն քաջոգի և ճարտարարան Ահարոն մը: Խաղաղ

և անդորրաւէտ ժամանակներու մէջ՝ լաւ էր գառնանալը Յովսէփայ, բայց այնպիսի փշոտ և մրըրկոտ ժամանակներու մէջ՝ անհրաժեշտ կարևոր էր առիւծանալը Ղեւոնդայ:

Միհհրներսեհի նենգաւոր և չարագուշակ հրովարտակը՝ բոլոր հայութեան սիրտը սառ և սարառու ձգեց: Եկեղեցւոյ հովիւները՝ աշխարհախումբ ժողովով բան առ բան պատասխանեցին քաջօրէն այն դիւաշունչ սադրանքին և սպանալից խօսքերուն, և «անսուտ երգմամբ եղին վրկայութիւն՝ կենօք և մահու կայ հաստատուն» խրենց հաւատքին վրայ: Եպիսկոպոսաց գեղեցկահիւս և սքանչելի թուղթը՝ թէ և զարմացուց ողջամիտները, այլ չարամիտները զայրացուց, մանաւանդ մոխրաշունչ մոգերը՝ որոնք մրմռալով և մոռնչելով գազանաբար՝ մահ վճռեցին. իսկ օձաբարոյ վզրուկը Միհհրներսեհ՝ գաբարելով և շչելով թոյն թափեց թագաւորին և մեծամեծներուն սիրտը: Ասոր վրայ նենգութեամբ Պարսկաստան կանչուեցան Հայոց և ուրիշ քրիստոնեայ ազգերուն իշխանները և մեծամեծները. ակամայ փութացին գնացին ամոնք կասկածոտ մտքով՝ բայց ոչ բոլորովին յուսահատ:

Սակայն որչափ տխրամտ և տժգոյն գէւջով ետ կը գառնան անկէ՝ յետ երկար ակնկալեաց և պանդխտութեան. և ի՞նչ է արդեօք այն խառնիճազանն սևագունդ խուժանը՝ որ Այրարատայ հարաւ — արևելեան սահմաններէն գրոհ կուտայ մեր աշխորհին վրայ. չըլլայ թէ Երեմիայի տեսածն ըլլայ սա՛ կարսեայ յեռանկաւ, որուն մէջ կը յաղուին եռանդնապտոյտ՝ մահ և ապականութիւն, քանդումն և աւերած: Էլ յիբաւի, չարագոյն քան եռացած կաթնայ՝ եօթն հարիւր մոգերու մոխրաշունչ բանակ մ'է, որոնք բիւրաւոր հեծեալ և հետեակ առած հետերնին, եւ

անոնց գլուխ կեցած գիւտտեսիլ գարշելի մոգ-  
պետը, կ'արշաւեն, կ'ասպատակեն, կու գան  
Աստուծոյ տաճարները քանդելու և ատրուշաններ  
կանգնելու: Բայց յանկարծոյն իբրու կայծ մը  
հնոցէ՛ դուրս կը յուլանայ կը խոյանայ վանան-  
դեցի գիւցազը, և յարձակելով այն խուժանին  
վրայ «միաբանութեամբ առաջին խորհրդակցօքն  
և բազում ուխտիւ... բազում ամբօխ աղապակի  
զօրացն և մոգացն հասուցանէր. քանզի վիրգս  
առեալ՝ վկառափունս մոգացն և սոգպեաին ջար-  
դեցին, փախստական յիւրաքանչիւր վանս արկա-  
նէին»: Դիւրին է երևակայել քաղցած գայլերու  
երամակ մը՝ որ կը յարձակի գառանց փարախի  
մը վրայ, որոնց դէմ՝ կ'ելնէ անձնանուէր հովիւը  
իր տկար զէնքով՝ ցպով, և բազկին ուժով կը  
ջախջախէ կամ կը ցրուէ գանոնք. այսպէս նաև  
քաջ հովիւը Ղեւոնդ անհնարին տագնապի մէջ  
ձգեց այն պարսիկ գայլերը և շատերը սպանեց:  
Յետոյ լուաց բազուկները՝ որոնց վրայ անոնց  
պիղծ արեան կաթիլները կը շողային, մտաւ ե-  
կեղեցի, տարածեց զանոնք երկինք աշխարհիս  
փրկութեան և խաղաղութեան համար. « և ին-  
քեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝  
զտէրունական կանոնն կատարէին »:

Մի և նոյն միջոց երկու լուսաւոր ջահերն ազ-  
գիս՝ Ղեւոնդ և վարդան՝ կրկին յաղթանակ  
կանգնելով, մին՝ ստութեան պաշտօնէից, և միւսն՝  
իր անձին և սրտին վրայ, անթառամ գափնի-  
ներով պսակուած՝ մանաւանդ թէ անմահացած,  
մին դարձեալ խաչով և աւետարանով զինուած,  
իսկ միւսը՝ սուսերով և զրահներով վառուած, կը  
պարզեն գերաթուիչ կրօնից և հայրենեաց դրօշը,  
պատերազմի հրաւէր կը սփռեն ամէն տեղ բոլոր  
հայութեան, որոնց նուիրական դրօշին ներքեւ  
իսկոյն կը վազեն կը փութան սրտատրոփ առա-

քինի ուխտապահները: Ամբողջ ձմեւը և գարունը կը պատրաստուին մեծ և հուշակելի գործին, որով յաջորդաց սրտին և մտքին մէջ անմուռանալի գիւցազներ և նահատակներ պիտի հանդիսանային: — Անցնինք մենք, Հայկակ, ձմեռն ալ՝ գարունն ալ, երթանք մտնենք Շաւարշական դաշտին մէջ, և օդային երաժշտաց նման թառինք պահուրտինք ոստախիտ ծառի մը տերևներուն մէջ, այն յետին հրաշալի գիշերուան գերազանց հանդէսները նկատելու համար:

Ահաւասիկ լուսնի լուսով կը շողշողէ ալէժաղիկ և վեհափայլ դէմքը Ղեւոնդայ. անոր մօտ՝ կարմիր վարդանայ վսեմ՝ և ահեղ դէմքը՝ կարծես հոգւոյն և սրտին հետ վեհ և սրբազան խորհուրդներով զգածուած՝ մերթ կ'այլագունի և մերթ կը ժպտի ծիրանեփայլ. անկէ փոքր ինչ հեռու կը փայլի լուսաւոր գունդ մը, սրբութեան պաշտօնէից գունդը, որոնցմէ կէսք՝ մկրտութեան աւագանին մէջ սպիտակափայլ պատմունճանը կը պեցնեն երախայից, մինչ ուրիշները սուրբ խորհրդով կը վառեն, կը զօրացնեն և կը պատրաստեն հաւատոյ քաջ քաջ նահատակներ: Հոն գերաշխարհիկ սուրբ հօրս Ղեւոնդայ լեզուն հրազինուած Ս. Հոգւոյն շնորհքով՝ կ'արծարծէ, կը զօրացնէ բիւրաւոր զօրաց սրտերը. և եթէ ուրիշ գիւպաց մէջ՝ Ղեւոնդայ «բանքն նման քաղցրութեան մեղու բխէին ի բերանոյ արդարոյն, որ էր լսուպցն ցնծութիւն», ապա այն վսեմ պահուն՝ ո՞րքան ազգու, վեհ և եռանդուն էին արդեօք սուրբին խօսքերը:

Մտաւ նա պատերազմին մէջ, կռուեցաւ քաջարար անօրինաց դէմ՝ իր հոգևոր գէնքով, մինչև վերջը մարտին՝ վառեց և քաջալերեց անդուլ և անընդհատ Հայոց զօրքերը: Բայց երբ տեսաւ թէ ինկան զօրավարները, բանակը ցրուեցաւ,



լքան պատերազմողաց սրտերը և ձեռքերը, նը-  
ւազեցաւ Հայոց թիւը, սրտառուչ ձայնով և հրա-  
ցած շրթունքով կատարեց հանգստեան յետին  
մաղթանքները՝ այն ծաղկաբար ինկած նահա-  
տակներուն վրայ, իրեն գորովալիւր ողջոյնները և  
համբոյրները տուաւ անոնց նուիրական նշխարնե-  
րուն, և ձեռքելով բիւրասր պարսիկ զօրաց եւ  
փղաց գունդերը, ամուր բերդօրէից մէջ ապաս-  
տանեցաւ իրեն քահանայ ընկերներով (յա-  
մին 451) :

Այլ երբ տեսան Ս. Ղեւոնդ և անոր երանելի  
ընկերները՝ թէ բռնաւորաց նենգութիւնը և սուրը  
մինչև ամրոցներուն մէջ ալ մտնելով՝ կը ջարդէ  
և կը սպառէ հայ ազգը, անձնատուր եղան յօժա-  
րութեամբ անօրինաց ձեռքը, և թէպէտ պատ-  
րաստ և յօժար էին ընդունելու մարտիրոսական  
պսակը, բայց չաւ և կարևոր համարելով եկեղե-  
ցւոյ և հայրենեաց օգտին համար՝ յապաղել վայ-  
րիկ մը իրենց նահատակութիւնը, բողոքեցին  
սուրբերն առ թագաւորը. որուն վրայ անօրէն-  
ները ծեծելով զիրենք անխնայ՝ կապեցին ձեռ-  
քերնին և ուղբերնին և ուղարկեցին Պարսկաս-  
տան: Թէպէտ երկար և տաժանելի էր ճանա-  
պարհը, այլ սրբան և ինչպիսի զուարթութեամբ  
կը փայլէին երանելեաց դէմքերը, որոնք այն ծանր  
երկաթի շղթաներուն մէջ՝ հոգեւոր ազօթքով և  
երգերով կը մխիթարէին իրենք զիրենք անմարդի  
և անձայն անապատներուն մէջ, և մանաւանդ  
հանդերձեալ նահատակութեան և երանութեան  
պսակներու յոյսը կը զուարթացնէր զիրենք եւ  
կը թեթեւցնէր ճանապարհին և կապսեղներուն  
ծանրութիւնը: Եւ ահա յանկարծ ամայի սպա-  
ռաժներու միջէն խառնաձայն աղմուկ մը կը հնչէ  
երանելեաց ականջը, երկվարաց և մարգիկներու  
զղրգիւն մը, անախորժ և պիղծ երգերու ար-

ձագանգներ կը լսեն. կը դառնան քահանայք տեսնելու թէ ոյք են. և կը տեսնեն որ մոխրապաշտ սևերես ուրացողներու կարաւանն էր, որոնց գլուխ էր եղկելին վասակ: Ինչպիսի սարսուռ եւ ամօթ պատեց ցրտացած ուրացողներուն վրայ, երբ տեսան կապեալներուն լուսաւոր գունդը. եւ երբ պատահեցան իրարու երկու աննման կարաւանները, վառակ կեղծաւորութեամբ իջնելով Երիվարէն՝ փութաց առ քահանայս և անոնց սրբազան ոտքերը գրկելով՝ կ'ուզէր յուգայական համբոյր մը տալ, որոնց մասնիչ և դաւաճան՝ եղած էր: Ինչպէս արդեօք կը թնդար և կը յուզէր անօրինին սիրտը, երբ «Սուրբն Ղեւոնդ, որոյ անտրտում և զուարթերես միշտ տեսակ իւր, և ախորժական բանիւ լրջմտութեամբ խօսէր երկարս ընդ վասակայ». անշուշտ կարծեց եղկելին՝ թէ անծանօթ էր սուրբին իրեն ուրացութիւնը, և ուզելով բոլորովին պատրուակել զայն, հրաւիրեց երանելիներն այն օրը իրեն հետ ճաշել: Այլ իսկ և իսկ փոխեց Ս. Ղեւոնդ իր քաղցրութիւնը՝ արդարադատ զայրութիւն, անոր մեղրաբան լիզուն՝ հատու և հրեղէն մարգարէախօս լեզու մը դարձաւ, և հեզափայլ տըքերէն կայծակներ կը տեղային ամբարշտին գլուխը, երբ իբրու անգիտանալ ձեացնելով՝ հարցուց սուրբը թէ «Ո՛ր կ'երթաս, Սիւնեաց աէր». և երբ ուրացեալը կափկափելով թոթովեց, «Առ տէրն Արեաց կ'երթամ՝ իմ վաստակոցս վարձքն ընդունելու». որոտաց բոցափայլ վանանդեցի՝ երէցը. «Թէ արդարև դու կենդանութեամբ զգլուխդ ի վերայ ուսոցդ ի Հայս տանիս, ապա ընդ իս Տեառն՝ Աստուծոյ չէ խօսեցեալ», ըսաւ և սուաջ վարեց, ճանապարհը: Ինչ եղաւ եղկելին վասակ այն ահաւոր վճռոյն վրայ՝ զսր լսեց Ս. Ղեւոնդայ մարգարէախօս բերնէն. կարկտահար թաւ

ուամած ծագկի նման խամրեցաւ իսկոյն անոր զուարթափայլ գէւը. բոլոր մարմնով գողաց, և այսահարի նման՝ փրփրած գետին թաւայեցաւ կատաղութենէն և յուսահատութենէն. և վերջապէս ոտք ելլելով՝ գրեթէ ակամայ և անզգայ առաջ կը վարէր ճանապարհը և կ'երթար՝ ուր կը մղէր զինքը աստուածային արգար վրիժուց ոգին :

Սակայն Ս. Ղեւոնդայ համար վերջինը չէր այն վճիռը կամ յաղթանակը. վասն զի Պարսկաստան հասնելէն վերջը՝ պանծալի և հզօր կերպով ատենաբանեց արքունի ժողովին մէջ, կշտափեց կրակապաշտներուն անզգայ յիմարութիւնը, ջախջախեց Միհրնբրոսէի գոռոզացած գլուխը, եւ հուսկ ապա աստուածային նախանձով վառուած՝ այրեց լափեց կրակին ամօթալի պաշտօնեաները, և Նախավկային պէս՝ իրենց գլխաւոր տանջիչը և հալածիչը՝ անօթ ընտրութեան ըրաւ. Երկնաւոր բրարիոնն առնելէն առաջ՝ Ս. Ղեւոնդ ուրիշ սըրտառուչ և գորովաչարժ տեսարան մ'ալ պիտի բանայ մեզի, տալով իր յետին խոնդաղատանաց ողջոյնները առ կապեալ նախարարս Հայոց, մարգարէանալով անոնց՝ երջանիկ ազատութիւն և բերկրալից վերագարձ իրենց ընտանեաց գիրկը, և հուսկ՝ բաշխելով իւրաքանչիւրին իր հայրագութ օրհնութիւնները : Ի՞նչպէս նկարագրեմք զի, Հայկակ, երանելի նախարարներուն սրտաճմիկ զգացումը, գութը և գորովը, երբ կը լսէին Ս. Ղեւոնդայ հրաշէկ սրտէն քան բերնէն՝ այն հրաշալի խօսքերը. որքան և ինչպիսի՛ արտասուք կը ցօղէին անոնց ազամանդեայ աչքերը, երբ կը մտածէին թէ պիտի զրկուէին իրենց աստուածաշնորհ վարդապետին տեսութենէն, պիտի չլսէին անոր քաջալերիչ և հոգեզուարճ ձայնը : Եւ մինչ երկուստեք սէր և խանդաղատանք կը

քաղցրացնէին այսպէս երանելեաց հրաժեշտի վերջին վայրկեանները, և ահա ներս խուժեցին մարդակերպ գազաններ՝ բիրտ և անսիրտ խարտոցաւորները, և սկսան դովել՝ թուպել և ջարդել այն հաստ երկաթները և անուրները սրբոց պարանոցէն, ձեռքերէն և ոտքերէն. և հազիւ կըրցան քակել և կտրել «չարաչար կոտորելով զմարմինս նոցա, որք զահագին ցաւս վշտացն առ ոչինչ համարեալ... աղօթիւք եւ փառաւորելով զցաւացածոյն զՔրիստոս օրհնէին»։ Դեռ յետին անձայն և հոգեխօսիկ ողջոյն մ'ալ, վերջին սիրալիր և կարօտագին հանդիպում մ'ալ աչաց սուրբ քահանաներուն և կապեալներուն, և այնուհետև կը բաժնուին։

Անգուժ դահիճները և դատաւորները կապկըպելով Բիսուսի գառները՝ տարին մինչև անձայն և անմարդի խորերը Ապար աշխարհին, որպէս զի խաւարասէր ջղջիկներու նման՝ անվախ և տնամօթ գործեն ամայի և անլոյս գիշերուան մէջ, ինչ որ ամօթ էր գործել արևու լուսով և բազմութեան առջև։ Ատեան կը կանգնեն, բայց ինչ օրէնքով չգիտեմ... յանցաւորք կը դատափետեն անմեղները և մահապարտ կը վճռեն, բայց ինչ իրաւամբ՝ իրենք ալ չգիտեն... եթէ այսքան մեծեղեուն յանցաւորներ են երանելիքը, ապա ո՞ր և ո՞րք են դատախազները, եթէ ոչ նոյն իսկ դատաւորներու նախանձով սեցած անխիղճ իրդճերը։ Քաջութեամբ առաջ անցաւ Ս. Գեւորդ, որուն հրաշալի լեզուն դեռ բոլորովին չլուած՝ վերջին անգամ մ'ալ հնչեց, յանդիմանեց անմիտ դատաւորաց կուրուժիւնը, անոնց անհեթեթ խօսքերը ծանակեց, կրակի և տրեղական պաշտօնը սուտ հանեց, և թագաւորին անմիտ հրամանը քամահեց։ Եւ մինչդեռ Դենչապուհ զկծած և զայրացած սուրբ երիցուն՝ արգար խօսքերէն՝

Մ. Յովսեփայ և Ռշտունեաց Սահակ եպիսկոպոսին դառնալով կը խրատէր զանոնք որ չլսեն Ս. Ղեւոնդայ խօսքերուն, չհանդուրժեցին երանելիքը դատաւորին այնչափ անմտութեան վրայ, և յայտնապէս ըսին, թէ ինչ որ խօսեցաւ Մ. Ղեւոնդ, բոլորն ալ ճշմարտութիւն է, և թէ իրենք ալ համամիտ են անոր. և այնուհետեւ անարժան համարելով պատասխանուց, լռեցին և Քրիստոսի սիրոյն համար յանձնառու եղան ամէն տեսակ տանջանք և մահ կրելու:


Սուրբին Մ. Սահակ եղաւ՝ որ մահառիթ երկաթին դառն հարուածը ընդունեցաւ, որով սուրբին աջ թիւր հանդերձ աջ ուսովը կտրեցին: Կրնանք երեւկայել թէ ինչպիսի՛ սուր և անտանելի ցաւերով տանջուեցաւ երանելոյն մարմինը, մինչև որ ընկերակցաց նահատակուելէն վերջը՝ դահճին անգութ սուրը կտրելով անոր նոնա գոյն պարանոցը՝ ծիրանեփայլ մարտիրոսներուն դասուն մէջ խառնուեցաւ: Դոյնպէս Մ. Յովսէփ արամահ ըլլալով՝ դահճէն՝ վարդադոյն արեամբ նահատակուեցաւ և թռաւ երկինք պսակապարզ: Իսկ Մ. Ղեւոնդ, որ պարագլուխ էր քահանայական դասուն, և քան ամէնքն աւելի վնասակար և ջախջախիչ կը համարուէր պարսիկ դինին, չարաչար մահուամբ ուզելով տանջել և նահատակել, հանեցին աստուածարեալ ծերունոյն պարեգօօր, գետին ձգեցին սուրբը, և մերթ յորսայս և մերթ երեսն ի վար սկսան քարչել ուժգին կերպով փշոտ և կոպճուտ տեղերուն վրայ, և այնչափ սառտիկ և երկար ժամանակ քաշեցին. այն դիւարախ դահիճները, որ «մինչև զամենայն մարմինս սրբոյն՝ զլանջացն և զթիկանցն քանցեալ քերեցին ի մորթոյն, մինչև ոսկերացն մերկանալ ի մարմնոյն», և յետոյ մնացած կենաց կայծիկն ալ սպառելով, աւանդեց սրբամաքուր հոգին Փրկչին ձեռքը: Ասոնց հետ նահատակուեցան քաջարար

նակ երանելի Մուշէ և Ալշէն քահանայք և Քա-  
ջաջ սարկաւազը (յամին 453)։

Լուսնայ, այո՛, Ս. Ղեւոնդայ հրեղէն լեզուն, բայց  
ոչ քրիստոսազարդ հոգին. փակուեցան մահուամբ  
անոր. պայծառ սկանողիքը, բայց ոչ և մշտավառ  
սիրտը. վասն զի նահատակուելէն վերջն ալ տա-  
կաւին բուն կերպով գործեց նա, մանաւանդ  
թէ հրաշագործեց, ոչ խաչով կամ աջով՝ ինչպէս  
կենդանութեան միջոց, այլ բնութեան սաստով և  
արհաւիրքներով պատուհասեց իրեն դատաւորնե-  
րը, զարհուրեցուց դահիճները և պահապանները՝  
Երկու օր և երկու գիշեր անընդհատ որումունք  
և փայլատակունք ըլլալով, շատ լակ վկայեցին  
տարեհրք անգամ՝ թէ անպարտ էր նահատակնե-  
րուն արիւնը, և Աստուծոյ ընդունելի՛ անոնց  
անձնանուէր զսէր. կիսամեծ բնդարմուցան պա-  
հապանները, այլ արթուններէն աւելի արժանա-  
հաւատ վկայ եղան հրաշքներուն, որոնք երբորդ  
օրը, երբ հանդարտեցաւ բնութեան զայրութիւնը,  
հազիւ յարմար վայրկեան մը գտնելով՝ փախան  
կորակոր, բայ ի մէկէն սր իրօք ճամբարիտ պա-  
հապանն էր երանելեաց մարմիններուն և եւան-  
դուն պաշտօնասէր Քրիստոսի նահատակներուն։  
Երբ փախան պահապանները, ելաւ երանելի Խու-  
ժիկը գիշեր միջոց և կը փնտռէր սրբոց նշխար-  
ները և չէր գտնել, երբ յանկարծ լուսափետուր  
արծիւ մը թռչելով երկնքէն՝ հկաւ և Ս. Ղեւոն-  
դայ մարմնոյն վրայ հանգչեցաւ։ Մօտեցաւ Խու-  
ժիկ լուսոյն, նախ սաստիկ վախով և պատկա-  
ռանքով, և յետոյ զուարթութեամբ և զմայլմամբ՝  
երբ տեսաւ իւրաքանչիւր սրբոց կերպարանները  
անայլայլակ և անապական մնացած, որոնք հրե-  
ղէն կայծերու կամ բոցերու նման կը փայլիլէին  
և անուշահոտ կը բուրէին. ծունր դրաւ, համ-  
բուրեց իւրաքանչիւրը գողգոթուն շրթունքով եւ

գորովագին սրտով, ժողվեց զանոնք խնամքով, և առանձին առանձին մաքուր կտաւներու մէջ ասփոփելով իւրաքանչիւրը, տարաւ այն ցանկայի դանձը և բաշխեց բոլոր հաւատացելոց իրր դեղ կենաց ի բժշկութիւն հոգւոց և մարմնոց, մանաւանդ երանհիլի կապեալ նախարարներուն Հայոց, որոնք արտասուալիր աչքով և գորովով նայելէն և համբուրելէն չէին յագենար, և կը յուսային անոնց բարեխօսութեամբ ազատութիւն գտնել և դառնալ հայրենեաց և սիրելեաց գիւրկը: — Մենք ալ, Հայկակ, աղօթենք և խնդրենք սրտագին Ս. Ղևոնդեանցմէ, որ սնպակաս ընեն միշտ իրենց հլօր բարեխօսութիւնը մեր ազգին վրայէն, որպէս զի միայսժ ճշմարիտ սիրով եւ սրտով, և հաստատուած ուղիղ կրօնքով և ուղիղ հայրենասիրութեամբ, պայծառանայ և յարասեւէ դարուց ի դարս:









ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԱՆ

## Կ Ա Ր Մ Ի Ր Կ Ա Ր Դ Ա Ն

**Չ**ԿՍԹ, Հայկակ, անուն մը, որ այնքան սէր և մեծարանք պահանջէ հայրենասէր անձէ, այնպիսի խորին և գորովալիր հառաչանքներ բըզխեցնէ հայ սրտէ մը, և միանգամայն մեծութեան և արութեան զգացումներ ծնուցանէ, մէկ խօսքով՝ յուզէ և վառէ, հիացնէ և յափշտակէ միտքը և սիրտը, ինչպէս Կարմիր Վարդանայ անունը: Այս զարմանալի անունս չգիտեմ ինչպիսի գիւթիչ զօրութիւն մ'ունի, որ ամենէն ցուրտ սրտերէն ալ՝ (որ չեմ յուսար թէ գանուին) աստուածսիրութեան և հայրենասիրութեան կայծեր և բոցեր կը ցոլացնէ: Երբ ասպարէզ կ'եղլէ Մամիկոնեան դիւցազը, հարկ է որ տեղի տան ամէն ազգաց դիւցազները, վասն զի կը գերազանցէ սա քան զամէնքը՝ թէ՛ ակնուականութեամբ տոհմին, — իշխանական և քահանայապետական երկու գերաստիճան ցեղերու պատաւաստած ծառոյն ակնուազոյն պտուղն ըլլալով, — թէ՛ մարմնոյն, հոգւոյն և մաքին գերագոյն ձիւքերով և բարեմասնութեամբք, որոնցմով լիալի ճոխացած և կատարեալ էր, — և թէ՛ վերջապէս երկնաւոր նահատակութեամբ՝ սրուն հետ միացած էր նաև երկրաւոր արութիւն և գիւցազնութիւն: Ապա որ սիրտ չի թնկար, չի մորմո-

քիւր և չի հառաչիր՝ երբ վարդանայ անունը լսէ. ո՞ր հոգի չի զարթնուր, չի խրախուսուիր և չի փութար Աւարայրեան դաշտը, կարմրաւիւշ Նահատակին ծիրանեգոյն արեան կաթիլները համբուրելու և հաւաքելու, և անոր յետին շունչը՝ եթէ կարելի ըլլայ՝ ամփոփելու հայրենեաց գանձարանին մէջ, անով արծարծելու համար յուրտ և անզգայ հոգիները... Ո՛ւր ես սպա, բամբիւռն հայրենի, ո՞ւր ես փանդիւն. Գողթնեցի. թո՛ղ վահագը, թո՛ղ և Արտաշէս և Սաթիւնիկ, և անքեզի վսեմ՝ տաղերու և երգերու նիւթ՝ վարդան, որ ոչ ծիրանի ծովէ և ոչ կարմիրիկ եղեգնիկէ, այլ մեծ հայրապետի մը շուշանափայլ դասերէն (Սահականուշէ) և ծիրանեփառ իշխանէն Համուկասպէ՝ ժլեցաւ ծաղկեցաւ վարդի նման (ծն. 401—402), և շատ աւելի վեհագոյն հանգիսացաւ քան վահագը. որուն աչկունքը յիրաւի մէկ մէկ արեգակունք էին, իսկ մազերէն և դէմքէն հուր և բոց կը ցլլանար; որուն համար անշուշտ եւ կարմիր կոշուեցաւ:

Սա՛ դեռափթիթ հասակէն եւանդուն և շնորհալից մանուկ մ'ըլլայով, Ս. Սահակ իրեն որդեգրեց զինքը. վարդան միշտ իր աստուածազարգ պապուն քով հանապազորդելով՝ անոր սըրբութեան գրկին մէջ սնու և մեծցաւ, անոր հոգեչահ խրատները հաստատուն կերպով դրոշմեց իր փափկիկ սրտին մէջ, որոնք վերջը ծաղկեցան և առաքինութեան առատ պտուղներ ընծայեցին: Սահակ և վարդան, մին հասունուցած տարիքով, միւսը տակաւին մատաղ, մարդուս հասակին կրկին աննման և հեռաւոր ծայրեր, բայց երկուքն ալ դալար և մշտազուարճ հոգևով նմանք և մերձաւորք, փոխադարձաբար սէր և քաղցրութիւն էին իրարու. Սահակ լոյս էր վարդանայ, և վարդան՝ յոյս էր Սահակայ:

Յամին 421 Ս. Մեսրոպայ հետ Բիւզանդիոն երթալով վարդան, կայսեր և բոլոր արքունեաց առջև քսիրելի և զարմանալի եղաւ իր չքնադա գիւտ կատարելութեանց համար, և փոխանակ հօրը՝ Ստրատելարտ անուանեցաւ: Յունաստանէն դառնալէն երկու տարի վերջը՝ (423ին) երբոր Պարսկաստան գնաց Սահակ առպետին հետ, հոն ալ թագաւորէն Մամիկոնեան տոհմին տէրութիւնն ընդունեցաւ, զոր յետոյ Յազկերտ թագաւորն ալ կրկին հաստատեց 442ին: Բայց քան զասոնք աւելի մեծագոյն պաշտօն մ'ընդունեցաւ, երբ բոլոր ազգը միաբան իրեն յանձնեց թագաւորի տեղակալութիւնը կամ արքունի տան պահպանութիւնը, որով սակաւ ժամանակի մէջ թէ՛ պատուով և իշխանութեամբ, և թէ՛ քաջութեամբ պերագանցեց նոյն ժամանակի քան բոլոր ազգային և օտարազգի նշանաւոր զօրավարները: Նա որ ծաղիկ հասակէն կը պատրաստուէր պաշտպան և ախոյեան հանդիսանալու կրօնից և հայրենեաց, ինչ զարմանք՝ թէ խաղալիկ էին իրեն համար սուր շարժել, զէնք գործածել և նետ նետել. պատերազմի փողն իրեն համար հարսանեաց կամ ուրախութեան թմբուկի ձայն էր: Ո՛վ կրնայ հաշուել վարդանայ յաղթանակները, ոսկի և դափնի պսակները, և այն քառասուն եւ երկու ճակատամարտները, որոնցմէ միշտ անխոց և միշտ յաղթող ելաւ. մաշեցան զէնք և սուսերք այնքան պատերազմներու մէջ, այլ վարդանայ ուժն և արութիւնն երբեք չսպառեցաւ. չկար վայրենի կամ բարբարոս ազգ մը, որ անոր հարուածներուն ներքև ընկճուած չըլլար. չկար աշխարհ մը՝ ուր անյաղթ Մամիկոնեանին անունը սարսափ ձգած չըլլար. վասն զի մինչև խորասանի և Թուրքաստանի անապատին մէջ Մէրու կամ Մէրվիրուտ գետին ասիունքը կը հնչէին

մեր գիւցազլին յաղթանակները : Ապա կրնանք մենք ալ իրաւամբ կրկնել Դաւթի հետ, թէ « Յարենէ վիրաւորաց և ի ճարպոյ զօրաւորաց աղեղն վարդանայ ոչ դարձաւ ունայն յետս, և սուրն Մամիկոնեանն ոչ ամփոփեցաւ դատարկացեալ » . որուն համար նախանձելի և ցանկալի էր երկու մեծ պետութեանց ալ, Յունաց և Պարսից . ինչպէս յետ անոր երջանիկ նահատակութեան ցաւելով կ'ըսէր Յագկերտ թագաւորը, թէ « զայնպիսի քաջ և պիտանի և զվաստակաւորն մեր զՎարդան... և կայսր (Յունաց) և կամ Հոնաց արքայ բռնութեամբ յինէն հանել կամէին . (ես) ամենայն Արեաց ուժովս կուռէի, և չտայի հանգչել, մինչև այսրէն յիս հանէի » : Այլ թէ արդեօք այնպիսի պիտանի և վաստակաւոր անձ մը վարձատրեց նա ըստ արժանոյն, որ քսան տարի հաւատարմութեամբ ծառայեց և իր քէնքով պաշտպանեց Պարսից տէրութիւնը . հարկ չէ ըսել . պատմութիւնն իսկ պիտի ցուցնէ մեզի :

Միհրնբրսեհի չարաթոյն հրովարտակն հասաւ առ Հայս, յորում նենգութեամբ կը հրաւիրէր Հայոց, վրաց և Աղուանից մեծամեծները՝ փութալ անյապաղ արքունի դուռը : Իմացան Հայոց նախարարները թէ չարագուշակ էր այն հրաւերը կամ հրամանը, այլ հարկ էր երթալ . պնդեցին, քաջալերեցին զիրար, երգում ըրին աւետարանին վրայ՝ կենօք և մահու չափ հաստատուն մնալ իրենց սուրբ հաւատքին մէջ . և ողջունելով արտասուախառն գարովանօք իրենց ընտանիքը և սիրելիքք՝ ճամբայ ելան : Հայ նախարարաց մէջ ամենէն նշանաւորներն էին Վարդան՝ սպարապետն ամենայն Հայոց, և Վասակ՝ Միւնեաց տէրն և մարզպան մեր աշխարհին : Հասան Տիգրոն և մասն արքունի պալատը . նախ իշխաններուն ներկայացան և յետոյ թագաւորին, որ սիրով ըն-

դունեցաւ զանոնք բոլոր մեծամեծաց և մոգերուն բազմութեան առջև: Թագաւորը նախ մեղմով եւ անուշութեամբ սկսաւ խօսիլ Հայոց աւագանւոյն հետ. այլ շատ շանցաւ՝ սկսաւ ժանտ և թունալից խօսքեր թափել բերնէն, մերկացաւ համարձակ կեղծուպատիր դիմակը, սկսաւ հայհոյել ճշմարիտ Աստուածը, գովել և բարձրացնել անշունչ և վնասակար հրոյն պաշտօնը և յորդորել զանոնք որ կրակապաշտ ըլլան: Եւ մինչդեռ բոլոր բազմութիւնը երկիւղով սմբած և կծկած կեցեր էին, քաջն վարդան չհամբերելով այս անսանձ հայհոյութեանց՝ վեր ցատքեց, առաջ անցաւ՝ աստուածային փառաց վրէժխնդիր ըլլալու. ցըցուց թագաւորին իր այնքան տարիներու հաւատարիմ ծառայութիւնը և սէրը: Պատրաստ եմ, ըսաւ, կեանքս ալ նուիրել քեզի և թագաւորութեանդ համար, «բայց զօրէնս՝ զոր ուսայ յԱստուծոյ ի մանկութենէ իմմէ՝ թողուլ, և ընդ երկիւղի մարդոյ փոխանակել՝ չէ հնար... ցանկամ՝ մեռանել՝ քան թէ կալ ուրացութեամբ առաջի Աստուծոյ»: Վարանեցաւ, արշեցաւ թագաւորն այս աներկիւղ պատասխանիս վրայ. անշուշտ չէր սպասեր հայ սպարապետէ մը այսպիսի բան լսել. չէր գիտեր՝ զարմունայ արդեօք վարդանայ անվեհեր քաջութեան վրայ, թէ զայրանայ անոր համարձակութեան վրայ. կրակ կտրեցաւ կատաղութենէն, բայց բերանը կարկեցաւ ամօթէն: Այն ժամանակ մէջ մտնելով միւս նախարարները և իշխանք, թագաւորէն քանի մը օր խնդրեցին որ մտածեն այն բանին վրայ. և այսպէս առ ժամն իջուցին անոր բարկութիւնը:

Նախարարները յետ երկար մտածելու՝ թէ ի՞նչ հնարք գտնեն զիրենք և բոլոր ազգը և աշխարհը ազատելու համար այն մօտալուտ վտանգէն, մտածեցին որ պահ մը ծածկելով իրենց հաւատ-

քը կամ թէ առ երեսու ուրացութիւն կեղծելով՝ խաբեն թագաւորը և ազատին անոր խորամանկ թակարդէն, դառնան առ սիրելիս, և սուրբ աւետարանին համար պատերազմելով՝ պաշտպանեն եկեղեցին և հայրենիքը՝ վարդան՝ խուլ և կոյր ձեւացուց ինք զինքը՝ անոնց շար խորհուրդը չլսելու և չտեսնելու համար. քանի՛ տնգամ պատգամաւորներ գացին անոր, այլ անկարելի էր դրդուել անոր անսեղիտալի հոգին. փորձեց՝ աշխատեցաւ համոզել զինքը անոր սիրելին Արտակ, բայց նա անդրդուելի մնաց իր սրբաշնորհ հարց հաւատքին վրայ. մինչև վերջապէս Ս. Գրոց վկայութեամբք, հաստատուն խոստմամբք և երդմամբք փոքր մի հաւանեցուցին երանելի սպարապետը՝ որ առժամին տեղի տայ. Ուստի նախարարները միաբան մտան մխրանոցը, ուր ոմանք իրենց գլխուն հետ՝ սրտերնին ալ՝ հոգինին ալ խոնարհեցուցին յօժարութեամբ անշունչ հրոյն առջև՝ անցաւոր երկիւղի համար կամ սնոտի փառաց ակնկալութեամբ. այլ շատերը զզուելով ներքուստ՝ հազիւ թէ զլուինին սակաւ մի խոնարհեցուցին՝ անմիտ թագաւորը խաբելու համար. իսկ վարդան... վարդան հազիւ կէս ոտքով մխրանոցին սեմը կոխած, աչքերը փակած և զլուխը մէկգլի դարձուցած՝ որ չի տեսնէ այն զզուելի պաշտօնը, սիրտը և հոգին առ Աստուած վերացուցած՝ իր և ուրիշներուն ակամայ յանցանաց ներումն կը խընդրէր :

Հարկ է ըսել, թէ հայ նախարարներուն այս ակամայ և առ երեսու երկրպագութիւնը կրակին՝ որչափ ուրախութիւն պատճառեց թագաւորին և ըտրու պարսիկ մեծամեծներուն. հանդէսք և մեծահայ խնջոյք, զոհք և նուէրք յաջորդեցին իրարու այն օրուան յաջողութեան համար. կարծեցին յիմարտները թէ այն օր հաստատուեցաւ բո-

լորովին իրենց թագաւորութիւնը, մինչդեռ ընդհակառակն նոյն օրը հաստատուն կերպով միտքը դրաւ վարդան՝ կենօք և մահու չափ պատերազմի կրօնից և հայրենեաց համար, և ջնջել վերայէն ակամայ ուրացութեան կեղտն իսկ արտասուօք և արեամբ: վասն զի մինչդեռ միւս նախարարները շողմիչ խօսքերով շնորհակալ եղան թագաւորին, Մեծն վարդան գրեթէ մարգարէական հոգւով այս խօսքերս ըսաւ համարձակ կերպով. « Հնարի՞մ ամենայն գօրութեամբ... օգնականութեամբն Աստուծոյ գործել գործ այնպիսի, որ ոչ միայն առաջի ձեր Արեաց, այլ և ի կայսեր դրանն և յայլ ազգս պատմեցի համբաւն այն մինչև ցյաւիտեան ». և յիրաւի ոչ միայն պատմուեր է մինչև հիմակ այն գերահռչակ գործին համբաւը, այլ և անոր՝ խնկելի յիշատակը միշտ տարուէ տարի կը կատարուի մեծահանդէս մեր եկեղեցեաց մէջ և անջնջելի դրոշմուած է բոլոր կրօնասէր ազգայնոց սրտերուն մէջ:

Հայ աւագանին և իշխանները՝ թագաւորին պարգևներով ճոխացած, բայց մերկ և կողոպուտք երկնաւոր գանձերէն՝ յետ հրաժարելու պարսիկ նախարարներէն և թագաւորէն՝ յուղի անկան ուրախութեամբ դառնալ իրենց հայրենիքը: Հագիւ թէ հայրենի սահմանները ոտք կոխեցին, բացուեցաւ աչքերնին և տեսան զարհուրանքով, թէ ի՞նչ անյատակ անդունդի մէջ գահավիժած էին, ի՞նչ անել բաւղի մէջ ձգած էին իրենք զիրենք. վասն զի էին « ողջք և ոչ ողջք, կենդանի կիսամեռք. որք ոչն սեասնէին ըստ յառաջ լուսաւոր եկիցն ողջամբ յայնպիսի ճանապարհէ ». ստըջացան, ուզեցին ետ դառնալ, այլ ուշ էր: իրենց ուրացութեան գուժն հասեր էր արդէն սիրելեաց ականջը. և, ո՛հ, փոխանակ երկուստեք գրկալիւ համբոյրներու և սիրազեղ գգուանայ,



ախրութիւնն և ցրտութիւն պատեր է մերձաւորաց գէւքերը. մանաւանդ թէ, կահայք և հարազատք՝ փոխանակ ծաղկամբք և պսակներով գիմաւորելու իրենց սիրելիքը և եղբարքը, աւաղ, գէնքով և սուրերով վառելիք՝ կը յարձակին անոնց վրայ. վասն զի բարձրագոյն հրաման էր, թէ «Չեւն եղբոր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն. կին կուեսցի ընդ առն ամուսնոյ և ծառայ դարձցի ընդդէմ՝ տեսան իւրոյ»: Յիրաւի ողբոց արժանի տեսարան մ'էր այն, Հայկակ, քան յիշելու կամ արձանագրելու. բայց կարելի էր միթէ լռել և չլսել «զձայն լալոյ և զձայնս գութի, գոչիւնս ողբոց և բարբառ ճշոյ». կարելի էր արդեօք չտեսնել, թէ ի՞նչպէս «տղայք անձկութեք ի գրկաց հարց իւրեանց պակուցեալք փախչէին, կարծելով այլափոխեալս իմն, և ոչ զնոյնս նկատելով կերպարանս՝ զարհուրէին»: Թողունք որ մեր կրկին պերճախօս և ոսկեգիր պատմիչները ճոխանան իրենց սրտաշարժ նկարագիրներով, որոնց նպատակն է ցուցընել՝ թէ որչափ ցուրտ և վնասակար է այն հայրենասիրութիւնը, որ գուրկ է ճշմարիտ կրօնասիրութենէ. ուստի լաւ և հաստատ կերպով մտքիդ մէջ գրոշմէ՛, Հայկակ, թէ հայրենիք՝ առանց կրօնից՝ ցնորական և անիմաստ բառ մ'է, և ոչ այլ ինչ:

Յետ չարաչար կործանման՝ բարբախտաբար փութով ալ ելան կանգնեցան հայ նախարարները, դառն արտասուօք սպիտակացնելով դարձեալ իրենց մոխրաթաթաւ սևացեալ հոգւոյն պատմուճանը, բայց ոչ ամենքը. վասն զի ոմանց օւրացութեան կեղտը կամ՝ կեղը մինչև հոգւոյն խորը թափանցել էր: Իսկ վարդան՝ որ ամենէն աւելի նուազ պարտաւոր գտնուեցաւ, յետոյ ա-

մենէն աւելի եռանդուն և ջերմագոյն եղաւ զըզման մէջ, և խոհեմութիւն համարելով հեռանալը, ցաւով սրտի կը թողու հայրենիքը, կ'առնու բովանդակ գերդաստանը և ճամբայ կ'ելնէ Յունաց աշխարհը երթալու: Երբ իմացան նախարարները, քահանայք և նոյն իսկ մարզպանը, լքումն եւ յուսահատութիւն տիրեց վրանին, վասն զի ամէնքն ալ կը վկայէին, թէ « առանց առաջնորդութեան ազդին այնորիկ (Մամիկոնեանց, և մանաւանդ վարդանայ) ... մեր այս ամենայն կապի և խորհուրդք՝ և ոչ մի ինչ վճարին »: Ուստի փութացին պատգամաւոր յղել անոր՝ քահանայից և նախարարաց գասերէն ամենէն աւելի պատուականները և սիրելիները, «րոնց զլուխ կեցած Ս. Գեւորդ. և Արշաւիր Արշարունի՝ իրենց բոլոր կորովը և ճարտարութիւնն ի գործ դրին՝ Մամիկոնեան առիւծի զայրացած ողին ողբելու և անգրգուելի միտքը փոխելու համար և հազիւ յաջողեցան: Դարձաւ վարդան, հայութեան արեն ալ ժպտեցաւ. Մամիկոնեան դրօշները՝ որ շարաթէ ի վեր ծածկուեր էին՝ յանկարծ վառ ի վառ ծածանեցան դարձեալ ամրոցայ և դղեկաց վրայ, հայրենի փարազանց կորովն և յոյսն արծարծեցաւ: Ժողովեցան միաբան, զունդ կազմեցին քահանայք և զօրավարք, իշխանք և ռամիկք, յարձակեցան սարուշաններուն վրայ, կործանեցին, այրեցին, և Զարեհաւան գիւղին մէջ անհամար մոգերու բազմութիւն մը ջարդեցին. յետոյ դարձուցին իրենց սուրերը՝ ուրացող ազգայնոց դէմ. բռնեցին մասնիչ և ժանտ Զանգազան իշխանը և Ֆերդկունք գիւղին մէջ քարկոծելով սպաննեցին: Ահ և սարսափ տիրեց ամէն տեղ. փութաց անօրէն վաստկն ալ, խորգ զգեցած և մոխրասէր գլուխը հոյով և մոխրով ծածկած՝ ի նշան ապաշխարութեան, ինկաւ քահանայից եւ

վարդանայ սուքը, զղջայ՝ այլ բերնով միայն և ոչ սրտով, երգումն ըրաւ սատկեամբ աւետարանին վրայ՝ այլ ի կորուստ անձին. վասն զի հոգևով միացած Միհրնբրսեհի հետ՝ կը ջանար տակաւին դարան լարել հայրենեաց և ազգին:

Նոյն միջոցները գուժկան հասաւ Հայոց, թէ Միհրնբրսեհ անթիւ զօրքով հասեր է Փայտակարան քաղաքը և կը պատրաստուի Աղուանից վրայ յարձակելու, ուսկից Հայաստան պիտի արշաւէ վերջը. իսկ և իսկ Մեծն վարդան պատրաստեց Հայոց բանակը որ Պարսից զէմ երթայ: Այնպէս քան զայն՝ միաբանութեամբ բոլոր նախարարներուն թուղթ և պատագամուտը յղեցին առ կոյսրն Յունաց, որոնց զլուխ դրին վահան Ամասունին և Հմայեակ Մամիկոնեանը՝ վարդանայ հղբայրը: Յետոյ երանելի սպարապետն առաւ իրեն հետ ամենէն աւելի քաջ և առաքինի զօրավարները, որոնք Քրիստոսի սիրոյն և հաւատոց համար յօժարութեամբ պատրաստ էին մեռնելու. երթալէն առաջ՝ մտան հկեղեցի, Աստուծոյ օգնութիւնը և զօրութիւնը խնդրեցին, խրախուսեցին իրենք զիրենք, երագեցին քայլերնին դէպ ի Աղուանից աշխարհը: Վասակ հոս ալ նենգութեան քօղին ներքև մասնութեան փորձ փորձեց, բայց չյաջողեցաւ. վասն զի իր չարաչուէր պատգամաւորները կաղացան և կուրացան ճամբուն մէջ, մինչդեռ վարդան և իրենները կայծակի նման հասան Աղուանից երկիրը և յանկարծ փոթորկի նման Պարսից վրայ յարձակեցան, որոնք հազիւ կրցան իրենք զիրենք կուր գետին միւս ափը ձգել: Տեսաւ և չափեց վարդան Պարսից բանակին բազմութիւնը և իր զընգին նուազութիւնը, այլ չվհատեցաւ. Աստուծոյ վրայ դրած յոյսը՝ քաջալերեցաւ և քաջալերեց բոլոր բանակը. երեք մաս բաժնեց զանոնք եւ

երկք գլխաւոր զօրավարներու ձեռքը տուաւ, որ էին Արշաւիր Կամսարական, Խորէն Խորխոռունի և Հմայեակ Դիմաքսեան, իսկ ինքը բոլոր բանակին հրամանատու և կարգադիր էր : Հոն քան զամէնն աւելի քաջացաւ հրաշալին Արշաւիր Կամսարական՝ իր կաշըմբուն Մուշ նիզակակցով. երկուքը միաբան առաջ նետուեցան պատերազմի խառնուրդին մէջ, այլ « յանգիտութենէ տեղեացն գիպեցան թանձրախոր սաստիկ մօրից », և երկուքն ալ իրենց երիվարներով լսրեցան տըղմին մէջ, և այն սաստիկ ճգնաժամուն՝ երանելի սեպուհը Մուշ Դիմաքսեան նահատակուեցաւ : Ասով աւելի ևս զայրացաւ Կամսարական դիւցազը, վիրաւոր առիւծի նման մունչեց և զարհուրեցուց Պարսիկները, արծուի նման խոյացաւ հետիոտս լվինաց թագաւորին վուրկ եղբօր վրայ, որ վատաբար կը փախչէր վախէն, հասաւ եւ նիզակին բունով զարկաւ գետին ձգեց այն վիթխարի մարգը, և անոր սրով սպաննեց զինքը : Զո՞վ կը կարծես տեսնել հոս Հայկակ. Հերակէ՛ս թէ Աքիլլէս... և հրր տեսնես նաև, թէ աճապարէ սա և երիվարը բոլոր զէնքերով տղմէն դուրս հանէ, իրեն ոտից մէկ մոյկն ալ տղմին մէջ ձգելով, « ինքն միամոյկ տղմաթաթաւ... անվեհեր քաջաբար նման թուչնոյ յերիվարն հեծեալ », անխոց՝ Հայոց բանակը հասնի, կարծեմ պիտի նսեմանան մոքիդ մէջ այդ առտապելական անուանք մեր դիւցազին առջև : Միացած Արշաւիր Մեծին վարդանայ և միւս զօրավարներուն հետ՝ փախստական հալածեցին Պարսից բանակը, անոնց կէսը սրով և տէգերով սպաննեցին, շատերն ալ գետավէժ հեղձուցին :

Մինչդեռ այս յաղթութեամբ զուարճացած՝ Աստուծոյ գոհութիւն կը մատուցանէին և ուրախութեան հանդէս կը կատարէին, յանկարծ

գութկան հասաւ առ երանելին վարդան, թէ ուխտունենգն վասակ իր աստուածուրաց համախոհներով միացած Պարսից հետ, Մամիկոնեանց եւ Կամսարականաց և միւս մեծամեծ տանուտնորց մատաղերամ մանկունքը ժողվելով՝ Սիւնեաց բերդերուն մէջ արգելական կը պահէ: Ի խոր խոցեցան երանելեաց սրտերը. այլ Աստուծոյ ամենախնամ՝ աջոյն յանձնելով ամէն բան, կը սպասէին գարնանային սիրուն եղանակին, որպէս զի երագ հասնի նահատակութեան պսակի օրը. այնուհետեւ զգուեր էին երկրաւոր յազմութիւններէ, և ծարաւի էին իրենց փրկութեան բաժակին:

Անցան ձմերային ցրտաշունչ օգերը, հասաւ ցանկալի դարունը, բոլոր ուխտապահ հայութիւնը հոգեզուարճ սրտով կատարեց մեծահանդէս փառաւորութեամբ կենարարին ամենասուրբ Յարութեան տօնը: Եւ մինչգեռ պահ մը երկնաւոր խաղաղութեան անոյշ վայելքներով կը հրճուէին մերինները, յանկարծ պարսիկ գունդագունդ զինելոց խառնածայն դոյրդը և շառաչը՝ երանելեաց խաղաղութիւնը վրդովեց. փութաց սուրբ և քաջ սպարապետը վարդան՝ երկնաւոր նահատակութեան և պսակի հրաւերը յղեց առ ուխտապահ զօրավարները և իշխանները, որպէս զի իրենց գնդերով աճապարհն գան ժողվին Քրիստոսի խաչանիչ դրօշին ներքեւ, և եթէ հաճին երկիւնք՝ անթառամ պսակին տրժանանան: Ամէն կողմէ փութացին ժողվեցան Արտաշատ քաղաքը՝ զօրավարք և զինուորք, հեծեալք և հետեակք. ասոնց հետ եկաւ նաև երիցագոյն քահանայից դաս մը, որոնց մէջ նշանաւոր էին Ս. Ղեւոնդ, Ս. Յովսէփ կաթողիկոսը, և Ս. Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը. ասոնք ամէնքը համագունդ գնացին Արտաղու դաշտը բանակեցան: Փութացուց վար-

դան քաջն Առանձար Ամատունի սեպուհը՝ որ երեք հարիւր հեծեալներով երթայ Պարսից բանակը դիտէ. գնացին դիտեցին, և Աստուծով զօրացած յարձակեցան անոնց վերջապահ գնդին վրայ, շատերը սպաննեցին ու թիչներ ալ հալածական ընելով՝ ողջանդամ դարձան առ վարդան, պատմեցին Աստուծոյ զօրութեամբ ըրած յաղթանակներն և միտնգամայն թշնամեաց բանակին բազմութիւնը և յառաջ գալը: Այս որ լսեց երանելի սպարապետը, Պէտք է փութալ, ըսաւ, անոնց առջին առնուլ, քանի որ Հայոց միջնաշխարհը չեն մտած. սակայն Պարսիկք արդէն մտեցեր էին Արտազ գաւառին, և քիչ վերջը բանակեցան Աւարայր գիւղին քով, Տղմուտ գետին մտերը:

Այս սաղապածեմ, պղտոր և յիրաւի տղմուտ գետին երկու ափանց վրայ՝ արձանուցեր կեցեր են երկու ահեղ բանակներ, նման երկու հնոցներու՝ որոնք կը ծխեն և կ'արծարծին հետզհետէ, և յետ վայրկեանի մը՝ խանձող և բոց արձակելով իրարու դէմ՝ ահագին հրդեհ մը պիտի ձգեն: Տես, Հայկակ, այս երկու բանակներու մէջ եղած տարբերութիւնը. մէկ կողմը որչափ որ պայծառ, լուսաւոր և հանդարտ կ'երևի, այնչափ ալ միւս կողմը խաւարած և խաւնաչիթ կը տեսնուի. առաջինը՝ մինչդեռ խաչավառ և պայծառ դրօշներու և վրաններու ներքև ժողոված՝ ոչ եթէ մարմնական կռուոյ պատրաստութիւններ կը տեսնէ, այլ հողևոր նահատակութեան, երկրորդը բոլորովին թանձր և մարմնաւոր, գետնաքարչ և երկրաւոր պատրաստութեանց հետ է. և դարձեալ որչափ խտիր զօրաց թուոյն նկատմամբ այս երկու բանակներուն մէջ. վասն զի Հայոց բանակը հազիւ թէ վախտուն և վեց հազար պատերազմողներէ կը կազմուի, հեծեալ և հետեակ մէկտեղ առած, իսկ Պարսից բանակը գրեթէ երեք-

հարիւր հազար զինուորներէ կը բաղկանայ, ի բաց թողլով այն անճոռնի փղաց երամակները, որոնցմէ իւրաքանչիւրը իբր մէկ մէկ գնայուն սպառազէն ամբոյցներ են:

Քաջն վարդան չորս գունդ կամ թե կը բաժնէ ամբողջ բանակը. տասջին և աջակողմեան գունդը կու տայ խորիւն խորխուռուռուցն ձեռքը, որ Հայոց ներքին հազարապետ և աշխարհատեսուչն էր. միջին թեք՝ վառան Արճրուռուցն, որ ազնուականութեամբ տոհմին և քաջութեամբ նախապատիւ էր քան շատերը նախարարներէն. ձախ թեքը կու տայ Փափագ Առաւելեան և թարսոյ վառանդեցի զօրավարներուն, որոն զլիաւոր հրամանատարութիւնը իր վրայ կ'առնու երանելի սպարապետը, վասն զի ձախ թեքին դիմաց Պարսիկները ամբայոցեր ժողովեր էին իրենց զլիաւոր ուժը. իսկ չորրորդ և վերջապահ գունդը՝ իր Համազասպեան եղբօր և քաջաբիրտ Արշաշիր Արշարուռուցն կը յանձնէ:

Իսկ ինքը վարդան, բոլոր բանակին հրամանատուն և առաջնորդը, տակաւին պատերազմը չսկսած, ամէն կողմ կը դիմէ, կը հասնի, ամէն տեղ կը հնչէ իրեն հրաշալի տոննաբանութեան արձագանգը. զամէնքը կը վառէ, ամենուն արութեան և դիւցազնութեան հուր կը շնչէ: Մերթ կը դիմէ առ սուրբ քահանայս, կը խորհրդակցի անոնց հետ և ձայն կու տայ որ սկսին իրենց սրբազան պաշտամունքը և գերագոյն պատարագին զոհը, որովհետև մօտ էր երկրաւոր պատերազմին սկսելու վայրկեանը. մերթ կը փութայ առ գունդը զօրավարաց, պատերազմի առաջնորդութեան պաղտնիքը և իր վեհագոյն դիտաւորութիւնը անոնց յայտնելու. և մերթ առ զօրականն կը դիմէ, երկրաւոր յաղթութեան պսակէն աւելի՝ երկնաւոր նահատակութեան պսակները մոտեանիչ ընելու անոնց:

Խոնկի անուշահոտ բուրմունք, սրտածմլիկ եւ հոգեզուարթ ձայներ երգոյ նշան են՝ թէ արդէն սկսած են Հայոց բանակին մէջ հոգևոր պատրաստութիւնք. մէկ կողմը՝ ապաշխարութեան և արտասուաց աւազանը կը սրբէ յանցաւոր հոգիները, և միւս կողմը՝ մկրտութեան աւազանը կը պճնէ երախայից հոգիները մաքրափայլ պատմութեանով, իսկ միջին տեղը՝ կանգնած է Սրբութեան սեղանը, ուր կը մատչի քաւութեան զոհը, և կը դիմեն դունդապունդ զօրքն Հայոց, կը ճաշակեն ամենատուրը Խորհուրդը, կը զօրանան ներքուստ, արտաքուստ կը զրահաւորուին, և սրտատրոփ կը սպասեն թէ երբ պիտի հնչէ պատերազմի շփոթը։ Այլ տակաւին ժամանակ կայ. այն երջանիկ և սիրալի վայրկեաններէն պահ մ'ալ խլելով իրենք իրենց մէջ կ'ամփոփուին, կը դիմեն մաքրով առ իրենց սիրելիները և մերձաւորները, կու տան անոնց կարօտագին յետին համրոյր մը և ողջոյն մը, վասնզի թերևս, ո՛հ, ալ պիտի չըտեսնեն զիրար մարմնաւոր աչքով, վարդան ալ կ'առանձնանայ վայրիկ մը իրեն արքայաշուք վրանին ներքեւ, ուր բիւրաւոր մտածութիւնք կը պաշարեն զինքը, երկնաւոր ազդեցութիւնք՝ ընտանեաց գորովալիւր սիրոյ հետ խառն, տազնապք հոգւոյ՝ եկեղեցւոյ և հայրենեաց փրկութեան և բախտին համար, և իր պատասխանատուութիւնն ապագայ սերնդոց առջև՝ ըստ յաջող կամ անյաջող ելից այն մեծ գործին, այս ամէնը ահաւոր փոթորիկ մը կը յարուցանեն դիւցազին սրտին մէջ. բայց նա իր անձը և բոլոր աշխարհը Աստուծոյ կը յանձնէ, աղօթքով և խաչիւ կը զօրացնէ ինք զինքը, և իսկոյն ձայն կու տայ որ հընչեն գալարափողք ի նշան պատերազմի։

Վարդակարմիր արևուն ծագելու միջոց՝ Հայոց բանակին մէջ ալ կը ծագի կը փայլի վարդան



արևու նման, դուրս կը ցատքէ վրանէն՝ կը շողայ փայլակի նման Մամիկոնեան սպարապետը, ոտքէն մինչև գլուխ պատենազէն, հեծած իր պերճատուտորդ, ահիպարանոց և օգապտրիկ երիվարին վրայ, ակնթարթի մէջ կը կտրէ բոլոր բանակին երկայնութիւնը: Նոյն պահուն արեւը կը ծածկուի ամպերու մէջ և լոյսը կը նուազի, չգիտեմ՝ արդեօք փայլուն նշոյլներէն վարդանայ, թէ յամօթ և յանարգանս անպատկառ Պարսից, որոնք վայրաքարչ ճճեաց նման գետին ինկած կ'երկրպագէին անշունչ արարածին: Որքան չըքննող և ցանկալի էր այն տեսարանը կամ վայրկեանը, երբ պայծառափայլ կը շողար վարդան իր բոլոր պաղպաղուն օսկի-արծաթ և ականալուռ զգեստներով և զրահներով, զօր վաթսուն և վեց հազար բերաններ փողոց և նուաղարանաց ձայներու հետ միարան ողջունեցին զօչելով. կեցցե՛ք վարդան, կեցցե՛ք քաչ և սուրբ սպարապետ մեր, փառք և գօրոքիւն տաևու Հայոց, Հոս լռենք մենք, Հայկակ, և թողունք որ մեր քաղցրախօսիկ պատմիչն Եղիշէ իր մեղրահաս շրթամբ կամ պրշով նկարագրէ այս մեծ պատերազմիս պատրաստութիւնը. «Եւ իբրև այսպէս պատրաստեցան երկոքեան կողմանքն, լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային և զազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկօքեան. և ամբոխ աղաղակին յերկոցունց կողմանցն՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սողաւարտիցն և ի փայլուն պաանաղէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նա և ի բազում՝ սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային: Քանի ընդ իսկ է բաւական ասել

զմեծամեծ տապնալ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զսեղիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին »:

Իսկ և իսկ կը սկսի ահեղ ու բազդավճիռ պատերազմը, որ առաւօտէ մինչև երեկոյ տևեց անընդհատ. երկու բանակներն ալ « յանդուգն յարձակմամբ զմիմեանս բախելով » յառաջ կուգային և գետեզերքին կը մտնեային: Առջի բերան Հայք էին յաղթողը, որոնց ամէն մէկ կորովի և դիպածիգ նետերն հարիւրաւոր պարսիկ դիաթաւալ գետին կը տապալէին. սակայն այն բիւրաւոր գնդերու բազմութեան առջև, որ մըրջմանց պէս տարածուեր էին դաշտին երեսը, ինչ ուժ և կորով պէտք էր որ դիմանար. յոգնած էին Հայոց բազուկները, այլ վերջին թափով ետ մղելով Պարսիկները, անցան կտրճութեամբ գետէն և միւս ափին վրայ սկսան աւելի սաստիկ ուժով պատերազմիլ: Հայոց արևմտեան գունդը, որ մինչև վերջը քաջութեամբ կռուեցաւ Դովղըճայ գնդին դէմ, երբ տեսաւ որ իրեն երկք զօրավարները (Խորէն, Արսէն և Ներսէ) ինկան քաջաբար՝ յետ բիւրաւոր հարուածներ ընդունելու թշնամեաց նետերէն, իրենց ուժը և յոյսն ալ տկարացաւ փոքր մի. միջին թևերն ալ քաջութեամբ և բուռն յարձակումով կը կռուէին իրարու դէմ: Իսկ ձախակողմեան թևին մէջ, ուր դժբախդարար Հայք Հայոց դէմ կը կռուէին, յանկարծ խառնակութիւն մը ծագեցաւ. վատ և ուխտադրուժ զօրաց գունդ մը՝ յանկարծ պատերազմին տաքցած միջոց՝ վարդանայ կողմէն Պարսից կողմը անցնելով՝ կերպարանափոխ ըրաւ բոլոր պատերազմը: Նոյն պահուն քաջն վարդան վարազացած՝ վերջապահ գնդով մը փութաց արծուօրէն օգնութեան հասաւ, կարգի դրաւ, քա-

Նալերեց իրենները և բուն թափով յարձակեցաւ Պարսից բանակին վրայ, որոնք տատամնած վարանած՝ ժամանակ չունեցան հտ քաշուելու, և գոնեա պարծանքով մեռան՝ Մամլիկոնեան դիւցազին ձեռքէն գտնելով իրենց մահը. շատերն ալ ձիերէն կամ անճոռնի փղերէն ոտնակոխ եղան. վահան Արծրունին տեսնելով զայն՝ սիրտ առաւ, խոյսցաւ Պարսից բուն միջին դնդին վրայ, զանոնք շփոթեց, հտ մղեց. և այսպէս վարդան և վահան իրենց գնդերով չորս կողմէն պաշարելով Պարսից միջին եւ ձախակողմեան գունդերը, ինչպէս փայտահար մը անտառի մէջ՝ կ'իջեցնէին անխնայ հարուածները և ի սանդալամետս կ'ուղարկէին այն մոխրաշունչ հողիները. մինչև Մարտնակ կամ Անուահ կոչուած գունդն անգամ՝ սոսկաց և տեղի տուաւ վարդանայ և վահանայ հարուածներուն. Այս խառնուրդիս միջոց յանկարծ տեսաւ վարդան՝ վասակայ անիծապարտ գլուխը. խոյսցաւ անոր ետեւէն, այլ նա օձի նման սողոկելով ազատեցաւ հարուածէն, և փղաց երամակներուն մէջ ծածկուեցաւ. նայեցաւ վարդան և իմացաւ թէ շատ տռաջ գնացեր էր, բաժնուած էր իրեններէն, և պարսիկ խուժանէն պաշարուած. հոգ չըբաւ, վտան զի արդէն անձկանօք կը փափագէր երկնաւոր նահատակութեան պսակին. Աճապարեց Մուչկան, ձայնեց Արտաշրի՝ որ փղերը առած պաշարէ վարդան. ջանաց փորձեց վարդան կտրել այն ահագին բազմութիւնը, այլ անհնար էր, երեք կարգ պարսպի նման չորս բոլորը պատեր էին, հետևակք, հեծեալք և փիղերը. բիւրաւոր նետեր և տէգեր կը տեղային կարկուտի նման քայլին վրայ, որոնցմէ թէ և անկարելի էր անխոց մնալ, այլ տակաւին երկու երեք անգամ՝ գողացուց եւ շարժեց իր չորս բոլորի բազմութիւնը. առիւծ

էր, այլ խոց և վիրաւոր և գրեթէ անզէն, ան-  
ոք և անօգնական՝ գունդագունդ զինեալներու  
մէջ, որոնք երկչոտ շանց նման պատեր էին  
ղինքը և հեռուէն կը հաջէին միայն, վախնալով  
մօտենալ քաջին, վերջին անգամ մ'ալ մոնչեց  
նա ուժգին ձայնով, զարհուրեցուց թշնամիները,  
և յօժարակամ սիրով ընդունելով երկնից հրա-  
ւէրը, «կորովին վարդան իւրովք քաջ նիզակակ-  
ցօք՝ ոչ սակաւ նախճիրս ի տեղւոյն գործեալ...  
և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ  
նահատակութեանն պսակ», 451ին, գրեթէ յիս-  
նամեայ հասակի մէջ: Վարդանայ հետ նահատա-  
կուեցան նաև իր պատուակից և նիզակակից վա-  
հան Արծրունին և վերը յիշատակուած աջ թևին  
երեք զօրապլուխները և ձախ թևին գնդապետը  
Տաճատ Գնթունի. ասոնց հետ պսակուեցան նաև  
Արտակ Պալունի, Հմայեակ Դիմաքսեան, վահան  
Գնունի և Գարեգին Սրուանձտեան զօրավարնե-  
րը: Իսկ վերջապահ գունդին զօրավարները՝ Ար-  
շաւիր և Համաղապետն, երբ գիշերը վրայ հա-  
ուս. և պատերազմը լմնցաւ, հնչեցուցին փողերը  
և ետ քաշեցին մնացած ուխտապահ զօրքերը, ո-  
րոնցմէ ոմանք զանազան ամուր կողմեր փախան  
ապաւինեցան: Բոլոր պատերազմին մէջ մեռնող-  
ներուն կամ նահատակներուն թիւն է 696  
հոգի, որոնց մէջ ինը մեծ զօրավարներ և սպարու-  
պետը՝ քաջ և սուրբն վարդան. ասոնցմէ զատ  
ուրիշ շատեր ալ Պարսից ձեռքը ինկնալով՝ սրա-  
մահ եղան և կամ փղերէն ոտնակոխ եղան, որով  
նահատակելոց համագումար թիւն եղաւ 1036  
հոգի, մինչդեռ թշնամայն բանակէն գրեթէ ե  
ռապատիկն ինկան մեռան: Այս պատերազմիս  
մէջ նիւթապէս Հայք յաղթուեցան, այլ բարոյս-  
պէս իրենք յաղթեցին Պարսից. թօթափեցին  
անոնց անտանելի լուծը, ջնջեցին կրակին պիղծ

պաշտօնը իրենց աշխարհէն, հայրենի սովորու-  
թիւնները և նախնեաց սուրբ կրօնքը հաստա-  
տուն բռնեցին և ամէն ազատութեամբ պաշտե-  
ցին: Տիրառէր և քաջ Մամիկոնեանք ալ պատե-  
րագմէն վերջը՝ աղօթքով և արտասուօք, սգով ու  
չքով վերուցին իրենց նահատակ դիւցազին ան-  
գին մարմինը, դրին փառաւոր դամբանի մէջ, և  
յետոյ անոր սուրբ նշխարները զանազան տեղ  
ցրուեցին ջերմեանդ հաւատացեալներու, ինչպէս  
կը յիշուի մինչև սկիզբը ԺՉ դարու: — Ուր  
էր թէ, Հայկակ, հիմակ ալ գտնուէին անոր ան-  
գին նշխարները, և ամէն հայազգիք ունենային  
իրենց քով անոնց մէկ մէկ փոքրիկ մասեր, զորս  
համբուրելով գգուանքով և յարգանքով օրինակ  
առնուին և ուսանէին սուրբ և անմահ կարմիր  
վարդաւենն, թէ ինչպէս պէտք է սիրել զԱս-  
տուած, մեծարել եկեղիցին՝ կրօնքը, և պաշտպան  
ըլլալ հայրենեաց:







ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԵՆԻ

## ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԵՆԻ

**Յ**ՐԲ մտնես, Հայկակ, արքունի բուրաստան մը, ուր բիւրաւոր գունագոյն եւ անուշաբոյր ծաղիկներու մէջ՝ ապիտակափառ և վեհաշուք շուշան մը տեսնես, որ քան ամէն ծաղիկ աւելի փայլելով ամենուն աչքը և սիրտը իրեն կը ձգէ և ամբողջ բուրաստանին զարդն է. և քիչ վերջը լսես կամ տեսնես զայն տերեւաթափ եղած և ոտնակոխ, կրնաս անկարեկիր և անզգայ անցնիլ մօտէն, տեսնել և չզայրանալ այն ապառու՛ մարդուն դէմ, որ անտարբեր սրտով կրցեր է այնպիսի անգութ գործ մ'ընել: Հայկակ, մտնենք միասին Քրիստոսի եկեղեցւոյն և մեր հայրենեաց հոգևոր բուրաստանին մէջ, ուր պիտի տեսնես գերերկրեայ և հրաշալի ծաղիկ մը, որ վարդին գեղեցկութեան հետ ունենալով նաև շուշանին ազնուափայլ անուշութիւնը, աննման և դուզնագիւտ կը հանդիսանայ պասամութեանց մէջ. և պիտի կարենաս անթաց սչքով և անզգայ սրտով դիտել զայն ոտնակոխ եղած անարժան անձէ մը, խարշած և խամրած՝ տմարդի և դառն հարուածներու ներքև: Պիտի տեսնես լուսաթև և ամբիծ աղանեսակ մը՝ յօշ յօշ գիշատուած իր անգութ վարուժանէն, և պիտի չի զայրանաս. — պիտի տեսնես անգին գոհար մը տղմի մէջ թաթաւած



և դատան մարդու մը ձեռք մատնուած, և պիտի չի ցաւին վրան. — պիտի չանիծանենս, Հայկակ, այն դժնիկ դահճին քամնելի յիշատակը, և ընդ հակառակն պիտի չօրհնենս արիասիրտ սրբուհւոյն անուշ յիշատակը: ... Ահա այսպիսի դառն և վսեմ տեսարաններու մէջ պիտի ներկայանայ սեզի Շուշուկ—վարդակնի, գուտոր Մեծին վարդանայ և թոռնիկ սրբոյն Սահակայ, որուն վրայ փայլեցան միանգամայն գերազանց սրբութիւն սրտի, վեհագոյն արութիւն հոգւոյ, և սեծափառ ազնուականութիւն մաքի և մարմնոյ, զորոնք ժառանգեց ծնողացմէ և նախահարցմէ: Ասոր ծընունդը անշուշտ եղած է ընդ մէջ 420 և 425 տարիներու, որ հազիւ թէ բացաւ իր սեղուանոյշ աչքերը, սրբութեամբ և առաքինութեամբ տեսաւ պատուած իրեն խանձարուրը: Երջանիկ Շուշան, որ փոխանակ ուրիշ մահկանացուներու պէս հասարակայ մահաբեր օդը ծծելու, առաջին վայրկենէն երկնաւոր և անմահ սիւք կամ ոգի մը ծծեց կաթին և խրատուց հետ իրեն առաքինագարդ և բարեպաշտ Դատրի՛ մօրը, որուն միակ հոգին ու զուարճութիւնն էր՝ մայրենի անուշակ գգուանքին հետ միացնել խիստ և փոյթեռանդն դաստիարակի մը ջանքը և հսկողութիւնը իրեն հրեշտականման դատեր վրայ: Փափկիկ օրիորդին մարմնաւոր գեղեցկութիւնը, ազնուափառ սերունդը և հարստութիւնը գրեթէ բոլորովին կը նսեմանային անոր շնորհաշուք հոգւոյն ազնուականութեան և բարեպաշտութեան առջև: Այլ ափսոս իրեն, որ թէպէտ երջանիկ ժամանակներու մէջ ծնաւ, — երբ հայրը Ս. վարդան՝ Յունաց և Պարսից թագաւորներու սուած պատիւներուն և իշխանութեանց ներքև կը ճնշուէր, իսկ հօրը սպալը Ս. Սահակ՝ այեօք և հասակով ծանրացած՝ Պարսից արքունիքը կը զարմացնէր եւ

սեր թագաւորութեան գահը շէն կը բռնէր (420-425), — սակայն թշուառ դարու դշխոյ եւ դաւ, երբ բոլոր Հայաստան շփոթից, աւերակաց և արիւնհեղութեանց թատր մ'եղած էր, քահանայութիւնը և կրօնքը ոտնակոխ և արհամարհուած, ուխտապահից գունդը՝ պատերազմներով և ազգի ազգի նահատակութեամբք նուազած, որոնց պարագլուխ էր իր հայրը և սեր ցանկալին կարմիր վարդան, և շատերն ալ փառասիրութեան գերի եղած և հաւատքնին ուրացած: Շատ հեռու չերթանք, Հայկակ, այս տխուր պատկերը կամ՝ նկարագիրը տեսնելու համար. մօտենանք թագափայլ Շուշանայ արքունեաց, ներս մտնենք անոր փառազարդ և վեհափառ դարպասին մէջ, հոն ալ պիտի տեսնենք կսկծալի պատկերներ:

Գուգարաց բղեշխը՝ թէ՛ ազնուականութեամբ տոհմին և թէ՛ ընդարձակութեամբ կալուածներուն՝ գրեթէ թագաւորի հաւասար կը ճանչցուէր, և բոլոր նովկասու ազգերուն առջև իբրու մեծազօր մեծափառ տէր և իշխան կը համարուէր: Մակայն չգիտեմ՝ թէ Շուշանայ հոգևոր և մարմնաւոր ձիրքերուն և պայծառութեան արժանաւոր պատիւ մ'էր այսպիսի իշխանի մը բղեշխուհի և նոյն իսկ թագուհի ըլլալ, մինչ կայսերաց գահոյքն անգամ կրնային ոչինչ համարուիլ իրեն առջև: Այլ դու ի՞նչ կ'ըսես, Հայկակ, որ մինչդեռ Շուշանկան արժանաւոր ամուսին մը գտնել դժուար էր և գրեթէ չէր ալ գտնուեր, դժբախտաբար ասեմէն անարժանագոյնը հանդիպեցաւ անոր. վասն զի վազգէն, այս էր անունը, թէ և բարեպաշտ Աշուշայի որդին էր, բայց զուրկ էր բոլորովին հօրը հոգիէն և ձիրքերէն, և որչափ պայծառ սխրալի և փառաւոր էր Շուշանիկ, վազգէն ալ նոյնչափ սևահոգի, վատ և չարասիրտ: Եւ մինչդեռ սա՛ վասակայ նման ուրացողներուն

գլուխ կեցած՝ Պարսից դուռը գնացեր, և հոն՝  
չըսեմ սակաւագին՝ այլ (ամօթ երեսին) ձրի կը  
վաճառէր հաւառքը, հոգին և հայրենիքը, վար-  
դենին-Շուշան՝ Շամունեայ նման մեծահաւատ  
մեծահոգի և հայրենասէր՝ նարմանագուկ և դըշ-  
խոյարար կը ճեմէր արքունի դահլճին մէջ, պատ-  
կառելի և հիանալի ըլլալով ժողովրդեան աչքին.  
սիրով քան սաստիւ կ'իշխէր հպատակաց սրտին,  
ամենուն դայեակ և բարերար կը հանդիսանար,  
որդիքներուն գերզգօն և ազնուագուլթ մայր կ'ըլ-  
լար, և բոլոր աշխարհին բարեպաշտութեան եւ  
առաքինութեան օրինակ կու տար: Նոյն իսկ դըշ-  
խոյա՝ կրօնասէր սրտով կը բարեզարդէր եւ կը  
պայծառացնէր եկեղեցիները իր իշխանութեան  
և աշխարհին մէջ, այլևայլ սրբազան հանդէսներ և  
բարեպաշտական հրահանգներ հաստատելով. այլ  
կրցաւ միթէ բարեզարդել վազգենի անշորհ  
հոգին, յաջողեցաւ ամօքել և կակղել անոր խըս-  
տացած և անողոք սիրտը:...

Հեռու է վազգէն ընտանիքէն, հեռու է դժնիկը  
շուշանէն, այրն մոխրապաշտ՝ քրիստոսագարդ  
հարսէն. բայց միթէ այսու նուազ կը տանջուէր  
Շուշանկան մաքուր հոգին: Թէ և տակաւին հան-  
ժանօթ էր իրեն՝ վազգենի սևումուր գործերուն  
տխուր իրականութիւնը, այլ այնպիտի՝ փափկիկ  
սիրտ մը ամենաթեթև կասկածանքէն անգամ  
սաստիկ կերպով կը վշտանար և կը խոցոտէր. կը  
մտածէր նա, որ եթէ վազգէն կործանէր հա-  
ւառքին մէջ, ի՞նչ ամօթ և ի՞նչ քնաս պիտի հաս-  
նէր իրեն և որդիքներուն. այս մտածութեամբ կը  
տանջուէր անոր ազնուագուլթ սիրտը, և անձկա-  
նօք կը սպասէր վազգենի դարձին, յուսալով որ  
սուտ ելլեն իր կասկածները: Եւ ահա հապճեպ  
փութով կը սրանայ պատգամաւոր մը Պարսկաս-  
տանէն, կ'իմացնէ Շուշանայ՝ թէ ահա՛ կը հասնի

վազգէն իշխանը գանձերով և պատիւներով ճուխացած. յայտնի է թէ ինչ եղաւ շնորհաշուք տիկնոջ առաջին հարցումը, զոր հազիւ թէ գուշակեց կամ իմացաւ պատգամաւորը, Աւանդ, րսաւ, վազգէն ողջ է մարմնով, բայց հոգւով մեռած է. վասն զի «ի դուռն արքունի երթեալ՝ ուրացաւ զքրիստոնէութիւն, և եղեալ ընդ պարսկական օրինօքն՝ ի կամաց և ոչ ի հարկէ և ի բռնութեանէ... երկիր պագանէր և ուխտէր ընդ սատանայի »:...

Այս տխուր գոյժը կայծակնահար ըրաւ՝ գետին ձգեց Շուշանիկը, և զարմանք՝ որ այնպիսի փափուկ սիրտ մը կրցաւ դիմանալ այնպիսի դառն հարուածի, և իսկ և իսկ չսեռաւ այն տեղ. յետքանի մը վայրկեան այնպէս ուշաթափ և անշարժ կենալու գետնին վրայ, զգաստացաւ Շուշանիկ, կանգնեցաւ արիութեամբ և փութաց Աստուծոյ տաճարը, ուր գետին ինկաւ. Աստուծոյ սեղանին առջև, իրեն սրտին մխիթարութիւն և այնպիսի շարեաց դարման մը գտնելու: Դրոյն գիշերը աւսենկին ոտք չկոխեց պալատին մէջ. քաշուեցաւ անկիւն մը, և մինչև սուսուտ հառուչանքով և արտասուէքով սրտին ցաւերն Աստուծոյ առջև դրաւ. ոչ կերաւ և ոչ աչքերը փակեց. գիտեցին իրեն սրտակիցները և մտերիմները, մանաւանդ հաւատարիմ՝ դրաներէցը, ջանացին մխիթարել զինքը, այլ ի զուր: Երկրորդ օրն ալ թէ և նոյն անմխիթար վիճակին մէջ էր Շուշանիկ, այլ յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած՝ երբ փոքր մի հանգստացած և արիացած նստեր էր պալատին մէկ անկիւնը, վազգէնի կողմանէ երկու նուիրակք եկան իրեն՝ Զոյլիկ մեծ իշխանը, որ բռնչխին եզրայլն էր, և արքունեաց եպիսկոպոսը Յոհան: Երբ տեսան շնորհափայլ Շուշանիկը այնպիսի խեղճ եւ ցաւալի կերպարանքի մէջ, չէին կրնար հաւատալ

և մինչև սկսան տարակուսիլ՝ թէ յիրաւի նա՞ էր Շուշանիկ բզեչխուհին. բերաննին կապուեցաւ, և հազիւ թէ հառաչելով կմկմալով կրցան բզեչխին հրամանը ծանուցանել անոր: Յիշեց սրբուհին նոյն առաքելոյն խօսքը որ կ'ըսէ. « Զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի ». նա՞ որ կամաւոր ուրացութեամբ կուրացաւ, մթագնեց հողւոյն լոյսը և խաւարի մէջ կը խարխափէ, այսուհետև ինձի հետ ի՞նչ կապ, ի՞նչ վերաբերութիւն ունի, կ'ըսէր ինքն իրեն, մինչդեռ իմ հոգւոյս լոյսը Քրիստոս է: Մտածեց զայս Շուշանիկ, սաստեց նուիրակներուն, և բացէ ի բաց մերժեց այնպիսի նենգաւոր հրաւէր կամ հրաման, և պահ մը լռեց՝ խորասուզուած երկնաւոր խորհուրդներու մէջ: Սակայն այն փայրկեհնական լուսութիւնը և աստուածխոհութիւնը ինչպէս լուսաւորեց սրբուհւոյն միտքը, որչափ զօրացուց անոր հոգին, որ իսկոյն փոխելով խօսքը՝ յանձն առաւ յօժարութեամբ այն զոհն ալ ընել ամուսնոյն փրկութեան և սիրոյն համար, թէպէտև գիտէր ասուգիւ թէ « ի տառապանս եւ ի չարչարանս » կ'երթայ: Գնաց Շուշանիկ ապարանքը, այլ իրեն հետ տարաւ սրտին սուգը, հողւոյն ներանձնութիւնը եւ արիութիւնը. երեք օր անքուն և անսուաղ անցուց, մինչև որ երրորդ իրիկունը, երբ մեծահաց կոչուեք մը պատրաստել տուած էր վազգէն, լուսաւոր ջահեր վառած, և բազմութիւն իշխաններու և սեծամեծներու կանչած էր ընթրիքի, բզեչխուհին ալ կանչուեցաւ սեղանի: Այս անգամ ալ սերժեց Շուշան բզեչխին հրաւէրը, ոչ թէ գոռոյ Ասթինէի նման, այլ իբրու հասեստ հարսն Քրիստոսի, որ և յետոյ բարեսէր Զոյիկ իշխանին թախանձանքով գնաց և երեցաւ իբրու նոր Յուդիթ կամ Եսթեր մը. բայց փոխանակ տիկնութեան հանդերձներուն՝ ծիրանայ և թա-

գի, փոխանակ ականակուռ և ոսկեհուռ զարդերու, զորոնք երբեմն գեղեցիկ կերպով կը փայլեցնէր վրան, ընտրեց իրեն երկու հրաշալի եւ աննման զարդեր, հեղութիւն և հասեստութիւն, որոնցմով թէ որ սխրացուց և զարմացուց բազմականները, իսկ վազգենի բորենոյ սիրտը զայրացուց և չարանենգ աչքերը շլացուց: Ընթրիքի միջոց բնաւ չճաշակեց Շուշան. անշարժ դիրքով և անթարթ աչքերով կեցեր էր հոն իբր դիցակերպիկ ոգի մը, եթէ ներելի է այսպէս բացատրել, որ կը հսկէր կարծես վազգենի վրայ. Շուշանայ մէկ ակնարկն իսկ բաւական էր խոցել ուրացողին սիրտը՝ բիւրաւոր նետերու հաւատար, որ ամօթէն և կատաղութենէն չէր համարձակեր աչքերն իսկ վեր վերցնել:

Ընթրիքէն վերջը մեկնեցան հրաւիրեալները, և պալատին մէջ մինակ մնաց Շուշանիկ անգութ և դաժան վազգենին ձեռքը, որ մնլիգին կատաղիի նման՝ հաստ և կոպիտ լախտ մ'առած՝ մուրն չելով Շուշանայ վրայ վազեց: Ինչպէս դարբին մը սալին վրայ, այնպէս անգութը անխնայ կերպով իջեցուց հարուած և աքացի փափկիկ տիկնոջ վրայ, մինչև ծառաներն անդամ զզուելով եւ զարհուրելով այն տմարդի տեսարանէն, փախան և ծածկուեցան որ չրլլայ թէ յանկարծ իրենք ալ վազգենի հարուածներուն հանդիպին: Եղկելի Շուշանայ կոծն և հառաչանքը, և զազան բղջխին լուտանքը, աղմուկն և շառաչը թնդացուցին բոլոր պալատը: Իմացաւ Զոյիկ թէ վազգենի սեւթորմի սրտին փոթորիկն էր այն. վազեց, այլ ի՞նչ օգուտ, հարուածն հաւատարապէս իրեն դէմալ դարձաւ. ո՞վ կրնար այն կատաղի վազբին զայրոյթը զսպել, որ խելագարած բոլորովին՝ կը հայհոյէր սրբուհւոյն ծնողքը, նախահարքը, հաւատքը և զվաստուած անգամ: Վերջապէս ծեծելէն

և հարուածելէն ուժաթափ, առանց ուզելուն վար ձգեց ձեռքի լախտը, և ինքն ալ այսահարի նման գետին թաւալելով՝ փրփրալ սկսաւ և ինքզինքը ծեծել :

Երկրորդ առաւօտը վաղգէն գնաց տեսնելու Շուշանիկը, ոչ թէ սփոփելու, անոր ցաւերը մեղմացնելու կամ իրեն բարբարոս գործին համար ներումն խնդրելու. ոչ, ոչ. զուրկ էր նա այդպիսի մարդկային զգացումներէ. գնաց դեռ աւելի սաստկացնելու անոր սրտին կակիծները : Երբ տեսաւ որ բոլորովին ուժաթափ, դեղնած և տըժգոյն գետին ինկեր էր տիկինը, որ երբեմն հոգւոյն և մարմնոյն գեղեցկութեամբ իրեն պաշտտին զարդն էր, հրամայեց պահապաններուն՝ որ զգուշութեամբ հսկեն անոր վրայ, չի թողուն որ քովը մարդ երթայ, և անոր կերակուրն ըլլայ միայն սակաւ մի ջուր և զարեհաց : Հագիւ թէ գնաց՝ կորուսեցաւ բռնաւորին հետքը, վաղեց Շուշանայ հաւատարիմ՝ դրաներէցը, գետին ինկաւ՝ գրկեց և համբուրեց սրբուհւոյն ոտքերը, լացաւ և լացուց Շուշանիկը՝ փոխանակ մխիթարելու. բայց շուտով սիրտ առին՝ սիրտ տուին իրարու, և արտասուացէ կաթիլները՝ անուշիկ ժպիտով զանգուած՝ մարգարտի հատիկներ դառնալով կը փայլէին անոնց դէմքին վրայ : Լսելով Շուշան թէ հեռացեր ծածկուեր է դժմիտ վաղգէնը, քիչ մը հոգի առաւ, ելաւ կանգնեցաւ՝ տեղատարափ անձրեւէ վնասուած ծաղկի նման, որ արև տեսնելուն՝ դարձեալ կը կենդանանայ եւ վեր կ'ելնէ : Սակայն որչափ երազ սահեցան այն երջանիկ ժամերը, երբ դարձեալ գոռում՝ գոչում՝ լսուեցաւ հիւսիսային լերանց կողմէն և ամենուն սիրտը սարսափ ձգեց . մոլեգնած բռնաւորին ձայնն էր այն, որ կ'աճապարէր դէպ ի իր աշխարհը՝ թշնամոյն առջևն առնելու, որ իր եր-

կրին վրայ կ'արշաւէր: Հասաւ փութով, իր դե-  
ռահասակ որդիքը կովկասու ամուր կողմերը  
ղրկեց ապահովութեան համար, որոնք կուր գե-  
տէն անցնելու միջոց՝ մին գետը ինկաւ, և չկա-  
րենալով ազատիլ սաստիկ յորձանքէն, անոր ան-  
մեղ հոգին երկինք թռաւ: Այս բանս մեծ սուգ  
պատճառեց բոլոր երկրին, և մանաւանդ վազ-  
գենի, որ մոռցած թշնամոյն արշաւանքը՝ սկսաւ  
հեթանոս անյուտութեամբ ողբալ որդւոյն կորուս-  
տը. ընդ հակառակն, ուրախացաւ անոր աստուա-  
ծասէր մայրը Շուշան, որ իր սրտին ծաղկալիբ  
բուրաստանէն՝ զոր վազգէն զուր տեղ կ'աշխա-  
տէր աւերել և գօսացնել իր հոգւոյն փուշերովը՝  
կրցաւ գոնեա իբրու ամբիծ վարդ մ'ընծայել  
երկնաւոր փեսային. լաւ ևս բացատրելու հա-  
մար, իբրու որդեասէր մայր մը լացաւ իր որ-  
դեկին ցաւալի մահուան վրայ, բայց հոգւով ու-  
րախացաւ՝ որ գէթ ամբիծ պատմուճանով և սուրբ  
թևերով հաւատքին թռաւ առ Քրիստոս: Նոյն  
միջոց այլևայլ իշխաններ և պարսիկ մարզպանն  
խսկ եկան բղեշխին ապարանքը ցաւակցութեան  
և մխիթարութեան. այս առթիւ բղեշխը հեռա-  
ցուց Շուշանիկը պալատէն և հրամայեց որ ե-  
պիսկոպոսին քով երթայ: Շուշանայ համար քան  
զայս աւելի ինչ ուրախական հրաման կրնար ըլ-  
լալ. վաղուց արդէն հանած մերժած ըլլալով  
սրտէն հանդերձ զղուանքով, հիմակ իրօք ալ բո-  
լորովին մերկացաւ վրայէն տիկնութեան յետին  
մեացորդները, և զգեցաւ անարգ և պատառու-  
տուն զգեստներ. գնաց եպիսկոպոսին պալատը,  
վազեց Աստուծոյ տունը, և հոն մշտամուտնչ ա-  
յօթեքով, պահօք և տքնութեամբ՝ մահկանացուի  
կեանքէ վեր կեանք մ'անցնելով, եղաւ սիրելի և  
սխրալի ասե՛նուն, ևս Աստուծոյ: Շուշանայ հրա-  
շալի սրբութեան և ճգնութեանց համբաւը վազ-



գենի ականջը հասնելով, կորացաւ՝ գետին անցաւ ամօթէն և նախանձէն, երբ տեսաւ որ ինքը որչափ կը ջանար նուաստացնել, նա այնչափ աւելի կը փայլէր և կը պայծառանար. ուստի դարձեալ պալատը ուզեց կանչել զինքը: Բայց Շուշան որ այնուհետև բոլորովին ինք զինքը ֆրիստոսի նուիրած էր, սերժեց անոր պատգամաւորները եւ դեռ տիկնութեան ինչ նշան որ մնացեր էր վրան՝ բոլորն ալ ետ զրկեց, քաջութեամբ բսելով թէ « Ես պատրաստ եմ մեռանել, քան թէ անցանել զաւանդութեամբ հարց իմոց »:

Կատրեցաւ վազգէն այս համարձակ պատասխանին վրայ, սրեց իր անդուծ ժանիքը, և ինչպէս կինճ մը՝ որ եղջերուի հետք տեսնելով կատաղութենէն հուր և բոց կ'արձակէ աչքերէն եւ որսին ետևէն կը վազէ, այսպէս ալ վազեց սա մոլեգնած իր հեզուկ որսին վրայ. անլուր յանդգնութեամբ մտաւ Աստուծոյ եկեղեցին, և հոն խեղճ Շուշանայ վրայ թափեց իր բարկութեան փոթորիկը: Սրբութեան պաշտօնեաները և հաւատացեալները զարհուրեցան և քամնեցան այն աղիողորմ տեսարանէն, այլ ո՞վ կը համարձակէր ձայն հանել կամ՝ դէմ դնել այն զայրացած գազանին, որ հնոցի նման վառելով կ'այրէր իրեն մօտեցողները: Ինչ եղաւ ապա Շուշանիկ՝ այն այրող մրկող սրտին կայծերուն և բոցերուն մէջ, որոնք մինչև անոր ոսկերաց մէջ թափանցեցին... անշուշտ Հեղիողորի նման՝ կը գտնէր վազգէն ալ իրեն լրբենի յանդգնութեան արժանի պատիժը, եթէ Շուշանայ անյիշաչար սրտին աղօթքը չարդեւուր Աստուծոյ արդար բազուկը:

Վերջապէս հարկ էր որ բոլորովին հեռանար վազգէն իր երկրէն և Հոնաց կողմերը պատեւրազմի երթար. ուստի գնաց վերջին անգամ մ'ալ տեսնելու Շուշանիկը, և կը կարծես, Հայ-


կակ, թէ գէթ վերջին մնաս բարեաւ ըսելու կամ սիրոյ ողջոյն մը տարու գնաց իրեն փառապանծ տիկնոջ. և միթէ կարելի՞ էր սիրոյ զգացում մը գտնուիլ այնպիսի վայրագ սրտի մը մէջ. ինչ կրնար ըլլալ վազգենի ողջոյնը, եթէ ոչ ուրիշ աւելի խստագոյն հարուած մը, ուրիշ աւելի չարանանհնգ հնարք մը տանջելու կամ բնաջինջ ընելու այնպիսի գերաշխարհիկ կեանք մը: Ինքն իսկ բռնաւորը կապկպեց Շուշանայ փափուկ ձեռքերը և ոտքերը երկաթէ շղթաներով, իբր յետին աստիճանի մահապարտ չարագործ մը, տարաւ ձգեց զինքը Ուփրեթայ խոր և մութ զնդանին մէջ, ուր ուրիշ ամուր շղթայ մ'ալ անոր պարանոցը անցուց: Այսպիսի անգուլթ տանջանքով գոհ չըլլալով այն գազանը հայհոյութեանց և լուտանքի տարափ մ'ալ թափեց խեղճ Շուշանիկի վրայ, և մահ սպառնացաւ՝ ով որ համարձակի ներս մտնել կամ կերպով մը սրբուհւոյն տանջանքները թեթեւցնել: Իսկ Շուշան, որ մինչև այն ատեն իր երկնաւոր վարդապետին նման « իբրև զորոջ առաջի կտրչի անմոռնչ կայր », ոչ բառ մ'ըսեր էր և ոչ անոյշ գանգատ մ'ըրեր էր, առիւծացաւ յանկարծ, բացաւ բերանը և Աստուծոյ ահաւոր դատաստանը յիշեցուց բռնաւորին, որ թերևս չարժի անոր խստացած սիրտը: Այո՛, Շուշանայ սպառնալիքը ցնցեց բռնաւորը, դողացուց անոր ոսկրները՝ այլ ոչ և սիրտը, որ յուսահատ կատաղութեամբ ելաւ բանտէն յուղայաբար, եւ գընաց:...

Այն մութ, խոնաւ և ահաւոր զնդանին մէջ մինակ մնաց Շուշան. շղթաներով կապկըպած ամէն կողմէ, դատապարտուած էր անշարժ կենալ. հազիւ թէ ձեռքերը միայն կրնար շարժել և այնչափ՝ որ կարենար պատառ մը գարեհացը եւ կաթիլ մը ջուրը բերանը տանիլ. լուրջիւնն եւ

մթութիւնն իրարմէ աւելի ահաւոր էին բանտեալին համար, և անոր տանջանքները դեռ աւելի կը սաստկացնէին: Շուշանայ բոլոր վայրկեանները՝ անընդհատ յաջորդութիւն մ'էին գիշերներու եւ տանջանքներու, աչքերը բոլորովին զնասուեցան արտասոււնքէն և խաւարէն. բոլոր մարմինը վերաւորուեցաւ շղթաներէն և այնչափ հարուածներէն: Բարեբախտաբար հաւատարիմ դրաներէցը քոֆն էր միշտ, արհամարհելով բռնաւորին սպառնալիքը. պահապաններն ալ աւելի մարդասէր գտնուելով քան իրենց տէրը, կը թողուին որ համարձակ գայ, մտնէ բանտը և մխիթարէ սրբութիւնը: Թէպէտ Շուշան կարօտ չէր մարդկային մխիթարութեանց, որովհետեւ ամէն վայրկեան հրեշտակաց քաղցր ընկերութիւնը կը վայելէր, և յաճախ Քրիստոս ալ երեւնալով իրեն՝ կը մխիթարէր անոր վշտացած սիրտը և կը զօրացնէր: Այսպէս կրցաւ քաջասիրտ սրբուհին համբերել այնպիսի դառն ցաւերու և տանջանաց, և երկնաւոր յուսով միայն լցուած՝ կրցաւ ողջ առողջ ապրիլ և անցնել այն երկար տարիները Ուփրեթայ բանտին մէջ, մանաւանդ թէ ինքն ալ յուսելու իր տանջանքները և մահացնել արդէն մեռած մարմինը, զրկելով զինքը պատառ մը անհամ անհոտ գարեհացէն և ջրիկէն: Շուշանայ հրաշալի վարույց, նահատակութեան և հրաշքներու համբար չմնաց մութ բանտին մէջ, ամէն տեղ տարածուեցաւ. բարեպաշտ հաւատացեալներ սկսան գունդագունդ բանտը թափիլ. և եթէ չկարենային ալ ներս մտնել, գոհ կ'ըլլային գէթ անոր ձայնը լսելով, անոր օրհնութիւնն առնելով և անոր աղօթից յանձնելով իրենք զիրենք, սրով շատերը հոգեւոր և մարմնաւոր բժշկութիւն ալ կը գտնէին: Այս լուրը մինչև վազգեհեի ականջը հասաւ, որ սրբուհին տանջելու ուրիշ հնարք չգրա-

ներով, — վասն զի տեսաւ որ տանջանքները եւ հարուածները գեռ աւելի զարմանալի կ'ընէին վկայուհին ամենուն աչքին, ինչպէս երկաթը՝ որչափ ծեծուի՝ այնչափ աւելի կ'ամրանայ, կամ աղամանդն որչափ շփուի և յվկուի այնչափ աւելի կը փայլի և կը գեղեցկանայ, — դիւական միջոց մը հնարեց, որով ոչ միայն յաջողեցաւ դառն կերպով հարուածել Շուշանայ սիրտը, այլ եւ բողբոջին խզել անոր մարդրտայեռ կենաց թելը. այն է՝ իր և Շուշանայ որդիքը կրակապաշտ և աստուածուրաց ընել: Այս գոյժս՝ յիրաւի Շուշանայ մայրենի սրտին սայրատուր սուսերի մը մահացու հարուածն եղաւ. այնուհետեւ աշխարհի և կենաց վարագոյրը բողբոջին մթացաւ առջևը, իրեն միակ յուսոյ ծաղիկը թառամեցաւ. փակեց աչքերը, լռեց, և սաստիկ բարախելէն եւ տրոփելէն վշտացած սրտին՝ մաշեցաւ կենաց գործարանը, և վերջապէս հիւանդացաւ: Անոր հիւանդութեան լուրը տարածուելուն պէս՝ ամէն կողմէ բազմաթեամբ՝ դիմեցին իշխաններ և սեծատեծներ, եպիսկոպոսներ և քահանայներ, արք և կանայք, անոր վերջին քաղցր տեսութիւնը վայելելու կամ օրհնութիւնն առնելու, և ոմանք ալ իրենց սրտագին յանձնարարութիւններն ընելու:

Յետ ամենուն իր վերջին օրհնութիւնը եւ հրաժարական ողջոյնը տալու, ինքն իր մէջ ամփոփուելով սրբուհին՝ գոհութիւն մատոյց Աստուծոյ այնքան կրած վշտերուն և տանջանքներուն համար, որոնք իրեն մէկմէկ աստիճաններ եղան գեռ աւելի բարձրանալու սրբութեան աւպարիզին մէջ, և սեծագոյն վարձուց և արդեանց պատճառ եղան: Խորին յարգանքով եւ հրճուագին սրտով ընդունելով ամենասուրբ Խորհուրդը, որ իրեն միակ մխիթարութիւնն եղած



ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

## ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

**Ե**թէ ուզես, Հայկակ, հռովմէական գուռոզ պիտու թեան աւերակները այցելել, անշուշտ պիտի գտնես անոնց մէջ մեր հին նախահարց ու մանց հեռքերը, պիտի տեսնես հոս հոն յազ թական կամարներու և սեանց վրայ դրոշմուած մեր ազգին անունը՝ ոչ ի պարծանս սեր, եւ մերթ ալ պիտի լսես աւերակներու ներքեւէն կամ բանտերուն խորերէն սեր իշխաններէն և թագաւորներէն ոմանց դարևոր և տխուր հառաչանայ տկար արձագանգները:.... Եւ քան շուշտ, Հայկակ, այդ արձագանգներն էին քան թէ հովերու կամ ծովուն բռնութիւնը, սր դէպ ի հռովմ քաշեցին կամ՝ միեցին երբեմն ազգասանդրացի նաւ մը, որուն մէջ կը գտնուէր հայկազն պատանի մը, զոր առաջին տեսնելուդ՝ պիտի ըսէիր անտարակոյս, թէ այդ հայկական վսեմագեղ հասակին և դիմաց ներքեւ՝ յունական նուրբ հանճար մը, աշխոյժ և կորովի միտք և եռանդուն սիրտ մը կը հանգչին: Սա ելլելով հռովմ, և յետ երազ քայլերով դիտելու վկայարանները գլխաւոր առաքելոց, դիտելու աճապարանքով հոյակապ քաղաքին հրաշակերանները, և ուշի ուշով զննելու մեր նախահարց յիշատակները, եթէ մնացեր էին դեռ, ընթերցաւ

անշուշտ քանդակագարդ սեան մը խարսխին վրայ դրոշմուած ընկճեալ ազգաց անուններուն մէջ՝ և սեր սիրելի ազգին անունը. և, սհ, այն հայրենասէր սրտէն ինչպիսի՝ արտասուաց կաթիլներ շողացին անոր վառվռուն գէպքին վրայ և ինչպիսի՝ խոր հառաչանքներ արձակեց: Այնուհետև չուզեց հոն մնալ սրտին ցաւէն, և « ոչ բազում ի հռովմայեցւոյն կացեալ քաղաքի » ըստ իր խօսքերուն, աճապարեց Բիւզանդիոն, և անկէ փութաց վայրկեան մ'առաջ հասնիլ հայրենեաց գիրկը, ուր կը յուսար, ինչպէս արժանի էր, թէ հարսանեկան պարերով և առագաստի երգերով իրեն և ընկերակիցներուն ընդ առաջ պիտի ելլեն հայրենակիցները, ինչպէս եղաւ երբեմն Ս. Մեսրոպբայ, և իրենք ալ ուրախութեամբ պիտի ընծայեն անոնց՝ ութ կամ տասը տարուան տաժանակիր պանդխտութեան և աշխատութեանց պտուղը: Եւ միթէ այնպէս եղաւ, Հայկակ... սենք ալ հարցնենք թորենացոյն հետ, « Ուր է քաղցր աչացն հանդիպումն... ուր երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցող »: Այսպիսի ողբերգական նուագներով կնքեց իր պատմութիւնը մեր բանասէրներու և պատմագիրներու հայրը՝ Մովսէս Թորենացի, ըսենք նաև՝ թէ այսպիսի ողբալի և կսկծագին տեսարաններով անցուց և կնքեց նա իր անմոռանալի և բազմարդիւն կեանքը, յապաշաւ իրեն ժամանակակիցներուն և ի ցաւ ապագայիցս:

Դնաւ սա Տարօնոյ Թորնի կամ Թորօնք գեղին մէջ չորրորդ դարուն վերջերը (թերևս 385–395 տարիներուն մէջ). իրեն պատանեկութեան միջոց տեսաւ և վայելեց մեր ազգին երկու ծայրագոյն գաւազաններու և աթոռներու միանգամայն պայծառութիւնը և ծաղկած վիճակը: Ս. Սահակայ

եւ Ս. Մեսրոպայ հսկող եւ անդուլ խնամոց ներքե՛ զարգացաւ հսկայաքայլ սրբութեան եւ իմաստութեան ասպարիզին մէջ. — և այն ժամանակէն կը փայլէին վրան արթուն մտքին եւ թափանցող հոգւոյն մանրակրկիտ ջանքը, աշխոյժ սրտին եռանդը, անխոնջ և ընդարձակ հանճարը, զորս ապա գեղեցիկ կերպով և մեծ յաջողութեամբ ի գործ դրաւ իրեն երկասիրութեանց մէջ: Միւս ընկերաց հետ ինքն ալ գնաց Եղեսիա, Բիւզանդիոն, Աթէնք, Աղեքսանդրիա, ամէն տեղ զարմանալի հանգիսացաւ սուր հանճարովը, և գերազանցեց ոչ միայն ազգային ընկերակիցները, այլ և բոլոր յոյն իմաստունները և ճարտարախօսները. մինչև անգամ Բիւզանդիոնի մէջ, բոտ ազգային աւանդութեան, զմայլեցնելով Մարկիանոս կայսրը և անոր պալատականները հանճարագիւտ և իմաստալից խօսքերով, սոխպուեցաւ կայսրն այս խօսքերս ըսել իրեն. «Ո՛վ Մովսէս, յաչս ամենեցունց ընտրեալ են բանք բերանոյ քո, սրպէս զառաջինս ի հօտորաց, և դու կարի քաջացար յոյժ »: Յետոյ Աղեքսանդրիայէն դառնալու միջոց, հովը տարաւ ձգեց նաւը մինչև ասիունքը իտալիոյ, ուսկից Հռովմ՝ անցնելով, ինչպէս վերը յիշեցինք, գնաց « ողջունել ի հանգիստ սրբոյն Պետրոսի և Պաւլոսի », անկէ անցաւ Բիւզանդիոն. և յետոյ աճապարեց հայրենիք, ուր եղբերդական տեսարաններ կը սպասէին իրեն:

Հասաւ Մովսէս Հայաստան, հարցուց փնտռեց իրեն հոգեւոր դաստիարակները, սիրելիքը եւ ծանօթները. այլ ոչ ոք կը պատասխանէր իրեն հարցմանց. ամէն տեղ լուծիւն և ամպուլթիւն էր, մանաւանդ թէ՛ ամէն կողմէ հեծուլթիւնք եւ ողբեր միայն կը լսուէին, աւերակաց դերբուկներ կը տեսնուէին, թագաւորաց և իշխանաց



չքեղ ապարանքները կը ծխային տակաւին. միով բանիւ, գերեզմանական քամներ լի տեսարան մը կ'ընծայէր հիմակ այն աշխարհը, զոր ինքը տարիներով առաջ ծաղկած և բարգաւաճ տեսեր եւ թողուցեր էր:

Ապշեցաւ շուարեցաւ երկարամեայ պանդուխտը և ինքն իրեն կը հարցնէր զարմացմամբ. Սա իմ Հայաստանս է, քաղցր հայրենիքս է. գուցէ խաբուեր՝ օտար աշխարհ եմ՝ եկեր... սակայն այդպիսի խօսքերով չէր կրնար ինքզինքը խաբել, որչափ ալ ջանար. հայրենեաց քարերը կ'ազդակէին՝ թէ դու մեր ծանօթ Մովսէսն ես. իր կոխած նուիրական վայրերը կը յիշեցնէին իրեն քանի մը տարի առաջ հանդիպած սիրալի պատահարները. Հայաստանի սրբազան լեռները, որ մանուկ հասակէն անոր բանաստեղծ մտաց սիրելի առարկաներ եղած էին, այժմ՝ իբրև անսուտ վրկաներ՝ իրեն աչաց հանդէպ կանգնած կը հատատէին՝ թէ տեսածները ցնորք չեն: Ո՞ր սիրտ, որ ցուրտ հագի կարող էր չզգալ այդ պահուն՝ հայրենեաց աղետալի վիճակը տեսնելով. իսկ ինչ կրակի և սառամանեաց դետեր խառն չանցան այդ պահուն խորենացւոյն հայրենեաց համար հալած մաշած սրտէն, քանի՛ անգամ չսեռաւ եւ չողջնցաւ նա. կրնանք երկբայիլ՝ թէ երկար ժամեր սերթ հեծութեանց և սերթ նուազման մէջ չանցուց նա, յինարան ունելով դողդոջուն մարմնոյն հաստատուն քար մը կամ ծառի բուն մը: Սաստիկ էին ցաւոյ տուած խոցերը. այլ զօրաւոր էր Քերթոզահօր քրիստոնեայ և վեհանձն ոգին, որ թէպէտ առ վայր մի ընկճեցաւ, բայց յետոյ սթափեցաւ, և ջրէն ելած թռչնոյ նման թօթվեց վրայէն վհասութեան կաթիլները՝ զոր բարձեր էր ցաւոյ լճէն. կանգնեցաւ և սկսաւ առաջ երթալ:

Յետ երկար շրջելու և հարցնելու, կը մտնէ Մովսէս իր բնիկ գաւառը Տարօն, կ'ուզէ քայլերը դէպ ի Յաշտիշատ գիւղը. հոն ներքին ձայն մը կը խօսի սրտին հետ, աներևոյթ աջ մը կը տանի զինքը վկայարան մը, ուր փոխանակ աստուածարեան Սահակայ՝ ցուրտ դամբանաքար մը կը ցուցնէ իրեն: Կը ձայնէ, կ'ողջունէ զինքը Մովսէս, կը հառաչէ, և կ'արտասուէ. և փոխանակ պատասխանի՝ իրեն կականալիւ ողբոց տըխուր արձագանգները միայն լսելով, սարսափած կը ձգէ և կ'երնէ իր միւս սիրելի վարդապետը փնտռելու: Կ'երթայ մինչև վաղարշապատի մօտերը, կը մտնէ Օշական գիւղը, և յետ ամէն մարդու և ամէն աւերակաց հարցնելու սուրբ Մեսրոպրը՝ իր սիրելի քեռին և վարդապետը, կը գտնէ վերջապէս անոր նուիրական դերեզմանը և չքեղ մատուռը, ուր փակելով ինք զինքը՝ աղօթքով, պահքով և արտասուելով կ'անցունէ իր կեանքը. և այն նուիրական դամբանին սրտաշարժ լուծեան մէջ, դրեթէ մտա երեսուն տարիներ աշխատելով անդուլ և անխոնջ մեղուի նման, գիտութեան մտ՝ և մեղր կը յօրինէ՝ ի վայելս և ի լուսաւորութիւն հայրենակիցներուն, որոնք ոչ միայն իրեն կենդանութեան միջոց դառն արհամարհանքով կսկծեցուցին իր զգայուն սիրտը, այլ և յետ մահուան՝ չթողուցին որ խաղաղութեամբ հանգչին ոսկրները վերջին հասարակաց քնարանին մէջ. ամօթալի և քտմնելի գործ, զոր մի միայն նախանձով և ատելութեամբ կուրացած մտքեր կրնային ընել: Եւ այսպէս, Հայկակ, նա՛ որ օրինակ և առաջնորդ եղաւ ամէն ժամանակի պատմագիրներուն, ճարտարխօսութեան գերագոյն վարժապետ, թարգմանչաց գահագլուխ, բանասիրաց մէջ ասենահմուտ, — նա, կ'ըսեմ, որ ամբողջ ազգի մ'անցած մեռելութիւնը կենդանացուց

մութին և յիշատակին մէջ, և ներկայ լուսաւորեալ դարուս քննութեանց և ուսումնասիրութեան այնքան նիւթ մատակարարեց, — իր կենդանութեան միջոց, ինչպէս կը պատմուի, ամէն տեղ գլխութեան և սիրոյ դռները գոց գտնելով դիմացը, մինչև անգամ ասենօրեայ հացի կարօտ՝ պարկը ուսը զարկած՝ դռնէ դուռ կը շրջի եղեր մուրալու. և քանի քանի անգամ փոխանակ պատառ մը հաց կամ գէթ կարեկցութեան բառ մը եւ հայեցուած մ'ընդունելու, նախատալից և գանալած կը մերժուի եղեր դռներէն: Անշուշտ այսպիսի անշուք և անծանօթ մոռացութեան մէջ պիտի թաղուէր և ծածկուէր մեր անմահ ֆերթողահայրը՝ հանդերձ իր հրաշալի պատմութեամբր, եթէ յանկարծ Աստուած « ընդ գրուանաւ ծածկեալ » ճրագը կամ մանաւանդ արևը, բարձրաբերձ աշտանակի վրայ շղնէր:

Այլ Մովսիսի նախ քան աշտանակին վրայ դրուելը, սակաւիկ մի դեռ նկատեմք զինքը « ընդ գրուանաւ ծածկեալ » իր այն անշուք միայնութեան մէջ, երբ ալէզարդ ծերունին զլուած եւ վշտացած այնպիսի ցաւագին դէպքերէ, որոնք կը սպառնային մինչև անգամ իրեն պատուական կենաց թելը խզել, աչքերը մէկդի դարձնելով այն եղած և չրլլալիք բաները շտեմնելու և չյիշելու համար, ծերութեան խոնջ և հնացած հասակը թօթվեց վրայէն, նորոգեց իր ժիր և առոյգ մանկութիւնը իբրև նորափեսուր արծուի, և սկսաւ մի առ մի մութին դիմաց նկարել ազգային պատմութեան այնքան սգալի և սիրալի դարերը և դէպքերը: Պատկերեց նա ընդարձակ յիշողութեան առջև, սեր ազգին երջանիկ նահապետին կեանքէն և յաղթութիւններէն սկսած, քաջին Արամայ շահատակութիւնները, գեղեցիկ և ողջախոհ Արայի վսեմական մահը, Զարմայրի

զարմանալի քաջութիւնները Տրոյիոյ դաշտին վրայ, Պարոյրի քաջապանծ արութիւնները մինչեւ Հայոց առաջին թագաւոր պսակուիլը, երկու Տիգրաններուն շքեղ յաղթանակները, առաջնոյն՝ ընդդէմ՝ Աժդահակայ և երկրորդին՝ ընդդէմ՝ Հըռովմայեցւոց, վաղարշակայ օրէնադիր բարեկարգութիւնները, Արշակներուն հուժկու և տոկուն թագաւորութիւնը, Արտաշէսներուն աշխարհակալ և աշխարհաշէն տիրապետութիւնները, Աբգարու և Տրդատայ հզօր և քրիստոնեայ իշխանութիւնները, սեծին Խոսրովու անպարտելի բազուկը, և վերջապէս վռամշապուհի խաղաղ եւ երջանիկ թագաւորութիւնը: Ահոնց հետ միասին յիշեց մեծամեծ իշխաններու և զօրավարներու քաջագործութիւնները, եւ մանաւանդ մեր պանծալի հայրապետաց, Լուսաւորչի և անոր սրբւոյց և թոռանց հրաշագործութիւնները, ոմանց նահատակութիւնները, այլոց աքսորը և երջանիկ դարձը, և ամենուն միանգամայն ազգին մատուցած բարիքը և երախտիքը: Ասոնք էին, Հայկակ, յետ աստուած խոհութեան և աղօթից՝ աստուածարեալ ծերունւոյս մտածութիւնները եւ խորհրդածութիւնները, զորոնք յաճախ որոճալով մաքին մէջ, կը պատրաստէր իրեն սպազայ հրաշալի պատմութեան ծրագիրը և նիւթերը, ի մի կը հաւաքէր իրեն ճանապարհորդութեանց միջոց քաղած եւ ստացած տեղեկութիւնները, իրեն գրութեան աղբիւրները կը հետադոտէր և մասերը կարգի կը դնէր: Այլ առաջ չերթանք, Հայկակ, չանցնինք սահմանէն անդին՝ զոր դրեր է Քերթոզահայրս իրեն պատմութեան, և ողբերգական խօսքերու քօղով ծածկեր է սեր աշքէն այն ցաւալի պատկերները, զոր չէ ուզած՝ քան թէ չէ կրցած՝ նկարել մեզի. մանաւանդ թէ ողբերը և հեծութիւնները կապեր և խլեր են ձեռքէն անոր հրա-

չալի գրիչը. թշուառութիւն և աղէտք անընդհատ  
յաջորդելով իրարու, խեղճ ծերունայն սիրտը լը-  
քուցեր և հարուածեր են... բայց ոչ. կ'անցնի  
ահա փոթորիկը, կը փարատին սպառնալից ամ-  
պերը և վերջապէս կը ժպտի և կը փայլի սեր  
Քերթողահօր արեւը:

Այս միջոցները, որ է 465-470 տարիներուն,  
Հայոց հայրապետական աթոռին վրայ կը բազ-  
մէր Գիւտ կաթողիկոսը, որ աչակերտ էր Ս.  
Սահակայ և Ս. Սեսրովբայ և ընկերակից Քեր-  
թողահօրս, և էր « այր յի գիտութեամբ հայովս  
և առուելեալ յունիւն, ինչպէս կը գտիլէ զինքը  
Փարպեցին, յարգասաց բանիւ և առատարուխ  
վարդապետութեամբ »: Սա՛ իբրու հսկող և խը-  
նամուտ հովիւ՝ երբ իրեն թեմին այցելութեան  
ելլելով Օշական գիւղը հասաւ, ալնուական եւ  
հարուստ իշխան մը ճաշի հրաւիրեց զինքը. այս  
բանս լսելով ամէն կողմէ դիմեցին բարեպաշտ  
հաստացեալները, իրենց նուէրները և յարգանք-  
ները մատուցանելու ատուածաշնորհ հայրապե-  
տին. հոն ժողովեցան նաև բազմաթիւ ձայնեղ եւ  
երաժիշտ մարդիկ՝ ի պատիւ գալստեան կաթո-  
ղիկոսին երգեր երգելու և ուրախութիւններ ը-  
նելու: Յետ այլևայլ գեղեցիկ երգերու, երբ պահ  
մը ընդհանուր լուծիւն տիրելով՝ բոլոր հանդի-  
սականք զանազան ազգեցութեանց ներքև լռիկ  
մնջիկ կը խորհրդածէին, յանկարծ անկիւնը քա-  
շուած կծկած խեղճ ծերուկ մը ոտքի կ'ելլէ, աչ-  
կունքը կը փայլիլին, երեսները կարմիր կը վա-  
ռուին, և այն դողդոջուն շրթունքէն՝ խաղուն  
եւ ազգու ձայն մը հնչեցնելով, այն մաշած  
կուրծքէն՝ իբրու քնարի թելերէ՝ անոյշ երգ  
մը թրթռացնելով, ամենուն սիրտը թնդա-  
ցուց՝ զմայրեցուց, ամենուն աչքը և ուշը իրեն  
ձգեց: Լռեց ծերունին, բայց տակաւին անոր

ներդաշնակ ձայնին արձագանգը կը շարունակէր հնչել անոնց սրտին մէջ. և երբ հանդիսականք ավշած իրարու երես կը նայէին, երիտասարդ մը՝ որ ծերոյն քով անշարժ կեցած հազիւ կրնար ինքզինքը բռնել՝ հատկիեալ ձայնով զոչեց առ կաթողիկոսը. « Ո՛վ սուրբ հայրապետ, սա է ի ձէնջ կորուսեալն ծերացեալ աշակերան Սահակայ և Մեսրոպայ Աթենացին Մովսէս »: Շուարեցաւ հայրապետը, չէր գիտեր՝ ուրախանա՞ր արդեօք այն անակնկալ գիտին վրայ, թէ լար անոր թշուառութեան վրայ. ինքը երկուքը մէկտեղ խառնած՝ ցատքեց ակտուն, թուա զրկեց իր հին աշակերտակիցը. և երբ այն երկու իրարմէ աւելի վսեմ՝ ծերունիները՝ թնդուն և խօսուն սրտերով գրկախառնած չէին ուզեր բաժնուիլ իրարմէ, իբր թէ այնքան տարիներու կարօտը ուզէին առնուլ այն երջանիկ պահուն, բոլոր հանդիսականք ալ՝ նոյն զգացումներով լցուած՝ արտասուախառն ուրախութեան ձայներով տունը թնդացուցին: Լուրը տարածուեցաւ ամէն տեղ, դիսեցին իշխանները և ժողովուրդը, ծանօթները և անծանօթները, նոյն սրտածմլիկ տեսարանին ժամերը երկնցնելու, մանաւանդ թէ ուրիշ սրբազան հանդիսի մ'ալ ներկայ ըլլալու. վասն զի կը պատմուի՝ թէ նոյն տեղը, նոյն պահուն Գիւտ կաթողիկոսը Բագրևանդայ գաւառին եպիսկոպոս ձեռնադրեց Մովսէսը՝ կորովաբան և նրբահամաճար Եղնկայ ակտուն վրայ:

Ճշմարիտ առաքեալ ըլլալու համար՝ մէկ բան միայն կը պակսէր ցարդ Մովսիսի, որ է՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, այն ալ ստացաւ. նա՛ որ մանկութենէ Հոգւոյն սրբոյ տաճար էր, ինչ զարմանք եթէ այնուհետև ուրիշներուն ալ կը բաշխէր Հոգւոյն սրբոյ շնորհները և զօրութիւնը, երկնից արժանաւոր պաշտօնեաներ կը հաս-

ցրնէր, կը սնուցանէր հաւատացեալները բանիւ կենաց, վարժարաններ կը հաստատէր և գունդագունդ աշակերտներ և վարժապետներ կ'ընծայէր ազգին, « անպարապ ի թարգմանութեանց և ի գրութեանց » ըլլալով մինչև ի խոր ծերութիւն, ինչպէս ինքն իսկ կը վկայէ: Յետ գրեթէ ամբողջ դարու չափ նուիրելու իր կեանքը եկեղեցւոյ և հայրենեաց, վերջապէս հարկ էր որ թօթվէր վրայէն մահկանացու հնացած մաշած պատեանը և անմահութիւն զգենուր. ոմանք մինչև Զենոնի կայսերութեան ժամանակ կը դնեն անոր երջանիկ փոխումը: Հաւանօրէն 485-487 տարիներուն՝ իր բնիկ գաւառին Տարօնի մէջ, մեծ սուղ և ցաւ պատճառելով իր սիրելի հօտին և բոլոր ազգին, աւանդեց Աստուծոյ ձեռքը գերամաքուր հողին՝ սեծանուն և հռչակաւոր մատենագիրը և եկեղեցւոյ վարդապետը, որուն սուրբ մարմինը ամփոփուեցաւ նոյն գաւառին Առաքելոց վանքի եկեղեցւոյն մէջ:

Չկայ, հայկակ, հայազգի մը՝ որ լսած և ընթերցած չըլլայ մեր Քերթոպահօր պատմութիւնը, ուստի անոր վրայ խօսիլ և խորհրդածել աւելորդ համարելով, այսչափ միայն յիշեցնեմ քեզի, որ եթէ անգամ մ'ալ կարդաս զայն, բաց ի ուրիշ զանազան գեղեցիկ խորհրդածութիւններէ՝ զոր հարկաւ կ'անցնես մտքէդ՝ այս ալ մտածէ, թէ որչափ և ինչպիսի տաժանելի աշխատութիւն եւ տտապանք կրեց մինչև որ ամէն տեսակ և ամէն լեզուով գիրք և հեղինակ աչքէ անցընելով գիշեր ցորեկ, կրցաւ հաւաքել և վայելուչ կարգով յօրինել գրեթէ 3400 տարուան պատմութիւն: Կարծեմ ոչ մէկ ազգի մէջ այսչափ արդիւնաւոր պատմագիր եղած է. վասն զի համեմատութեամբ դիւրին է ժամանակակից, ականատես և ականջալուր եղած բաները գրել, և ընդհակառակն շատ դը-

ժուար կտրել երկու հազար տարուան միջոցը, այն միթուլթեան և անստուգութեան մէջ լուսաւոր և ստոյգ իրեր որոնել և գտնել, այն քսան ու չորս դարերու խաւարին քօղը հերձուկ և անկէ նոր ազգ մը, նոր աշխարհ մը լոյս բերել. ո՛հ, յիրաւի սոսկում կը բերէ այս մարդու վրայ, և սակայն ըրեր և յաջողեր է բազմարդիւն պատմահայրս : Սոյն երկասիրութեան կորովի ոճը, վսեմ և զարդարուն շարագրութիւնը, գեղեցիկ բացատրութիւնները, հրաշալի և կենդանի նկարագիրները, յիրաւի զինքը աննման մատենագիր մ'ըրած են, և կրնայ իրաւամբ պատմագիրներուն մէջ ձևայ կոչուիլ: Ոչ նուազ ընտիր և օգտակար գիրք մ'է նաև իրեն Ալխարնագրութիւնը, որ Պտղոմեայ համանուն երկասիրութեան թարգմանութիւն կամ համառօտութիւնը կ'երևի, և Պիտոյից գիրքը, որ հռետորական հրահանգներու և օրինակներու առձեռն հաւաքածոյ մ'է, նոյնպէս թարգմանաբար յօրինած: Իսկ ո՛ւր թողունք անոր գեղեցիկահիւս Ճառերը, որոնց մէջ մերթմատազ կուսի մը հզօր թաղաւորի դէմ կանդնած յաղթանակը կը նկարագրէ սեզի՝ վառվռուն ուճով և սրտով, և մերթ Ռափայէլ-Սանցիոյի դրըշով և գոյներով կը պատկերէ մեզի թարսը լեւրան գերազանջ տեսիլը. և հուսկ ուրեմն, գեղեցիկ և իմաստալից շարականներով Քրիստոսի հրաշափառ տնօրէնութեանց առաջինը և վերջինը (Ծնունդը և Յարութիւնը) երգերով և տալով սեզի երգել, մաքերնիս և սրտերնիս իրեն հետ երկինք կը բարձրացնէ: — Արդ, ի՞նչպէս կը կարծես և կը յուսաս, Հայկակ, պատուել այսպիսի հայրենասէր հօր սիրուն յիշատակը. ի՞նչ կերպով կը կարծես անոր այնչափ բարեաց դոյզն իսկ հատուցում մ'ընել. միթէ ողբերո՞ւյ... այլ ինքն է որ այնչափ դարերէ ի վեր կու լայ և կը լացնէ զմեզ



սեր ազգին և աշխարհին թշուառութեանց վրայ-  
բայց մի լքանիր, Հայկակ, այսպիսի արտասուք  
բեղմնաւոր են. ծիածանը չի փայլիր երկնքի կա-  
մարին վրայ եթէ նախ չանձրևէ: Ներբողեաններով  
արդեօք, կամ թէ անգրիներով և դափնիներով  
կը յուսաս պատուել սեր Քերթողահայրը. այո՛,  
յիրաւի արժանի է ստոնց՝ այլ անկարօտ. վասն  
զի ինքը կանգներ է իրեն արձան և յիշատակ  
մ'անջնջելի իր Պարամոզքիչնը. այլ, աւանդ, այս  
ոսկեգիր մատենիս մէջ իսկ հոս՝ հոն կան սև  
էջեր... Թերութիւնք և պակասութիւնք ընդհա-  
նուր ազգիս, զորոնք եթէ նա իր ժամանակակ-  
ցայ վրայ տեսաւ և յանդիմանեց՝ իբր կրօնից  
Ֆնասակար և ազգակործան թերութիւններ, անով  
զսեղ խրատեց և յանձնեց՝ ուղղել զանոնք և ջնջել  
այն սև էջերը. զայս ահա կը պահանջէ ամենէս  
ալ, Հայկակ, մեր երանելի հայրը, եթէ կ'ուզենք  
հետևել իրեն լուսաւոր շաւղին եւ հաճոյական  
նուէր մ'ընծայել անոր:







**ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ**

## ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

**Ո՛հ,** որչափ թշուառ է, Հայկակ, այնպիսի ներուն կեանքը, որոնք հազիւ թէ կ'ողջունեն արևը, դեռ չճաշակած մայրենի կաթը և քաղցրութիւնը, դեռ չզգացած ծնողական սիրոյն համրոյրը և գգուանքը, իրենց խանձարուրքին միջէն յափշտակուելով՝ բախտին և պետտից ձեռքը խաղալիկ կ'ըլլան, ինչպէս շիւղ մը կատաղի ալեաց ձեռքը. կամ՝ որոնք հազիւ աչքերնին բացած՝ կը սկսին ճանչնալ հայրենիքը, և անոր ազնուական սիրով վառուած անոնց սրտերը՝ մինչ կը պատրաստուին գիւյսազնական առաքինութեանց բոցեր և կայծեր ցատքեցնել, և ահա յանկարծ անդուլթ երկաթը փայլակելով անոնց աչքին, ոչ միայն հայրենեաց, այլ և իրենց նորափայլ արևուն վրայ մուլթ վարագոյր մը կը ձգէ: Էւ կամ, որոնք ծնողաց և հայրենեաց սիրով ուռճացած, երբ ազատութեան մարտի սիւքը կը յուսան վայելել, նոյնհետայն, աւանդ, դերութեան սև շլթան՝ չգիտեմ՝ ինչպէս՝ օձի նման սողալով կու գայ կը պատառի անոնց բոլորը. որուն մահաբեր թոյնը եթէ մինչև սրտին խորն ալ չաղդէ, այլ ձեռքերը և ոտքերը կապկպելով՝ անկարող կ'ընէ իրենց և հայրենեաց ազատութիւնը

դարձեալ ձեռք բերելու: — Ուստի ճանչցիր, Հայկակ, թէ ինչպիսի գերուզոյն պարզւենք են մարդկային կենաց՝ կրօնք, հնուդք, հայրենիք և ազատութիւն՝ զորս սուեր է մեզի Աստուած. ասոնք եղան որ ծնուցին աշխարհիս վրայ ամէն տեսակ դիւցազուններ, նահատակներ եւ անձնանուէր մարդիկ. և ո՞վ որ զուրկ է ասոնցմէ, այնպիսոյն կեանքն անուրջ մ'է կամ պատկեր մահուան, եւ ոչ իսկ կէս կեանք. ձմրան ծաղիկ մ'է՝ տփզոյն, տգեղ և անհոտ, կամ թէ մանուսանդ՝ տատասկ մը :

Եւ ո՞ յիրաւի այս մասին կրնայ աւելի թըշուառ համարուիլ քան վահան Մաւրիկոնեան, որուն բախար թէպէտ ժպտեցաւ, այր, ծննդեան առաջին րոպէներուն, բայց ժպտաւ իսկոյն ծաղրի դարձաւ, մանաւանդ թէ հեգնական ծիծաղի, երբ զրկուելով նա ամէն բանէ, ծաղիկ հատակի մէջ մայրենի փափկիկ բազուկներէն շորթուելով՝ օտարութեան դժնիկ փուշերու մէջ նետուեցաւ. (450ին): Այս տողերը կարդալու միջոց՝ կարելի՞ է չյիշել, Հայկակ, Վիրգիլիոսի այն սրտաշարժ նկարագիրը, որ կարծես մեր այս ցաւալի դէպքը կամ աղէտը կը պատկերէ.

« Իբրու սոխակ անձկաբեկ ընդ հովանեաւ կազմախին  
Ջորգեկացն ողբայ կորուստ, զոր վայրենի արօրագիր  
ի բունին նըկատեալ շնւ թեւաբուսիկ՝ առ և տարաւ .  
Իսկ նա լայ զգիշերն ի զլուի, նըւազ նըւագս ողբերգական  
Յոստ մի նըստեալ գեղգեղէ, շուրջ լընու զվայրն յողորմ  
մըրմունջ . . (Մշակ. Գ. 508-512) :

Այս անձկաբեկ սոխակը՝ վահանա մայրն էր Ջորգիկ, կին քաջին Հմայեկայ՝ եղբօր վարդանայ, որ Գուգարաց աշխարհին ստուերներուն մէջ նըստած՝ գիշեր ցորեկ իրեն նոյրերգական և ուռագ-

Անրով կը լացնէր Հայաստանի աւերակները : Այն ողբերուն արձագանգները հասան մինչեւ Պարսկաստան, շարժեցին Աշուշային սիրաւը, որ իր շղթաներէն առաջ՝ անոր որդեկաց կապանքը ուզելով արձակել, ազահ թագաւորին աչքերը շլացուց ոսկով, և առաւ իրեց անոր ձեռքէն՝ Չուիկի ազնիւ գոհարիկները (455ին) : Երանելի մայրը լսեց հեռուէն որդեկաց մնչելը, վազեց ընդ առաջ, « Մհ, աչկունք հոգւոյս, աչացս լոյս, ո՞ր է իք, ո՞ր մնացիք » ըսել շմնաց, և ահա երեք քնքոյշ լուսաթև աղանիկներ թռան կախուեցան վարդի նման անոր պարանոցէն.... Քեզի կը թողում, Հայկակ, երևակայել (եթէ կրնաս) անոնց ուրախութիւնը, որ տկար գրչէս վեր է, և աւելի կարող եմ զգալ՝ քան բացատրել : Իսկ ո՞վ էր այն վայրենի արօրապիրտ, որ մօրը տաքուկ գրրկէն խլելով անթև անփետուր ձագունքը, աւերեց անոնց բոյնը և անմխիթար մայրը հալածեց մինչեւ սառնամած սահմանները կովկասու, ո՞վ կըրնար ըլլալ՝ եթէ ոչ նոյն ինքն սևերես Սիւնին վասակ :

Չուիկ, որ ըստ գովութեան Փարպեցւոյն, « եղև կին անուանի և առաւելեալ ամենայն լաւ եւ մտաւոր մասամբ յամենայն կանայս՝ որ ի Հայաստան աշխարհիս », Աշուշայի պալատին մէջ՝ իրեն և քաջին Հմայեկայ արժանաւոր որդիք կը պատրաստէր, առաքինութեան և հայրենասիրութեան ծաղկունքը տնկելով անոնց սրտին մէջ : Հայակովկասու ամայի ժայռերուն ծայրը դրած իր բոյնը, ո՞վ կը կարծէր թէ Արծրունի արծիւն Չուիկ՝ եկեղեցւոյ և հայրենեաց դիւցազուններ կը հասցունէր : Այո՞, թէ ինչպէս պէտք էր սուր և աղեղ գործածել՝ ինքը չէր կարող սորուեցնել որդիքներուն, այլ միթէ Արծրունեաց գուտարը եւ Մամիկոնեանց տիկինը չէր գիտեր և չէր կարող

հրահանգել զանոնք, թէ երբ, ի՞նչ հոգւով և ուր ո՞ւր դէմ պէտք էր զէնք գործածել. — ահա քեզի վահանայ կենաց արչալուսոյն մէկ քանի փայլերը՝ որոնցմէ կրնաս գուշակել անոր միջօրեայ պայծառութիւնը:

Սակայն քաջին վահանայ և եղբարց այն սաստիկ և յանկարծածագ պայծառութիւնը չէր որ շլացուց նախանձոտաց աչքերը, որուն համար, ինչպէս կ'ըսէ ֆարպեցին, « կային... որպէս ի մէջ թշնամեաց »: Եւ ի՞նչ էր արդեօք անոնց յանցանքը. լսէ, Հայկակ, և նմանէ. « վասն զի լուսազոյնք էին և երևէին յասենայնի, և ականաւորք ի խորհրդի, մտաւորք և իմաստնագիւտք, ի նետաձգութեան գեղեցկաձիգք և դիպեցուցողք, յորս՝ թեթևաշարժք և նախասպանք, յերկոցունց ձեռաց ջողակք, և յամենայն կողմանս ուղղակիք և շնորհալիցք »: Եւ յատկապէս վահան, ներկայ խորհրդածութեանս գլխաւոր դիւցազը, « էր այր մտացի, առողջախորհուրդ և բարեսէր », իրեն ներուն սիրելի, օտարներուն պաշտելի, իսկ պարսիկ իշխանայ և Պերող թագաւորին աչքին՝ գովելի և երկիրալի: — Կ'ուզես դու ալ, Հայկակ, վահանայ պէս սիրելի և պատուելի ըլլալ ասեան, նմանէ՛ անոր թուաքինութեանց և իմաստութեան, եթէ չես կարող հաւասարիլ անոր քաջութեան. այնուհետև մի վախեր չարանենդ աչքերէ: Եզիր հաստատուն վահանի պէս, և կը տեսնես որ քու թշնամիներդ ալ՝ իբրու չորացած խու մը՝ իրենք իրենցմէ վար կը թօթափին, ինչպէս եղան վատանուն վրիւր և դօդօշն Գաղիշոյ, որոնք իրենց նմանները ժողված՝ ստայօղ և թունալից թուղթերով պղտորեցին թագաւորին միտքը վահանայ դէմ. բայց իրենք աւելի շուտ պղտորեցան և պատժուեցան, երբ դահճաց սուրերէն վրիպելով՝ Աստուծոյ ձեռքը ինկան:

Նախանձու և ատերութեան վտանգաւոր ժայռերու մէջ, նախ քան յազթուէթիւնը՝ նաւարկեցաւ մեր դիւցազը, բայց շուտով և պատուով ալ ելաւ կանգնեցաւ: Յոգնած յաշաղկոտաց ամբաստանութիւններէն՝ աճապարեց վահան Պարսից արքունիքը, ուր թշնասեաց բերանը կարկել կարծելով՝ մարեց առ ժամն հոգւոյն լոյսը, եւ նախահարց սուրբ հաւատքը փոխանակեց կրակին հետ: Ասով ոչ միայն չյաջողեցաւ նա լռեցնել թշնամիները, այլ և խղճին ձայնը և երկնից բողբոջը իրեն դէմ՝ բարձրացուց. անգուցի մը մէջ տապալեց ինք զինքը, ուսկից ոպլ և պայծառ գուրա ելաւ յետոյ:

Շուտով ստրճացաւ ինքը, երբ տեսաւ թէ այն հուրը՝ զոր ինքը սխալմամբ իբրեւ աստուած պատուեց և գրկեց՝ սկսաւ թշնամոյ պէս այրել զինքը, ցեց եղաւ սրտին և սկսաւ կրծել իր կեանաց թելը. փսրձեց թօթօվել վրայէն, բայց տեսաւ որ դիւրին չէր՝ շատ խոր թափանցեք էր վէրքը. բայց յանկարծ յուռոյ նշոյլ մը ծագեցաւ սրտին մէջ, երբ յիշեց թէ երբեմն վարդան ալ նոյն վհին մէջ գլորած և դարձեալ դուրս ելած էր:

Նոյն միջոցները (որ է՝ 480-482 տարիներուն) ուխտապահ նախարարները զգուած բողբոջովն ուրացող իշխանաց կամակոր ճամբաներէն, ժողովեցան միաբան վահան Մամիկոնեանին քով, ուխտեցին մէկ սիրտ մէկ հոգի ըլլալ, « խրատուեալ իբրև զմի այր », և նման Մակարեանց՝ Աստուծոյ զօրութեամբ կռուիլ Պարսից դէմ, յանձն առնուլ քաջութեամբ մահ և կապանք, քան թէ իրենց նախնեաց սուրբ հաւատքը կամ հայրենիքը ուրանալ: ՀԱՄԱՐ Ա ԱՄԵՐԱՆԻՔ սրբազան բառերն յանկարծ բախելով վահանայ ցրտացած սիրտը, փոթորիկ մը յարսուղին ներսը. անոր հոգւոյն վրայ տարածուած սէ



քօղր պատուեցաւ, դուրս խլեց նա խղճէն ուրացութեան փուշը, վազեց եկեղեցի, հնչեցուց հառաչանքով և ի գութ շարժեց սրբութեան կամարները, գրկեց խաչը և վիրաւոր սրտին սպեղանի դրաւ: Հնոցէ դուրս թուած կրակէ գունտի մը նման վառեց խրախուսեց իր նիզակակիցները, տարաւ զանոնք սրբութեան պաշտօնէին ոտքը, և անոր աղօթքով և օրհնութեամբ սրելով իրենց սուրերը և զէնքերը, գիսեցին պատերազմի դաշտը: Բայց ո՞ւր են թշնամիք, ինչո՞ւ չեն երևիր... գիշերուան մութ վարագոյրը ծածկած էր տակաւին իրեն խաւարասէր պաշտօնեաները: Հարկ եղաւ որ Հայոց դիւցազներն ալ պահ մը մրափելով՝ վայելեն Աստուծոյ պարգևած հանգիստը: Սակայն չըջմուլի դեւ հանգիստ չձգեց վարագոյնապահ իշխանը, որուն սրտին մէջ արդէն վաղուց իսկ բուններ նստեր էր. այս նոր Յուդան՝ մերժելով ինք զինքը Հայոց ուխտապահ գնդէն, գիշերային ուրուականի նման՝ գնաց գաղտուկ շնչեց պարսիկ Ատրվըշնասպ մարզպանին ականջին վահանեանց խորհուրդը: Հարկ չկայ ըսելու՝ թէ վահանայ անուներ այնչափ դող ձգեց խեղճ պարսիկ զօրավարին սիրտը, որ իսկոյն թօթվեց քունը, արթնցուց իրեն բիւրաւոր զօրաց բանակը, և դողդոջուն քայլերով՝ ինչպէս նապաստակն որսորդին առջևէն՝ սկսան փախչիլ: Բայց վահանայ քաջութեան համբաւը և սարսափը չորս կողմէն պատեր էր զիրենք, չէին գիտեր ուր դիմել, ո՞ւր ապաւինիլ. ամէն կողմ՝ դիւցազին սրոյն փայլատակիլը և յաղթական դրօշը կը կարծէին տեսնել, ամէն կողմէ անոր ստուերը և խուճապը կը հալածէր զիրենք: Առաւօտուն ելան վահանեանք, զէնքով և զրահներով վառուած գետին ինկան՝ Աստուծոյ օրհնութիւնն առին, և յարձակեցան թշնամեաց վըրայ, սրոնք շուարած կեցեր էին: Պարսիկները

այն բունն ցնցումէն հազիւ արթնցած՝ կրցան իրենք զիրենք Արտաշատու բերդը ձգել: Տմանք Պարսից գնդէն՝ բոլորովին վարանած Հայոց յանկարծական յարձակումէն, ժամանակ չունեցան իրենց որջը մտնելու, ինկան ծուղակին մէջ, որոնց մէջ էր նաև խորամանկ աղուէսը Գաղիչոյ. Հայոց գունդն Արտաշատու բերդը պաշարեց: Այս անգամ ալ դարձեալ գիշերն օգնեց թշնամւոյն. առաւօտը Հայք բաց գտան բերդին դռները, ներս մտան և աւարէ զատ ուրիշ բան չգտան. բայց Ատրպատականի սահմաններէն դեռ կը լսուէին ահարեկած փախտողականներու յուսահատ ձայնները: Այսպէս կամ այնպէս, տարակոյս չկար թէ յաղթութիւնն Հայոց կողմն էր, և Կորթինակ էր այս՝ առանց պատերազմելու յաղթանակ կանգնել: Շատ աւարով և ուրախութեամբ դարձան Գուին՝ ուր բարբառ ազգին վարչութեան ղեկը Սահակ ասպետին ձեռքը տուին, իսկ հայրենեաց վրէժխնդիր սուսերը վահանայ յանձնեցին, զոր մէկ ու կէս դարէ աւելի գործածեր և պանծալի բրած էին իրեն նախահարք բիրազգի յաղթանակներով:

Մինչ այս մինչ այն, սիրտ առած թշնամիք ուրիշ փորձ մ'ալ բրին. մտան ծածուկ Հայոց սահմանները, անցան Երասխայ փոռնքը և սկըսան դէպ ի նախնուան արշաւել: Չի յոեց անհանդարտ Երասխայ, իրեն սահանաձայն կարկաճները հասուց մինչև վահանեանց ականջը, յըրցուց անոնց թշնամւոյն այրեցաւեր հետքերը. փութաց վահան չորս հարիւր ընտիր զօրաց գունդ մը տուաւ իր եզօր՝ վասակ զօրախարին ձեռքը և թշնամւոյն դէմ զրկեց: Մամիկոնեան սպուհն ուղերով նախ թշնամւոյն ուժը և թիւը լրտեսել՝ հետը քսան հոգի առած կուուակ գիւղը գնաց, ուր գիշերը ստիպուեցաւ կանգ առնուլ:

առաւօտը տեսաւ որ թշնամին գիւղը պաշարած էր. հոս բաւական չէր միայն քաջութիւն, այլ և խելքէ մտքէ վեր ճարտարութիւն պէտք էր, և բարեախաաբար մեր դիւցազին ոչ մէկը և ոչ միւսը կը պակսէր: Բայց ի՞նչ կ'ըսես, Հայկակ, որ երբ Պարսիկներն իմացան թէ վասակ զօրավարն էր իրեններով գիւղին մէջ պաշարուողը, սիրտ չըրին յարձակելու, և անշուշտ փախչիլ կը մտածէին, երբ վասակ այլևայլ պատգամաւորներ յղելով Պարսից բանակը, զբաղեցուց և խաբեց զանոնք, ճարտարութեամբ կապեց անոնց աչքերը և ձեռքերը, մինչև որ իրեն բոլոր մարդիկն երկու երկու կրցան դուրս ելնել գիւղէն և գաղտուկ ճանապարհներով փախչիլ: Միայն վասակ մնացեր էր գիւղին մէջ, երբ Պարսիկներն իրար անցան՝ իմանալով պատգամաւորութեանց նպատակը. այն միջոցին վասակ ալ հեծած իր պերճաստորդ օգաթուխ երիվարին վրայ, յետ Պարսից երեսը զարնելու անոնց վատութիւնը, մտրակեց ձին եւ փայլակի արագութեամբ կտրելով թշնամոյն բանակը՝ հասաւ վարազկերտ գիւղը, ուր ամէնքն ալ անզնաս և ողջանդամ կը սպասէին իրեն. — ահա քեզի պանծալի փախուստ մը, որ բիւրյաղութիւն կ'արժէ:

Կ'եռար տակաւին քաջին վասակայ արիւնը երակներուն մէջ, երբ կը յիշէր նոյն օրուան զարմանալի դէպքերը. ուստի աճապարեց առաւ իր քաջերը և գնաց Մասեաց-Ոսին Ակոռի գիւղին քով դրաւ բանակը, լսելով թէ թշնամին ալ վաղիւ հոն պիտի գար ճակատելու: Գիշերը հանգչեցան ամենքն ալ. կանգնեց վասակ բանակին մէջ իրեն դրօշը, ցցեց նիզակը և սուրը, որոնք բաւական էին իրենց գիշերային պահպանութեան համար: Ո՛հ որչափ խաղաղ և քաղցր էր արդեօք այն դիւցազանց քունը, որ առաւօտուն երբ վար-

դակարմիր արևը կ'ողջունէր աշխարհս իրեն նշոյլներով, տակաւին Հայոց բանակն անուշակ երազներու մէջ էր, և թշնամւոյն փողերն եղան որ արթնցուցին զիրենք: Հայր վեր ելան իսկոյն, խաչով իրենք զիրենք կնքելը՝ զէնքերնին առնուլ և իւրաքանչիւր ոք իրենց տեղը և կարգը բռնելը մէկ բրին . թշնամւոյն աչքին դիւթական բան մ'երևցաւ այս, և թերևս անլուր դարան կամ հնարք մը յաղթութեան: Չեմ ուզեր, Հայկակ, յուժեամբ զանց ընել մեր այն քաջազանց անսունները, զորս երկինք անգամ անմահութեամբ պատուեց . նախ, քաջն վասակ Մամիկոնեան՝ բանակին ընդհանուր զօրավարը, յետոյ կարովին Բարկէն Միւնի, արխասիրան Ատոմ Գնունի և իրեն Առաստոմ եղբայրը, և երկու հարազատ կամ սարականները՝ հրաշալին . Ներսէս և Հրահատ: Տեսնելով Պարսիկները Հայոց գնդին սակաւութիւնը, անհոգ կեցան՝ կարծելով թէ յիմարած են անոնք, և կամաւ մահուան ընդ առաջ ելեր են. բայց շատ չանցաւ՝ իմացան թէ իրենք են եղեր յիմարները, երբ Հայոց կորսվի նետերու և աէգերու հարուածներէն ստիպուեցան ետ ետ քաշուիլ: Պատերազմի սաստիկ խառնուրդին միջոց՝ Քարճոյլ Մախաղունին իրեն հարիւր վատերով Պարսից կողմն անցաւ. անով աւելի զայրացան մնացած երեք հարիւրը, որոնց աչքերէն հուր կը յայտէր, « և դէմք նոցա իբրև զդէմն առիւծու, թեթևագոյնք ոտիւք իբրև զայծեմուննս ի վերայ լերանց արագութեամբ », թափ սուլին յարձակեցան թշնամւոյն վրայ, և իրենց ջախու բազուկներով պղտորեցին այն մարմնեղէն մեծայաղթ գետը: Պարսիկները շփոթած սկսան զիրար ջարդել և կոխկուտել, շատերն ալ Հայոց հարուածներէն մեռան կամ փախան. Բարկէնի թիւին կողմէն՝ չգիտեմ՝ ո՞ր քաջ հայուն օրհնած սուտերը մէկ

հարուածով թուոյ՝ գետին ձգեց Ատրվշնասոյ մարզպանին դուխը. նոյնպէս արացոյ Գղիհոնը՝ Սիւնեաց տէրը՝ պիտի գտնէր Ատավմայ սուրէն իր արդար պատիժը, եթէ քաջին Բարկենայ վահանը՝ սրոյն և Գղիհոնի սրտին մէջ չիջնէր յանկարծ. հոս Բարկենի մէջ՝ երախտապարտ սրտի զգացումը յաղթեց արդար վրէժինդրութեան հոգւոյն: Իսկ վաս Գարծոյլը տեսնելով թէ չէ կարող լուսոյ մէջ համարձակ կռուիլ Հայոց քաջերուն գէմ, միտասէր ջղջիկներու նման՝ զիշեր միջոց ծածուկ դարան դրաւ Հայոց. տեսան կամ սարական արծիւները, խոյացան վրան և կոտցահար հալածեցին ուրացողը՝ իրեններով: Յետ պատերազմին չգիտեմ ո՞ւրկից շարժած Յովբայ փորձիչ դեւը, իրեն յիշուալից լեզուն վառողչի և վասակ Սահառունոյ բերանը դրաւ, որովք գնացին Գուին և պատմեցին երանելի հայրապետին և վահանայ, թէ բոլոր բանակը յաղթուեցաւ, մեռան զօրավարները, և մենք միայն ազատելով՝ եկանք ձեզի պատմելու: Եւ յիրաւի հայրենասիրաց սրտերը սգով և տխրութեամբ պիտի համակէին, եթէ յանկարծ Առտտոմ Գնուհիի աւետաւոր ձայնը և յաղթութեան փողերը չհնչէին, և ամենուն դիմաց թախիծը ժպիտի չփոխէին: Դոյն պահուն հատաւ նաև վասակայ յաղթական դունդը լի ուրախութեամբ, պատմեցին Աստուծոյ զարմանալիքը և թշնամւոյն կորակոր փախուստը (481-482ին):

Տեսար ահա և դեռ պիտի տեսնես, Հայկակ, թէ յաղթութիւնը ոչ բազմութեան և ոչ զինուց վրայ է, այլ Աստուծոյ ձեռքն է, և որուն կ'ուզէ՝ կը շորհէ զայն. ապա զուր տեղ կը փայլակեն սուր և կրակ մեր հայրենեաց շուրջը, եթէ Բարձրեալը թող չտայ զայն: Թող ժողովէ պարսիկը բիւրաւոր խուժադուժ ազգեր, զինէ անոնց ձեռքը

և կուրծքը, բայց քանի որ վահանայ սրտին մէջ կայ և կ'արծարծի հաւատոյ հուրը, միշտ իրեն է յաղթութիւնը: — Մեր էր թէ հայրենեաց սէրը միացած ըլլար միշտ կրօնից սիրոյ և զգացման հետ, յիրաւի ազամանդ կը դառնար. իսկ հայրենիք՝ առանց կրօնքի բիւրեց մ'է փշրուն, որ յաճախ ֆուսակար կ'ըլլայ. — դառնունք արդ վահանայ բանակը:

Հայոց չորս նշանաւոր նախարարութիւնք, որ են՝ Արծրունիք, Անձեացիք, Ռշաունիք և Մոկացիք, կամ Պարսից երկիւղէն անքած, կամ մանաւանդ անոնց միտիրը և ոսկին կուրացուցած զիրենք, անտարբեր աչով կը գիտէին հայրենեաց թշուառութիւնը. վահան քանի մ'անգամ փորձեց յնցել զանոնք, այլ մերժեցին անոնք քայլին հրաւերը, և փոխանակ Աստուծոյ և հայրենեաց սիրոյն՝ ընտրեցին Պարսից անդուծ կրակը՝ գրկել նստիլ, որով այրեցան և շատերն ալ իրենց հետ մրկեցին. միայն Ներսէս Երուանդունի և Յովհան Անձեացի իշխաններն եղան՝ որ իրենք զիրենք կրակէն դուրս նետեցին և մտան վահանայ դրօշին ներքե:

Լսելով Պերոզ վահանայ արութեանց համբաւը, զայրացաւ և սարսափեցաւ՝ թէ դա Ալեաց արնն ալ պիտի մարէ. փշապի նման գալարեցաւ բարկութենէն, և թունալից սրտին դառն զայրութը թափելով եղկելի վարդին վրայ, շղթայ շղթայի վրայ աւելցուց: Յետոյ տուաւ Ասրնեբսէզ զօրավարին ձեռքը անհամար բազմութիւն մը զօրաց և հրամայեց գոռոզաբար որ երթան ողջ ողջ բռնեն վահանը և իրեն բերեն, իբր թէ կարելի ըլլար բռնել այն հրաշէկ կայծակը՝ և չայրիլ հոն մէկէն: Զուարթացաւ Մամիկոնեան գիւցազը, ձայն տուաւ իշխաններուն և զօրաց, առին իրենց հետ երանելի հայրապետը Յովհան, և գնացին

Արտազ գաւառին Ներսէհապատ գիւղին քով բանակեցան, սրուն մտերր կեցած էր նաև Պարսից բանակը: Նոյն Արտազու գաւառն էր այս, որ երեսուն տարի առաջ կարմիր վարդանայ եւ անոր քաջ ընկերաց նահատակութեամբ պանծալի եղեր էր. նոյնպիսի հագւով, արութեամբ և կրօնքով վառուած էին նաև մեր ներկայ դիւցազնները. անբաժան է հոս ալ խոչը սուսերէն. իսկ թշնամւոյն կողմը՝ սեծ բազմութիւն և պատրաստութիւն զօրաց, բայց իրենց յատուկ վատութեամբ լի: Չափեց չափչփեց վահան թշնամւոյն բանակը, ուժը և գիրքը, և ըստ այնմ՝ կարգի դրաւ իրեն բանակը. գիշերը վրայ հասնելով, երկու բանակները այլևայլ և իրարու ներհակ աշղեցութեան ներքն՝ ծածկեց իրեն մութ վարագուրով, և զերեզմանական լռութիւն մը տիրեց:

Երկրորդ օրուան արեւը կարծես երկու դէմքով կամ երկու աչքով ծագեցաւ, միով՝ կը փայլէր և կը ժպտէր Հայոց, միւսով՝ խեթիւ կը նայէր և կը սպառնար Պարսից: Հնչեցին փողերը և սկըսաւ պատերազմը. նախ Հայոց աջ կողմը սկսաւ վտանգիլ, հասաւ վահան կարգի դրաւ. քաջացաւ Սահակ ասպետը, և տեսնելով Պարսից Ատըրներսէ սպարապետը՝ ուղղեց նիզակը շեշտակի անոր կուրծքին, ինչպէս նա ալ նիզակով պատասխանեց իրեն. և երբ երկուքին ալ նիզակները վրիպեցան, զայրացաւ Սահակայ սիրտը, մոնչեց մտրակեց երիվարը պարսիկ զօրավարին. դէմքատքեց քաջութեամբ անոր ձիոյն վրայ, և թշուառական պարսկին մայերը փետելով և գլուխը կռիահարելով՝ զինքը գետին ձգեց, որ հազիւ կրցաւ հետիոտս փախչիլ և աղատիլ: Սակայն կամաց կամաց սկսան տեղի տալ Հայոց քաջագոյններն. անգամ այն անհամար բազմութեան առջև. յողնեցան Հայոց

բազուկները այնքան հարուածներ տալէն, և աղմուկ մը ծագեցաւ իրենց մէջ: Չայն տուաւ վահան իր նիզակակից վրէն վանանդեցւոյն, կնքեց զինքը նշանով խաչին, և կայծակի պէս թռաւ թշնամեաց գնդին վրայ, զոր տեսնելով Պարսիկները լքան և շփոթեցան: Նոյն պահուն երկու հրաշալի կամսարականներն ալ հասնելով վահանայ մօտ, ակնթարթի մէջ հազարաւոր պարսիկ զլուխներ հնձեցին, իսկ վիրաւորներուն թիւը ո՞վ կարող է պատմել: Սակայն այս անգամ Մամիկոնեանին և կամսարականաց սուրերէն վրիպեցան վին խոռեան և վշնասպ, որոնք յետին յուսահատութենէ մղուած յարձակեցան Հայոց վրայ. և յիրաւի բռուն և սաստիկ էր անոնց յարձակումը, վասն զի, ըստ բացատրութեան Եղիշէի, օրհասական արջերու նման կատաղօրէն կը կուէին:

Բայց շատ շանցաւ՝ հոն ալ հասաւ վահանայ սուրը, և այնպիսի հարուած մը կշռեց, որ ոչ միայն խոռեանին կատաղութիւնը ի՞նչո՞ւց՝ այլ եւ եղկելոյն հողին յուղարկեց մինչև օտանգարամեօտաց խորը. նոյն միջոցին նաև կամսարական Ներսէսը՝ հօրը նման՝ երկայնաբուն նիզակով գետին տապալեց վշնասպը, և անկէց ալ վար՝ մահուան գիրկը: Հայոց բանակն իսկոյն ծունր դրաւ դաշտին վրայ, և իրեն դոհութեան կնդրուկներուն հետ՝ յաղթութեան պսակն ալ մատոյց Աստուծոյ. մտան Ծաղկոտն գաւառը, և ամէն տեղ ուրախութեան հանդէսներ կատարեցին:

Հասաւ վերջապէս, Հայկակ, հասաւ Պարսից տշխարհէն գարնանաբեր ծիծառը, ձայնեց՝ կրկնեց, և գտաւ վահանը. փարդի տերև մ'ունէր բերանը, հասուց զայն վահանայ ձեռքը: Առաւ Մամիկոնեանը, դարձուց՝ նայեցաւ, և յիշեց եղբայրը. համբուրեց զայն, և մարգարտի շիթ մը



փայլեց երեսին վրայ: Հասու, բուրեց ցանկալի  
զարունն ալ, բերաւ նա իր ծոցիկն առած ցան-  
կալի վարդը, ընծայեց զայն վահանայ և հայրե-  
նեաց, մինչ վահան նայն պահուն մտքով գնացեր  
Պարսկաստանի խոր գնդանին մէջ կը պրպտէր  
իւր անձկալի եղբայրը: Մ'հ, դատարկ գտաւ զայն,  
խորտակած գտաւ շղթաները և դուռը, երկար  
և խոր հառաչ մ'արձակեց սրտէն, բացաւ աչ-  
քերը, և ահա (ստոյգ թէ երող) ինք զինքը վարդ-  
եղբոր գիրկը գտաւ:... Եթէ զարմանալու բլլաս,  
Հայկակ, և հարցնես թէ ինչպէս կարելի էր  
այնքան շղթաներէ և պահապաններու հսկողու-  
թենէ ազատիլ, կը պատասխանէ քեզի նոյն ինքն  
վարդ, թէ « Մեծ է Աստուծոյ զօրութիւնն ».  
հարցուր և պարսիկ պահապաններուն, և կը լսես  
թէ « Մեծ էր վարդայ ուժը եւ ճարտարու-  
թիւնը » :

Մինչ այս ուրախութեամբ կը վայելէին վա-  
հանեանք հայրենեաց պաղպաժուն կամարին ներ-  
քև, կովկասու կողմերէն փոթորիկի որոտումներ  
հասան. վախթանկայ նենգաւոր շառաչներն էին,  
որուն թէ և հասու եղաւ վահան, բայց ընտրեց  
աւելի հաւատարիմ գտնուիլ իր երգման և սի-  
րոյն՝ քան արթուն և հնարիմաց երեկը. ուստի  
շարժեց իրեն քաջերուն բանակը դէպ ի վրայ  
աշխարհը, կամ՝ օգնելու վախթանկայ, եթէ  
ստոյգ էր պատերազմի ձայնը, և կամ՝ եթէ սուտ  
էր այն՝ դուրս ելլել վախթանկայ լարած թա-  
կարդէն և զինքը մէջը նետել: Սակայն ուշ կամ՝  
չուտ հասաւ իրօք Պարսից ահագին բանակը՝  
Մ'իհրան զօրավարին առաջնորդութեամբ. երկու  
բանակները կուր գետին եզերքը ճակատեցան,  
և շատ աղետալի եղաւ Հայոց համար այն պա-  
տերազմը: Այս անգամ բախտին անխը սահեցաւ  
վահանայ ձեռքէն, և երկու աննահանջ դիւցա-

զունքն Հայոց՝ Սահակ ասպետ և վասակ Սամիկոնեան՝ չկարենալով զսպել իրենց եռանդուն սրբտին քաջութիւնը և նահատակութեան փափսքը, ինկան փառօք դաշտին երեսը. մնացած զօրաց սիրան ալ բոլորովին լքած, պարսիկ սուրերու ճարակ ըլլալու նախատինքէն աւելի՝ փախստեան ամօթն ընտրեցին: Վահան և երկու կամսարականներն ալ՝ տեսնելով թէ մինակ մնացին դաշտին վրայ պարսիկ անհամար անճոռնի գունդերուն դէմ, չուզելով բոլորովին որբացնել Հայաստանը՝ դարձուցին ձիերուն երասանակը և սկրսան վազել փախստէից ետեւէն: Փախչելու միջոցին դաշտին երեսը դիականց մէջ փայլուն բան մ'երեցաւ վահանայ աչքին, ծանօթ ձայն մը հնչեց ականջին, մօտեցաւ տեսաւ որ Բարկէն Սիւնին էր՝ կարեվէր խոցուած. իջաւ ձիէն, դրաւ նրժուգին վրայ և հասուց զինքը սիրեղեաց դիրկր: Նոյն օրը. Հրահատ կամսարականին խստերախ ձին շլոթած այն շտապալից փախուստէն՝ գետին ձգեց տէրը և փախաւ. վտանգելով քաջին ուղքերը ժայռոտ տեղերէն՝ թշնամեաց ձեռքն ինկաւ. նայնպէս Յազդ անունով Սիւնի սեպուհ մ'ալ բռնուեցաւ, որ կրակին պաշտօնը արհամարհելուն համար՝ քաջութեամբ նահատակուեցաւ:

Շատ կ'երկարի, Հայկակ, եթէ մի առ մի պատմեմք քեզի վահանայ բոլոր պատերազմները, որոնք մէկմէկէ աւելի զարմանալի են: Քանի քանի անգամ պաշարուելով նա յանկարծ Պարսիկներէն քաղաքաց կամ բերդերու մէջ, մերթ Դուինի, սերթ վարայրվարոյ ամրոցին մէջ և ուրիշ անգամ Շտեայ գիւղին մօտերը, նա իրեն սակաւութիւ գնդով՝ կայծակի նման չորս բոլորը հուր և հարուած շողայնելով՝ կտրեց թշնամույն բանակը, անցաւ անխոց և անվնաս. երբեմն ալ իրենները վահանին կամ թեքուն ներքև պտշտպանած,

ինչպէս արծիւ մը իրեն ձագունքը, կարծես օգուն միջէն սաւառնելով՝ առանց տեսնուելու կ'անցնէր բազմութեան միջէն, և յետոյ կը սկսէր ետևէն թշնամւոյն վրան յարձակիլ և հայտածել զանոնք: Ուրիշ անգամներ ալ, կարգեղանացի դիւցազին նման, որ երկար տարիներ դողացուց Հոովմ, եզանց հրաշէկ եղջիւրներով կը սարսափեցնէր թշնասին, կամ ուրիշ առերևոյթ զինուած ըստուերներով կը շփոթէր Պարսից բանակը, և այսպէս հանճարով և ճարտար հնարքներով կը խլէր միշտ թշնամւոյն ձեռքէն յաղթութիւնը՝ ուր որ զօրաց սակաւութիւնը կամ բանակին գերքը երկրայեղի կ'ընէին զայն: — Եթէ գրիչս վահանայ սրոյն պէս ժիր և անխոնջ ըլլար, թերևս այսքան կռիւ և արիւն, աղմուկ և փոթորիկ տեսնելէն և լսելէն վերջը չի յոգնէր. բայց արդբաւ է, կը լռեմ՝ ես, և ո՞վ որ կը փափաքի, կարող է երթալ փարպեցւոյն հրաշալի էջերն ընթեռնուլ. կ'ուզեմ՝ հիմակ սակաւ մ'ալ խօսիլ համառօտիւ վահանայ խաղաղութեան միջոց ստացած իշխանութեանց և պատիւներուն վրայ:

Պարսից Պերոզ թագաւորը՝ յետ այնչափ տարիներ արեամբ ողողելու Հայաստան՝ վերջապէս գտաւ արժանաւոր պատիժը Հեփթաղաց օուրերէն. իրեն անգութ սրտին և բարուց հետ փակեց ցուրտ դամբանին ներքև ամէն աղմուկ եւ կռիւ. որուն յաջորդելով վաղարշ եղբայրը, հանդարտ և խաղաղասէր բարսաք մարդ մը, իրեն հետ արքունի գահուն վրայ բազմեցուց նաև սէր եւ խաղաղութիւն: Տեսաւ սա նախորդին թողած աւերակները, զորոնք եթէ չկրցաւ ալ կանգնել՝ գոնէ ջանաց դարմանել, ջնջելով հպատակաց սրտէն այն սև օրերուն յիշատակները. լսեց փրատոր զօրաց հռուսանքը, որդեկորոյս մայրերուն սղբը և հարազատաց տրտունջը, որոնք միաբան

Հայոց մահաուխի զէնքերուն դէմ՝ կը բողոքէին. խոստացաւ թագաւորը զինաթափ ընել հայազգի ուժեղ բազուկները հաշտութեամբ և սիրով՝ քան թէ սրով: Եւ կարելի՞ էր միթէ ողորել կամ խոնարհեցնել Մամիկոնեան զօրավարին աննուաճ հոգին, եթէ նախ ինքը չի խոնարհէր. զայս լաւ հասկեցեր էր վաղարշ թագաւորը, ուստի և փոխանակ զինուոյ՝ մեծագին ընծաներով և ողջունալի թուղթերով լցուց զարդարեց նիխորի, որ իբր մարդպան Հայաստան կու գար, և անոր հետ եղող մեծամեծ իշխաններուն ձեռքը: Անխիւ բազմութեամբ ընծայարբերներու հասաւ նիխոր Հայոց սահմաններուն մօտ, բայց վախցաւ շատ առաջ երթալ: Խորագիտութեամբ կանխեց զըրկեց առ վահան իրեն մեծամեծներէն մէկ քանին՝ ազնիւ ընծաներով և սիրալիւր ողջոյններով: Իմացաւ վահան՝ թէ ինչ որ առաջինները չյաջողեցան ընել զէնքով կամ երկաթով, սա կ'ուղէ ճարտարութեամբ յաջողիլ. այս ինքն է, ոսկւով շլացնել նախ աչքերը՝ և յետոյ ժանտ լուծը անցնել իրեն պարանոցը. ուստի չուզեց ընդունիլ նիխորի ընծաները, մինչև որ ինքն ալ իր պայմանները չընդունի: Վահան երեք պայման դրաւ. առաջին՝ պիտի թողուն որ Հայերը համարձակ պաշտեն իրենց քրիստոնէական կրօնքը. երկրորդ՝ իրենց հպատակաց մէջ լան ու չարը պիտի ընտրեն, և կրակազաշտութեան համար անարժանը պիտի չի բարձրացնեն. երրորդ՝ ուղիղ գառաստան պիտի կտրեն: — Թերևս ոչ մէկ հոովմայեցի կամ յոյն զօրավար այսպէս տիրաբար պայմաններ չեն դրած իրենց նուաճած ազգերուն, ինչպէս դրաւ վահան Պարսից նման սեծայաղթ տէրութեան մը հետ և կապկպեց անոնց ձեռքը և բերանը:

Նիխոր ընդունեցաւ վահանայ դրած պայմանները, և հրաւիրեց զինքը որ անկասկած իրեն

գայ. Վահան՝ յետ դիտելու արթուն և զգուշա-  
ւոր աչքով չորս բոլորը, որ չըլլայ թէ յանկարծ  
դարանի մէջ ինկնայ, մէկ քանի իշխաններով ա-  
նոր գնաց: Երբոր մօտեցաւ Նուարակ գիւղին,  
ուր որ բանակեր էր Նիխոր, վերջին անգամ  
մ'ալ ուզելով ցուցնել թէ տակաւին գիտէ մըռն-  
չել և դողացնել Պարսիկները, հրամայեց իրեն-  
ներուն հնչեցնել պատերազմի փողերը: Ինչ ցուրտ  
զարմանք, ինչ գունաթափութիւն, մանաւանդ թէ  
ինչ տագնապ էր այն՝ որ ունեցաւ Նիխոր երբ  
փողերուն ձայնը լսեց. բայց անկէ աւելի սար-  
սափեցուց զինքը Վահանայ համարձակ պատաս-  
խանը, երբ իրեն այս բանիս համար ըրած ազ-  
դարարութիւնն արհամարհելով ըսաւ. «Նախ արա՛  
ղիս Արեաց տեառն ծառայ, և յայնժամ առանց  
ուսանելոյ իմ ի քէն պահեցից զայդ կարգ »:  
Պարսիկ իշխանը՝ սրտին վախէն ծաղիկ և ժպիտ  
փայլեցնելով դէմքին վրայ՝ փութաց ընդ առաջ  
Վահանայ, գիրկընդխառն համբուրեց սիրով եւ  
մատոյց արքայից արքային ողջոյնը, յետոյ հան-  
դէսներով և կոչունքներով զուարթացուց Նիխոր  
Վահանայ սիրտը, և իր նախորդաց դառն բա-  
ժակները ուզեց մոռցնել անոյշ բաժակներով. հաշ-  
տութեան դաշինք և պայմաններ հաստատուեցան  
երկու կողմէն ալ և գրեցին վաղարշ թագաւո-  
րին. յետոյ ուրախութեամբ և շատ ընծաներով  
բաժնուեցան իրարմէ (484ին):

Տեսնելով Վահան՝ թէ երկու դրացի և ոխե-  
րիմ ազգերուն մէջ հաստատուեցաւ վերջապէս  
սէր և խաղաղութիւն, իրեն ուխտակից նախարար-  
ները հետն առած գնաց առ վաղարշ թագաւո-  
րը, որմէ ըստ արժանւոյն պատուեցաւ, Մամի-  
կոնեանց տէրութիւնը և բոլոր ազգին սպարա-  
պետութիւնն ընդունեցաւ, և անգին և շատ ըն-  
ծաներով և պարգևներով Հայաստան դարձաւ:—

Յանկարծ ճանապարհին մէջ վայրկենական սեւ յիշատակ մը՝ թեթև ամպի նման՝ վահանայ զուարթափայլ դէմքին վրայէն սահեցաւ գնաց. ի՞նչ էր արդեօք: Յիշեց նա, Հայկակ, տարիներով առաջ ըրած նոյն ճանապարհը, երբ հոգւոյն աչքերը մոխրով մրճոտած և սիրտը խղճէն խայթուած՝ հայրենեաց ծաղիկներն իրեն փուշ կ'երևէին. մինչ հիմակ՝ զուարթ աչքով ու սրտով օտարին փուշերն ալ ծաղիկ կը տեսնէր. հապա հայրենաց ծաղիկները, Հայկակ... մէկ մէկ գոհար կը դառնային այն շափիղեայ պսակին, զոր Սգին հայրենեաց դրաւ անոր գլուխը, երբ պատռելով իրեն այրութեան և սգոյ քօղը, Մասիսու սարերէն վաղեց ընդ առաջ վահանայ, համբուրեց անոր ճակատը, հանեց ծոցէն մեր վերջին թըշուառ թագաւորին թագը՝ զոր թաքուցեր էր մինչև այն ատեն, դրաւ փորձեց անոր գլխուն, տեսաւ և շաա յարմար գտաւ. բայց, ափսոս, ժամանակը չէր ներեր: — Փութաց բոլոր աշխարհն ընդ առաջ ելլելու վահանայ՝ ծափածայն ուրախութեանց նուազներով. դիմեց երանելի հայրապետն ալ, և իր օրհնութեամբ ուրիշ մեծագոյն փառաց ասպարէզ մը բացաւ վահանայ դիմաց: Եւ յիրաւի այս առաջին քայլն եղաւ կամ՝ փայլն անոր ապագայ մեծութեան, որուն առջև լռեցին նախանձ և չարութիւն: Ի՞նչ լոյս էր որ յանկարծ փայլատակեց վահանայ չորս բոլորը, ի՞նչ հրապոյր էր՝ որով կրցաւ շահիլ թշնամեաց սիրտը և լեզուն: Ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ, Հայկակ, եթէ ոչ առաքինութեան լոյսն և հրապոյրը, որով մէկ եղած վահանայ թշնամիներն ու բարեկամները, ձանձրացուցին թագաւորը գովեստներով և դըրուատիքով, ու գրեթէ բռնի խլեցին անոր ձեռքէն մեր Մամիկոնեան դիւցազին համար՝ ամէն փառք և իշխանութիւն, և նոյն իսկ մարզպանութեան ծայրագոյն պատիւը:

Եթէ խոր և սաստիկ ձմրան մէջ՝ փայլուն եւ ջերմիկ արեգակնային օր մը կը կենդանացնէ եւ կը զուարթացնէ բոլոր բնութիւնը. իսկ վահանայ մարզպանութեան լուրը՝ անկէ շատ աւելի զուարթացուց և կենդանացուց մեր հայրենիքը: Թնդացին, տրոփեցին բոլոր հայութեան սրտերը. աւետիս և երգ առած բերաննին՝ պարուք և թմբուկներով՝ ծաղկափայլ տղայք և կուսանք, ժիր և առոյգ պատանեակք և երիտասարդք, ալեզուարճ ծերունիք, գիմեցին խմբովին առ վահան. ջանաց սա լռեցնել անոնց ինքնաբուխ օրհնութիւնները. այլ միթէ կարելի՞ էր լռեցնել այն անզուսպ թրթռուն սրտերը, այն բնական քնարները՝ որ իրենք իրենց կը հնչէին: Բոլոր բազմութիւնը տարին վահան յաղթանակով առ կաթողիկոսը, և անկէ գնացին եկեղեցի: Ականատես պատմիչը կ'ըսէ. « Եղև այն օր անյազ խնդութիւն և անսպառ ուրախութիւն՝ աստուածասէր բարեսիրացն և ողջախորհուրդ մտաց լաւահայեցաց. և սուգ թախանձալից և տրտմութիւն անմխիթար՝ խօթամտացն և խարդախաց »: Նոյն պահուն ելաւ կաթողիկոսն և իր անուանակից Ռսկեբերանին սրտով և լեզուով հրաշալի ճառ մը խօսեցաւ, որուն մէջ դրուատեց ուխտապահներուն շքեղ յաղթանակը, և ողբաց ուրացողներուն թըշուառ կործանումը, որուն վրայ ուրախութեան և ապաշաւանաց ողբեր թնդացուցին սրբութեան կամարները:

Այնուհետև սէր և խաղաղութիւն կանգնեցին մեր հայրենեաց և հայրենակցաց սրտերուն աւերակները. վահանայ մեծահաւատ հոգւոյն և աշխարհաշէն բազկաց ներքև՝ կրօնք և ազգութիւն, գիտութիւն և բարեկարգութիւն կենդանացան, աճեցան, պայծառացան: Երկնաւոր հուրը լափեց ատրուշանները հանգերձ անոնց կրակով, և ուր

որ երբեմն սուրը շողացեր էր վահանայ ձեռքը, հիմակ նոյն տեղերը նոյն աջին մէջ խաչը կը փայլատակէր և Աստուծոյ սեղաններ կը կանգնէին: Մեղուներու նման հալածանաց և պատերազմներու ծուխէն փախած անձինք, հիմակ յանկարծ սիրոյ և հաշտութեան աւետիսն առած՝ կը դիմէին խմբովին լեռներէ, անապատներէ գարնանաբեր ծիծառներու պէս, ոմանք իրենց ընտանեաց և սիրելեաց գիրկը կը ձգէին իրենք զիրենք. ուրիշներն ալ՝ յետ իրենց վանորէից եւ տաճարաց աւերակները ողբալու՝ նոր սրտով եւ հոգով կը կանգնէին զանոնք: Մըքան վարժարաններ, եկեղեցիներ, վանորայք և քաղաքներ՝ կամ բոլորովին նոր շինուեցան կամ նորոգուեցան, որոնց աւերակները միայն հասան սեզի:

Ութ անգամ (485-493) կատարեց արևը հաշտ աչքով իր բովանդակ լուսածիր շրջանը մեր հայրենեաց կամարին վրայ. իններորդին՝ չգիտեմ ինչո՞ւ՝ ոխացաւ մեզի դէմ, որ իրեն հաւատարիմ (բայց առ Աստուած անհաւատարիմ) պաշտօնասէր վազարչը զրկեց իր լուսէն, և Պերոզի հօրամայն կորիւն իժը՝ կաւատը բազմեցուց անոր գահուն վրայ: Սկսաւ դարձեալ Հայաստանի ոլորտը մթննալ, բայց վտանգ չի կար. դարձեալ դիտեցին դիւաշունչ մոգերը, մոխիր ցանեցին՝ բայց իրենց աչքերը կուրացան. հայութեան հոգին ալ սկսաւ երերալ և երերել վահանայ իշխանութեան գահը: Աճապարեց քաջը և փշրեց պարսիկ լուծը, զոր մոլի թագաւորը կ'ուզէր անցնել իրեն պարանոցը. վազեց՝ ջարդեց մոգերը, քանդեց նոր շինուած կրակատունները և Պարսից հեռքն անգամ ջնջեց Հայաստանէն: Մըմուաց՝ սպառնացաւ կաւատ, այլ ի վնաս իրեն. Յունաց կայսրութիւնն անոր պետութեան սահմաններուն մէջ մեծ հրդեհ մը ձգած էր, որ երթալով կը ճա-





**ՆԵՐՍԷՆ ԿԱՄՄԱՐՍԿԱՆ**



## ՆԵՐՍԵՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

**Ք**իՏԵՍ, Հայկակ, թէ ամէն անգամ ծովուն ալիքները չեն փչրեր նաւը կամ ժայռը, այլ յաճախ իրենք են որ կը փչրին. ինչպէս երբեմն ալ սաստիկ փշող հովերը, յետ հսկահասակ մայրիները գետին տապալելու, ճկուն եղեգէ մը յաղթըւելով ծաղր կ'ըլլան: Բայց այսպէս չէ, Հայկակ, հայ դիւցազի մը սուները. երբ կը փայլակէ այն՝ անհրաժեշտ է անոր հարուածը, իսկ եթէ հարուածէ՝ անյոյս է հարուածեալը. — այս սուներն է՝ որ պիտի տեսնես հիմակ, Հայկակ, մեր հրաշալի Ներսէն Կամսարականին ձեռքը:

Քաջ և սքանչելի Ներսէ՛հ՝ առաջինն էր Արշաւիր Արշարունույ կորեանց մէջ. անստոյգ է իրեն ծննդեան տարին, թէ և բաց ի սրտակցութենէ՝ կարելի է համարել զինքը հասակակից վահանայ Մամիկոնենոյ: Իրեն առաքինի և բարեպաշտօն մօր անունն էր վարդաւնոյշ, որ դուատր էր կարմիր վարդանայ. ուստի և Ներսէ՛հ մօր կողմանէ արժանաւոր թոռն էր և ժառանգ հոգւոյն և առաքինութեանց մեծ նահատակին: Այսպիսի ըսքանչելի ծնողաց որդին՝ զարմանք չէ թէ միայն հրաշալի Ներսէ՛հ մը կրնար ըլլալ, որոնց գորովալիր բազուկներուն մէջ և արթուն խնամոց ներքև մեծնալով, երկուքին ալ առաքինութիւնները

իրեն վրայ միացուց և փայլեցուց: Անոր դալար մանկութեան և առոյգ պատանեկութեան ծաղիկները թէ և մեղի համար մթութեան ներքե ծածկուած մնացին, սակայն մեր հայրենիքը լիովին վայելց անոնց անուշ պտուղը, երբ պատերազմի դաշտին վրայ փայլեցաւ Ներսէհի սուրը և նիզակը՝ վահանայ սրոյն հետ, Աստուծոյ անունը փառաւորելու, Պարսից անիրաւ լուծը թօթափելու և հայրենիքն ազատելու համար: Այնուհետև ամէն տեղ պատերազմներու մէջ առաջին կը հանդիսանայ սա՛ իր սուրը մերկանալու և աղեղը լարելու թշնամեաց դէմ, և վերջին՝ զանոնք ամփոփելու. ամէն կողմ թողուց իր արութեանց հետ. քերը, սրով գարուց ի դարս նուիրական գործեց հայ սրտերու՝ Արտաշատ, Ներսէհապատ, Ակոռի և վարազկերտ քաղաքները. և մինչև կովկասու սառնապատ սարերն անգամ գեռ կը հընչեն անոր յաղթական նուագները:

Երբ Հայոց ուխտապահ սակաւթիւ գունդը վարազկերտ աւանին մէջ բանակած էր, և վասակ սպարապետը կռուակ գիւղը գնացեր թշնամոյն բանակը կը լրտեսէր, Ներսէհ անոր տեղապահ և գնդին առաջնորդ էր, սրուն քաջութեան և իմաստութեան առջև տեղի կու տային նոյն ժամանակի բոլոր նախորարները:

Ակոռիի պատերազմին մէջ՝ երկու կամնարական հարազատները « Ներսէհ և սիրելի եղբայր նորին Հրահատ », (սա միշտ՝ սիրելի անունով կը կոչուի), գրեթէ բոլոր բանակին ոգին էին յետ վահանայ, և ամենուն առաջին և վերջին ուժը և յոյսն էին: Ամէն տեղ՝ ամէն մէկու պիտի հասնէին կայծակի նման, քաջերը պիտի վառէին, վատերը պիտի խրախուսէին, տկարներուն պիտի օգնէին. մէկ խօսքով, բոլոր պատերազմին ղեկը և պատասխանատուութիւնն իրենց

ձեռքն էր: Չգիտեմ՝ արժի՞ւ էր թէ առի՞ւծ Ներսէ՛հ այն պատերազմին մէջ, որ մերթ հեռուէն սոսկ մոնչելով կը դողացնէր Պարսիկները, և մերթ « որպէս բազէ յերամն թռչնոց », ըստ բացատրութեան պատմչին, կը խոյանար թշնամեաց վրայ, կը ջարգէր՝ կը սպաննէր և ետ կը դառնար: Պարսիկները չկրցան դիմանալ Հայոց քաջութեան առջև, գոհ եղան գէթ իրենց կեանքը ազատելով, թողուցին յաղթութեան փառքը և աւարը՝ և փախան. սակայն Պարջոյլ Մախազունին վատ և խարդախ հնարքով պիտի յափշտակէր Հայոց ձեռքէն յաղթութիւնը, եթէ արթուն եւ քաջ կամսարականները չհասնէին և չցրուէին անոր գունդը և դարանը:

Ներսէհի արութիւնն աւելի հոն կը փայլի, ուր վտանգն անհրաժեշտ է և անխուսափելի. ուր մարդկային հնարք և ճարտարութիւն կը լռեն, հոն կարծես աւելի կը զօրանայ Ներսէհի սուրը և աւելի ևս կը վառի սրտին հուրը: Ներսէհապատ գիւղին մօտերը եղած պատերազմն արգէն ծանօթ է քեզի, Հայկակ. հոն ալ նոյնպէս վահանայ երկու բազուկներն էին ուխտասէր կամսարականները, երբ անոր երկու կողմը կանգնած իրենց հսկայ հասակներով՝ իբր երկու սպառազէն աշտարակներ, կամ կրկին կրակաթափ հնոցներ՝ ամենուն արութեան հուր և բոց կը շնչէին: Երբ տեսան անոնք թէ Հայոց զօրքն ազմկած՝ իրար անցան Պարսից անհամար բազմութեան քան քաջութեան առջև, երկու կամսարականները՝ ձեռք ձեռքի տուած և մէկ սիրտ եղած՝ նետուեցան Պարսից բուն բանակին մէջտեղը, և սաստիկ խառնակութիւն մը ձգեցին թշնամեաց մէջ: Երկու քաջերը՝ թէ և պաշարուեցան անոնց բազմութենէն, բայց իրարու պարիսպ և վահան եղած, անշարժ և ամուր կեցան հոն, և իրենց

մօտեցողին պատիժը մահ էր: Նոյն միջոց Ատրվըշ-նասպ պարսիկ զօրավարը յարձակեցաւ Ներսեհի վրայ. քաջը բնաւ չայլալեցաւ՝ չի շարժեցաւ տեղէն, սպասեց որ մօտենայ. նոյն պահուն արժարժեցաւ սրտին մէջ հօրը՝ քաջին Արշաւրի դիւցազնական արուժիւնը, խաղաց երակներուն մէջ այն կորովը և եռանդը՝ զոր իրեն արեան հետ ստացեր էր, յարձակեցաւ և երկայնարուն նիզակով վարկաւ գետին տապալեց այն հսկայ մարդը. — Պարսից բանակին վերջին կայծն էր ան, զոր շիջոյց Ներսեհ և յաղթութեան պարծանքը ինքը տարաւ:

Կովկասու սարերն և դաշտերն՝ իրենց բոլոր ցրտութեամբ չեն կրնար զովացնել, Հայկակ, մեր այրած սրտերը, քանի որ կը յիշեմք այն ազետալի պատերազմը Հայոց և Պարսից մէջ, յորում շատ և մեծամեծ կորուստներ ունեցանք, եւ անոնց ամենուն պատասխանատու է վատ և ուխտադրութիւն վախժանիկ: Մահակ և Վասակ, քաջք և անուանիք, և քաջերու մէջ՝ սիրելիք և պաշտելիք, հոն ինկան պսակեցան, հեռու մեր մայր Հայաստանի գրկէն. այլ կայծ էր՝ որ թռաւ անոնց շրթունքէն. — բացաւ Մասիս իր ձիւնազարդ գլուխը՝ ողջունեց, ժպտեցաւ, և ծածկուեցաւ նորէն: — Վախժանիկ չկրցաւ երկար ժամանակ վայելել վատ և ուխտանենգ գործերուն պտուղը՝ իր երերուն գահուն վրայ, մինչև որ վար տապալեցաւ գահէն: Դեռ պատերազմին ելքը անորոշ էր, երբ տեսան Հայերը թէ վախժանիկ իրեններով պտոյտ տալով փախաւ, իրենք ալ կէս վհատած և կէս ահաբեկած, մաս մը Պարսից կողմը անցան՝ մաս մ'ալ փախան. մնացին միայն զօրավարներն իրենց սակաւաթիւ գնդերով: Ներսեհ կամսարական՝ բացած իրեն ծարաւի սուսերը՝ յարձակեցաւ կատաղաբար պարսիկ երկա-

Թապատ հսկայի մը վրայ. թուուց անոր գլուխը, բայց իրեն սուսերն ալ թուաւ ձեռքէն. առաւ նիզակը, յարձակեցաւ ուրիշ կատաղի պարսկի մը վրայ, որուն կուրծքի երկաթի տախտակները փըշրելու միջոց՝ իր նիզակն ալ կոտրեցաւ. հոն իրարու պատահեցան Ներսէ՛հ և վասակ՝ երկուքին ալ նիզակները խորտակուած, ժպտեցան, սիրտ տուին իրարու, և յառաջ գացին: Ներսէ՛հ կամ սարական արդէն մահը աչք առած՝ անզէն եւ անոք մտաւ թշնամեաց գնդին սէջ, և յետ մէկ քանի հոգի ալ գետին տապալելու իրեն կոտրած նիզակով, երբ հազիւ թէ պարսկի մը ձեռքէն նիզակը և սուրը խլելով՝ սարսափելի ջարդ մը սկսեր էր ընել, լսեց վահանայ փողին ձայնը, և գառնացած սրտով թողուց իրեն որսը: Գարձաւ տեսաւ որ Հայսց բանակը գատարկեր էր, և միայն վահան, իրեն Հրահատ եղբայրը և մէկ քանի զօրավարներ մնացեր էին. այն ատեն իրենք ալ սկսան հայ փախտէից ետևէն երթալ:

Հասաւ Ներսէ՛հ վահանայ հետ Մկնառինչ գիւղը, ուր ժողվեցան փախտեայ զօրքերը և զօրավարները. բայց չերևիր հոն Հրահատ, Ներսէ՛հի արծուի աչքերը չեն տեսներ զինքը, ո՛ւր մնաց, ինկաւ արդեօք պատերազմին մէջ. գերի բռնուեցաւ արդեօք Պարսիկներէն. բայց ո՞վ կը հաւասարի անոր ոտքերուն կամ ձիուն երագութեան: — Այն ատեն Ներսէ՛հ հեծաւ ձին, անտառ, ձոր և հովիտ չի թողուց՝ որ իրեն ողբերով չհնչեցնէ. այլ ոչ մէկ տեղէ չի պատասխանեց իրեն սիրելի եղբայրը. հանդիպեցաւ Պարսից զօրքերուն, որոնք յուշկապարիկներու նման անտառէ անտառ և ձորէ ձոր սահելով կ'երթային մուժ ժամանակ իրենց խաւարային նուագներով: Մօտեցաւ Ներսէ՛հ, տեսաւ անոնց մէջ պայծառ և լուսաւոր մէկը, որ հարկաւ պարսիկ չէր. այն սաստիկ մու-

Թը և բանակին աղմուկը չի կրցան արգելուլ երկու անբաժան սրտերու իրարու անգրադարձ ցուլացումը և հառաչանքը, ճանչցան զիրար Ներսէհ և Հրահատ: Երբ Ներսէհ իր սիրելի եղբօր կուրովի ձեռքերը սև ու հաստ երկաթներու մէջ տեսաւ, անոնց սուկ տեսիլն անգամ կարծես իժի նման իրեն սիրտը խայթեց՝ գետին ինկաւ, թալկացաւ. և այն օրէն յետոյ դառնացաւ իրեն ամէն բան: Ուզեց վերջին և յանդուզն փորձ մ'ընել, յարձակիլ Պարսից բանակին վրայ, կամ մեռնիլ և կամ ազատել եղբայրը անոնց ձեռքէն: Բայց իրեն ազօթքն և արտասուքը առ լուսաւորիչ՝ աւելի զօրաւոր գտնուեցան այս անգամ քան իր զէնքերը կամ սուրը. փութաց մեր Ս. Հայրը, կուրացուց Պարսից աչքերը և արձակեց Հրահատայ կապանքը. և մինչ Պարսիկները կը մըտածէին սպաննել զինքը, որ յանձն չէր առած երկրպագութիւն ընել արևուն, երկու սիրելի կամսարականները զիրար գրկած՝ սէր և համբոյր կը մատուցանէին իրարու:

Անգամ մը երբ վահանեանք խաղաղ և անկասկած կեցեր էին Դուին քաղաքին մէջ, Հազարաւուխտ պարսիկ զօրավարն եկու պաշարեց քաղաքը ծովացեալ բազմութեամբ զօրքերու: Ո՛վ կը կարծէր թէ այնպիսի վտանգաւոր պարագայի մէջ սիրտ պիտի ընէին Հայերը քաղաքէն դուրս ելլել, և թշնամոյն բանակին միջէն անցնելով փախչիլ. և սակայն ըրին և յաջողեցան: Հարկ էր կաթողիկոսն ալ ազատել թշնամոյն ձեռքէն. երկու քաջ նախարարները՝ Որդի Դիմաքսեան և Քաջաջ Սահառունի իրենց վրայ առին այս դիւցազնական գործը: Բայց երբ իրենց վահաններուն տակ ծածկած երանելի հայրապետը, սուրբերով և տէրերով ճամբայ կը բանային, երկուքն ալ նետահար ինկան, իրենց հետ գետին ձգեցին

նաև Յովհանն Մանդակունին, որ նոյնպէս վերա-  
ւորուած ինկաւ անոնց դիակներուն մէջ: Պատմու-  
թեան մէջ չի յիշուիր թէ ի՞նչ կերպով կամ ո՞վ  
եղաւ. կաթողիկոսն ազատողը. բայց յայտնի է թէ  
կամ հրաշք մը պէտք էր այն բանին համար եւ  
կամ ներսեհ մը:

Այս յաղթութեան վրայ՝ ամօթէն գետին անցած  
պարսիկ զօրավարը, վահանեանց ետևէ վազեց՝  
որոնք վարայրվարոյ ամրոցին մէջ ապաւինեց  
էին. հասաւ Հաղարաւուխտ, ամրոցը պաշարեց  
և մեծ աշխատութեամբ հազիւ կրցաւ տիրել:  
Որչափ արդեօք սաստիկ եղաւ անոր սրտի բար-  
կութիւնն և ամօթը, երբ տեսաւ որ հոս ալ խայ-  
տառակուեցաւ վահանեանց առջև. մէջի բնակ-  
չաց վրայ թափեց իրեն զայրոյթը, զմանս թրէ  
անցնել տուաւ, ուրիշները գերի բռնեց. գերելոց  
մէջ էին նաև կամսարական եղբարց տիկնայքը,  
զորոնք հրամայեց ամենայն զգուշութեամբ և պա-  
տուով պահել, յուսալով անոնց ձեռքով որսալ  
կամսարականները. բայց ունայն ելաւ իր յոյսը:  
Նոյն փորձն ըրաւ նաև ուրիշ խորամանկ զօրա-  
վար մը, բայց ի՞նչ կարող էին ընել այն ազա-  
մանդեայ սրտերուն, որոնց էութեան երկու գրչ-  
խաւոր տարերք էին հաւատք և հայրենիք, և ի-  
րենց յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած էին, որ  
և շիտակն պսակեց, դարձնելով անոնց սրբասէր  
ամուսինները: Վերջապէս յուսահատելով Պարսիկ-  
ները՝ զէնք և բռնութիւն մէկգի գրին, սէր եւ  
խաղաղութիւն հաստատեցին Հայոց հետ. վահան  
Մամիկոնեան՝ մարդպան եղաւ բոլոր աշխարհին,  
ներսեհ ալ բաց ի ուրիշ մեծամեծ պատիւներէ  
և պարգևներէ՝ ընդունեցաւ վաղարշ թագաւո-  
րէն կամսարականաց տէրութիւնը:

Ինչպէս զինուց և պատերազմի մէջ, այսպէս  
ալ խաղաղութեան միջոց ձեռնտու եղաւ վահա-



նայ մեր հայրենեաց ամէն բարեկարգութեանց մէջ. բայց առանձին կերպով շէնցուց վայելչացուց իր Շիրակ աշխարհը, եկեղեցիներ հաստատելով, վարժարաններ կանգնելով և ամենուն բարիք ընելով: Այն գերազանց գիւցազը՝ գիտցաւ նաև գորովասէր հայր մ'ըլլալ իր հպատակներուն, և նոյն կորովը՝ զոր ցուցեր էր հայրենեաց թշնամոյն դէմ՝ ցըցուց նաև իրեն հոգւոյն կրից և ախտերուն դէմ. որով ոչ միայն պէտք է սիրելի ըլլայ սեզի անոր յիշատակը՝ իբրև հայրենասէր գիւցազի, այլ և պաշտելի եւ նախանձելի պէտք է ըլլայ անոր վաղբը՝ իբրև կրօնասէր նահատակի մը կեանք, զոր սրբութեամբ կնքեց ի սուգ բոլոր հայութեան:







Գ Ա Յ Լ, Կ Ա Հ Ա Ն

## Գ Ա Յ Լ Վ Ա Ղ Ա Ն

**Չ**ի խորշիս, Հայկակ, այս քիչ մը անախորժ անունէս. մի՛ վախեր, մօտեցիր իրեն, դարձուր և ընթերցիր պատմութեանս էջերը, և պիտի տեսնես որ եթէ գայլ բառը ինքն իրեն անախորժ է ականջի, բայց երբ աւելցնես քովը վաճառի անունը, կարծես ախորժելի՛ սիրելի կը հնչէ հայ ականջի մը, գէթ այս տեղ. վասն զի պիտի տեսնես որ գայլ անուան ներքե՛ առիժ է եզեր իր ուժովն և կորովով, իսկ կենդանի հաւատքովն ու հանդարտ հոգւով՝ կրնայ մինչև գառն ալ կոչուիլ: Պէտք է դիտել նաև, որ ժամանակը և պարագայք ստիպեցին զինքն այնպիսի գիմակ առնուլ երեսը, որպէս զի կարենար հայածել օտար գիշախանձ գայլերը, որոնք մեր հայրենիքը կ'աւերէին և տոնակոխ կ'ընէին, թէ և ինքը կրնար իրեն նախնեաց պէս առիժ դառնալ ըստ պարագային, ինչպէս փորձով ալ ցըցուց:

Ծերացած առիժը Մուշեղ Մամիկոնեան, հասակին և յաղթանակներուն ծանրութեամբ ընկճուած, կը հանգչէր իր Տարօն աշխարհին մէջ, երբ խորով Բ Պարսից թագաւորը (603 թրւականին) Յունաց ֆոկաս կայսեր դէմ պատերազմի կ'երթար. Համարձակեցաւ նա առանց Մուշեղի Յունաց դէմ ելլել, մինչև այն ատեն

Մուշեղի սրով միայն ստացած ըլլալով իր յադ-  
թուլթիւնները: Մուշեղյանն չառաւ երթալ. նախ  
որ դառնացեր էր թագաւորին անհամուլթեանց  
վրայ. և երկրորդ՝ անգամ մը թողուցեր էր զէն-  
քը, և չէր ուզեր դարձեալ ձեռք առնուլ, թէ և  
իրեն ոչ ուժ կը պակսէր և ոչ ճարտարութիւն:  
Այս բանիս վրայ կատղեցաւ խոսրով, և երբ  
արչաւանքէն իր աշխարհը կը դառնար, ուզեց  
Մուշեղէն վրէժ առնուլ. իր Միհրան քեռորդւոյն  
ձեռքը երեսուն հազար զօրք տուաւ և Մուշեղի  
դէմ զրկեց, որ չլթայակապ բռնէ զինքը և Պարս-  
կաստան բերէ: Թէ և ծերացեր էր Մուշեղ բայց  
իր մռնչիւնը միայն բաւական էր գողացնել Պար-  
սիկները. սակայն չէր ուզեր վրդովել իր խաղա-  
ղութիւնը, թէ և կարող էր տակաւին ոչ թէ մէկ  
չլթայ, այլ երկու և երեք միանգամայն փշրել ի-  
րեն բազումներուն մէջ: Դարձաւ նայելու թէ ո՞վ  
կարող էր իր տեղը բռնել, և գտաւ Գայլ վա-  
հանը, որ արդէն իրեն ազգակից և արենակից  
էր. անոր և որդիքներուն յանձնեց Տարօնոյ բնիկ  
իշխանութիւնը, ինքն անորդի ըլլալով, և միան-  
գամայն Պարսից հետ պառտերազմելու պարտքը  
վրան գրաւ:

Պարսից Միհրան զօրավարն ամէն տեղ առ-  
ջևը բաց գտնելով մտաւ Հաշտենից գաւառը,  
հասաւ Արձան լեռան մօտերը, ուր երկու հազար  
զինուոր թողուց՝ իբր վերջապահ գունդ, զորոնք  
յետոյ լեռան վրայ արձանացուց՝ կեցուց անշարժ  
վահանի սուրբ: Հեղեղի մը նման՝ որ դարուվար  
կը վազէ թափով, Միհրանի բանակն արչաւեց  
հասաւ մինչև Տարօնոյ սահմաններուն մօտ. ամէն  
տեղ սարսափը տիրեց՝ բաց ի սրտէն Մուշեղի,  
որ երբ լսեց թշնամւոյն զէնքերուն շառաչը, հան-  
դարա սրտով ելաւ անառիկ Ողական ամրոցին  
ծայրը, դիտեց թշնամին, և վստահ դէմքով «Աւ-

տուժով մեր է յաղթութիւն » ըսելով, փութացուց վահան անոր առջևն առնուլ, կամ քաջութեամբ կամ ճարտարութեամբ: Միհրան հասեր էր մինչև Մեղտի և Աստղօն ամրոցին վրայ յարձակեր էր. եօթը կարմրաթեւ և լուսափայլ հոգիներ (խոտաճարակներուն), որոնց շուշանափայլ մարմինները վարդագոյն և նռնակերպ հարուածուեր թօթափեր էին Պարսից անգութ սուրերէն, հայրենեաց փրկութեան աւետիսը տալով Մուշեղի և վահանի, քաջալերեցին զանոնք: Այն ատեն զօրացաւ վահան, տեսաւ որ եկեր էր Գողիթ և Աստուծոյ անունը կ'արհամարհէր. անկարելի էր անոր զէնքին և բանակին դէմ զնել, ուստի հարկ էր Դաւթի հոգին զգե՛նուլ, անոր նման իմաստութեամբ և խորհրդով շարժել կամ ամփոփել սուրը: Ուստի փութաց ընդառաջ ելաւ Միհրանի, իբր թէ դառնացած Մուշեղէն. տեսաւ որ այս նոր Միսարան իր հայրենեաց կամարին ներքև եկեր շուր կը խնդրէ իրմէ՝ Մուշեղի գլուխը, ինքը վահան՝ Յայելի դաշխուրանը առած՝ խոստացաւ կոսք տալ իրեն, ոչ միայն Մուշեղի գլուխը, այլ և անոր գանձերը և բարեկամները և բոլոր աշխարհը. զուարթացաւ Միհրանի սիրտը. և միամտաբար անոր ձեռքը յանձնեց ինք զինքը և իրենները. — վահանի ճարտարութեան առաջին քայլն եղաւ այս:

Սակայն Միհրանի ներկայանալէն առաջ՝ վահան արդէն պատրաստած էր Օձ քաղաքին մէջ՝ իր օձի նման խորամանկ մարդիկը. և ինքը բազէէ հալածուած աղանիի կերպարանք առած՝ թռաւ առ Միհրան, որ Մուշ աւանին մէջ բանակեր էր: Սրտէն ծիծաղ, բերնէն սպառնալիք, սկսաւ վահան Մուշեղի դէմ խօսիլ, « և քանի որ ազատ է, ըսաւ, այդ անխոնջ բազուկը, գեռ շառ կրնայ լացնել Պարսիկ արեւը »: Լսեց, հա-

մուղուեցաւ Միհրան, և իր ամենէն քաջ զինուոր-  
ները վահանի յանձնեց. անոնցմէ յիսուն հոգի  
Խարն կոչուած գիւղը թողուց վահան, որ պա-  
տրաստ ըլլան՝ նշան տալուն պէս՝ փութան առ  
Միհրան և ուրիշ երկու հազար զօրք ալ բերեն  
(ձ քաղաքը: Իսկ ինքը կանխեց զօրքերէն առաջ  
մտաւ քաղաքը, նշան տուաւ իրեններուն որ պա-  
տրաստ ըլլան. պարսիկ գունդը՝ անկասկած եւ  
բոլորովին վստահ իրենց առաջնորդին վրայ՝ քա-  
ղաքը մտաւ. երբ փողեց վահան, կարծես այն  
դիւթական ձայնէն յանկարծ իրօք օձ կամ վիշապ  
դարձաւ քաղաքը և կլլեց բոլոր պարսիկ զօրքը:  
Յետոյ իր հաւատարիմ մարդիկներէն մին Խարն  
գիւղը զրկեց, որպէս զի այն յիսուն հոգին եր-  
թան ուրիշ երկու հազար զօրք ալ բերեն. նոյն  
միջոցին սեռած պարսիկներուն զգեստները հա-  
յոց զօրքերուն տուաւ որ հագնին, և անոնց զէն-  
քերը ձեռքերնին բռնած՝ քաղաքին դրան քով  
կենան, և հրամայեց որ Պարսիկները հասնելուն  
պէս յաղթական փողերը հնչեցնելով ներս մտնեն.  
և ճշգիւ հրամանը կատարեցին: Աճապարեց վա-  
հան և դեռ պարսիկ զօրքը քաղաքը չմտած՝ ա-  
նոնցմէ քսան հոգի զրկեց Միհրանի՝ իբր աւե-  
տաւոր քաղաքին առման. երբ բոլոր զօրքը ներս  
մտան, քաղաքին դռները փակել տուաւ, որ չըլ-  
լայ թէ դաւաճանութեան լուրը Միհրանի ա-  
կանջը հասնի. պարսիկներն այս անգամ ալ նոյն-  
պէս ջարդուեցան վահանի զինուորներէն, և ոչ  
պէ կրցաւ ազատիլ անոր ճիրաններէն:

Վահան այս յաջողութեանց վրայ ուրախացած՝  
ուխտարիւր հայ կտրիճներէն չորսհարիւրը Մեղ-  
տիի ճամբուն վրայ թողուց, ուրիշ երկու հարիւր  
ալ Ծծմակ կոչուած տեղը դարանի դրաւ, եւ  
ինքը մնացած զօրքը առած՝ Միհրանի քով գը-  
նաց. ամբաստանեց անոր՝ թէ պարսիկ զօրքերդ

ապստամբեցան ինծմէ, ոչ կը հնազանդին և ոչ ըսածներս կը կատարեն: Բարկացաւ Միհրան եղածին վրայ, և ուրիշ երկու հազար զօրք ալ տուաւ վահանին՝ որ երթայ ապստամբները պատժէ, և շուտով Մուշեղն ալ կապած առջեւը բերէ: Վահանն երբ Մեղտի գետին մօտերը հասաւ, պարսիկ գունդէն հազար հոգի իրեն հաստարիմ մարգկանց առաջնորդութեամբ դէպ ի յծմակ զրկեց. իսկ ինքը մնացած հազար հոգին գետին միւս կողմը անցնելով, խաբեց՝ զուարթացուց զանոնք ունայն յոյսերով. և երբ խոնջած ճանապարհէն՝ յուսալիր, անհոգ և անկասկած կը մրտիէին, վահանի մէկ նշանով՝ անարթուն աներազ քունի մէջ ինկան. նոյն բախտը ունեցան նաև միւս զօրքերը: Քանի մ'օր վերջը յաղթութեան աւետարտներ զրկեց Միհրանի, և ինքը հարիւր հոգի առած հետը աճապարեց անոր մօտ. գնաց հիւանդ գտաւ. պարսիկ զօրավարը, մխիթարեց զինքը, և խոտապաւ երկրորդ օրը Մուշեղ դիմացը բերել չլիթաներու մէջ կապկըպած: Յետոյ իբր թէ ծածուկ խօսք մ'ունի ըսելիք Միհրանի, հեռացուց մարդիկը, և ինքը ըսպառնալից դէմքով մօտենալով եղկելոյն անկողնին, Պարսից այնչափ հասուցած անիրաւ զնասներուն վրէժը թափեց անոր գլուխը՝ տէգով ցցելով զայն գետին: Լաւ հասկցաւ վահանն պարսիկ որսալու կերպը. Միհրանի ատենադպրին ձեռքով հրաւիրեց Ապահունեաց վարչիր անունով պարսիկ կուսակալը՝ իր գարանին մէջ ձգելու համար. վերջը նենդութեամբ ատենադպիրը եւ Միհրանի ուրիշ մէկ քանի իշխաններն ալ իրենց տիրոջ մօտ ուղարկեց: Իսկ միւս մնացած իշխանները և նախարարները՝ մինչ ուրախութիւն եւ խնջոյք կ'ընէին առանձին տան մը մէջ ժողված, վազեց վահան, պաշարեց տունը, և բոցերու ա-



հաւոր խարոյկ մը դարձուց զայն, որ բոլորն ալ այրեց լափեց:

Շտապեց վահան կուլթ լեռը գնաց, ուր ժամադրեր էր որ գայ վարչիր իշխանը. կանգնեց հոն Միհրանի վրանը, իր զօրքերը դարանի գրաւ ստորոտը, և Պարսից իշխաններուն զգեստները հագցուց իր զօրավարներուն: Հասաւ վարչիր և զօրքը լեռան ստորոտը թողլով՝ ուրախութեամբ մտաւ վրանին ներքև, և առանց գիտելու՝ գետին ինկաւ պատկառոտ դէմքով երկրպագութիւն ըրաւ Միհրանի գահուն վրայ բազմող հայ զօրավարին. յետոյ վերուց աչքերը, և ինչ սարսուռ էր որ յանկարծ պատեց զինքը՝ երբ իր չորս բոլորը պարսիկ զգեստներու ներքև՝ հայ գիւցազներ տեսաւ: Վախով դողով կրկնեց նա երկրպագութիւնը և չէր ուզեր գլուխը գետնէն վերցրնել, երբ վահանի որոտագոչ ձայնը և սպառնալիքը ցնցեց զինքը բոլոր մարմնով և ստիպուեցաւ վեր ցատքել. թշուառ մարդուն արիւնը սառեր՝ շրթունքը կապուեր էին. վերջապէս սիրտ տալով վահան՝ կրցաւ գոնեա անոր ձեռքը եւ գրիչը շարժել իրեն նորանոր որսեր պատրաստելու համար: Այն գրով վարչիրի բոլոր զօրքերը ասդիս անդին ցրուեց և զօրավարն ալ տասն հոգևով վեր կանչել տուաւ. յետոյ ամենուն պատիժը և վարձքը մէկ եղաւ՝ մահ. միայն պարսիկ զինուորներէն քառասուն հոգի կրցան փախչիլ և գնացին խոսրով թագաւորին պատսեցին վահանին ըրած այս բոլոր զարմանալի և ողբալի խաղերը:

Խոսրով թագաւորը լսելուն պէս՝ խելքը գըլխէն թռուց, կատաղութենէն չէր գիտեր ընելիքը. անհամար զօրք տուաւ Միհրանի հօրեղբօր՝ վախժանգի ձեռքը և վահանի գէմ՝ դրկեց: Իսկ վահան առջինէն աւելի անփոյթ և անայլայ-

լակ կեցաւ, բաւական էր իրեն խորամանկու-  
թեան զէնքը. ծածուկ կերպով տեղեկացաւ պար-  
սիկ բանակին թիւը և ուժը. որ ըստ այնմ գոր-  
ծածէ զէնքը. բոլոր դրացի իշխանները իրեն  
կողմը ձգեց, բաւական թուով և բաւականէն ա-  
ւելի զօրաւոր բանակ մը կազմեց: Խորամանկու-  
կութեան հետ քաջութիւնն ալ միացնելով այս  
անգամ, բնաւ չէր տարակուսեր յաղթութեան  
վրայ. ուստի անհոգ կեցեր կը սպասէր որ նախ  
թշնամին զինքը գրգռէ: Վախթանգ դեսպան  
ղրկեց իրեն որ հնազանդի և զուր տեղ չի պա-  
տերազմի. վահան ալ նոյնպիսի և դեռ աւելի  
սպառնալից պաասախան մը տուաւ վախթանգի,  
որուն վրայ զայրացած պարսիկ զօրավարը, չորս  
հազար ընտիր զինուորներու բանակ մը զրկեց  
Հայերուն դէմ: Ճիշդ ժամանակին հասան Պար-  
սիկները, երբ վահան ալ կարգի դրած իր բա-  
նակը և սուրը մերկացած՝ կը սպասէր թշնա-  
մւոյն. որուն յոգնութիւն առնելու ժամանակ ան-  
գամ չտուաւ, իսկ և իսկ յարձակեցաւ վրանին,  
չարաչար ջարդ մը տուաւ, զօրավարն ալ սպա-  
նուեցաւ պատերազմին մէջ, և հազիւ յիսուն հո-  
գի միայն փախչելով կրցան այս գոյժը վախ-  
թանգի ականջը հասցնել: Թեառոյ Ասուր անուամբ  
յոխորտ զօրավարի մը ձեռքը հինգ հարիւր լաւ  
կրթուած զօրք տալով վահանի դէմ՝ զրկեց. ե-  
կաւ այս գոռոզ զօրավարը և սուրէն առաջ լե-  
զուն բանալով, (իրեն քաջութիւնն անշուշտ լե-  
զուն ծայրը ըլլալով քան թէ սուրին), սկսաւ  
նախատել վահանը. իսկ սա անոր հակառակ՝ լե-  
զուն ամփոփելով՝ սուրը հանեց մերկացաւ պա-  
տենէն, և վատ Ասուրին վրայ յարձակելով՝ անոր  
լեզուն հետ գլուխն ալ պատժեց. պարսիկ զօր-  
քէն շատերը ջարդուեցան, մնացածներն ալ ցի-  
րուցան եղան: Անշուշտ այս անգամ ոչ ոք հա-

մարձակեցաւ գութաբեր ըլլալ վախժանգի, որ կը սպասէր անտարակոյս իրեններուն յազթական դարձին, երբ Հայոց փողերուն ձայնը ականջը հասնելով՝ դարձաւ նայելու, և տեսաւ որ արիւնազանգ պարսիկ զլուխներ շողշողուն սուրերու ծայրը բարձրացած՝ իրեն կը մօտենային: Սարսափեցաւ վախժանգ, թողուց հոն իրեն ունեցած չունեցածը, հեծաւ՝ մտրակեց ձին, և հազիւ կրցաւ ինք զինքը Պարսից սահմանը ձգել. եկան Հայերը, ժողվեցին թշնամւոյն աւարը եւ վախժանգի հարստութիւնները, դարձան յազթանակով եւ ուրախութեամբ իրենց տեղը: Իսկ Գայլ վահան դարձաւ յաջողութեամբ Մուշ, շէնցուց՝ զարդարեց իրեն աշխարհը, և յետ քաջութեամբ և խաղաղութեամբ կառավարելու իրեն հպատակները, մեռաւ յամին 606. ողբաց բոլոր ազգն այնպիսի քաջ զօրավար մը, որ իրեն հանճարով և զէնքով ազատեց հայրենիքը այնպիսի մեծամեծ աղէտներէ: Եթէ սա երբեմն հայրենասիրութեամբ վառուած՝ իրեն սուրը եւ խելքը չափազանց կերպով գործածեց, բայց իր հոգւոյն կրօնասիրութիւնն և հայրագութ սիրտը սրբեցին այն արատները, և զինքը մեր անմահ դիւցազներուն կարգը դասեցին:







**ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ**



## ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

**ԽՆՉՊԷՍ** որ յետ սաստիկ լուսոյ՝ երբ յանկարծ մթութիւն պատէ մեր շուրջը, կամ սաստիկ շառաչումէ վերջը յանկարծ խոր լուսութիւն տիրէ, մեր տեսութեան և լսողութեան ջղերը ցնցուելով՝ տարօրինակ զգացում մը կ'ունենանք. այսպէս ալ, Հայկակ, մինչև հիմակ Մուշեղեանց և վարդանանց, վահանեանց և կամ սարականաց զէնքերուն ձայներով և փայլերով վառուելէն և զուարթանալէն վերջը, երբ հիմակ մեր պիւթագորեան ծերունոյն լռիկ սենարանը մտնենք, նոյն զգացումը պիտի ունենանք: Մի՛ կարծեր տեսնել հոս վառվռուն հրաշունչ մարտիկ երիտասարդ մը, որ սուրը բացած կը վազէ հայրենիքն ազատելու, ոչ. այլ պիտի տեսնես չորցած անարիւն ճպուռ մը՝ ալևոր ծերունի մը, Արքիսեղէս մը՝ որ մէկ ձեռքը բռնած հսկայ կարկին մը, կը շափէ աստղներու շարժումը և հեռաւորութիւնը, կը գծէ երկնքին սահմանները, իսկ միւս ձեռքը

կչիւ մը՝ բունած՝ ժամանակը և չափերը իրեն գրչին նիւթ կ'առնու. տեսնենք թէ ո՞վ է սա :

Անանիա Շիրակացին եօթներորդ դարուն մէջ ծաղկեցաւ, որ հաւանօրէն Շիրակ գաւառէն էր, թէրևս Անի քաղաքաւանէն, ինչպէս ոմանցմէ Ալևնցի ալ կը կոչուի: Դժբախտաբար ոչ ծննդեան և ոչ մահուան տարին յայտնի է, ինչպէս նաեւ այնպիսի բարեբախտ որդւոյ մը ծնողաց անունը և վիճակն ալ բոլորովին անծանօթ մնացեր են սեզի: Զարմանալի հանճար մը կը ցուցնէր նա փոքրիկ հասակէն, որ դեռ աւելի զարմանալի եղաւ՝ բոլորովին նոր և չսուած գիտութեանց հայր և առաջնորդ ըլլալով Հայաստանի մէջ. ընտրած ճանապարհն որչափ անծանօթ էր՝ նոյնչափ ալ դժուարին. բայց իրեն սովորն և յարատև Զանքերուն առջև տեղի տուին ամէն դժուարութիւնք. չի խնայեց ամենևին ոչ ժամանակի և ոչ աշխատութեան. իմացաւ թէ ընտրած գիտութիւնը՝ քարի պէս ցամաք և կարծր էր, բայց կը յուսար թէ իրեն երկաթէ կամքով բաղխելով անոր՝ վերջապէս կայծ պիտի հանէր և լուսաւորէր իր ազգայիններուն մութ մտքերը: Տեսաւ թէ անկարելի էր Հայաստանի մէջ այս գիտութիւնը սորուիլ, ու զեց Բիւզանդիոն երթալ՝ որ ամենայն գիտութեանց աղբիւր և կեդրոն կը համարուէր: Նախ կարին գնաց. անկէ ստիպուեցաւ Քրիստափոր անունով մէկու մը քով երթալ, որ Չորրորդ Հայոց մէջ կը գտնուէր, ուր չգիտեմ թէ ո՞վ որո՞ւ ուսուցիչ կամ ուսանող եղաւ. վերջապէս վեց ամիսներու փորձը շատ իսկ ցուցնելով Շիրակացւոյն՝ թէ այնպիսի վարժապետի քով պիտի չկարենայ իր գիտութեան ծարաւն անցնել, ելաւ Բիւզանդիոն գնաց: Հոն որչափ մեծ եղաւ Անանիայի սրտին ցաւը և զարմանքը, երբ լսելով հմուտ մարդիկներէ՝ իմացաւ թէ այն գիտութեանց աղբիւրէն անցեր և անոր

կարկաջր չէր լսած. ստիպուեցաւ դարձեալ Սեւ ծովուն կատաղի ալիքները կտրել Տրապիզոն քաղաքը դառնալ, ուր նոյն դարուն ամենէն նշանաւոր աստղաբաշխը և թուաբանը Տիւքիկոս՝ կը գասախօսէր իր հաստատած վարժարանին մէջ, եւ աշխարհիս ամէն կողմերէ հոն կը գիմէին: Ասոր աշակերտեցաւ նաև մեր Անանիա Շիրակացին, զոր սիրով և ուրախութեամբ ընդունեցաւ Տիւքիկոս, և ամէն խնամք տարաւ՝ իրեն արժանաւոր աշակերտ և յաջորդ պատրաստելու զինքը: Շիրակացին ալ իր եռանդուն և յաջողակ ջանքերով լիովին վարձատրեց վարժապետին սէրը եւ համարումը, և իր մտքէ վեր յառաջագիմութեամբը՝ ոչ միայն ընկերներուն նախանձը շարժեց, այլ և անոնց սիրտը գրաւեց: Ութ տարի պանգխտութեան օգը ծծելով, զուրկ վայելքներէ և գգուանքներէ հայրենեաց և ծնողաց, միայն իր ազգին օգտին և սիրոյն համար՝ ուսաւ անխոնջ ջանասիրութեամբ ամէն գիտութիւն, սկսեալ յուսական իմաստասիրութենէն մինչև բարձրագոյն ծայրերը աստղաբաշխութեան և թուաբանութեան: Վերջապէս ակամայ և ցաւով սրտի ստիպուեցաւ հրաժարական ողջոյնը տալ հմուտ վարժապետին և սիրելի ընկերակիցներուն, և փութալ սիրելեաց և հայրենեաց գիրկը, յուսալով անուշցնել ազգայիններուն քիւֆը իր այնքան տարի և այնչափ աշխատութեամբ յօրինած մեղրով:...

Հոս ալ նորոգուեցաւ դարձեալ, Հայկակ, այն տխուր տեսարանը, ինչ որ պատահեցաւ թարգմանիչներէն ոմանց՝ երբ դարձան Յունաստանէն. եթէ Շիրակացին ալ ունենար մեր Քերթողահօր բարձր թոխչը կամ փափուկ քնարը, փոխանակ այս մէկ երկու՝ բայց և այնպէս կծու խօսքերուն, « Ոչ դք եղև շնորհակալ իմոյ աշխատութեանս, զի ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ




ծոյլք են և ձանձրացողք», — այրած սրտի խօսքեր, — անշուշտ հրաշալի կամ ցաւալի ողբերգութիւն մ'ալ ինքը պիտի յօրինէր: Ո՛րչափ իրաւցնէ վշտացուցին խեղճ ծերունւոյն սիրտը՝ այն կարճամիտ թերավարժ աշակերտները, որոնք դեռ հազիւ գիտութեան այբուբենը ուսած չուսած՝ կարծելով թէ իմաստուններուն կարգը անցան, սկսան իրենց վարդապետին դէմ յոխորտալ: Ուրիշներ ալ դեռ աշակերտիլ չուսած՝ վարժապետ ուզեցին ըլլալ, արհամարհեցին իրենց վարդապետին գիտութիւնը, և ջանացին ի դերեւ հանել անոր այնքան տարիներու արդիւնքը եւ ջանքը. — բայց ո՛չ մեզի սիրելի և յարգելի են անոր աշխատութիւնները, և օրհնեալ ըլլան անոր անմոռանալի արդիւնքները, որոնք ազգային գըւպրութեանց գանձարանին մէջ միշտ ունեցան իրենց յատուկ փայլը և պիտի ունենան:

Բայց բոլորովին անմխիթար չմնաց ծերունւոյն սիրտը. ունեցաւ իրեն արժանաւոր աշակերտներ ալ, որոնց անունները սակայն՝ աւելի իրենց վարդապետին շնորհիւ՝ քան թէ յատուկ անձնական արժէք մ'ունենալնուն համար հասան մինչև մեզի: Սակայն ասոնցմէ աւելի՛ իրեն և մեզի մըխիթարութիւն և դանձ են Շիրակացւոյն երկաւ սիրութիւնները, որուն գրիչը կամ հանճարը՝ բիւրեղի նման՝ այլ և այլ գիտութեանց գոյներ և փայլեր երևցուց միանգամայն: Ճարտասանական և փիլիսոփայական գրութիւններ հաւասարապէս կը բզիսեն անոր գրչէն, ինչպէս թուաբանական կամ ստուգաբաշխական գրութիւններ. գիտէ նա հաւասարապէս շարժել սրտերը և վառել հոգիները ընտիր շարականներով, ինչպէս նաև ճոխացնել մեր միտքը՝ կարևոր հմտութեամբք, օրինակ իմն, առանձին գլուխներով կը թուէ նա իրեն ծանօթ հայկական և օտարազգի կշիռները՝

գրամները և չափերը՝ սկսեալ փոքրերէն, եւ ոչ միայն անոնց անուաները կ'աւանդէ մեզի, այլ եւ իւրաքանչիւրին քանակը կ'որոշէ՝ գարեհատիւ կամ փոքր ծանօթ չափով մը, դնելով նաև անոնց համապատասխանող օտարազգի անուաները: Բայց քան ուրիշ ամէն տեղ՝ երկնքի կամարին վրայ կը փայլի անոր գրիչը, երբ գեղեցիկ ոճով կը շրջեցնէ ընթերցողին միտքը՝ արևուն, լուսնի և աստեղաց հետ, և մանրամասն կը յույրնէ անոնց ազգի ազգի զարմանալի փոփոխութիւնները՝ ըստ այնմ իրեն ոճն ալ գեղեցիկ կերպով փոփոխելով: Ո՛ր չափ երախտագէտ պէտք ենք ըլլալ իրեն, որ կը յիշէ սեր ազգին կենդանատեսակ կոչուած եւ միւս աստղներուն տուած անուաները, որոնցմէ ոմանք կան նաև ուրիշ գրքերու մէջ, որով կ'իմանանք թէ սեր նախնիք ալ աստղաբաշխութեան հմուտ էին ուրիշներուն պէս: Իրմէ կ'ուսանինք՝ թէ « ոմանք յառաջնոցն Հայոց ասացին՝ թէ խիտտ ձմերանի վահագն նախնին Հայոց գողացաւ զյարդն Բարշամայ՝ Ատուոց նախնոյն. (որով) և սեք սովորեցաք բնախօտութեամբ Յարգգողի հետ անուանել » Իրկաթին կոչուած աստեղախումբը: Իրմէ կ'ուսանինք՝ թէ « ձօնեալ իսկ հեթանոսաց զաւուրս շաբաթու արեգական և լուսնի և եօթանց մոլորակացդ, զոր կոչեն Հայք: Միաշաբաթ՝ Արեգակն, երկշաբաթ՝ Լուսին, երեքշաբաթ՝ Հրատ, չորեքշաբաթ՝ Փայլածու, հինգշաբաթ՝ Լուսնթագ, ուրբաթ՝ Լուսաբեր, շաբաթ՝ Երեակ » . ասոնք էին առաջ սեր եօթնեկի անուաները, որոնք յետոյ տեղի տուին եբրայական շաբաթ անուան, առջևը աւելցնելով մի, երկու, երեք, և այս եղաւ՝ հաւանօրէն Ե գարու մէջ ազդեցութեամբ սուրբ Գրոց: Այս և այսպիսի ցանկալի ծանօթութեանց շտեմարան մ'է հեղինակիս գործը: — Ուրեմն, Հայկակ, սիրենք եւ

յարգենք մեր Շիրակացի ծերունի հօր աշխատութիւնները, և մենք գոնեա ջանանք մխիթարել անոր վշտացած սիրտը, իրեն արժանաւոր աշակերտներ ըլլալով. եւ եթէ բոլորովին չի համոզուինք ալ իրեն նման, թէ « թուարանական գիտութիւն մայր է ամենայն իմաստից », բայց չենք կրնար ուրանալ թէ բարձրագոյն և օգտակար ուսում մ'ի է:







ԱՇՈՏ Ա ՔԱԿԱԻՈՐ



## ԱՇՈՏ Ա ԹԱԳԱԻՈՐ

**Խ**ՆՆԵՐՈՐԳ դարու կիսուն՝ սարսափելի դրութեան մէջ էր Հայաստան: Ամէն կողմ հեղեղօրէն կը վազէր արիւնը, ամեն տեղ աւերակ ու ամայութիւն էր: Գիւղերը ու քաղաքները կը ծխային դեռ, ողբերն ու կոծերը կը լսուէին դեռ արարացի խուժանին հետքերուն վրայ, որ շարք մը անլուր ոճիրներով պղծելէն վերջը հայ հողը, տեղի տալով իրմէ աւելի վայրագներուն, կ'երթար Պաղսատ՝ իր ետեւէն քաշելով շղթայակապ թշուառներու բանակ մը, — հայ ազգին ապագայ յոյսերը, — հոն ուրացութեամբ կամ սրով խամրեցնելու համար այն ժիր ու կայտառ ծաղիկ հասակը: — Եւ դու, Հայկակ, կը զարմանան դեռ թէ ինչո՞ւ սղաւոր ու սրտաբեկ նստեր կուլայ մեր մայր Հայաստանը, որ ուր որ դառնայ՝ կրակէ ու սուրէ գատ ուրիշ բան չտեսներ... Եւ չունի՞ իրաւունք Արտաւազդէն աւելի ըսելու, « Ես աւերակացի սրպէս թագաւորեմ »:...

Եւ դու, ցանկալի դարուն, որ քան ուրիշ ամէն տեղ՝ սոյո՞ր էիր գալ սեր հայրենեաց դաշտերուն ու հովիտներուն վրայ ծաղկապսակ գըլխով հեզանապ քայլերով պարել ու կայթել, եւ մերթ Մասիսու հետ ալ մրցելով կը վերցնէիր անոր ձիւնաթոյր քօղը և ծաղիկներով կը զար-

դարէիր անոր կուրծքը, ուր մնացիր, վախցար արդեօք սուրէն և հուրէն, բոցէն ու ծուխէն.....  
Ուր մնացին և քու ընկեր երաժիշտները, ծիծառն ու սոխակ, արտոյտն ու սարեկ, որոնց ձայները մերթ գերեզմանաց քարերն անգամ շարժելով մեռելոց ոսկրները կը զուարթացնէին... Խսկ հիմակ քեզի հետ ձգեր փախեր են, որ միայն մահագոյժ բուխճակներու անախորժ կռիւնչը հնչելով լացնեն տակաւին մեր հայրենի աւերակները:

Ահա այսպիսի անմխիթար վիճակ մը կ'ընծայէր սեզի Հայաստան, յետին ճգնաժամի մէջ, երբ Աստուծոյ ամենահաս աջը հասաւ օգնութեան, Աշոտ մը պարգեւելով մեզի, որ ոչ միայն կարող եղաւ Հայոց թագաւորութեան կործանած գահը կանգնել, այլ և իր քաջութեամբ և արժանիքով ամրացուց զայն և պայծառացուց, մինչև բիւզանդացի կայսերներուն անգամ նախանձելի ըրաւ:

Քաղաքատունի իշխաններուն մէջ՝ Խոստովանող անուամբ պատուեալ և սիրելի Սմբատը հարկաւ կը ճանչնաս, Հայկակ, որ 30-35 տարի սպարապետութեամբ շատ նշանաւոր եղաւ սեր ազգին պատմութեան մէջ. բայց շատ աւելի սեծ պարծանք եղաւ Սմբատայ՝ իրեն նման կորիւն և սեզի համար աննման Աշոտը՝ (Ժնած յամին 820), որ խանձարուրքէն աղանի մօրը քնքոյշ գրկին մէջ առիւծ կը մեծնար, մինչև անգամ մօրը մնչելու միջոց՝ մանուկն Աշոտ գիտէր մոնչել: Սակայն բարեպաշտ ծնողաց հոգն ու խնամքը չափու մէջ դրին իրենց որդեկին սաստիկ աշխոյժն ու կորովը. և յետոյ տանը մէջ չուսածը՝ բանակներու և պատերազմներու մէջ ուսաւ, այսինքն թէ յաճախ յաղթութիւնք սուրէն աւելի՛ խելքով և խոհեմութեամբ կ'ըլլան: Հասկցաւ նա թէ օտարներու այնքան սուրերու մէջ՝ սուր գործածելու

ժամանակ չէր, ուստի մէկ կողմը դրաւ զայն. ընտրեց իրեն խելք ու հանճար, որոնց հարուածները յաճախ շատ աւելի խոր և յաջող են՝ քան թէ սուրերուն: Ընդհանուր ալէկոծութեան մէջ էր Հայաստան, երբ Աշոտ երեսնամեայ հասակին մէջ մտաւ. պէտք էր հայրենեաց ղեկը խոհեմութեամբ ուղղել. անկարելի և նոյն իսկ վնասակար էր ալեաց դէմընդդէմ՝ ճակատիլ, ուրեմն հարկ էր կողմնակի սահեցնել նաւը:

Արաբացի արիւնարբու զօրավարը Բուղա, կատղած ցուլի նման (ըստ իր անուան), եղջիւրները սրած և ցցած՝ ամէն կողմ ծուխ ու փոշի փոթորկելով՝ կ'արշաւէր Հայաստանի վրայ: Աճապարեց Սմբատ՝ իրեն կորիւնը ընդառաջ զըրկեց, պատուիրելով յառաջագոյն՝ որ չըլլայ թէ ժանիքը կամ ճիրանները ցուցնէ այն սև ցուլին, հապա իր հասակին գեղեցկութիւնը, մտքին աշխոյժը և հոգւոյն պայծառութիւնը: Եւ իրաւցնէ կայտառ և վառվռուն երիտասարդը՝ շլացուց անոր վայրենի աչքերը, շարժեց սիրտը, և անոր գոռոզ եղջիւրները փշրեց. այն ատեն միայն սիրտ ըրաւ Սմբատ ստիկանին մօտենալու, և անոր շատ ծառայութիւններ ընելէն վերջը, երբեմն նոյն իսկ ի վնաս իր ազգակից իշխաններուն, Բուղայի ստիպումով Պաղտատ գնաց՝ իբր վարձատրուելու համար ամիրապետէն, բայց իրօք կապուելու, բանտուելու և վերջապէս հաւատքին համար քաջութեամբ մեռնելու (860ին):

Աշոտ յաջորդելով իր հօրը իշխանութեան մէջ, տեսաւ որ չորս բոլորը նենգաւոր և լրտես աչքեր կը դիտէին իր ամէն մէկ քայլը և շարժումը՝ Պաղտատու ալքունեաց լուր տալու համար: Բայց Աշոտ անոնցմէ աւելի խոհեմ և արթուն գտնուելով, սկսաւ ինքն իրեն կշռել և չափել քայլերը և շարժումները, և ամէն կերպով հաւատա-



րիմ ըլլալ ամիրապետին, որ գոնէ անով կարե-  
նայ Սմբատայ կապանքը արձակել կամ գէթ թե-  
թեցնել. և սակայն չյաջողեցաւ:

Մամիկոնեան տոհմէն մնացած յետին ճիւղերէն  
մին՝ Գրիգոր անուն, ցըցուց իրեն մամիկոնեան  
արիւնը և հոգին, երբ Արաբացուոց շլթաները  
խզելով փախաւ Պաղտատէն. արաբացի ոստի-  
կանները զո՛ւր տեղ որսնեցին արժուոյն հետքը և  
չի գտան. նա գնացեր Գազաւնահակ կոչուած  
քարայրի մը մէջ կը ճգնէր, ուր բնական մա-  
հուամբ կնքեց կեանքը, խոստովանող անունը ժա-  
ռանգելով: Աշոտ ստիպուած ամիրապետին հրա-  
մանէն, խոհեմութեամբ կտրել սուաւ Մամիկո-  
նեան իշխանին գլուխը և Պաղտատ զրկեց, որ  
չըլլայ թէ ուրիշ ողջ գլուխներ զոհ ըլլան անոր  
տեղ. այս բանիս վրայ ուրախացած ամիրապետը,  
ի վարձ հաւատարմութեան Աշոտի՝ իրեն պար-  
գևեց Բագրևանդ գաւառը, Գրիգորի կալուածը,  
և ուրիշ երեսուն հազար Փրանք:

Մէկ տարուան մէջ իրարմէ անելի դառն եւ  
պժգալի մահուամբ սատկեցան կորան Զափր եւ  
Բուզա, հրէշք և անէծք մարդկութեանս. քիչ  
վերջը յաջորդելով Մահմատ, արդար և խաղաղա-  
սէր ամիրապետը, ճանչցաւ և գնահատեց Աշոտի  
արթնութիւնը և խոհեմութիւնը, և ուզելով վար-  
ձատրել և փախարէն մ'ընել անոր Սմբատ հօրը  
անպարտ մահուան, իշխանաց իշխան անուանեց  
զինքը: Շատ չանցաւ՝ Հայոց աշխարհին հարկա-  
հանութեան ծանր պաշտօնն ալ Աշոտի յանձնեց,  
որ սկսաւ անկէ վերջը գրեթէ թագաւորական և  
բացարձակ իշխանութիւն վարել Հայոց, վրաց և  
Այդուանից աշխարհներուն վրայ, և քայլ մը միայն  
կը պակսէր արքունի գահին վրայ բարձրանալու:

Աշոտ՝ իշխանապետութեան առաջին տարին՝ իր  
աթոռանիստ Շիրակաւան քաղաքին մօտ մեծ զօ-

րահանդէս մ'ըրաւ, ուր ժողովեր էին նաև ուրիշ հպատակ իշխաններու և ազնուականներու զօրքերը. և երբ կը պատրաստուէր հիւսիսային ազգերու և իշխաններու դէմ երթալ, որոնք աւելի պաղեր ցրտացեր էին իրմէ և ամիրապետէն՝ քան թէ ապստամբեր էին, միայն իր համբաւը բաւական եղաւ զանոնք խոնարհեցնելու: Դոյն միջոցները Պոլսոյ հայրապետը փոտ՝ չի նայելով իր գործած անիրաւութեանց և այն ցուրտ և պախարակելի վարման արեւմտեան եկեղեցւոյ հետ, ուրիշներէն սէր՝ միութիւն և իրաւունք կը պահանջէր. այս նպատակով պատուագիր թուղթ եւ նուիրակ մը զրկեց առ Աշոտ՝ երկու եկեղեցիներուն միութեան և չորրորդ ժողովին (Քաղկեդոնի) ընդունելութեան համար, խաչափայտէն ալ մեծ մաս մը պարգև զրկելով անոր, զոր սիրով ընդունելով իշխանապետը՝ պսակեց անով իր բարձր գլուխը, զոր յետոյ թագով պիտի պճնէր: Աշոտ՝ որ հաւատար հայրենեաց՝ եկեղեցւոյ փառաց և խաղաղութեան ալ ցանկացող էր, Զաքարիա կաթողիկոսին հաւանութեամբ և նախագահութեամբ հրամայեց ժողով դումարել Շիրակաւանի մէջ. շատ լուսաւորեալ և իմաստուն եպիսկոպոսներ եւ վարդապետներ ժողովեցան հին, որոնց առջև պարզուելով ինդիրր, և միանգամայն մութ և պատրիշ երևոյթները վերցուելով բոլորովին, հայերն յանձնառու եղան փոտի առաջարկութեանց, եւ երկու ազգերուն և եկեղեցիներուն մէջ սէր եւ խաղաղութիւն հաստատուեցաւ (յամին 862): — Այս կրօնական ինդոյն անկարծելի և փափաքելի յաջողութիւնը՝ Աշոտի կենաց մեծագոյն պարծանքներէն մին եղաւ:

Այնուհետև ներքուստ և արտաքուստ խաղաղութիւնը տիրեց Հայաստանի մէջ, և ուրիշ ի՞նչ կը պակսէր երջանկութեան համար, եթէ ոչ

տևողութիւն այն հանդարտ և խաղաղ վիճակին մէջ: Բայց դժբախտաբար ժողովին յաջորդ տարին (863), չգիտեմ երկնից պատիժ մ'էր՝ թէ դիւաց վրէժ, սկսաւ երկիրը ցնցուիլ երերալ հիմունքէն, և չհանդարտեցաւ՝ մինչև որ նոյն դարուն մեր ամենէն ծաղկած և բարգաւաճ քաղաքը չի կործանեց: Դուին՝ յետ եղբրական մահուան Մեծին Տրդատայ՝ Դարու կիսուն կանգնած էր Հայոց հին մայրաքաղաքին Արտաշատի մօտ, և հինգհարիւր տարիէ ի վեր բոլոր Հայաստանի գլուխը և աչքը կը համարուէր, իր շինուածներուն գեղեցկութեամբ, բնակիչներուն ճոխութեամբ և բազմամարդութեամբ շատ նշանաւոր ըլլալով: Ինչ սարսափ և արհաւիրք էր որ տիրեց քաղաքին վրայ, երբ յանկարծ երերալով գետինը՝ վիշապի նման բացաւ բերանը և քաղաքին սեծ մասին հեա՝ տասուերկու հազար բնակիչ ակնթարթի մէջ կլլեց անհետ ըրաւ. չյագեցաւ անկուշտը, դեռ երեք ամիս կ'երերար և կը սպառնար, մինչև որ երանելի հայրապետը փակեց աղօթքով անոր մարդածախ բերանը և հանդարտեցուց:

Հազիւ դադրեցաւ այս շարժումը, ուրիշ շարժում մը սկսաւ Աշոտի իշխանութեան սահմանները վերուխայր ընել. Զահապ անունով իշխան մը մտեր Հայոց երկիրները կ'աւերէր և կը կողոպտէր: Աշոտ իր կարիճ սպարապետին՝ Աբաս եղբօր ձեռքը քառասուն հազար կիրթ ու շատ արիւն տեսած զօրք տուաւ, որոնք յանկարծ փոթորկի նման թափելով Զահապի բանակին վրայ, շփոթեցին զանոնք և ցիրուցան ըրին. մէկ կողմէն Հայերն իրենց փայլուն սուրերով, միւս կողմէն ալ Երասխ իր կատաղի ալիքներով՝ փակեցին թշնամւոյն բանակը, մէկէն փախչողը՝ միւսին ձեռքը կ'իյնար. Զահապ հազիւ տասն և վեց մարդով ազատելով՝ ամօթով ետ դարձաւ: Այս

յաղթութեամբ ոչ միայն Զահապ և բոլոր գրացի իշխանները և ամիրաները գիտցան իրենց չափը, այլ և Աշոտի իշխանութիւնը և Աբասի քաջութիւնը ճանչնալով՝ գլուխնին քաշեցին, լուռ ու անշարժ կեցան տարիներով:

Տասը տարւոյ չափ հանդարտ մնացին թշնամիները, Աշոտ ալ ամիրոփեց քիչ մ'ատեն իր պակուցիչ սուրբ, և փոխանակ անոր՝ ամէն կողմ՝ հնչեցնել տուաւ շինիչ և կանգնիչ գործիները, որոնցմով բարձրացուց եկեղեցիներ, պալատներ, աւերակները կանգնեց, զարդարեց՝ շէնցուց Հայաստանը և ասեճուն սրտերը՝ երջանիկ և խաղաղ օրերով, որոնք իր քաջութեան և խոհեմութեան պատուներն էին: — Ուր էր թէ, Հայկակ, ամէն դարու մէջ մէկ մէկ Աշոտներ ելլէին մեր ազգին մէջ. այն ատեն Հայաստան ոչ միայն պանդխտութեան և աւերակներու ներքե չէր ընկճուեր, այլ և անշուշտ մինչև հիմակ գահակալ և թագազարդ կը բազմէր՝ այժմու մանուկ պետութեանց մէջ... բայց այդ չեղածը թողլով, եղածին կամ ըլլալիքներուն դառնանք: — Նոյն միջոցները ազգիս հոգևորական իշխանութիւնն ալ իր պայծառութեան մէջ էր, այլազգիներուն ևս պատկառելի, մինչև արարացի իշխանը Յիսէ՝ ոչ միայն իբրև Աստուծոյ պաշտօնեայ պատուեց և սեծարեց սեր կաթողիկոսը, այլ և իբրու երկնաւոր իշխանի՝ չլուած պատիւներ և ընծաներ տուաւ:

Հայաստանի տասնասեայ խաղաղութիւնը առաջին վրդովողները Արծրունի իշխաններն եղան, որոնք ի բնէ անհանդարտ՝ և քիչ մ'ալ փառասէր ըլլալով, անընդհատ իրարու հետ կռիւ ունէին՝ գահու քան թէ իրաւանց պատճառաւ: Հազիւ թէ հասաւ Աշոտ և հանդարտեցուց զիրենք, ուրիշ կողմէ հրդեհ մը ծագեցաւ, որ յիրաւի կրնար ծանր հետևանքներ ունենալ մեր

աշխարհին համար, եթէ Աշոտ չգիտնար կամ չկարենար անոր առջևն առնուլ: Եմենիկ անունով զօրաւոր արաբ մը գլուխ քաշեց բուն օրինաւոր արաբացի կուսակալէն, որ էր հանդարտ և բարեռէր Յիսէն. սա՛ մեր Աշոտի օգնութեամբ ապստամբին դէմ գնաց, որով ընդ մէջ Եմենիկի և Աշոտի գժտութիւն ծագեցաւ: Սակայն Եմենիկ ըստ կարելոյն խոհեմութեամբ շարժեցաւ. գիտնալով իր չափը և Աշոտի ուժը, չէր համակձակեր դէմ առ դէմ պատերազմիլ, ուստի մտածեց ծածուկ խաղ մը անոր գլխուն. բայց մեր Աշոտը՝ քան զինքն աւելի ճարտար և խորագէտ ըլլալով՝ իր խաղը իր գլուխը դարձուց:

Երբ հայ իշխաններուն խնդրանք՝ Հայաստոնի վրայ սատիկան գրուեցաւ Ահմատ անունով մէկը, մեր ազգին բոլոր մեծամեծներն ընդ առաջ ելան, որպէս զի փառք և չքով տանին նստեցնեն Գուին՝ իր իշխանութեան քաղաքը, որ յետ գետնաշարժին շինուեր, զարդարուեր և վայելչացեր էր: Աշոտ՝ որ միշտ կասկածի մէջ էր Եմենիկի դարաններէն և ամէն արթնութեամբ կը դիտէր անոր ամէն մէկ քայլը, լրտեսներու ձեռքով բռնեց անոր խարդախ և նենգաւոր թուղթերը, որոնցմէ իմացաւ թէ երկուքը՝ Ահմատ և Եմենիկ՝ իրարու հետ գալտ միաբաներ են, որ նենգութեամբ բռնելով Հայոց իշխանները ջարդեն եւ բոլոր ազգը և աշխարհը աւերակ դարձնեն: Փութով իմացուց այս բանը սատիկանին քով եզող հայ իշխաններուն, որ աճապարեն փախչին այն նենգաւոր օձէն, քանի որ թոյնը դուրս չէ թափած: Օր մ'ալ Ահմատ չորս բոլորը դիտեց նա. յեցաւ որ դատարկութիւն էր, բոլոր հայ իշխանները թողեր փախեր էին. զո՛ր տեղ զարմանք և ափշութիւն ցըցուց, ձեռքներով իրը թէ չէր գիտեր այն բանին պատճառը. սակայն ներքուստ կա-

տաղութիւն և արտաքուստ ամօթը կրծեցին մաշեցին անոր սիրտը այն քիչ օրերուն մէջ, մինչեւ ստիպուեցաւ ինքն իրեն մինակ կորագլուխ երթայ նստիլ: Դուին քաղաքը: Յետոյ Աշոտ իշխանապետը՝ իբր թէ անտեղեակ այս բանիս՝ հետը ընծաներ առած ոստիկանին գնաց. տեսաւ որ Ահմատայ ոիրտը բարկութեամբ լցուեր՝ մեծ մեծ կ'որոտայ և կը սխայ Հայերուն դէմ: Բանի տեղ չգնելով անոր սպառնալիքը, ուզեց ինքը կանխել՝ սնկարծելի հարուածով մը խայտառակել անոր խարդախ դաւաճանութիւնը, որ իբրու հաշտարար և իրաւարար եկեր էր Հայոց աշխարհը:

Հանդիսի օր մը, երբ Ահմատ գոռոզութեամբ բազմած իշխանական վրանին ներքե՛ կը սպասէր Հայոց իշխաններուն և իշխանապետին շնորհաւորութիւններն ընդունելու, երկար սպասելէն վերջը՝ տեսաւ որ յանկարծ աշխոյժ վառվառն և կըրակոտ երիտասարդ մը ներս մտաւ. Աբաս սպարապետն էր: Ահմատ տեսնելով որ շնորհաւորութեան կամ յարգութեան կերպ չէր այն, գահէն վեր ցատքեց երիտասարդին յանդընութիւնը պտտեելու. բայց տեսաւ որ Աբաս իրմէ առաջ՝ սուրը բացած և ձեռքը թուղթ մը բռնած՝ վրան վազեց և տուաւ որ կարդայ. նոյն պահուն լսեց Ահմատ դուրսը եղող հայ զինուորներուն մռնչիւնը, զէնքերուն շկահիւնը և ձիերուն դոփիւնը. սարսափը տիրեց վրան, աչքերը մթնցան, ինկաւ Աբասայ ոտքերը սկսաւ համբուրել՝ որ գէթ գլուխը իրեն պարգև ընէ: Աբաս ձեռքէն բռնելով դուրս նետեց զինքը վրանէն, և հրամայեց որ ջորայն վրայ նստած՝ մէկ շնչով մինչև Պաղտատ երթայ: Չուսուական Ահմատը՝ ամօթով և մահուան ցուրտ քրտինքով անզգայած, ի սկզբան ինք զինքը երազի մէջ կարծեց. բայց երբ արթըննալով յիշեց եղածը չեղածը, սկսաւ երկու

ձեռքով գլուխը փնտռել և ծեծել՝ թէ արգեօք յիրաւի ուսերուն վրայ էր. յետոյ հեռացաւ կորաւ սեր երկրին սահմաններէն:

Աշոտ յետ հալածելու արարացի աղուէսը, սկըսաւ անոր թողած խառնակութիւնները կարգաւորել. անոր կուսակիցներն այլևայլ շիրթութիւններ յարուցին վրահայոց կողմերը. հոն վազեց Աշոտ և իրեն ազգական Գորամի օգնութեամբ՝ նուաճեց ապստամբները, խռովութիւնները հանգարտեցուց, և իր ազգականներէն ոմանք այն կողմերուն իշխան դրաւ: Երբոր փառօք և յաղթանակով իր աշխարհը կը գառնար, Տաշրաց գաւառէն անցնելով, Գեղամայ ծովուն գեղեցիկ ակունքին մօտ՝ Սևան կղզւոյն գիմաց՝ քանակատեղ կոչուած տեղը կանգ առաւ: Սրբակեաց եւ գիտնական վանահայրը Սևան կղզւոյն՝ Մաշտոց, որ յետոյ կաթողիկոսութեան ալ արժանացաւ, իր ճգնատուն արեղանները առած, հանդիսով և թափօրով Աշոտի ընդ առաջ ելաւ: Երկու շքեղ և լուսափայլ իշխանաւորները զիրար համբուրեցին և իրարու օրհնութիւնն առին. փսնամիտ իշխանը՝ իր կուրծքի զարդ և սրտին միակ մխիթարանք եղող մարդարտազարդ խաչը պարգևեց վանահօր, որուն փոփարէն՝ անոր սրբանուէր օրհնութիւնն և աղօթքը խնդրեց: Թետոյ իշխաններով այցելութիւն ըրաւ վանքին, և բոլոր միաբաններուն այլևայլ ընծաներ և պարգևներ, գիւղեր ու կալուածներ տուաւ:

Թետ հիւսիսային կողմի իշխաններուն սառ սըրտերը տաքցնելու, Աշոտ անգամ մ'ալ սուրը դէպ ի հարաւ շողացուց՝ այն կողմի մէկ քանի ամիրաններուն տաք գլուխները հանդարտեցնելու, զորոնք կարծածէն աւելի դիւրաւ հնազանդեցուց իրեն, բաց ի մէկէն՝ որ իր ցեղին անունով կայսրիկ կը կոչուէր: Սա բաւական զօրաւոր մարդ

մ'եր, որ լսելով Աշոտի գալը, Մանազկերտի բերդին մէջ ամրացաւ. Աշոտ պաշարեց բերդը և տիրելու մտ էր, երբ դարձեալ Արծրունի իշխանները կոռելով իրարու հետ, անոր խելքը եւ զէնքը իրենց դարձուցին. կայծակի պէս հասաւ իշխանը, յաջողութեամբ աւարտեց գործը, եւ դարձեալ թափով իր նախկին որսին վրայ վազելով, ստիպեց կայսիկը խոնարհիլ իրեն առջեւ, և հարկ և հպատակութեան երդումն առնելով անորմէ՝ դարձաւ փառօք և խաղաղութեամբ:

Այս ժամանակ Բիւզանդիոնի կայսերական գահին վրայ կը բազմէր Արշակունի կամ Մակեդոնացի վասիլը, որ լսելով Աշոտի համբաւը, եւ միանգամայն հաւատք ընծայելով փոտի ինքնատեղծ և ստայօդ գուշակութիւններուն, շատ և սեծագին ընծաներով դեսպան դրկեց առ Աշոտ և թագ խնդրեց իրմէ. իսկ սա՝ դեռ անթագ գլխով, բայց իրաւամբ քաղադիր, իրմէ բարձրագոյն գլուխ մը պճնեց վայելչացուց թագով. այսչափ սեծ էր Աշոտի շնորհը: Մակայն սեր իշխանապետին գլուխն ալ բոլորովին անզարդ չէր. երեսուն տարիներու մարգարտեայ պսակ մը կը շողար արդիւնալից ճակատին վրայ, հիւսուած իրեն յաղթութիւններով և հայրենասէր սրտին և աշխարհաշէն բազկին հրաշակերտներով:

Երջանիկ Աշոտ, որ երեսուն տարի անդու կորովով և խոհեմութեամբ վարեց այնպիսի փափուկ իշխանութիւն մը՝ այնքան փառքով և յաջողութեամբ, որ մինչև թագի և ծիրանեաց արժանացաւ: Գիտէր նա սուրը և սէրը այնպէս իրարու հետ միացնել, որ մին միւսին հարուածը կը բուժէր. այն ատեն միայն զէնք կը գործածէր, երբ հարկ ըլլար օտարին ցանած փուշերը խլել, ազգին իրաւունքները պաշտպանել և կամ մեծագոյն չարիքի մ'առջևն առնուլ: Ասով միայն, Հայկակ,



կրցաւ նա ամենուն սէրը և սիրար զրաւելլ, որով  
Հայաստանի բոլոր իշխաններուն և զաւակներուն  
հետ միացած ուրիշ գրացի օտար ազգեր և իշ-  
խաններ, իրենց ձայները խառնելով Եփրատայ և  
Տիգրիսի մեծագոյ կարկաճներուն հետ, և սահե-  
ցներով թաւալլոր արեաց վրայէն մինչև Բաբելոն՝  
հասուցին Պաղտասու արքունիքը, թնդացուցին  
ամիրապետին սիրար և ականջը, որուն ինքն ալ  
յօժար էր, և խնդրեցին միարան՝ որ ըստ արժա-  
նեաց բարձրացնէ Աշոտն իրենց վրայ՝ թագ ու  
գաւազան զրկելով իրեն: Չկրցաւ նա չսեղ այն-  
քան սրտերու ձայնին. հաւանեցաւ և հրամայեց  
Ամգայ Յիսէ կուտակալին, որ արդէն ծանօթ և  
բարեկամ էր Աշոտի, որ երթայ թագաւորեցնէ  
զինքը բոլոր Հայաստանի վրայ: Ամիրապետն այն  
չքեզ անուան և իշխանութեան հետ զրկեց նաեւ  
Աշոտի ականակուռ ոսկեզէն թագ, գաւազան,  
ծիրանի և ուրիշ արեւելեան մեծագին ազնիւ ըն-  
ծաներ՝ ընտիր արաբիկ ձիերով. եկաւ Յիսէ,  
պսակեց ուրախութեամբ իր հին բարեկամը, և  
նախ ինքն ողջունեց զանիկայ թագաւոր ամե-  
նայն Հայոց (յամին 885): Փութաց այն ատեն  
հայրենեացս Ողին. Մասեաց գազաթէն, զար-  
թոյց քնարաններէն բոլոր հայազգի թագաւորնե-  
րը և Բագրատունի իշխանները, որոնք եկան  
միարան համբուրեցին և ողջունեցին Աշոտ թա-  
գաւորը և գարձան քնանալու ուրախութեամբ՝  
յետ ամրացնելու անոր թագը և գահը, զորոնք  
եկեղեցին ալ օժմամբ՝ օրհնութեամբք և գերազոյն  
հանդէսներով սրբեց՝ վայելչացուց և նուիրական  
գործեց: Կարելի՞ բան էր՝ որ ազգայիններուն  
զգայուն սրտերը չի տրոփէին, չի հրճուէին եւ  
ուրախութեան արտասուքով չի լեցուէին՝ ամենէն  
ցամաք աչքերն ալ, երբ յետ դարաւոր հառա-  
չանքներու գերութեան, վերջապէս ազատութեան

սիւքը կը շնչէին ազգային դրօշի և գաւազանի ներքև: Չանց կ'ընեմ՝ պատմել քեզի, Հայկակ, այն շքեղ և պայծառ հանդէսներուն նկարագիրները, քեզի թողլով որ՝ սրտիդ թելադրութեան համեմատ՝ գուշակես և նկարես զայն, ինչ որ կարող է և պէտք է զգայ հայ սիրտ մը:

Աշտա չորս տարի միայն կրցաւ կրել թագր. և սակայն այն փայլակի նման սահող շրջանին մէջ՝ այնպիսի փայլուն և մնայուն հետքեր ձգեց՝ թագաւորավայել կարգերով և շինութեամբք, որ ամէն թագաւորներու նախանձելի եղաւ և ոչ ոք կրցաւ հաւասարիլ իրեն: Վասն զի մինչդեռ մէկ ձեռքով գաւազանը բռնած՝ արծաթ և ոսկի կը տեղար և Աստուծոյ հոյակապ տաճարներ կը բարձրացնէր, միւս ձեռքը զինած՝ սրով և աղեղով՝ սէր և խաղաղութիւն կը հաստատէր: Եթէ հարկը ստիպէր՝ ոչ ծերութեան կը նայէր և ոչ թագի, կը փութար կովկաս և հեռաւոր աշխարհներ, կը լռեցնէր Ալանները և ուրիշ լեռնաբնակ ազգերը, Ռատհացոց աշխարհին Սևորյիսները կ'ընկճէր, Եգեբրայ ինքնագլուխ թագաւորը կը նուաճէր: Կը հասնէր մի և նոյն ժամանակ վաւարական և Սիւնիք, կը գգուէր նա գրկին մէջ՝ իր նոր ծլած ծաղկած թոռները, կը սիրփէր իր այրի մնացած տիկին դստերքը, իշխաններէն ու մանց երերեալ զահերը կը հաստատէր, ուրիշներուն կործանած աթոռները կը կանգնէր. միով բանիւ ուր որ հասնէր անոր զէնքը կամ գաւազանը, կը շէնցնէր, կը վայելչացնէր, կը ծաղկեցնէր և կը բարեկարգէր:

Յետ խաղաղելու իր իշխանութեան սահմանները, 889 թուականին, Աշտա Բիւզանդիոն գնաց լեռն կայսեր տեսութեան, որուն հետ՝ բարեկամական կապերէն զատ՝ քաղաքական և առևտրական դաշինքներ ալ հաստատեց. սոյն դէպքը կը

յիշատակէ կոստանդին Պերփեռուժէն կայսրը իր Աշխարհագրութեան մէջ, «յաղթահասակ և տիտանեան հայ, երկայնաբազուկ և յերկուց ձեռաց յաջողակ» կոչելով Աշտոր: Պոլսոյ արքունիքը, ի պատիւ մեր թագաւորին, իրեն ամենէն շքեղ հանդէսները ներկայացուց. և Աշտոր դարձաւ Հայաստան անգին ընծաներով, գեղեցիկ խոստումներով և մեծամեծ յոյսերով. բայց, ափսոս, որ ժամանակ չունեցաւ իրականացած տեսներու այդ խոստումները և յոյսերը: Հազիւ իր երկրին սահմանները կոխեց, Շիրակի մօտ՝ Քարսպառ կոչուած քարոտ և ժայռոտ տեղը, յանկարծ մահաբեր խօթութիւն մը հասներով վրան՝ անկողին ձգեց զինքը: Այն վերջին ժամերուն, իբր ճշմարիտ քրիստոնեայ, հոգւոյն ամէն պէտքերը հոգաց. «վասն զի առ ինքն զմեծ կաթողիկոսն Փէորդ կարդացեալ, և զփրկութենագործ զմարմին և զարին Տեսողն՝ թոշակ յետին առ ի նմանէ ընկալեալ, ոչ սակաւ ինչ քան թէ զբազումս բաշխէր գանձս սուկոյ և արծաթոյ ի տնանկս և յաղքատս, այլ և ի ձեռս հայրապետին հաւատայր զլիապատար գանձարանացն մթերս... բնաւին բաշխել յեկեղեցիս ուղղափառաց ի նուիրումն պատարագին սրբութեան... յեա որոյ բարւոյք ծերութեամբ ըստ բուսոյ բարեզգեաց բարուց հանգեաւ ի Քրիստոս» (890ին), 71 տարեկան, գրեթէ երեսուն տարի իշխանական գաւազանը կրելէն և հինգ տարի թագաւորելէն վերջը: Բոլոր Հայաստան լացաւ ու սուգ բռնեց իր աննման հօրը և մեծ թագաւորին վրայ, և փութաց իր սիրոյ ու յարգանքի վերջին ցոյցերն ընելու այն դագաղին առջև, որուն մէջ կը հանգչէր այն մեծ ու բարի հայրենասէր սիրտը: Անոր յուղարկաւորութեան հանդէսը հետեւեալ կերպով կը նկարագրէ ականաւոր տես ու ժամանակակից պատմիչը՝ Յովհաննէս (Զ)

կաթոյիկոսը. «Բարձեալ գիակիր զազոյգը տա-  
րան զնա ի թագաւորանիտո աւանն Բողարան,  
սակեհուռն հանդերձիւք և սակեզօժ վառիւք զդա-  
գազան զարդարեալ. և խումբք զօրաց զինուք և  
զարդուք, ընտրանօք և նշանակօք շուրջ պաշտպա-  
նեալք մեծի կաթողիկոսին, և այլ ևս կոյերոյ եկե-  
ղեցույ առաջի գնացեալ՝ զխաչակրօն սաղմոսեր-  
գութիւնս և զձայնս օրհնութեանց նուագէին:  
Իսկ երեք որդիք նորա՝ գահերէցք տան արքու-  
նի, և այլ ևս բարեկամք հետամտէին զկնի դա-  
գազացն:... Եւ այսպէս հասեալք ի տեղին, անդ  
էր ապա տեսանել կուսանս ոլբերգակս և արօսու-  
րաթոր կականումն և աշխարանս տիկնանցն և այլ  
ևս բազմութեան:... Եւ ապա կազմեալ տապան  
թագաւորական՝ եղին զնա ի քնարունի հարց  
իւրոյ »: Այսպիսի ազգայարոյց թագաւորի մը  
յիշատակը բոլոր ազգայիներուն սրտին մէջ պէտք  
է խոր դրոշմուած ըլլայ, որուն որչափ ալ սիրոյ,  
երախտագիտութեան, զարմանաց և յարգանաց  
զգացումներ ընծայենք, դեռ ոչինչ է իրեն մե-  
ծութեան և արժանիքին առջև:





Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

## Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

**Տ**ՈՒԳԻ մը՝ վարդի պէս կարմիր ու գեղեցիկ, ճգնութիւններու ու զրկանքներու փուշերով շրջապատուած, — սիրտ մը շուշանի պէս ամբիժ, որ բոլոր մարդկութեան սճիրներով բեռնաւորուած, ամենէն սաստիկ ու անկեղծ մեղայներուն ողբերգը հիւսեր և իր հառաչանքներով անապատները լացուցեր է, — կեանք մը, երկնքի կապուտակին պէս ջինջ ու հանդարտ, որ սակայն հոգեկան ամենէն խոր ցաւերով ու տառապանքներով տանջուած, այրեր ու հալեր է խունկի պէս՝ Աստուծոյ սիրոյն կայծերուն վրայ. — ահա մեր ասենէն բանաստեղծ, մեր ամենէն սիրուն սուրբը, Հայկակ, որ ունեցեր ենք, — Գրիգոր Նարեկացին, և որուն գէմքը սակայն — ծածկուած վանքերու սրբազան ստուերներուն մէջ — հազիւ մէկ քանի գծերովը միայն ծանօթ է մեզի:

Երբ գարնանաբեր զեփիւռը պճնեց ծաղիկներով Հայաստան, 951ին, Աստուած ալ վերէն ծաղիկ մը շնորհեց մեր Նարեկացւոյն սրբասէր ծնողաց. հօր անունն էր Խոսրով, որ յետոյ Անձևացեաց եպիսկոպոս եղաւ: Իրաւցնէ՛ որչափ մեծ եղաւ անոնց ուրախութիւնը, երբ մարմնաւոր կերպարանքին ներքև սրովբէ մը կը կարծէին տեսնել. ապա որչափ աւելի մեծ եղաւ անոնց

զարմանքը, երբ մանուկն Գրիգոր խանձարու-  
քէն ամէն տեսակ առաքինութիւններով զարգա-  
րուած տեսան: Ծնողքը զմայրման և լուսթեան  
մէջ կը դիտէին այն օրհնեալ մանկիկը, որուն  
կարծես նոյն իսկ Աստուած ուղեց դաստիարակ  
ըլլալ, իր գերազոյն սէրը վառելով անոր սրտին  
մէջ առաջին վայրկենէն՝ որ երթալով արծար-  
ծեցաւ: Գրիգորի հոգին բուրաստան մ'էր առա-  
քինութեանց, որ առանց բողբոջելու, մէկէն  
ծաղկեցաւ, մանաւանդ թէ ծաղկելէն առաջ պը-  
տուղ տուաւ: Աստուածային սիրոյ հեղիկ զեփուռ  
սահեցնելով հանդարտիկ անոր հոգւոյն մակոյկը  
աշխարհիս կոհակաց վրայէն, հասուց խաղաղ  
նաւահանգիստը, ոսկից երկնաւոր հայրենիք ել-  
լելու բաւական էր մի միայն քայլ կամ թռիչ:

Սիրամնչիկ աղաւնին դեռ ոտքերը չադտեղած՝  
թռաւ տապանը, տանելով իր հետ դալար և ամ-  
բիծ սիրտ մը, կայտառ հոգի մը և մաքուր մար-  
մին մը: Գնաց թառեցաւ Նարեկայ վանքին մէջ,  
իր ազգական ճգնասուն Անանիայ վանահօր սիրոյն  
և ինամոց թիւերուն ներքև ծածկուեցաւ, ուր իրեն  
զարմանալի ճգնութիւններով հիացուց ալէզարդ  
ծերունիները, երբ տեսան թէ մանկահասակ  
Գրիգորը՝ հազիւ դեռ կրօնաւորական կենաց սե-  
մը կոխած՝ այնքան բարձրապայ կը թռչէր կը  
վերանար, ուր ոչ միայն իրենց թռիչքը, այլ եւ  
աչքերն իսկ չէին համներ: Երբ հոգի մը ազո-  
թից և Աստուծոյ սիրոյն քաղցրութիւնը կը ճա-  
շակէ, չկայ աշխարհիս վրայ ուժ մը կամ բռնու-  
թիւն մը, որ կարենայ զինքը բաժնել անկէ. այս-  
պէս ալ Նարեկայ քերովրէն՝ ինք զինքը աղօթից  
և աստուածային սիրոյն հնոցին մէջ նետած, օրէ  
օր իր արդէն մաքուր հոգին կը զտէր կը սրը-  
բէր ոսկւոյ նման և բոլորովին բոց և կրակ կը  
դառնար. Աստուած ալ թոյլ կու տոր՝ որ մերթ

ընդ մերթ դուրս ծաւալէր անոր բոցը և հուրը, ոչ միայն մերձաւորները՝ այլ և հեռաւորները վառելու համար երկնաւոր հայրենեաց սիրով: Անոր սրբութեան համբաւը գնաց մինչև հեռաւոր աշխարհներ, մտաւ թագաւորներու և իշխաններու պալատներուն մէջ, զարմացուց հայրապետները: — Նարեկայ վանքին պարիսպները, որոնք չէին տեսած երբեք աշխարհիս փառքն ու շուքը, կը զարմանային՝ երբ կը տեսնէին որ խմբովին կը դիմեն կը մտնեն հոն զօրավարներ և իշխաններ, հայրապետներ ու իմաստուններ, կաթողիկոս ու թագաւոր: Դեղւելով ներս կը մտնեն, և զօրացած դուրս կ'ելլեն. լքած ու տրխուր ներս կ'երթան, և քաջալերուած դուրս կու գան. մեղաց ու անյուսութեան խղճով վարակած կը մտնեն, զուարթացած և սրբուած կ'ելլեն: Ո՞վ էր այդ անձը, Հայկակ, որ զամէնքը իրեն կը քաշէր, և այդչափ մեծամեծ բաներ կ'ընէր, եթէ ոչ սեր Ս. Գրիգոր Նարեկացին, որ իրեն սրբութեամբ և իմաստութեամբ՝ նոյն դարուն մեր ազգին ամենէն մեծ պարծանքն եղաւ:

Դեռ հազիւ քահանայ ձեռնադրուած քսան և հինգ տարեկան (976-977ին) կը պարզուին դիմացը ամէն խորհուրդք և գազանիք. երբ սիրտը կը պատարագէ և կը պատարագուի սեղանին վրայ, հոգին ի խորոց սրտին կը խօսի ընդ Ախտոռճոյ, և միտքը աստուածային Գրոց բուրաստանին ծաղիկներով կ'անուշցնէ իր քիմքը: Բայց վերջապէս հարկ էր սր շարժէր գրիչը, որպէս զի ուրիշներն ալ վայելեն իրեն յօրինած մեղրը. արքունի հրամանը (Անձևացեաց Գուրգէն թագաւորին) կը բանայ իր դիմաց Ս. Գրոց ամենէն փափուկ մասը. հարկ է որ Նարեկայ սրովբէն շարժէ երկնաւոր քնարին թելերը, երգէ սէրը իր ամենէն բարձր ու մաքուր խոյանքին



մէջ, պարզէ Երզոց երգոյն վսեմ ու խորհրդա-  
կան իմաստները, որով երկրապիշ մարդիկներուն  
միտքը ուղղէ ու բուժէ: Եւստի՛ն ազանին մտաւ  
խորհրդաւոր վարագուրին ներքեւ, զմայլեցաւ  
երկնաւոր սիրոյն գեղովը, ճաշակեց ու սեզ ալ  
արբոյց ումիւ մը այն գինիէն՝ որ է ակնաշարար  
կուսից, բացաւ մեր հոգւոյն աչքերը՝ տեսանք  
սիրոյ հրաշալի հանդէսներն ու գգուանքը՝ որով  
ճնանք հոգեպէս և եղանք Աստուծոյ որդիք:

Այսպիսի պայծառ հոգի մը և հանճար մը, որ  
արևու նման պէտք էր փարատել նախանձու եւ  
հակառակութեան ամպն ու մէգը, դժբախտաբար  
աւելի գրգռեց նախանձուտաց սրտերը: Կաթողի-  
կոսը, վարդապետները ազգիս՝ մոռնալով կամ՝ չու-  
զելով յիշել սուրբին խրատները զոր երբեմն լսած  
էին իրմէ, տգէտներուն և չարասիրտներուն խոր-  
հրդին ականջ դրին. յանկարծ քօղ մ'իջաւ ա-  
նոնց աչքերուն վրայ, կ'ուզէին ամէն բան սեւ  
տեսնել Գրիգորի վրայ, զոր գիտէին ու կը հաւ-  
տային լուսաւոր և լուսատու ազգիս: Նուիրակ ու  
պատգամաւոր զրկեցին անոր, անոնց լեզուն ու  
ձեռքը զինելով նզովքներով ու պէսպէս պատիժ-  
ներով. իբր խանգարիչ կը դատապարտէին զա-  
նիկայ, որ կը ջանար մանաւանդ շինել և միաբա-  
նել ուժացած սրտերը և հոգիները, սէր և խա-  
ղալութիւն հաստատելով մէկ գլխու ու մարմնոյ  
անդամներուն մէջ: Եկան պատգամաւորները, եւ  
տեսնելով սուրբին հրաշալի վարքը և ճշմարտա-  
քարոզ վարդապետութիւնը՝ ամօթէն ափիբերան  
եղան և իրենք զիրենք կշտամբեցին. բայց հարկ  
էր որ Գրիգորի հրաշագործ զօրութեան ալ հան-  
դիսատես ըլլային, որպէս զի քննիչներն ու դա-  
տիչները՝ ըլլային յետոյ գովիչ ու քարոզիչ Աս-  
տուծոյ և Գրիգորի զօրութեան: — Ուրբաթ օր  
մը սուրբը հրաւիրեց զիրենք ճաշի. կը կարծէին

երբէք ճգնատուն արեղայի մը սեղանին վրայ խորոված աղանիներ տեսնել, և մանաւանդ պահոց օր. այս որ տեսան՝ ուրախացան, համարելով թէ վերջապէս բռնեցին իրենց որսը: Կշտամբեցին խստիւ սուրբը և յայտնեցին իրենց գայթակղիլը. Նարեկացին հանդարտ կերպով ներումն խնդրեց անոնցմէ և հրամայեց խորոված աղանիներուն՝ որ ելլեն երթան. որոնք լսելուն պէս սուրբին հրամանը, առին իրենց թները ու թռան փախան: Այս զարմանալի ու անկարծելի հրաշքը բոլորովին կարկեցուց անոնց բերանը, և սարսափած՝ սուրբին ոտքը ինկան. ներումն խնդրեցին, և աղանիներուն պէս իրենք ալ թներ առած՝ շուտով թռան փախան: Աղանիներն օդին մէջ և ասոնք քաղաքին մէջ՝ պատմեցին սուրբին հրաշքը, և մանաւանդ հրաշալի վարքը և աստուածաշնորհ վարդապետութիւնը. իսկ ինքը Գրիգոր աւնայլայլակ՝ ինչպէս առաջ՝ ինք զինքը աղօթից եւ Ս. Գրոց ընթերցման տուաւ:

Ներելի է արդեօք մտնել սուրբին խցկան մէջ՝ անոր գերարժարժ սրաէն բխած հրախառն հառաչները լսելու, և տեսնելու անոր բոցափայլ հրեշտականման գէմքը՝ աղօթելու միջոց, անոր մարմնոյն զարհուրեցուցիչ ճգնութիւնները, հոգւոյն աստուածահրաշ զմայլումները և յափշտակութիւնները: Եթէ մինչև հիմակ անոր հրաշահիւս մատեանը աղօթից՝ աղօթողներու հոգւոյն մէջ սիրոյ և ցաւի կայծեր կ'արծարծէ, ապա ինչ սաստիկ հրդեհ ճարակեր է արդեօք իրեն հոգւոյն և խցկան մէջ, երբ այն բոցեղէն սիրտը ճռճռալսելով սլաքին կամ գրչին ծայրը՝ ողբերու և հեծութեանց արձագանդները կը դրոշմէր մագաղակին վրայ: Բարեգուժ Դշխոյն երկնից՝ չի հանդուրժեց Գրիգորի արտասուքին « ի վերայ այնքանեաց յուսահատութեանց և ահարկու

սրտարեկուժեանց » . Երևցաւ լուսափայլ դէմքով՝  
Աստուածորդին գիրկը բռնած, զովացուց անոր  
այրած սիրտը, վառեց անոր միտքը: Ելաւ Գրի-  
գոր զուարթացած, ձգեց ձեռքէն ողբերու գր-  
րիչը, տատրական յանկարծ սոխակ դարձաւ, եւ  
սկսաւ երգել .

« Աւբըն ծով ի ծով ծիծաղախիտ... »

Յայտէն նռնենի սարգիստունկ... »

Բերանն երկժերթի, վարդ ի շրթանց կաթեր .

Մղիբըն ծիրանի մանուշակի հոյժ... »

Ի փունջ խուռներամ վարդից

Վ ոյնըզգոմ ծաղկունք... »

Գոհար վարդն վառ առեալ .

Ի վեհից վարսիցն արփենից » . և այլն:

Չարմանալի բան. ինչպէս այնպիսի ճգնու-  
թեամբ հաղած մաշած մարմին մը կրցաւ այնչափ  
տարի պահել իրեն մէջ՝ այն կրակէ հոգին: Չի  
մեռաւ Գրիգոր, այլ յետ մնչելու իբրու տատրակ  
Նարեկայ և երգելու իբրու սոխակ եկեղեցւոյ,  
աստուածային բոցով խարուկուած՝ անմահ փիւնիկ  
թռաւ երկինք և լուսեղէն սրովբէ մտաւ արքայու-  
թիւն (1003 թուականին): — Մեր եկեղեցւոյ և  
ազգին անգին գոհարներէն մին է սա. մանաւանդ  
թէ իր տեսակին մէջ՝ կարելի է մէկ հատիկ ազա-  
մանդ կոչել, որուն Մեկնոչքիչնն, Ճաւք և Ողբեր-  
գոչքիչն անմանք են՝ ոչ միայն մեր ազգին՝ այլ  
և բոլոր ազգերու դպրութեանց մէջ. իսկ իրեն  
Ներքոդեանք, Տաղք և Գաւնձք՝ յիբաւի անգին  
գանձեր են մեր եկեղեցւոյ Համար: Չի մեռաւ,

րսի, Նարեկայ քերորբը, այլ արթուն զուարթուն  
(ըստ իր անուան) կը հսկէ հայրենեաց և դպրու-  
թեանց վրայ, և իր կենսունակ շնչով կը ջանայ  
և կը յուսայ կանգնել երկուքն ալ և անմահու-  
թեամբ կըքել զանոնք: Բայց անոնցմէ աւելի՛ կը  
փափաքի նա վառել մեր սրտին մէջ երկնաւոր  
հայրենեաց սէրը, արծարծել կրօնից և առաքի-  
նութեան հուրը, որոնցմով միայն կարելի է բու-  
ժել երկրաւոր հայրենեաց վէրքը և սփոփել ա-  
նոր վշտացած սիրտը:





**Ս. ՆԵՐՍԷՍ ԴԵՌԶԱՆԻ**

## Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

**Մ**ԵՏԱՍՍԱՆԵՐՈՐԴ գարուն վերջերը եւ ժՅին սկիզբները, Բագրատունի ճոխ ու հզօր պետութեան աւերակները կը ծխային դեռ, թըշնամիներն աւարով ու արեամբ լցուած՝ բայց դեռ անյագ՝ կը մխային չորս կողմէն. իսկ մեր պայծառ փարազունները և յետին մնացորդները նախկին քաջազանց՝ թողլով բուն հայրենեացս կակուղ սիրտը՝ որ թշնամիներուն ձեռքը մատնուեր էր, գնացեր ջղատ կիլիկիոյ լերկ գագաթներուն վրայ ու կարծր կողերուն մէջ ամրացեր էին, ուր իրենց սրով և աղեղամբ կը յուսային թէ՛ զիրենք պաշտպանել և թէ՛ հայրենեաց գահը կանգնել: Ո՛վ կրնար կարծել, Հայկակ, թէ Աստուած այն լեռնակոյտ աւերակներու և մոխրի ներքեւն արև մը պիտի ծագէր ազգիս, այն անշնորհ ժամանակներուն մէջ՝ Շնորհալի մը պիտի ծագկեցնէր, և ժայռերու մէջ դուրս ցցուած դղեկի մը ծայրը՝ լեռնաբոյն արծիւներուն մէջ՝ հեզ ու ազու աղաւնի մը պիտի շնորհէր մեզի, որ իր անոյշ շրթունքով և քնքոյշ մատներով ազգիս անցած վէրքերը մոռցնել պիտի տար ու նորանոր հարուածներէ պիտի ազատէր:

Գրիգոր վկայասիրի քեռորդին Ապիրատ իշխանը՝ Մով կոչուած դղեկին մէջ՝ սիրուն արևակ

մ'րնծայեց աղբիս Ներսէս (1102ին), զոր խան-  
ձարուբքէն բոլոր տեանողները և լսողները կոչե-  
ցին և վկայեցին Շնորհալի կարմիր ու պայծառ  
հոգի, լուսաւոր ու կայտառ միտք, կրակոտ ու  
փափուկ սիրտ. ահաւասիկ Շնորհալոյ համառօտ  
նկարագիրը. չունէր ուրիշ արատ, բաց ի մահ-  
կանացու ծնած ըլլալէն: Սա և իր երիցագոյն  
եղբայրը Գրիգորիս, երբ դեռ անթե անփետուր  
ձագունք էին, իրենց բունէն հանուերով տարուե-  
ցան առ իրենց քահանայազարդ պապը վկայա-  
սէր, որ պատերազմներու մրրիկներէն փախչելով  
Գող վասիլ իշխանին սահմաններուն մէջ՝ ապա-  
ւիններ էր: Առաւ նա իր աստուածակիր բազուկ-  
ներուն մէջ, գգուեց ու օրհնեց իր թոռնիկները,  
ու յետ եղբերական մահուան անոնց հօրը (1111ին),  
իբր երկնաւոր անգին աւանդ մը՝ այն շնորհա-  
փայլ աղանձներուն զոյգը յանձնեց վանորէից և  
հոգևոր դաստիարակաց խնամքին, ուր աւելի  
հրեշտակներ մեծցան քան սոսկ մարդիկ:

Երբ վկայասիրի պայծառ հոգին երկինք թը-  
ռաւ, արդէն մեր հոգեզոյց հարազատքը թուեր  
էին կրարմիր-վանք, ուր հոչակաւոր Գիտնական  
կոչուած Ստեփանոս վարդապետին թեւերուն ներ-  
քե կը զարգանային հոգւով ու մտքով, անոր ար-  
ծաթ խօսքերը և խրատները՝ ոսկի դարձնելով  
իրենց սրտին մէջ: Գրիգորիս՝ որ միայն վեց  
կամ եօթը տարով մեծ էր Ներսէսէն, հսկայ քայ-  
լերով կամ երազ թռիչով դեռ հազիւ տասնու-  
հինգ տարեկան՝ աշակերտութեան խոնարհ ա-  
թոռակէն բարձրացաւ վարդապետութեան ա-  
թոռը, անկէ ալ հայրապետական գահը, երբ  
իր ձեռնադրիչ և նախորդ Բարսեղ կաթողիկոսը՝  
դէպ ի Երուսաղէմ՝ ճանապարհորդելու միջոց՝  
անկարծելի և ցաւալի կերպով փոխեց իր հոգ-  
ւայն քայլերը դէպ ի վերին Երուսաղէմը (յամի

1113): Գրիգորիսի մանկահասակ կաթողիկոսութիւնը, որ յիրաւի շատերուն զարմանքը շարժեց և ոչ մէկուն նախանձը, ամենուն վրայ սէր և պատկառանք ազդեց, բայց ի Աղթամարայ ինքնագլուխ՝ մանաւանդ թէ անգլուխ առաջնորդներէն, որոնք ապստամբելով նորընծայ հայրապետէն՝ հերձուած ձգեցին ազգիս մէջ: Այս եւ ուրիշ ծանրագոյն պատճառներու համար հարկադրուեցաւ ժողով գումամարել մեր Պահլաւունի կաթողիկոսը (1114ին), հաւանօրէն կարմիր վանքին սահմաններուն մօտ, ուր ժողովականք միաբան հաւանութեամբ նգովեցին ապստամբները, ամրացուցին դեռահասակ հայրապետին գահը և իշխանութիւնն, և ուրիշ այլևայլ կարգեր ու կանոններ հաստատեցին: Բայց հազիւ թէ դադրեցան ներքին հոգևոր յոյզերը ու շփոթութիւնները, նոյն սարին ուրիշ սարսափելի ստորերկրեայ երբերում մը պատահեցաւ՝ աստիկ երկրաշարժ մը, որ բաց ի բիւրաւոր շէնքեր, վանքեր ու եկեղեցիներ հիմնայատակ ընելէ՝ քառասուն հազար մարդ ալ ծածկեց գետնին տակ:

Մեր ծաղկահասակ կաթողիկոսին խնամոց ներքև շուռճացաւ ծաղկեցաւ Շնորհալին վարդի նման, և դեռաբոյս հասակի մէջ (1119ին) քահանայ ձեռնադրուեցաւ իր հարազատէն: Շնորհազարդ և ամէկոտ պատանին՝ հրեշտակներէն ալ բարձր թռաւ, երբ երկնաւոր խորհուրդներուն և սրբութեանց պաշտօնեայ եղաւ: Ահա աննման և հրաշալի զոյգ մը, որոնց մէկը քահանայութեան գերագոյն ծայրը կանգնած՝ իր փոքմ՝ ծանրութեամբ և զգաստութեամբ օրինակ եղաւ բոլոր առաջնորդներուն. իսկ միւսը՝ սրբութեան և իմաստութեան ջահերը ձեռքը բռնած՝ լոյս ու առաջնորդ եղաւ սրբասէր և իմաստաճեմ մտքերու: Երկուքն ալ մի և նոյն աստուածավառ սիրարը ու



հոգին կը կրէին. բայց պերճաբան լեզուն ու դրիչը՝ ներսիսի յատուկ շնորհ մ'էր, որուն վրայ թէ որ աւելցնենք նաև հոգւոյն գերազանց սրբութիւնը, մտաց նրբութիւնը, և բարուց ազնուականութիւնը, ալ տարակոյս չի մնար իրեն արժանաւոր Շնորհաւորի կոչման: Նա որ ի բնէ սրամիտ և կորովաբան էր, եղաւ նաև շնորհաբան՝ երկնաւոր օծութեամբ, որ իր աստուածատես հոգւոյն արգիւնքն էր: Այնքան պաշտօնական հոգերու եւ զբաղումներու մէջ կրցաւ անդադար լեզուն ու գրիչը շարժել. որով քան դամէնքն աւելի ճախարուց ազգային դպրութիւնը, և վայելչացուց եկեղեցիները՝ հրաշայի կարգերով ու երդերով: Քիչեր ցորեկ չունէր նա, հաւասարապէս միտքը կը գործէր արթնութեան ու քունի մէջ, եթէ կարելի էր քուն կուէլ՝ քան թէ հրաշայի արթնութիւն, որովհետև իր անխոնջ հոգւոյն և մտքին նշան՝ այն վայրկեանական մրափերու միջոց անգամ՝ շրթունքը կը շարժէր միշտ, ինչպէս կը վկայեն ականատեսները, և գլուխը բազմոցին վրայ հանգչեցնելով՝ պայծառ խորհուրդներ կը յղանար. և հազիւ թէ սթափելով կը ցնցուէր, անմիջապէս գրի կ'առնուր երազածն ու մտածածը: Իրաւ է՝ որ Շնորհաւորոյն արձակ կամ՝ ստանաւոր գրութիւններուն մէջ չեն տեսնուիր բարձր բանաստեղծական թռչիւններ և ոչ ալ խորին փսեմութիւններ, բայց այնպիսի վայելուչ ու սահուն ոճ մ'ունի, այնպիսի փափկութիւն և ազնուութիւն իմաստներու՝ որ կ'օժէ կը յուզէ սրտերը: Իրեն յատուկ ձիրք մ'էր՝ սանձել հանճարոյն և մտքին թեւերը, և այնպիսի հարթ ու թեթև խոյանքով թռչիլ երկնի ու երկրի մէջտեղ, որ երկուքին ալ հաւասարապէս մօտ ըլլալով՝ կարող ըլլայ կապել զանոնք իրարու հետ իր շնորհաբան գրչով՝ իբրու ծաղկահիւս նարօտով մը:

Շնորհալույն գրեթէ բոլոր կենաց միջոց շուրջակայ ազգերն ու գաւառները անդադար ազմուկի ու երբերեալ վիճակի մէջ էին. ամէն կողմէ զէնքերու և պատերազմներու ձայներ կը լսուէին, աւարառութիւնք ու յափշտակութիւնք անպակաս էին: Թերևս այս պատճառներէս յորդորուած՝ Գրիգորիս կաթողիկոսը և Շնորհալին ուղեցին հայրապետական աթոռն աւելի խաղաղ ու ապահով տեղ մը հանգչեցնել. և մտածեցին Անի փոխազրել, որ Բագրատունի թագաւորներուն շնորհիւ ու ճոխութեամբ՝ դեռ իր պայծառութեան մէջ իբր մայրաքաղաք կը նազէր ու կը պարծէր: Սակայն անոր բնակիչներուն անխոհմտութեամբ՝ ոչ միայն Գրիգորիսի փափագն ու ջանքը ունայն ելաւ, այլ նոյն իսկ անչքայցաւ ու աւերակ դարձաւ փատլունի արիւնարբու սուրէն, որ հօրը և եղբայրներուն մահուան վրէժը պահանջեց Անեցիներէն: Մեր Պահլաւունի հարազատներն այն ատեն աչքերնին դարձուցին դէպ ի իրենց ծննդավայրը Ծովք, զոր Ապիրատ հայրերնին ամրացուցեր ու կարծես իրենց համար պատրաստեր էր. իրենք ալ դեռ աւելի նորոգելով և վայելչացնելով, գրեթէ քառորդ դարու մը չափ հոն հաստատեցին հայրապետական գահը: Սակայն հայրենիքը շրփովից ու սպառնացող մըրկին կոհակները կը հասնէին մինչև Ծովք գլեկին ուտքը, և սաղնապի մէջ կը ձգէին երկու հոգեզուարճ հարազատները, որոնք « իբրև զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք, ինչպէս կ'ըսէր յետոյ Շնորհալին, ի քարանձաւս բնակելով » կ'աղօթէին Աստուծոյ, որ այն աշխարհաւեր փոթորկէն ազատէ զիրենք ու ազգը:

Թերևս այն միայնութեան մէջ, Ծովք գլեկին բարձրութեան վրայ, ընդունեցաւ Ներսէս եպիսկոպոսութեան բարձր աստիճանը: Անկէ վերջը

կաթողիկոսը սկսաւ աննախանձ տեղի տալ իր շնորհալի հարազատին, մանաւանդ թէ իրմէ ալ առաջ անցընել, տեսնելով անոր ձրից և շնորհաց առաւելութիւնը, որով ամէն բանի մէջ աւելի ներսէս կ'երևէր ու կը փայլէր քան Գրիգորիս: Եթէ թագաւորներ կամ իշխաններ նախանձով ու թշնամութեամբ վառուած՝ իրարու դէմ հուր ու սուր շողացնէին, ներսէս էր որ կը փութար հեզիկ սրտին խօսքերով կը զովացնէր անոնց բորբոքած սրտերը. եթէ երկու ոխերիմ՝ ազգերու կամ քաղաքներու մէջ արիւնհեղութեան երկիւղ ըլլար, կը հասնէր Շնորհալին կամ կը հասցնէր իր շնորհաբան գիրն ու լեզուն, և արեան տեղ՝ սէր ու հրճուանք կը հոսեցնէր հոն: Միով բանիւ՝ ոչ միայն հայրապետանոցին ներքին վարչութիւնն ու հոգերը, այլ նաև թղթակցութիւններն և պատգամաւորութիւնները Շնորհաւոյն ձեռքով և անձամբ կը կատարուէին, և այս բոլոր արտաքին գործերուն և զբաղմանց հետ հրաշալի կերպով կը միացնէր նա՝ իր ներքին մարդոյն կարևորագոյն պարտքերը, և հաւասար անոնց՝ զրաւորական կենաց աշխատութիւնները: Այն բազմաձայն ազմուկներուն և անձայն տեղերուն մէջ՝ կը հնչեցնէր երկնաւոր վարդապետին հրաշալի խրատները և վարդապետութիւնը, կը խօսեցնէր նա երբեմն մարգարէները և երբեմն առաքեալները, երբ քերթողական աշխուժին թևերն ամփոփելով, կը բանար երկնասլաց հոգւոյն թևերը՝ մերթ ընդ մերթ ելլելու կամ իջնելու իւրաքանչիւր հոգեկիր հեղինակին գրչին համեմատ: Մտնոց ոսկի ու բարձրաթուիչ իմաստները՝ Շնորհալին իր արծաթափայլ գրչով յղկելով դիւրահաս կ'ընէր և մեր մտքերուն կը յարմարցնէր: Ինչպէս որ հայաստանի քաղաքական վիճակը շփոթ և ալեկոծ գիրք մ'ունէր, այսպէս նաև

այլ և այլ կրօնական խնդիրներ՝ շփոթեր ու իրարու հետ թշնամացուցեր էին երկու քրիստոնեայ ազգերը. հայք ու Ասորիք՝ որ իրարու դժբախտութիւնը բայց ոչ միշտ սրտակից ազգեր եղած են, այն ժամանակները որչափ աւելի բնակութեամբ իրարու մօտեցեր՝ նոյնչափ ալ զրտացեր ու սըրտով հեռացեր էին իրարմէ:

Միջագետաց սահմաններուն մէջ կը գտնուէին Ամաչք և Շպղրան գաւառները, զորոնք Շնորհալին շատ յարմար կերպով «խառնափնդորեալ գաւառք» կը կոչէ, (անոնց բնակիչներն ալ չէին կրնար տարբեր ըլլալ). հոն Հայերն ու Ասորիք իրարու հետ խառն կը բնակէին, որոնց խառնափնդոր վիճակին հետ՝ կը տիրէր նաև մէջերնին թանձր տգիտութիւն մը. որով ոչ միայն յաճախ իրարու ծիսական խտրութիւնները նիւթ կ'առնուին հակառակութեան և վիճաբանութեան, այլ նաև հաւատոց ամենէն աւելի հիմնական նիւթերուն վրայ խնդիր ու վէճ կը յարուցանէին: Այն կողմերը հայազգի իշխան մը կը բնակէր, սրտով ու անուամբ Առիւծ, բայց հոգւով՝ հեզ ու հրու, մեծահաւատ անձ մը, որ ձանձրացած այն անօգուտ վէճերէն և ազմուկէն՝ գրեց առ Գրիգորիս կաթողիկոսը, և վերջապէս երկուքը միաբան շարժել տուին Ներսիսի գրիչը: Սա՛ իր ընդարայս շնորհաց հետ խառնելով եղբօր իշխանական ոգին, գրեց հրաշալի թուղթ մը՝ խրատ ու յանդիմանութիւն միացնելով իրարու հետ, և հաւատոց գերազանց վարդապետութիւնները իր անոյշ ու վայելուչ ոճով հիւսելով և բացատրելով՝ վիճողներուն բերանը փակեց:

Շնորհալոյն գրիչը՝ միայն բարբարոսներուն արիւնարբու սուրերուն բերանը չի կրցաւ փակել, որոնք բոլոր Հայաստանը աւեր ու աւար դարձնելէն վերջը, գեռ իրենց վայրագութեան նորա-

նոր յագուրդ փնտուելով նոյն իսկ աւերակներու փոշին ու դիակներու աճիւնը կրկին ու կրկին յուզելով և օգին մէջ ցնդելով, Աստուծոյ ձրի պարգեւած արեւէն ալ կ'ուզէին զրկել մեր աշխարհքը: Կրնաս գուշակել, Հայկակ, թէ այսպիսի տաղնապալից ժամանակներու մէջ կրնային չի տաղնապիլ Գրիգորիս և Ներսէս, որոնք թէ և պարագային յարմար արծուի դարձեր ու զղեկին ծայրը թառեր՝ աչքով, մտքով ու սրտով գէտ ի վեր կը բարձրանային, սակայն չէին կրնար չի լսել աշխարհակալ աւերածներուն ձայները, ու մանց վայրագ մենչիւնը և ուրիշներուն աւազելի հառաչք. սուրը իրենց գլխուն վրայ աբ բարձրացեր՝ կը շողար, կը սպառնար փախչելէն զատ ուրիշ ճար ճարակ չի կար: Ուստի աղեկէզ սըրտով վերջին մնաս բարեաւ ըսելով իրենց հայրենական խանձարուրքին, ուրիշ աւելի ապահով բունիկ մը գտան Հոռոկոյի գեղին ծայրը, որ եփրատոյ եղերքը բարձրացած՝ ջրով ու ահեղ ժայռերով շրջապատուած՝ անառիկ բերդ մ'էր: — Այս գեղեկիս ծայրէն թռու երբեմն մեր Շնորհալին, աղանայ թևեր ու բերանը ձիթենիի ոստ մ'առած, մտաւ երկու կուռոյ լիամագիլ արծիւներուն մէջ, Թորոսի ու Օշնի, որոնցմէ առաջինը թերևս չափազանց իշխանասիրութեամբ վառուած էր, երկրորդն ալ չափազանց յունասիրութեամբ, երկուքին ալ չափն ու պատշաճը ցրցուց՝ հաշտեցուց, և փութաց ինքը նորէն իւր սիրական բոյնը (1165ին):

Նոյն տարւոյն մէջ Գրիգորիս կաթողիկոսը տեսնելով թէ հասակին հետ իր պաշտաման հոգերն ալ սկսան ծանրանալ վրան, ուզեց հայրապետական իշխանութիւնը իր հարազատին յանձնել. զուր տեղ ջանաց Շնորհալին խոնարհութեան քօղին տակ թաքչիլ ու հրաժարիլ այն

պատուէն, ուր կը բարձրացնէին զինքը՝ իր գերազանց արժանիքը և բոլոր ժողովրդեան միաբան ձայնակցութիւնը: Արդէն հաւաքուեր էին Հոռովկայի հայրապետանոցին մէջ բազմաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ և վանահայրեր, որոնց՝ գեղեցիկ խօսքերով ցուցնելով Գրիգորիս իր յիսուն տարիէն աւելի բրած անաբատ հայրապետութիւնը և տարիքին ծանրութիւնը, առաջարկեց անոնց Ներսէսը՝ իրմէ աւելի պայծառ ջահ մ'եկեղեցւոյ, զոր ամէնքն ալ խնդամիտ յօժարութեամբ ընդունեցան և ողջունեցին:

Կաթողիկոսական ձեռնադրութիւնն ու հանդէսները կատարուեցան ճիշդ Դաղկազարդին օրը (1166 թուականին). Հոռովկայ երբեք այնպիսի վսեմ տեսարան չէր ընծայած. այն գետապատ լուիկ քարանձաւը՝ ուրախութեան ձայներով ու սրբազան հանդէսներով կը թնդար: Դերունի կաթողիկոսը՝ մայր մոնոպ արևու նման՝ ամփոփելով իր բովանդակ ուժը, և քահանայապետական աստիճանին բոլոր շքեղութեամբ ու զարդերով պճնած, յիսուն երեք տարի իր գլուխը կրած վեհաշուք քօղը դրաւ Շնորհալոյն գլուխը, իր մովսիսական գաւազանը տուաւ անոր ձեռքը և նստուց զինքը գահուն վրայ, ուր առաջ հագիւ մէկ երկուք՝ իսկ վերջը Շնորհալոյն հաւասար ոչ մէկը բազմեցաւ: Երբ տեսաւ Ներսէս իր վսեմազարդ հայրապետ եղբօր խոնարհութիւնը՝ որ երկրպագութեամբ ողջունեց զինքը իբրև կաթողիկոս, որուն հետևեցան բոլոր եպիսկոպոսունք, վանահայրերը և վարդապետները, ալ չի կրցաւ զսպել զգայուն սիրտը, աչքն արտասուքով լի՝ շարժեց աստուածախօս շրթունքը ու հրաշայի աւտենաբանութիւն մ'ըրաւ: — Երեք ամիս վերջը Գրիգորիս կաթողիկոսը՝ զուարթ հոգւով, զգաստ մաքով և սրբութեամբ փոխեցաւ առ Աստուած՝

և Հռոմկլայի ծայրը՝ իրեն համար պատրաստած շիրմին մէջ թաղուեցաւ մեծ հանգիստով:

Շնորհալոյ գրիչը կարծես այնուհետև ուրիշ նոր վսեմութիւն և փայլ մ'առաւ. անկարելի է կարդալ անոր ընդհանրական թուղթը, որ անմիջապէս կաթողիկոս ըլլալէն վերջը գրեց ու զրկեց, և չզմայլել անոր պարզ ու վսեմ ոճին եւ իմաստներուն խորութեան վրայ, ուր մարդկային հանճարէ աւելի երկնաւոր և աստուածային ներշնչում մը կը զգայ մարդ: — Ո՛հ, այն վայրենի՛ բայց և վսեմ՛ բարձրութեան վրայ (360 ոտք բարձր Եփրատայ եզերքէն), — որուն պատուանդանը կը համբուրէին քծնելով ու հառաչելով յորդահոս գետին կատաղի կոհակները, — իբրև անբոյթ նաւահանգստի մէջ խարխուխ ձգած մեր Շնորհալի հայրապետը, պատերազմաց ազմուկներէ և կասկածներէ զերծ, ինքզինքը եկեղեցական հոգերուն և գրական աշխատութեանց տուաւ. ուսկից միայն հաւատոյ խնդիրներու կամ եկեղեցեաց և սրտերու միութեան համար՝ մերթ ընդմերթ կամ ինքը կ'երևէր կամ լեզուն ու գրիչը կը խօսեցնէր: Այն սրբազան լուսութեան մէջ, իբր երկնաւոր քնար մը դաւթեան՝ կ'երգէր ու կը զմայլեցնէր հրեշտակներն անգամ: իբրև մարմնաւոր սրովբէ մը՝ կ'այրէր ու կը տոչորէր Աստուծոյ սիրով, որուն գերարժարժ բոցով ու շունչով թրթռուն սիրտը կը նուագէր օրհնութիւններ և ալելուներ, որոնց արձագանգները կը հնչեն դեռ մեր եկեղեցիներուն մէջ՝ իրեն յօրինած տաղերուն ու շարականներուն ձեռքով, որոնք քաղցր ու ախորժելի կ'ընեն մեզի սրբազան օրերուն ու հանդէսներուն յիշատակները: Հիմակ ալ երկնքէն կը լսեցնէ մեզի իր հոգերգակ քնարին ձայնը, զարթուցանելու ու հրաւիրելու զմեզ գէպ ի վեր, «Սիոնի որդիք, զարթիք» ըսելով, ու

կը պատրաստէ զմեզ երկնաւոր փեսային գալըստեան, ընդ առաջ ելլելու անոր պճնած ու զարգարուած առաքինութեամբ, և իրեն հետ անմահանալու անթառամ պսակներով:


Անկարելի է Շնորհալոյն բեղմնաւոր մտքին ու գրչին ետևէ հասնել, որ զարմանալի թուիչով մը յանդուգն ելևէջներ կ'առնու, և բարձրացնելով զմեզ իրեն հետ ամպերէն վեր, կը ճառէ Յաղագս երկնից և զարդոյց ևնցա, և անոնցմէ ալ վեր՝ Հրեշտակաց և ներքողը կ'ընէ: Ուրիշ անգամներ ալ տաքուկ սրտով ու սիրով խանդաղատելով ուրիշներուն թշուառութեան վրայ, կը գրէ իսկևի յիշարոյթիան առ փոսակալսն մարմնով. երբեմն ալ յանդիմանութիւն կը գրէ առ հակառակասէրս և Առ ժպիրնս. իսկ ուր ոչ միսիթարութիւնն եւ ոչ յանդիմանութիւնն օգուտ ունէին, հոն ողբով կը դարմանէր եղած փաստը, ինչպէս որ ողբաց այրիացած և ամայացած եղեսիա քաղաքին վրայ: Այս գրութիւնը Շնորհալոյ ուրիշ քերթուածներէն աւելի աշխուժով ու ճարտարութեամբ շինուած է, սրուն մէջ կը տեսնուին վաշերուչ ու սրտառուչ նկարագիրներ և գրուագներ: Ասոր հաւասար և թերևս գերազանց ալ է Յիսուս որդի քերթութիւնը, սրուն վրայ ոչ միայն մենք կը պարծինք, այլ և օտարներն ալ ցարդ կը զմայլին և կը հիանան. իսկ Սաւոթի և Կաթողիկեայ թուղթերուն մեկնութեանց մէջ այնպիսի օծութիւն և քաղցրութիւն մ'ունի անոր սրբազան գրիչը, որ կարծես իւզով ու մեղրով կը պարարէ ընթերցողներուն սիրտը: Կարելի է չլիշել այն հոգեւանդն աղբիւրէն բղխած քսան և չորս անգին գոհարները, որոնցմով պճնած կամ զինուած քրիստոնեան՝ անքոյթ և անկասկած ամէն վտանգներէ՝ կ'երթայ զԱստուած ու երկինքը ժառանգելու:



Շնորհալուոյն միակ և գեղեցիկ ձիւղքն այս է՝ գիտնալ ամէն վիճակի ու հասակի անձանց հետ իրենց յարուար լեզուով խօսիլ: Գիտէ նա շահիլ թագաւորներուն և մեծամեծներուն սրտերը՝ խոհական և իմաստուն խօսքով կամ գրով, և յետոյ խոնարհիլ իջնել գեղձուկ կամ դեռաբայս համբակին մօտ, և ռամկաբարբառ առակներով՝ հանելուկներով զբարեցնել ու արթնցնել անոնց միտքը կամ առաջին անգամ՝ տղայոց առջև դրուած այրուբներ դիւրին ու զուարճալի բնելու համար, ամէն մէկ տառի վրայ համառօտ գրաւիչ խորհրդածութիւններ բնել: Գիտէ ուրիշ լեզուով խօսիլ եկեղեցականի հետ, և ուրիշ՝ աշխարհականի հետ. ուրիշ՝ գիտունին և տղէտին հետ. գիտէ զրդձական սղբերով սանձել և ուղղել մեղաւորներուն բնթացքը, բանաստեղծութեամբ ու երաժշտութեամբ, սրտնց կրնար վարժապետ համարուիլ, գիւթել բանաստեղծներուն և երգիչներուն միտքերը:

Համառօտ կ'անցնիմ, Հայկակ, Շնորհալուոյ եկեղեցադարդ հողւոյն բրած այն ամէն բարեկարգութիւնները, որոնցմով ճոխացուց և վայելչացուց մեր սրբազան ծէսերը և հանդէսները, եւ մանաւանդ իրեն միաբանասէր սրտին երկար ճիգն ու ջանքը, որով կ'ուղէր և կ'աշխատէր հայ և յոյն եկեղեցիները և ազգերը միացնել, որոնք աւելի տաքդլխութեամբ ու զիրար չհասկնալով բաժնուեր էին իրարմէ՝ քան ուրիշ պատճառով: Հիացուց նա իմաստութեամբ և շնորհալի վարքով Յոյները, կայսերաց սէրը ու յարգանքն իրեն ձգեց, և թէրիանէի նման նրբամիտ աստուածաբան և փիլիսոփայ մտքերն ու բերանները կարկեց ու ափշեցուց: Ի՞նչն խոնարհեցան վերջապէս բարձրամիտ Յոյներն իրենց բարձրութենէն, երբ կր կարծէին ասննել մեր Շնորհալուոյն

մէջ Աթանաս մը, Աստուածաբան մը կամ Բարսեղ մը, այնչափ զարմանալի էր անոր լեզուն ու գրիչը, այնչափ խոր ու խմաստալից՝ ճառերն ու թուղթերը: Բայց, ափսոս, որ փութով հասաւ անուրփելի մահը, ու Ներսիսի հետ գերեզման տարաւ նաև երկու եկեղեցիներուն միութեան կապն ու յայտը, Շնորհալոյն ազամանդեայ սիրտը և սակեղէն գրիչը: Վասն զի յետ կրկին ու կրկին նուիրակութեանց ու թղթակցութեանց ընդ մէջ կայսեր ու մեր կաթողիկոսին, երբ միութեան օգակները կը մօտենային իրարու հետ կապուելու, ու ժողովի կը հրաւիրէր Շնորհալին ազգային եպիսկոպոսները և վարդապետները, ուրիշ գերազոյն ու անդարձ հրաւէր մ'ալ իրեն հասաւ, որ կը փութացնէր անոր վաստակարեկ մարմինը հանգչելու, իսկ բազմարդիւն հոգին ալ պսակուելու ու վարձատրուելու յաւիտենական փառքերով, 1173 տարւոյն Օգոստոս ամսոյն: — Փութանք, Հայկակ, և չի կորանցնենք Շնորհալի հօրս ձայնը և հետքը, ելլենք իրեն հետ երկինք և անկէ դիտենք աւելի սուր և լուսաւոր հայեացներով, եթէ կ'ախորժիս, հայրենեացս պանծալի և սխրալի գրուագները, մուսայութեան ներքեւ թաղելով ողբերու և սուգի արժանի տեսարանները և գէպքերը: Հոն պիտի գտնենք ազգիս եւ հայրենեացս երախտապարտ հայրերը և որդիքը, վեհապետները և գիւցազունները՝ աւելի արժանաւոր պսակներով զարգարուած, քան ինչ որ կը կարծենք հիւսել հոս իրենց համար. հոն պիտի գտնենք մեր բնիկ և ստոյգ հայրենիքը, որուն սոսկ պատկեր և ցոլացումն է՝ զոր ունինք և այնչափ կը սիրենք աշխարհիս վրայ:





**Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԵՑԻ**

## Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԵՑԻ

**ՏԱԿԱԽԻՆ** կը հսկես, լուսին, Լամբրոնի դղեկին և ուրիշ նուիրական տեղեաց աւերակներուն վրայ, ուր լոյս տեսաւ՝ շնչեց ու ապրեցաւ Արծիւն լամբրոնեան, և վերջապէս ննջեց խաղաղիկ արդարոց քունը: Դեռ նոյն օրն ու ջուրն է, Ոգի հայրենեաց, զոր ծծեց ու բմկեց մեր անմահ Լամբրոնեցին. նոյն արևը, լուսինն ու աստղները, որ փայլեցան և վկայ եղան անոր գերազանց ճգնութեանց ու առաքինութեանց. ո՛հ, ինչ անուշ և նուիրական պիտի ըլլան մեզի այս ամէն բանը, Հայկակ, եթէ սրտով հայ ենք և ոչ անունով միայն: Մնացե՛ր են արդեօք հողին վըրայ անոր սրբազան ոտներուն լուսաւոր հեղքերը, թէ կամ արեամբ ողողուեր և կամ աւերակներով ծածկուեր են. կամ գէթ մնացե՛ր են անոր սրտակաթ ձայնին արձագանգները, որոնք մերթ հեզիկ գեփիւռներուն թևերուն վրայ յեցած, մերթ գետերուն խոխոջներուն հետ խառնուելով և կամ ծովուն կատաղի կոհակներուն վրայէն վազվազելով, Լամբրոնեցոյն ձայնը տարին հասուցին աշխարհիս ամէն կողմը, որով սիրելի ու փարելի ըրին զինքը Յունաց ու Լատինաց, Ասորոց և օտարներուն:

Նոյն տարին որ մարեցաւ արևմտեան եկեղեցւոյ փայլուն արևը (Ս. Բեռնարդոս), կարծես ա-

նոր հոգւոյն կայծ մը թռչելով եկաւ մտաւ լամբրոնի բերդը, ուր վառեց արծարծեց նորափայլ արև մը՝ ընծայելով եկեղեցւոյ և ազգիս հրաշալի լամբրոնեցին (1152ին)։ Հայրը՝ Օշին սեբաստոս, և մայրը Շահանգուխտ՝ դուստր Շահանայ եղբօր Շնորհալուոյն, իրենց մաքուր սիրոյն ամենէն անուշ պտուղը կամ ծաղիկը ուղելով երկնքի ընծայել, խանձարուրքէն ուխտեցին Աստուծոյ նուիրել Սմբատը, (այս էր լամբրոնեցւոյն մկրտութեան անունը)։ Բայց երբ հասակին հետ սկսաւ զարգսնալ և փայլիլ հոգւոյն գեղեցկութիւնը, անոր մովսիսանման երեսներուն կայտառութեան վրայ, ո՛հ, մտքերնին փոխեցին ծնողքը և չէին ուզեր անապատներու և մենարաններու մթութեան մէջ ծածկել այնպիսի անզին գոհար մը։ Բայց Աստուած ալ պահանջեց իր իրաւունքը, և յեղակարծ հիւանդութեան մը ձեռքով սթափեցուց ծնողաց միտքը, որոնք սողէն աւելի մահայած՝ դիմեցին Աստուածամօր եկեղեցին Սկեւոսայ վանքը, և նոր Սամուէլը նուիրելով և օրհնելով երկնքի պաշտօնեայ՝ մանկան կիսամեռ ոգին ետ դարձուցին։

Հագիւ ճաշակած մայրենի կաթը, վանական կեանքի համն ու յարումը զգալով սրտին մէջ, գարնան թիթեռնիկի նման սկսաւ թռչրտիլ սրբաբաններու, վանքերու ու անապատներու մէջ. և որչափ դիւրաւ կը թողուր ու կը թռչէր մայրենի գրկէն, նոյնչափ ալ ծնողքը դժուարաւ ու բռնութեամբ կը խլէին զինքն այն սրբազան լրութենէն ու միայնութենէն։ — Անգոնուպ սիրտ ու հոգի, քանի քանի անգամ՝ հակառակ այնչափ ջանքերուն և արգելքներուն մայրենի սիրոյն՝ գաղտագողի տարիք թռուցիք աստուածասէր մանուկը քարանձաններու ու ապառաժներու մէջ, սորվելու հոն կենդանի օրինակներէ առաքինու-

թեան ու ճգնութեան փշոտ ճանապարհները, ուրոնց մէջ յետոյ այնքան գերազանց հանդիսացաւ :

Ո՛հ, որչափ օտար ու անյարմար կը գտնէր նա իր սրտին՝ արքունիքն ու իշխանական դարպասները. Բիւզանդիոն և Անտիպ իրենց բոլոր շքեզութեամբ ու ճոխութեամբ փորձեցին դեռաբոյս պատանեկին սիրտը հրապուրել, բայց ամբոջան ու լռեցին անոր իմաստուն խօսքերուն առջև: Արթուն ու բարեպաշտ մայրն ալ յոգնեցաւ, երբ տեսաւ որ զուր տեղ կը ջանար արգելուլ իր սրդեկին բարձրաթոյն խոյանքը, երբ տեսաւ որ իր սիրտը հատաւ ու խնդրակներուն ուժը սպառեցաւ անոր ետեւ վազելէն; մինչ նա միշտ գէպ ի վեր կը դիմէր բոցի նման: Սկեռայ վանքին մէջ հանգչեցաւ վայրիկ մը անապատասէր տարակը, ուր իրեն ուսուցիչ և դաստիարակ եղաւ Յովհաննէս անունով ճգնազգեաց ու առաքինի վարդապետ մը, թէ և ինքն աւելի պէտք ունէր իր չափազանց ճգնութիւններն ու կրակ դարձած սրտին եռանդը չափի մէջ պահելու՝ քան թէ արծարծելու: Սրտին ու հոգւոյն հետ միտքն ալ կը զարգացնէր հոն ուսմանց ու գիտութեանց մէջ: Նոյն միջոցները կիլիկիա Թորոսի ու Լեոնի ահարկու գէնքերուն շնորհիւ կը վայելէր հանդարտութիւն ու խաղաղութիւն. գրեթէ բոլոր լեռներուն ծայրերը կամ հովիտներուն խորերը ծաղկանց նման սփռեր բազմացել էին վանքերը, որոնք կը ջանային գերազանցել զիրար մտաւոր ու հոգեւոր հրահանգներով, և անոնց մէջ ամենէն աւելի կը փայլէր Լամբրոնեան Սկեռան, որուն պատուէներն յայտնի են ազգային դպրութեան պատմութեան մէջ: Սոյն մենաստանիս խաղաղ պարիսպներուն մէջ՝ բնտիր վարդապետաց ջանքերով աւելի ևս կրթուեցաւ ու սրեցաւ Լամբրո-

նեցւոյն արդէն սուր ու կիրթ հանճարը: Ասոր բարեպաշտ մայրը խանձարուքէն վարժեցուցեր էր տղան շնորհալի շրթունքը՝ մայրենի լեզուին հետ՝ թոթովել նաև յունարէն լեզուն. իսկ լատին լեզուին ճանապարհն առաջին անգամ ինքը բացաւ. հաւանական է որ տեղեակ էր նաև երբայեցի և ասորի լեզուներուն: Բայց Լամբրոնեցւոյն լայն և ընդարձակ մտքին համար շատ չափաւոր ու սահմանափակ էին այն վանքերուն և վարդապետներուն գիտութիւնքը. ուստի տարակիցս չկայ թէ այն հարուստ և համողիչ հռետորութիւնը, այն խոր թափանցողութիւնն աստուածային գրքերուն և բարձրաթոյն տեսութիւններն՝ աւելի երկնաւոր պարզև մ'էին, քան սոսկ երկրաւոր հանճարի ծնունդ. և յիրաւի կ'ափշիկը հիանայ մարդ, երբ մտածէ որ սուրբին ամենէն հրաշալի գրութիւնները՝ դալար հասակին պտուղներ են, մինչդեռ հասունացեալ մտքի բերքեր կ'երեւին, եւ մեծ փորձի ու հոգեկրութեան արդիւնքներ կը տեսնուին:

Պատանեկութեան վեշտասանամեայ հասակին՝ երբ հայրը երկինք ուղարկեց, ինքն ալ պարզեց հոգւոյն թևերը և կ'ուզէր անապատ փախչիլ, մանաւանդ երբ իմացաւ թէ՛ համեմատ հօրը յանձնարարութեան՝ քահանայութեան ու առաջնորդութեան աստիճանին պիտի բարձրացնեն զինքը. ուղեց խզել և թօթովել վրայէն ամէն հոգ ու կոպ, և միայն Յիսուսի քաղցր լուծն անցըներով իր պարանոցը, միայնութեան մէջ տարակներուն հետ մուչել, և իբրև « ձայն բարբառոյ յանապատի » խօսեցնել այն լեզուն՝ որ եկեղեցին պիտի փառաւորէր, աշխարհս հիացնէր, և բազմութիւն մարդիկներու երկինք պիտի տանէր: Այս անգամ մայրենի սէրը յաղթեց պատանեկին աստուածային եռանդեան, տարաւ զինքը

Հռոմկլայ և Շնորհալուոյն հայրենի գորովին և խր-  
նամբին յանձնեց զինքը: Իսկ կաթողիկոսը՝ զմայ-  
լած պատանւոյն հրաշալի սրբութեան վրայ, որ  
դէմքին վրայ իսկ կը ցոլանար, քահանայական  
շնորհին հետ թափեց անոր վրայ նաև իրեն հո-  
գւոյն օծութիւնը, զոր և անուան փոփոխութեամբ  
ուզելով հաւաստել, Սմբատը կոչեց Ներսէս: Շը-  
նորհալուոյն ալէզարդ հասակին վերջին ծաղիկն ե-  
ղաւ Ներսէս. անոր խոնարհած արևուն յետին  
պայծառ փայլն ու վշտացած սրտին միակ մխի-  
թարութիւնն եղաւ Հռոմկլայի մէջ, որով չէր ու-  
զեր հեռացնել զինքը քովէն: Բայց ս՛վ կրնար  
դէմ դնել Լամբրոնեցւոյն սրտի կրակին, որ  
միշտ կը մղէր զինքը դէպ ի անապատներն ու մե-  
նարանները. բայց ոչ Սաւու լեռան մթութիւնը,  
ոչ Տաւրոսի բարձունքը, ոչ գունդագունդ ճգնա-  
ւորաց բազմութիւնը և ոչ ալ իր չափազանց խո-  
նարհութեան քողը՝ չի կրցան ծածկել մարդիկ-  
ներու աչքէն անոր գեղեցկութիւնը և սրբութեան  
փայլը. գէթ արևը կը ծածկուի երբեմն ամպե-  
րէն, բայց Լամբրոնեցւոյ լոյսը ոչ բնաւ: Սալորու  
և Սկեւտա, Տարսոն և Լամբրոն կը մրցին դէմ  
ընդ դէմ ու խնդրակներ կը զրկեն գտնելու  
« զհետս արծուոյ թռուցելոյ » . այլ Ներսէս ոչ  
մէկ տեղ չերևիր, աստուածային սիրոյն ծարաւի  
եղջերուն՝ լեռներուն ու անապատներուն միայնու-  
թիւնը կը լացնէ իր սրտագին հառաչներով. ա-  
նապատին մէջ իրեն ուրիշ խոր անապատ մը չի-  
նած, ուր ամփոփուած և գրեթէ մոռցած իր ան-  
ձը՝ անքուն ու անտուաղ՝ հիանալի աստուածտե-  
սութեամբ զմայլած կը սնանի, կը պարարի, կ'ա-  
պրի, կը սեռնի ու կ'անմահանայ... Բայտ վկայու-  
թեան ականատեսներուն, սպասաւորն որ ամէն  
օր կը տանէր կերակրիկը ու կը դնէր անոր պա-  
տուհանին մէջ, երկրորդ օրը ամբողջ կը գտնէր



զայն՝ ինչպէս որ գրած էր. և կերակուր ըստձն ալ ուրիշ բան չէր՝ բայց սակաւ մը բանջար: Յետ բարձր օրը հողետր ընթերցումով ու գրութեամբ անցրնելու, գիշերային հանգիստն ալ ադօթքի ու խոկմանց կը նուիրէր. ոչ անկողնի պէտք ունէր և ոչ խշտեկի, այլ աթոռին վրայ նստած՝ պահ մը կը մրափէր, երբ սաստիկ կը ծանրանային արտևանունքը, և այն երջանիկ մըրափումն ալ՝ յաճախ մտքի կամ հոգւոյ յափըչտակութիւն մ'էր առ Աստուած, որով յետ արթննալու՝ միտքն աւելի արթուն և սիրտն աւելի եռանդուն կ'ըլլային:

Հուսկ ապա Ներսիսի խոնարհութիւնը տեղի տուաւ բարձրագոյն հրամանի. յետ երջանիկ փոխման Շնորհալոյն՝ հայրապետական աթոռին արժանաւոր յաջորդ գրուած էր Գրիգոր Տղայ՝ Շնորհալոյն եղբորորդին. սա արծուի աչքով ուրանեց և գտաւ լամբրոնեան արծուին բունիկը, իրեն կանչեց եւ արքեպիսկոպոս ձեռնադրեց զինքը Տարսնի և շրջակայ գաւառներուն (յամբ 1175). քաններեք տարեկան հասակի մէջ հայր և տեսուչ եղաւ ժողովրդեան: Հետեեալ տարին սրբտին վառարանէն լոյս րնծայեց անգին մարդարիտ մը՝ անզուգական Պատարագամեկնիչը, հոգեզուարճ աղօթքներու և խոկումներու պտուղ, որ ազգիս բոլոր դպրութեան մէջ աննման և անհամեմատ կը փայլի և պիտի փայլի: Իր առաջնորդութեան միջոցին անդադար կը փոփոխէր բնակութիւնը, մերթ Տարսոն, մերթ լամբրոն և մերթ Սկեւոս՝ պարագաներուն համեմատ, բայց իր հովանին ու սէրն առ ժողովուրդն ոչ կը փոփոխէր և ոչ կը նուազեցնէր. իր հովուական ցուպը՝ կարծեա իւրով ու մեղրով օծուած՝ զարկած միջոց անգամ, երբ հարկը պահանջէր, աւելի կը մեղմէր քան թէ կը զայրացնէր ցաւերը. մէկ

անոյշ ակնարկն անգամ բաւական էր կակղցնելու քարացած սրտերը և արտասուքով ողողելու երաշտ աչքերը:

Անկարելի է մտքով իսկ հասնիլ, Հայկակ, մեր հրաշալի Լամբրոնեցւոյն թռչուն հետքերուն. կը գտնենք զինքը ամենահաս ամենուրեք, առանց յոգնելու, քաղաքներուն մէջ, անապատները, լեռանց ծայրերը ու քարանձաւներուն խորշերը: Մերթ կը գտնենք զինքը Երուսաղէմ՝ ուխտաւորի ցուպով, և մերթ Բիւզանդիոնի արքունիքը՝ հայրապետական գաւազանով ու շքով. երբեմն Սեպուհ լեռան կողերը վիրաւոր ոտքերուն ծիրանեզոյն արեամբ կը ներկէ, երբեմն ալ սրբութեան համբաւով և հրաշքներով վեր ի վայր կ'ընէ կիպրոս կղզին. Դարանաղեսց գաւառին վանորայքը կը թնդան տակաւին անոր սրտագին հեծեծանայ արձագանգներով, և կիլիկիոյ անապատները սուրբիս ճգնութեամբք և արտասուքով ծաղկած՝ կը փայլին դեռ աւերակներուն մէջ: Վանքեր ու վարժարաններ, արքունիք ու եկեղեցիք միապէս կ'ընտրեն կը հրաւիրեն զինքը այլ և այլ բարձրագոյն տեսչութեանց. ուր որ կը կոխեն անոր գարշապարները, կարծես երջանկութիւն ու յաջողութիւն կը բուսցնեն, խաղաղութիւն ու պայծառութիւն կը պարգևեն:

Յամին 1177, երբ Սաղրուի անապատին հանգարտ սիւքը կը ծծէր, կաթողիկոսին ստիպիչ ձայնն ու հրաւէրը կը կանչէ զինքը Հոռմկլայ, ուր ժողովական բազմաթիւ եպիսկոպոսներուն եւ վարդապետներուն լեզու ու առաջնորդ ըլլալով, կը հրնչեցնէ ու կը հրաշացնէ Լամբրոնեան փողն իր հիւնալի Առեկարանոքիւնը՝ ոչ միայն յունկն ժողովականներուն, այլ և մինչև հիմակ իսկ կը թընդացնէ անով ընթերցողաց սրտերը: Ո՞ր գիտէ հայրապետութեան ո՞ր տարին հիւսեց և արտասանեց

այն ազգու ու պերճախօս ճառերը՝ Գրիստոսի Համբարձման և Հոգւոյն Սրբոյ գալստեան վրայ, որոնք անհնանալի կնիք մը կը կրեն վրանին եւ դալար գեղեցկութիւն մը. զարմանալի ծաղկունք, որոնք բնաւ չեն գիտեր թառամիլ դարուց խորշակներէն:

Նա որ այնպիսի փութով ու խնամով զարգարեց ու գեղեցկացուց իր հոգւոյն ներքին տաճարը, տարակոյս չկայ թէ իրեն յանձնուած եկեղեցին և հօտն աւելի ևս ջանքով ու եռանդեամբ բարեկարգեց և պայծառացուց, ոչ միայն բարոյական՝ այլ և արտաքին շինութեամբք և վայելչութեամբք. եկեղեցական ծէսերուն մէջ սպրդած անկարգութիւնները վերուց, աղօթքներով եւ շարականներով ճոխացուց, եկեղեցեաց թիւն աճեցուց: — Ինչ սրտաշարժ տեսարան էր այն, երբ երեք չորս հարիւր ազգատներու բազմութիւն մը՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերը Տարսոնի եկեղեցւոյն դրան առջև կեցած՝ լեցուն սրտով և լեցուն ձեռքերով կը դառնային փառաւորելու ղԱստուած և իրենց հայրապետին ողորմած սիրտը հուշակելու, որ եթէ ամէն բանի մէջ առատ էր, ևս աւելի բարերարելու, որուն համար մինչև տասն հազար ոսկի ծախք ըրաւ կ'ըսեն: — Նոյնպէս մեծ փոյթ ու խնամք ունէր վանականներուն բարեկարգութեան վրայ, և իրեն ցանկալի օրինակով վանորայքն ու անապատները երկնաւոր հարսնարան մը ըրաւ ողջախոհ կուսաններու. և ինքը որ մանուկ հասակէն կիլիկիոյ միայնութեանց մէջ կը մնէր կիւղնոսի ողբաձայն կարկաջներուն հետ, իր ձայնին վերջին աղօս դանգիւններուն հետ խառնեց նաև Շահանգուխտ մօրն ու Տալիթա և Շուշան քոյրերուն անուշ ու վառվռուն մրմունջները, որոնք իրեն սիրելի ձեռքէն առնելով կուսութեան քօղը, իր կենդանու-

Թեան ժամանակ՝ սուրբ սեղանին առջև, և յետ մահուան՝ գերեզմանին վրայ աղօթից ու հեծութեանց հրով ճենճերեցան իբրու ողջախոհ տառապանքի Յիսուսի:

Անգամ մը խաչակիրներուն ու փրեղերիկոս կայսեր գիմաւորելու առթիւ, երբ Լամբրոնեցին քսան ընկերներով Տարսոնէն առ կաթողիկոսը կ'երթար, յանկարծ ամայի լեռներուն մէջ աւազակներու խումբէ մը պաշարուեցան. զարմանք չէ որ այն անսիրտ գազանները միայն ոսկւով գոհ չըլլալով՝ խեղճերուն արիւնն ալ ծծեցին. և այն է զարմանալի, որ սուրբին և ոչ մէկ մազին գըպան, միայն անոր Պատարագաւեկնիչ գրքին մէկ հատիկ օրինակը յափշտակեցին, ո՞ր գիտէ ինչ նորօրինակ բան կարծելով զայն: Բայց Աստուած փութով մխիթարեց երանելոյն սիրտը, երբ գարձեալ ոսկւով ու ծանօթներու միջնորդութեամբ ձեռք բերաւ զայն: Նոյնպէս զարմանալի է Լամբրոնեցւոյն ըրած նուիրակութիւնն ի Բիւզանդիոն, մահուրնէն քիչ առաջ, ուր այնպիսի եռանդուն ու ճարտար լեզուով ու սրտով խօսեցաւ երկու եկեղեցիներուն միութեան համար, որ եթէ չյաղթեց ալ յունական գոռոզ մտքերուն, այլ գէթ գրաւեց ու շահեցաւ անոնց թեթև սրտերը, որոնք չկրցան ծածկել իրենց զարմանքն ու սէրը, և ըստ արժանւոյն պատուեցին և հռչակեցին սուրբը. եթէ այս նուիրակութիւնս ուրիշ օգուտ և նպատակ ալ չունեցաւ, գէթ ուղղեց անոնց մոլար կարծիքները մեր ազգին և եկեղեցւոյն նկատմամբ, և այս՝ յաղթանակ մ'եղաւ Ներսիսի պերճախօս լեզուին:

Մինչդեռ ամէն բանի մէջ և ամէն տեղ սխրալի ու սիրելի կը հանդիսանար սուրբը, չե՞ս զարմանար, մանաւանդ թէ չե՞ս ցաւիր, Հայկակ, որ միայն իրեն ազգին միջէն ռիսերիմ թշնամիներ

ունեցաւ. մինչդեռ « բարեհռչակէր ի լատինաց-  
ւոց եկեղեցիսն և ի Հելլենաց և Ասորւոց », ու  
մանք՝ երկրորդ Պաշտոն կոչելով զինքը, ուրիշնե-  
րը՝ տիեզերալոյս վարդապետ, և մինչև անգամ  
Լեոնի պէս խորագէտ թագաւոր մը կաթողիկո-  
սական աթոռին արժանի կը դատէր զինքը, ա-  
ւազ, Հաղթատ ու Չորոյգետ վանքերուն մէջ —  
խաղաղութեան ու սիրոյ տեղերուն մէջ — նա  
խանձով ու ատելութեամբ վառուած կրօնաւոր-  
ներն այսպիսի սիրելի անձի մը սիրտն ու համ-  
բաւը կը վիրաւորէին. և միայն ասով գոհ չըլլա-  
լով, չափէն աւելի երկնցներով իրենց կծու լեզու-  
ները, բամբասանքով ու քսութեամբ վերուվայր ը-  
րին արքունիքն ու կիլիկիան, որ հազիւ խաղա-  
ղութիւն գտեր էր թշնամեաց սուրէն: Ոմանց  
յուզիչ լեզուները և ուրիշներուն յուզուած սըր-  
տերը հանդարտելու համար՝ ստիպուեցաւ սուրբը  
լուծանել լուսթիւնը՝ ներողութիւնն ու ազօթքը,  
և գրեց իր հրաշալի ջատագովական թողորն առ  
Լեոն քագաւոր, որուն վրայ ոչ թէ միայն իրեն  
տգէտ թշնամիները՝ այլ և Դեմոսթէնները եւ  
կիլկերոնները պապանձեցան ու պարտութիւն  
խոստովանեցան: Բայց թողով մենք իրեն թէ  
զարմացողները և թէ չարախօսները, որոնցմէ  
առաջիններն անոր գրչէն ու լեզուէն բղխած կամ  
ցայտած կայծերէն՝ սիրով վառուեցան և զմայլե-  
ցան, իսկ միւսները նախանձով այրեցան մաշե-  
ցան, մենք փոքր մի անոր հոգւոյն խորը մտնենք,  
այն գերարժարժ սիրոյ վառարանին կեդրոնը  
դիտենք:

Լամբրոնեցւոյն սիրտը, Հայկակ, որ դալար  
հասակէն արդէն աստուածային սիրոյ հնոց մ'էր,  
կրնաս գուշակել թէ ինչ եղած էր յետ այնքան  
ճգնութեանց անսպասին և յետ գրեթէ ամէն  
օր ոգեխառնելու սիրոյ անսպառ աղբիւրին հետ՝

պատարագի սուրբ խորհուրդին մէջ: Ինքն իսկ արդէն կը բացատրէ մեզ իրեն աղօթքներուն մէջ՝ այրած սրտին ծարաւը, զմայլումը, փափաքը՝ զոր կը զգար, երբ կը դիտէր ամենասիրին Յիսուսի դէմքը. երբ գրիչ ու լեզու կը տկարանային բացատրել իր սրովբէանման սիրոյն սաստկութիւնը, այն ատեն կը լռէր, կը զմայլէր, կը վերանար, կարծես կը դադրէր շնչելէ ու զգալէ, իբր թէ թուած ըլլար հոգին. բայց մօտեցիր անգամ մը այն հնոցին, կ'իմանաս որ կ'այրի ու կ'այրէ զքեզ, թունդ կու տայ և կ'առնու սիրտը, աչքերէն արտասուք կը հոսին: Սուրբին արտասուաց աղբիւրն այնչափ յորդուլթեամբ կ'իջնէր, որ աստուածային խորհուրդը կատարելու ժամանակ՝ կ'ողողէր մինչև սեղանը. անոր համար կուրծքին վրայ կտաւ կամ սպունգ մը կը կապէին, ու սարկաւազն երկու երեք անգամ կը քամէր զայն պատարագի միջոց: Վերջապէս այնպիսի հրաբորբոք հոգւոյն հոլեղէն պահարանը չի կրնալով երկայն ժամանակ տևել, սկսաւ հալիլ այն սաստիկ ջերմութենէն. և իմանալով սուրբը վերին յայտնութենէ՝ թէ մօտ էր կենաց կապը խզելու, « ընդ որ անբերելի խնդութեամբ, կ'ըսէ սուրբին վրայ հիացող ներբողիչը Գրիգոր Սկեւոսացին, և զգեստաւորեալ խորհրդական զգեստով՝ զփրկագործն մատուցանէր պատարագ, և հաղորդեալ կենարար և մեղաքաւիչ խորհրդոյն, յորմէ ոչ երբեք եկաց ի բաց, մեծ հաւատով և բազում յուսով հանդերձ սիրով և արտասուք: Յետ այնորիկ... յառաջ կոչէր զեղբարսն, զնախաքարոզսն սակաւուք երկրորդէր, զխրատականս և զյորդորականս սիրելի որդւոցն աւանդէր, անփոխադրելի մնալ ի նոյն հաստատէր: Եւ որք մերձաւորքն էին՝ իբրև լուան զհրաժարական բանսն, որքս առեալ կոծէին զանձինս մորմոքելի

սգով՝ զբաժանին ի նմանէ, ինքն զակն ի վեր կարկառեալ՝ յորմէ ոչ երբեք խոնարհեալ... զըւարճ գիմօք և արտասուալից խնդութեամբ ասէ. ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. և իսկոյն փրչեաց զմաքրական հոգին ի ձեռս Աստուծոյ՝ որում անձկացեալն էր » (յամի 1198):

Անհնար է պատմել այն ողորմագին սուգը՝ զոր ունեցան սուրբին մերձաւորները, ազգակիցներն ու աշակերտները, մանաւանդ թէ բոլոր ազգն ու եկեղեցին, այնպիսի անդարմանելի կորուսեան մը վրայ. մեծ շքով ու ողբագին կատարեցին յուղարկաւորութեան հանդէսը, « սաղմոսիւք և քահանայական օրհնութեամբ... զԵրրորդութեանն անձկանօք մաքրութեամբ տաճարացեալն՝ ի տաճարի Տեառն մեծափառ պատուով ի դամբանի դնէին »: — Ինչպիսի չքնաղ պատկեր կենաց. որչափ հրապուրիչ մարդկային սրտի. բայց ուրիշներէն առաջ զքեզ և քու արեւակիցներդ կը հրաւիրեմ, Հայկակ, քաղել սուրբիս կենաց պարտիզէն քեզի և անոնց յարմար երեցած ծաղիկները և անոնցմով հեշտ գործել երկրաւոր կենցաղը. անոնցմով անմահացաւ նա ազգիս մէջ, անոնցմով պիտի անմահանաք և դուք:









ԱԳԱՅԱՒՈՐ Ա ԱԿՆԻ

## Լ Ե Ի Ո Ն Ա Թ Ա Գ Ա Ի Ո Ր

**Յ**կ, Հայկակ, մեր վերջին թագաւորութեան յետին փայլուն ու պայծառ տեսարանին ալ ներկայ ըլլանք, և ապա վարագոյրը փակենք. վերջին անգամ մ'ալ պատմութեանս բեմէն լըսենք ու հնչեցնենք հայ Առիւծուն (Լեւոնի) մրնչիւնը, — որ երեսուն և չորս տարւոյ չափ անընդհատ պատերազմներով լռեցուց՝ անհետ ըրաւ մէկմէկէ աւելի զօրաւոր ու վնասակար թըշնամիներ, և մեծագործութեամբք անմահացուց իր անունը աշխարհիս անուանի թագաւորներուն շարքին մէջ, — և յետոյ իրեն հետ մենք ալ լռենք: Մեծասիրտ, հեռատես ու խորագէտ թագաւոր մը, որ ոչ միայն Ռուբինեան թագաւորութեան հիմը գրաւ, այլ և ամրացուց արքունի գահը, բնդարձակեց պետութեան սահմանները, և ազգիս անունն ալ հռչակեց ու փառաւորեց օտարներուն առջև: Իրեն նախորդները ամբողջ դար մը կռուեցան յուսահատաբար, շատ արիւն՝ քրտինք թափեցին Յունաց և Սելճուկեանց դէմ, մինչև որ արծուի նման սուր մագիլները բերդէ բերդ՝ լեռնէ լեռ հասցընելով, կրցան Տօրոսի ժայռերուն վրայ հաստատել իրենց բոյնը: Բայց Լեւոն՝ այն բոյնը փոխեց ոսկեձեղուն ապարանքի ու գահոյքի, որուն համար միայն սուր ու աղեղ բաւական չէին. այլ կը պահանջուէր նաև հանճար, ջանք ու երկայնամտութիւն, և վերջապէս նուրբ քաղաքագիտութիւն, որոնք յատուկ ձիրքեր էին

լևոնի: Սա բոլոր կենաց մէջ երբեք սուրը չդրաւ պատեանին մէջ, մինչև որ բոլորովին զինաթափ ուժաթափ չըրաւ թշնամիները. և վսեմ գլուխը չի հանգչեցուց դամբանի մէջ, մինչև որ չապահովցուց իր թագը դեռաբուսիկ Զապել դատեր գլխուն վրայ, որ իրեն ծերութեան մէկ հատիկ ծաղիկն եղաւ:

Դժբախտ հօր՝ բարեբախտ զաւակ եղաւ լևոն, որ քաջութեամբն աւելի իրեն հօրեղբօր՝ Թորոս երկրորդին արժանաւոր կորիւն կրնար ըլլալ: Երբ 1163 թուականին իրեն հայրը Ստեփանէ՝ յունական վատ մատնութեան մը զոհ ըլլալով եռացած կաթասայի մէջ չարաչար կերպով կ'այրէր, փոքրիկ լևոնի սեծ սիրտն ալ կը մորմոքէր հեռուէն և ապագայ վրէժխնդրութեան կրակով կը վառէր: Կիլիկիոյ պարոնութեան աթոռը զըրկուելով իր բուն օրինաւոր պայագատէն, տասը տարւոյ չափ տաքգլուխ Մլեհի բռնաւորութեան խողալիկ եղաւ Կիլիկիա, մինչև որ ազգիս մեծամեծները զզուած անոր մոլի ընթացքէն՝ լևոնի երէց եղբօր (Ռուբէն ԳԻ) յանձնեցին իշխանութեան ղեկը: Սա թէ և ունէր լաւ ձիրքեր եւ վարչութեան յարմարութիւն, բայց կը պակսէր անոր կորով և խորագիտութիւն, որ թերևս այնպիսի ժամանակներու մէջ ամէն բանէ աւելի կարևոր էին իշխանի մը համար, ինչպէս փորձն ալ ցըցուց՝ երբ իրեն դրակից Անտիոքայ խորամանկ դքսին ձեռքը որս ինկաւ: Լևոն յարմար առիթ գտաւ զայն՝ առաջին անգամ ցուցնելու իրեն ուժը և հանճարը, և լիովին յաջողեցաւ. զէնք ու խորագիտութիւն միացուցած՝ Պեմոնդ դքսին սիրտը վախցուց ու կակղցուց, որով եղբօր կապանքն ալ արձակելով՝ հայրենիք դարձուց զինքը: Ռուբէն կրկնակի երախտապարտ գտնուելով լևոնի՝ և իրմէ աւելի արժանաւոր տես-

ներով, անոր յանձնեց ակթոռն ու իշխանութիւնը (1187 թուականին), և ինքը կրօնաւորեցաւ Դր-րագարկի վանքը, ուսկից քիչ ժամանակ վերջը մահացու հիւանդութիւն մը երկինք թռուց զին-քը սրբութեամբ:

Լեոն դեռ իշխանութեան ակթոռը չի բազմած՝ ամպէ ամպ ցաւաբող փայլակի նման՝ երևցաւ կի-լիկիոյ բոլոր սահմանագլուխները, դիտեց իմա-ցաւ իր աշխարհին տկար ու ամուր կողմերը, չափեց թշնամիներուն ուժը, շողացուց թուրը և ուժգին գոչեց ձայն տուաւ շրջակայ ազգերուն, թէ « Լեոնիս թուրն ու ձայնն է՝ որ կը կանչէ զձեզ ի կռիւ. ելէ՛ք, բաց են առջեւնիդ կիլիկիոյ գոնները, մտէ՛ք ժողովեցէ՛ք աւար և ոսկի՝ որչափ կ'ուզէք, բայց միայն սուրիս ու բազկիս չի հանդիպիք, կայծակ է՝ կ'այրէ, կը լափէ զձեզ »: Սարսափած լուեցին թշնամիներն այս անգամ՝, մինչդեռ առաջ և ոչ ժամ մը հանդարտ կը ձգէին Հայերը: Լեոն իշխանութեան ակթոռը Տարսոնէն փոխադրեց Սիս, թէ և ինքը ոչ մէկ տեղ հաստատուն չէր կենար. կ'ուզէր անգամ մը փորձել ու կշռել սուրը թշնամեաց գլխուն վրայ, և յետոյ հանգչիլ ու հանգչեցնել աշխարհը. կ'ուզէր իրեն նախնեաց վրէժն առնուլ, և այն-չափ Հայերուն արիւնը ծծող գազաններուն վնասա-պարտ արևը՝ իրենց արեան մէջ մարել ընկղմել: Եւ մինչդեռ Տորոսի բարձունքներուն վրայ դա-րանած Առիւծը՝ կրակոտ աչքերով կը դիտէր կը սպասէր որսին, տեսաւ հիւսիսային կողմէն օձերու նման ճապկող ճապատող զէնքերու փայլ-փրլում մը. իմացաւ Լեոն՝ դարուվար սահեցաւ, դոփեց թոպեց՝ ձայն տուաւ զօրքերուն, և գունդ-կազսել ու չի կարծած պահուն չի կարծած տե-ղէն թշնամուցն առջևն առնուլ մէկ ըրաւ: Իկնիոյ սուլտանն էր վրան վազող զօրաւոր թշնամին, որ

եկած էր նուաճել լեռնն ու հարկատու ընել, որ երբ տեսաւ Հայոց բանակին սակաւութիւնը՝ բայց կարգէ դուրս կարճութիւնը, և մանաւանդ լեռնի վսեմ գէմքին վրայ ցոլացող կատաղութեան բոցը, իրեն ու զօրաց բազուկները թուլացան ու կը մտածէին գէթ գլուխնին ողջ ետ դարձնել մինչև իրենց տեղը: Բայց բախտն ու լեռնի սուրը ուրիշ կերպ վճռեցին. թշնամեաց հազարաւոր գլուխներ դաշտին վրայ արիւնլուայ ինկան, եւ անոնց բոլոր աւարը Հայոց քաջերուն բաժին ելաւ: Այս առաջին յաղթութիւնը՝ ուրիշ սեծամեծ յաղթութեանց դուռ եղաւ. Ռուբինեան դիւցազն ու իրեն բանակը դեռ արշաւանքնին չսկսած, միայն քաջութեան համբաւն ահագին ասպարէզ մը բացաւ դիմացնին: լեռն մէկ մը աջ և մէկ մը ձախ կը դարձունէր իրեն զէնքը. ոչ երբեք անյոյս մտաւ պատերազմի դաշտին մէջ և ոչ երբեք անորս դարձաւ անկէ. թշնամիք բաւական ժամանակ չէին գտներ անոր երազութեան առջև՝ գէթ իրենց կեանքը և ինչքերը ապահովցնելու: Խսաւրիոյ վայրենի բնակիչները՝ մեր քաջ իշխանին բուռն արշաւանքներէն մոռցած իրենց աւագակութիւնները, որջերու մէջ ամփոփուեցան եւ իրենց ունեցածներն ալ կորսնցուցին, լեռն տիրեց երկրին և զանոնք չափու սահմանի մէջ դրաւ. Պաղրսա մեծ դղեակն ու Այտալիա քաղաքը՝ բացին դռները անոր գլխութեան առջև, գիտնալով որ անկարելի էր անոր զէնքերուն դէմ կենալ: Մինչև կեսարիա Պաղեստինոյ՝ քաղաք չի մնաց որ յօժարութեամբ չի բանար դռները մեր գիւցազին առջև, որոնք փառքով ու յաղթանակով կ'ընդունէին ու կը պատուէին իրենց մեծասիրտ յաղթողը. կեսարիոյ իշխանը զարհուրած՝ փութաց ընդ առաջ լեռնի, որուն դիմաց ամբաւ ոսկի սփռելով՝ ետ դարձուց անոր զէնքերն ու

բանակը: Այնչափ քաղաքներու պարգևներով ու յաղթութեամբք պսակուած մտաւ նա կիլիկիա. դրացի ազգերուն բախտն ու սանձը ձեռքը ու նենալով, սկսաւ հանդարտ հոգւով իր աշխարհն ու Սիս մայրաքաղաքը նորոգել, շինել ու զարդարել:

Որչափ ճարտար ու հզօր էր Ղևոն զէնքի մէջ, այնչափ ալ առատ ու մեծասիրտ էր, մեծագործ ու աշխարհաչէն. իր ամէն գործերուն մէջ հայրենասիրութեան հաւասար կը փայլի նաև կրօնասէր հոգին. նա որ պատերազմի դաշտին վըրայ հուր ու զայրոյթ կը շնչէր, կը հեզանար յանկարծ Աստուծոյ պաշտօնէից առջև, մանաւանդ երբ լամբրոնեցւոյն նման պատկառելի ու արժանաւոր հովիւ մ'ըլլար: Երկիրը բերդերով կ'ամրացնէր, իսկ կրօնքը՝ եկեղեցիներով կը պայծառացնէր. սուրով ու սաստով աղմուկներն ու խռովութիւնները կը մարէր, սիրով ու պարգեւներով գիտութեանց ջահը կ'արծարծէր. հիւանդանոցներ կանգնելով՝ երկրին թշուառութիւնը կը սփոփէր կամ կը վերցնէր. միով բանիւ, ամէն ցաւ ու վիշտ կը գտնէին անոր մէջ իրենց մխիթարութիւն ու բժշկութիւն: Այսպէս մինչդեռ երկրին ներքին բարեկարգութեան զբազած էր, այլ և այլ լրտեսներու ձեռքով իրեն հեռատես աչքը բոլոր արքունիքներու ներքին խորհուրդներն ու գաղանխքները կ'որոնէր, և ըստ այնմ՝ կ'ուղղէր իրեն բախտին կամ իշխանութեան անիւր: Չի կար թշնամի՝ որ Ղևոնի սրբտին մէջ գթութեան կայծ մը չի նշմարէր, օտար կամ ազգային՝ բաւական էր թէ իրեն գիմէին, անտարակոյս կը գտնէին անոր բարձր ու հզօր հովանին:

Նոյն միջոցները զօրանալով Սալահէտտին՝ արևմտեայց ուժը և իշխանութիւնը ջախջախեց եւ

առաւ Երուսաղէմ՝ անոնց ձեռքէն . խաչակիր զօրքերն այս անգամ աւելի բուռն թափով ու սաստկութեամբ արևելք դիմեցին, որոնց գլուխ կեցեր էր փրեղերիկոս Ա կայսրը Գերմանացւոց : Բայց հաղիւ թէ կիլիկիոյ սահմանները հասան՝ իրենց պաշարին հետ ուժերնին և յոյսերնին ալ սկսաւ նուազիլ, և իրենց միակ ապաւէն և ձեռքն-տու գտան մեր Լևոն իշխանը . սա հետն առած կաթողիկոսը և Լամբրոնեցին, մինչև Մսիս ընդ առաջ երթալով, շատ պաշար ու օգնութիւն զըրկեց կայսեր, որ բանակեր էր Սելևկիոյ մտտերը : կայսրը շնորհակալ ըլլալով խոստացաւ յետ դարձին թագ զրկել Լևոնի ու թագաւորեցնել զինքը . բայց դժբախտաբար ժամանակ մը թագուած մնաց այն խոստումը, երբ անզգուշաբար գետին մէջ լուացուելու միջոց՝ կատաղի ալիքները խղեցին ծերունի կայսեր կենաց թելը . որով խաչակիրներուն կորովի բազուկներն ալ թուլացած՝ կոր ի դուխ ետ դարձան : Բայց Լևոնի յոյսն ամուր էր . կրկնեց իր թախանձն առ Հենրիկոս կայսր՝ փրեղերիկոսի սրգին, և յիշեցուց անոր հօր ըրած խոստումը . գրեց յարգանաց թուղթ մը նաև Հռովմայ կեղեստինոս Գ Քահանայապետին, որոնք հաճեցան հաւանեցան ու զրկեցին Լևոնի պերճափայլ ականակապ թագ մը և առիւծանիշ գրօշ մը (1197 թուականին) կոնրատոս ծիրանաւորին ձեռքով, միայն թէ ի նշան հաւատարմութեան և միաբանութեան՝ քանի մը պայմաններ պահանջելով Լևոնէ :

Թագադրութեան հանդէսը կատարուեցաւ յաջորդ տարին Աստուածայայտնութեան տօնին . նոյն օրը սախարհաքաղաք դարձեր էր Տարսոն, մեծ ծովու նման յուզեալ կը ծփար ուրախական ձայներով խուռնընթաց բազմութեան, որոնք ամէն կողմէ գետերու նման հոն կը թափէին, ընծայա-

բեր ու պատուադիր գալով այն շքեղ հանդիսին: Եկած էին դեսպաններ կամ պայլեր արևմտեան պետութեանց, իշխաններ ու կոմսեր, ասպետներ ու բերդատէրեր, Ասորաց պատրիարքը, Յունաց մետրապոլիտը, անթիւ բազմութիւն ազգային եպիսկոպոսներու և վարդապետներու, որոնք մեր վսեմաշուք իշխանին շուրջը բոլորած՝ աննման պսակ մը կը յօրինէին, որոնց մէջ կը փայլէր Լևոն՝ ինչպէս անդամանդ մը գոհարներու մէջ: Իսկ Ս. Սոփիա եկեղեցին անթիւ ճրագներու և կանթեղներու լուսէն կարծես կը հրդեհէր, ուր անուշահոտ խունկերուն բարդիբարդ ծուխը, ճրագներու ու ոսկի սպասներու փայլէն այլ եւ այլ զուարթ գոյներ առած, կարծես կը ժպտէր ընդհանուր ուրախութեան հետ. աղօթք և օրհնութիւնք կը թնդացնէին սրբարանին կամարները, ամենուն սրտերը կը տրոփէին մեծ յուսով և վայրկեան մ'առաջ կը փափաքէին թագազարդ տեսնել իրենց մեծ իշխանին գլուխը: Եւ ահա յանկարծ հազարաւոր փողերու ձայներ հնչեցուցին օդը, որոնք կ'աւետէին իշխանին գալուստը եկեղեցին. նոյն պահուն բիւրաւոր անժոյժ թնդացող սրտեր ու բերաններ՝ պատասխանեցին միաբան փողերու ձայներուն. կեցցէ՛ տոչք քազաշոյր մեր Լևոն. Ամբոխը տեղի տուաւ. ընդարձակ եկեղեցին հազիւ բաւեց իշխանազանց ու եպիսկոպոսներու բազմութեան. թագադրութեան հանդէսը շատ սխրալի՛ վսեմ՝ և գորովաշարժ եղաւ. օծողն էր Գրիգոր Ապիրատ կաթողիկոսը. հանդիսին յարմար հրաշալի ներբող մը խօսեցաւ Ս. Ներսէս Լամբրոնեցին: Թագին հետ Լևոնի անունն ալ աւելի պայծառացաւ. Պաղտատու ամիրապետն ու Ալեքս կայսրը թանկագին ընծաներ և ականակապ թագ մը ղրկեցին. իսկ կիլիկիոյ մծադրացի իշխաններն և կուսակալները, ինչպէս կը



զրէ Սմբատ Գունդատապլ, « ամուսնն ճանապարհաւ յիշէին զանունն թագաւորին Լևոնի և անտես՝ դողային »:

Երբեք չի ծերացաւ, Հայկակ, Լևոնի սիրտն ու բազուկը, միշտ դալար ու միշտ անխոնջ մնացին. պատերազմի ձայն լսելուն պէս՝ թագը սաղտարտի փոխած ու ծիրանւոյն տեղ զրահ հագած՝ կը վազէր դաշտը, և չէր դառնար՝ մինչև որ յաղթութեան դրօշը չի պարզէր. իսկ խաղաղութեան ժամանակ՝ աշխարհին բարեկարգութեան ու շինութեանց համար չէր խնայեր ոչ ոսկոյ և ոչ քրտանց: Սոց մէջ էջմիածին անուամբ մեծ կաթողիկէ մը շինել տուաւ և ուրիշ հոյակապ շէնքեր: Եւ երբ Լևոնի կակուղ և հայրենի գաւազանին ներքեւ խաղաղութիւն ու երջանկութիւն կը վայելէին իր հպատակները, դարձեալ ի կոնիոյ սուլտանը հիւսիսէն սև փոթորկի նման փրթաւ ինկաւ կիլիկիոյ սահմաններուն վրայ, ու պաշարեց կոպան բերդը: Փութաց Լևոն սուրը և զէնքերն առած թշնամւոյն դէմ ելաւ: Բայց ինչ ըսելու է այն յանդուգն զինուորներուն, որոնց կրակոտ աշխուժը թագաւորն անգամ չի կրցաւ զսպել, և սուանց աջ ու ձախ նայելու՝ աւելի իրենց տաք գլխուն և սրտին դրրդմանց ետևէ երթալով քան թագաւորին ձայնին, յարձակեցան այն ահագին բազմութեան վրայ. իրենց յանդգնութեան պատիժն առին, բայց հայրենեաց ալ մեծ վնաս հասուցին. շատերը ջարդուեցան, մնացածներն ալ ցիրուցան եղան: Լևոն առանց յուսահատելու կամ այլայլելու, խորամանկ հնարքով թշնամւոյն ձեռքէն խլեց յաղթութիւնը. ձևացուց՝ իբր թէ յաղթուած կորագլուխ ետ կը դառնայ, և ծածուկ ճանապարհով սուլտանին երկիրները մտնելով քանդեց կողոպտեց, և բազմութեամբ գերիներու ու աւարի անցնելով յաղթանակով թշնամւոյն բանակին մօտէն՝ մտաւ Սիւս:

Թշնամին սարսափած աչքը ետ դարձուց, տեսաւ որ իր երկրին սահմաններէն ողբուկոծի ձայներ կը լսուէին, ծուխ ու բոց կը բարձրանար. հաշտութիւն ըրաւ Լեոնի հետ, կապան բերդը թողուց, գերիներու փոխանակութիւն ըրաւ և իր երկիրը դարձաւ (1217ին):

Յաջորդ տարին Չատկի միջոցները դարձեալ թշնամւոյն փողերը հնչելով՝ կը սպառնային օժանկան օրերուն ուրախութիւնը սուգի փոխել. բայց Լեոն անայլայլակ գումարեց բանակը ու դիմեց ուրախութեամբ ոչ թէ կռուի՝ այլ յաղթութեան, այնքան վստահ էր Աստուծոյ զօրութեան և իր բազկին վրայ: Եգիպտոսի ամիրան ահաւոր բանակով եկեր ու կը սպառնար Լեոնի՝ սրով ու հրով աւերել ըլլոր Կիլիկիան, եթէ իրեն տարեկան հարկ չի վճարէր. իմացաւ Լեոն թէ այս պոռոտ մոռտ ամիրային շառաչը շատ աւելի է քան թէ ուժը, ուստի փորձեց անոր գլխուն վարպետ խաղ մը խաղալ, և որսալ իրեն դարանող որսորդը: Լսելով թէ պատգամաւորներ կու գան իրեն, փութաց մարդիկ զրկեց ընդառաջ, որ երկայն ճանապարհներով ու շացնեն անոնց գալուստը. իսկ Հայերը թագաւորին առաջնորդութեամբ ծածուկ կիրճերէ ու ձորերէ անցնելով՝ յանկարծ նիզակնին ցցած, սուրերնին բացած, ահաւոր ձայներով լեռներէն վար թափեցան, պաշարեցին թշնամւոյն բանակը եւ սաստիկ ջարդ մը տուին. ամիրան հազիւ կրցաւ փախչելով ազատել գլուխը: Դեռ պատգամաւորները չէին հասած, Լեոն արժուի երազութեամբ հասաւ և թշնամւոյն վրաններն ու դրօշները կանգնեց իր բանակին մէջ. և երբ եկան անոնք, ափշելով եղածին վրայ՝ ինկան Լեոնի առջև ու գթութիւն պաղատեցան. թագաւորը մեծասրտութեամբ շնորհեց անոնց կեանքը, և այն հարկը՝ զոր ամիրան կ'ուզէր բռնի խլել իրմէ՝ ինքը պահանջեց անորմէ:

Անգամ մը երբ Լևոն Կիպրոս գնացեր էր՝ իրեն աներոջ այցելութիւն ընելու, Լամբրոնեցւոյն Հեթում եղբայրը՝ որ միշտ առիթ մը կը փնտռէր թագաւորին լուծը վրայէն թօթուելու՝ գլուխ քաշեց իրմէ. դարձաւ Լևոն ու տիրեց Լամբրոն գղեկին, Հեթումի լուծն ալ դեռ աւելի պնդեց սահրացուց, իշխանութիւնն ու բերդը առաւ ձեռքէն. բայց յետոյ կաթողիկոսին միջնորդութեամբ ազատեց զինքը:

Իր թագաւորութեան վերջին տարիները՝ թէ և ձեռքի և ոտքի յողացաւութեամբ տանջուելով ալ չէր կարող երեսուն տարիէն աւելի ըրած առիւծական արշաւանքները կատարել, սակայն իր համբաւն ու ձեռքին տակ կրթուած զօրքերը բաւական էին նորանոր յաղթութեանց գոհարներ աւելցնելու ականակապ թագին վրայ: Անհամար են, Հայկակ, Լևոնի մեծագործութիւններն ու քաջութիւնները, որոնց մէջ եթէ բիծեր ալ տեսնուին՝ զարմանք չէ, ինչպէս յաճախ յաղթութիւններն ալ առանց վէրքի չեն ըլլար: Իր բոլոր կենաց մէջ սրտին միակ վիշտը այն եղաւ, որ արու զաւակ չունեցաւ. իրեն առիւծ հոգւոյն վայել կորիւն մը տալու տեղ՝ փափկիկ և նազելի աղանեակ մ'ընծայեց իրեն Աստուած. ուստի վերջին հիւանդութեան միջոց կանչեց ազգին իշխանները, և իրեն Զապել գոտրիկը ժառանգ անուանելով ստացուածներուն ու թագին, կաթողիկոսին և Ատան իշխանին խնամքին յանձնեց զինքը: Յետոյ զգաստ մաքով ու գորովագին սրտով տալով իր վերջին ողջոյնը առ հայրենիս՝ զոր այնչափ տարի քրտամբք ու արեամբ պաշտպաներ ու շէնցուցեր էր, առ եկեղեցին՝ զոր այնքան սիրեր ու պայծառացուցեր էր, առ բոլոր ազգն ու մեծամեծները՝ զորոնք հօր պէս գգուեր ու կառավարեր էր, ումէն հոգևոր պատրաստութիւններն ընելով՝ աւանդեց հոգին փրկչին ձեռքը, 1219ին Մայիս 2ին, յետ քսան և մէկ տարի շքով

ու փառքով վայելելու արքունի թագն ու գահը, զորոնք ինքը կանգներ ու ամրացուցեր էր :

Ահա քեզ, Հայկակ, ճշմարիտ հայրենասիրի վեհագոյն պատկեր, քրիստոնեայ գիւցազի ու թագաւորի՝ միակ օրինակ, և բարեպաշտ հոգւոյ՝ յստակ հայելի մը: Սա եղաւ՝ որ սաստիկ եռանդով և բուռն ճիգերով վառեց ու արծարծեց ազգիս նորանոր ու փայլուն յոյսերուն լապտերը. բայց ափսոս որ ապագայ թագաւորներուն մէջ իրեն հաւասար արծարծող մը չըլլայով՝ մարեցաւ այն, ու դարձեալ պիտի վառի՝ արդեօք:... Սակայն եթէ ազգիս թագաւորութիւնն ինկաւ ու տապալեցաւ՝ բայց ոչ հայրենիքը, որուն մոխիրներուն ու աւերակներուն ներքև՝ « գիտէ՛ քանի կայծեր թաղուեր մնացեր են, որոնք հայրենասէր սրտի մը շունչին կը սպասեն վառելու և արծարծելու համար:... Եթէ հայ ազգը չունի թագ ու գահ, բայց ունի ուրիշ բիւր պարծանքներ, իրեն նախնի հարց ու հայրենեայ պատմութիւնը, ճոխ լեզուն, գեղեցիկ հանճարը, վառվուռն հոգին, աշխոյժ սիրտն ու հնարագիւտ միտքը, որոնցմով ոչ թէ միայն կրնայ մրցիլ հին անուանի ազգերուն մինչև հիմակ եղած անանուն մնացորդներուն հետ, այլ և նոր դարերուն ազգերուն հետ: Կը մաղթեմ՝ քեզի, Հայկակ, և բոլոր սիրելի ազգակիցներուս՝ մատենիկիս մէջ յիշուած և փայլած սուրբ հայրերուն և արի գիւցազներուն ձիւղբերը և կատարելութիւնները, և մանաւանդ անոնց հոգին ու հզօր հովանին, որպէս զի կարող ըլլանք՝ գահէ եւ թագէ վեր բան մ'ընծայել ազգիս, երջանկոտրօքնն ու ւնւնահոռօքնն:





## Ց Ա Ն Կ



Ազդ առ ընթերցողն . . . . .	5
Երկու խօսք երրորդ տպագրութեան առթիւ . . . . .	7
Մեր ազգին ծագումն և Հայկ . . . . .	9
Տիգրան Բ. . . . .	16
Արտաշէս Բ. . . . .	27
Սաթինիկ . . . . .	41
Սրբուհի Սանդուխտ . . . . .	49
Ս. Գրիգոր Լուսաւորիչ . . . . .	61
Մեծն Տրդատ . . . . .	73
Սրբուհի Աշխէն . . . . .	91
Սրբուհի Խոսրովիգուխտ . . . . .	99
Մեծն Ներսէս Պարթև . . . . .	107
Փաջակորուն Մուշեղ . . . . .	129
Ս. Սահակ Պարթև . . . . .	145
Ս. Մեսրոպ . . . . .	161
Ղեւոնդ Երէց . . . . .	173
Կարմիրն վարդան . . . . .	189
Շուշան վարդենի . . . . .	211
Մովսէս Խորենացի . . . . .	227
Վահան Մամիկոնեան . . . . .	241
Ներսէզ Կամսարական . . . . .	265
Գայլ վահան . . . . .	275
Անանիա Շիրակացի . . . . .	285
Աշոտ Ա. Թագաւոր . . . . .	293
Ս. Գրիգոր Նարեկացի . . . . .	309
Ս. Ներսէս Շնորհալի . . . . .	317
Ս. Ներսէս Լամբրոնեցի . . . . .	331
Լեւոն Ա. Թագաւոր . . . . .	345









Vertical line of text or markings on the left side of the page.





